

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

№ 1(40)
2024

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի
Журнал «Вестник Ереванского университета. Правоведение» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"
Three issues of "Journal of Yerevan University. Jurisprudence" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009
<https://journals.y-su.am/>

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Դանիելյան Գևորգ (ի.գ.դ., պրոֆ.,
gdanielyan@ysu.am)

Даниелян Геворг (д.юр.н., проф.)
Danielyan Gevorg (Sc. D. in Legal Sciences,
Professor)

Անտոնյան Յուրի (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., antonyaa@yandex.ru)

Антонян Юрий (Москва, д.юр.н., проф.)
Antonyan Yuri (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Professor)

Ավագյան Սուրեն (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., avakian@law.msu.ru)

Авакян Сурен (Москва, д.юр.н., проф.)
Avagyany Suren (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Professor)

Գևորգյան Շարեն (ի.գ.թ.,
k.gevorgyan@ysu.am)

Геворкян Карен (к.юр.н.)
Gevorgyan Karen (PhD in Legal Sciences)

Դյուրան Բեննարդ (Մոնպելյե, ի.գ.դ.,
պրոֆ., pas2k@orange.fr)

Дюран Бернард (Монпелье, д.юр.н.,
проф.)
Duran Bernard (Montpellier, Sc. D. in Legal
Sciences, Professor)

Խաչրիկա Տալիա (Մոսկվա, ի.գ.դ.,
պրոֆ., ՌԴ ԳԱ ակադեմիկոս,
office@izak.ru)

Хабриева Талия (Москва, д.юр.н., проф.,
академик РАН)

Khabrieva Talia (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Professor, Academician of RAS)

Քուրի Հելմուտ (Ֆրայբուրգ, ի.գ.դ., պրոֆ.,
helmut.kury@web.de)

Кури Хельмут (Фрайбург, д.юр.н., проф.)
Kury Helmut (Freiburg, Sc. D. in Legal
Sciences, Professor)

Հարությունյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.,
ggharut@yahoo.com)

Արուտյոյան Գագիկ (д.юр.н., проф.)
Harutyunyan Gagik (Sc. D. in Legal
Sciences, Professor)

Հովհաննիսյան Վահե (ի.գ.դ., պրոֆ.,
vahehovhannisyan@ysu.am)

Օգաննիսյան Բարե (д.юр.н., проф.)
Hovhannisyan Vahe (Sc. D. in Legal
Sciences, Professor)

Ղազինյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ., ՀՀ
ԳԱԱ ակադեմիկոս, gghazinyan@ysu.am)

Կազինյան Գագիկ (д.юр.н., проф., академик
НАН РА)

Ghazinyan Gagik (Sc. D. in Legal Sciences,
Professor, Academician of NAS RA)

Մարգարյան Աննա (ի.գ.դ., պրոֆ.,
annamargaryan@ysu.am)

Մարգարյան Աննա (д.юр.н., проф.)
Margaryan Anna (Sc. D. in Legal Sciences,
Associate Professor)

Չուչա Սերգեյ (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.,
chuchaigpan@gmail.com)

Чуча Сергей (Москва, д.юр.н., проф.)
Chucha Sergey (Moscow, Sc. D. in Legal
Sciences, Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԼՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
THEORY AND HISTORY OF STATE AND LAW

Արթուր Ղաֆարյան – Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները..... 7

Artur Ghambaryan – Условия принятия подзаконного акта «на основании закона» и «уполномочивающей нормы»

Artur Ghambaryan – "Law-Based" and "Authorizing Norm" Conditions for Adopting a Sub-Legislative Act and Their Correlation

Հայկ Սարսիրոսյան – Իրավակազմավորման փուլի անհրաժեշտության հայե-
ցակարգային հիմնախնդիրները և ՀՀ-ում ներդրման նախադրյալները.... 29

Айк Мартиросян – Концептуальные вопросы необходимости этапа
правового формирования и предпосылки для реализации в РА

Hayk Martirosyan – Conceptual Issues of the Necessity of the Legal Formation
Stage and the Prerequisites for Implementation in the RA

Չարեն Ասիրյան – Սեփականության իրավունքի սահմանափակման
քրեադատավարական կարգավորումների ընկալման և մեկնաբան-
ման որոշ հիմնահարցեր 39

Карен Амирян – Некоторые основные вопросы для понимания и толкования
уголовно-процессуальных норм, ограничивающих права
собственности

Karen Amiryanyan – Some Key Issues For Understanding and Interpreting Criminal
Procedure Rules Limiting Property Rights

Սերգեյ Քոչարյան – Իրավակիրառական տեխնիկայի հասկացության հիմնա-
հարցը իրավաբանական տեխնիկայի տեսության համատեքստում..... 50

Сергей Кочарян – Проблема понятия правоприменительной техники в
контексте теории юридической техники

Sergey Kocharyan – The Issue of the Concept of Law Enforcement Technique in
the Context of Legal Technique Theory

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԼՔ
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО
CONSTITUTIONAL LAW

Վարդան Այվազյան – Իրավական պետության և ժողովրդավարության
համակարգային հակամարտությունը..... 60

Վարդան Այվազյան – Системный конфликт правового государства и демократии
Vardan Ayvazyan – Systemic Conflict of the Rule of Law State and Democracy

Մաշաթ Բաղդասարյան – Վերաքննիչ վարույթի ողջամիտ ժամկետների ապահովման հիմնախնդիրը վարչական դատավարությունում 70

Саяд Бадалян – Проблема обеспечения разумных сроков апелляционного производства в административном судопроизводстве

Sayad Badalyan – The Issue of Ensuring Reasonable Period for Appellate Proceedings in Administrative Trials

Չարեն Հախերչյան – Վարչական վարույթում լսված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքները 79

Карен Акопян – Юридические последствия нарушения права быть услышанным в административном производстве

Karen Hakobyan – Legal Consequences of Violation of the Right to be Heard in Administrative Proceedings

Քրիստինե Ալեքսանյան – Ուժի կիրառման դեպքում համաչափության սկզբունքի իրացման առանձնահատկությունները 91

Кристине Алексанян – Особенности реализации принципа пропорциональности при применении силы

Kristine Aleksanyan – Features of the Implementation of the Principle of Proportionality in the use of Force

**ՔՐԵԱՎԱՆ ԴՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ
УГОЛОВНОЕ СУДОПРОИЗВОДСТВО И КРИМИНАЛИСТИКА
CRIMINAL PROCEEDINGS AND CRIMINOLOGY**

Մամիկ Դիրանդյան – Ոչ պատշաճ վարքագծի արգելքը քրեական դատավարության սկզբունքների համակարգում 106

Самвел Дилбандян – Запрет неправильного поведения в системе принципов уголовного процесса

Samvel Dilbandyan – Prohibition of Improper Conduct in a Set of Principles of Criminal Procedure

Արմեն Հովհաննիսյան – Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման առանձին հիմնահարցեր 117

Армен Оганесян – Отдельные вопросы для оценки целей (оснований) содержания под стражу обвиняемого, находящихся за границами Республики Армения

Armen Hovhannisyan – Separate Basic Questions for Assessing the Purposes (Grounds) of Detention of an Accused Located Outside the Borders of the Republic of Armenia

Չևորգ Բաղդասարյան – Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը ... 124

Геворг Багдасарян – Уголовно-процессуальная презумпция невиновности и уголовно-правовая презумпция виновности

Gevorg Bagdasaryan – The Criminal Procedural Presumption of Innocence and the Criminal Substantive Presumption of Fault

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ЕВРОПЕЙСКОЕ И МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО
EUROPEAN AND INTERNATIONAL LAW

Արտակ Ասատրյան – Խորհրդարանական լսումները որպես հանրային քննարկման իրականացման ձև..... 137

Артак Асатрян – Парламентские слушания как форма проведения общественного обсуждения

Artak Asatryan – Parliamentary Hearings as a Form of Public Discussion

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW

Արևեն Հայկյանց – lex voluntaris կոլիզիոն սկզբունքը ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ 150

Армен Айкянц – Коллизионный принцип lex voluntaris в гражданском законодательстве Республики Армения

Armen Haykyants – Conflict Principle Lex Voluntaris in Civil Legislation Republic of Armenia

Արսեն Թավադյան – Գործարքների կարգավորման գերֆորմալիզը ՀՀ-ում. նոտարական վավերացում 166

Арсен Тавадян – Сверхформализм регулирования сделок в РА: Нотариальное заверение

Arsen Tavadyan – Super Formalism in Regulating Transactions in the Republic of Armenia: Notarization

Աշխեն Սողոմոնյան – Աշխատակիցների բաժնետիրացման իրավական կարգավորման որոշ հիմնահարցեր Հայաստանի Հանրապետությունում 178

Ալեքեհ Տօգոմոնյան – Некоторые проблемы правового регулирования акционирования сотрудников в Республике Армения
Ashkhen Soghomonyan – Some Issues of Legal Regulations of Employee Share Ownership in the Republic of Armenia

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱԸՈՒԹՅՈՒՆ
ГРАЖДАНСКОЕ СУДОПРОИЗВОДСТВО
CIVIL PROCEDURE

<i>Վարդուշ Եսայան</i> – Ընտանեկան գործերով վարույթի առանձնահատկությունները.....	194
<i>Վարդուշ Եսայան</i> – Особенности семейного судопроизводства <i>Vardush Yesayan</i> – Features of Family Proceedings	
<i>Մանե Կարապետյան</i> – The Employees’ Right to Reinstate in Case of Illegal Dismissal	201
<i>Մանե Կարապետյան</i> – Նախկին աշխատանքում վերականգնվելու աշխատողի իրավունքի իրացումը անօրինական ազատման դեպքում (անգլ.) <i>Մանե Կարապետյան</i> – Осуществление права работника на восстановление на прежней работе в случае незаконного увольнения (англ.)	

ԵՆԹԱՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԱԿՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ՝ «ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ» ԵՎ «ԼԻԱԶՈՐՈՂ ՆՈՐՄԻ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ* 

Հայ-ռուսական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվել են ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանների ընդհանուր բնութագիրը և նրանց հարաբերակցությունը ՀՀ սահմանադրական իրավունքում՝ հաշվի առնելով թեմայի վերաբերյալ նաև գերմանական ու ռուսական դոկտրիններում առկա մոտեցումները և փորձը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտով կարգավորվող դեպքերը սահմանելու հստակությունը, ենթաօրենսդրական ակտ ընդունելու կամքի արտահայտման եղանակը և ենթաօրենսդրական ակտ ընդունելու ինքնալիազորման արգելքը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է գործադիր իշխանության մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտ ընդունելու համար օրենսդրական բազայի համակարգային մեկնաբանման բացակայությամբ՝ հանգեցնելով համապատասխան տերմինների միասնականության չպահպանմանը, վրիպակների առկայությանը, գործադիր իշխանության մարմինների գործառնությունների ոչ ճիշտ մեկնաբանմանը և իրավական այլ խնդիրների: Թեմայի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գործում են ինքնալիազորման արգելքը և «օրենքի հիման վրա» պայմանը, իսկ գործադիր իշխանության մարմինների համար ենթաօրենսդրական ակտ ընդունելը օրենքով սահմանված համապատասխան գործառնությամբ լիազորությունների իրականացման իրավական ձև է, որը կարող է լուծվել միայն նորմատիվ բնույթի ակտերի միջոցով:

* **Արթուր Ղամբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

Артур Гамбарян – Доктор юридических наук, заслуженный юрист РА, руководитель кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор кафедры права Академии государственного управления РА

Artur Ghambaryan – Doctor of Law, Honored Lawyer of the Republic of Armenia, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Professor at the Chair of Law of the Academy of Public Administration of the Republic of Armenia

Էլ. փոստ՝ artur.ghambaryan@gmail.com, ORCID: <https://orcid.org/0000-0002-6322-4664>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.01.2024

Գրախոսվել է՝ 09.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – ենթաօրենսդրական ակտ, «օրենքի հիման վրա», «լիազորող նորմ», ինքնալիազորման արգելք, սահմանադրական իրավունք, գործադիր իշխանության մարմին, գործառույթներ

Ներածություն

1.1. Ուսումնասիրության նպատակը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ (այսուհետև՝ ենթաօրենսդրական ակտ) ընդունելիս օգտագործվում է երկու իրար նման պայման (պահանջ). ենթաօրենսդրական ակտ կարող է ընդունվել՝

- 1) օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով («օրենքի հիման վրա» պայմանը),
- 2) իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանող լիազորող նորմի առկայության դեպքում («լիազորող նորմի» պայմանը):

Ինչպե՞ս են հարաբերակցվում այս երկու պայմանները, արդյո՞ք դրանք չեն արտահայտում նույն պահանջները. եթե օրենքով առկա է ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին լիազորող նորմ, ապա դա չի՞ նշանակում, որ այդ ակտն ընդունվում է օրենքի հիման վրա:

Այս հարցերին պատասխանելու նպատակով «օրենքի հիման վրա» պայմանը կվերլուծվի գերմանական և ռուսական իրավունքի դոկտրինների լույսի ներքո, այնուհետև անդրադարձ կկատարվի հայկական իրականությանը:

1.2. «Օրենքի հիման վրա» պայմանը գերմանական դոկտրինում: Գերմանական իրավունքում պետական գործունեության օրինականության սկզբունքն (լայն իմաստով) ունի երկու դրսևորում՝ օրենքի գերակայությունը և օրենքի վերապահումը:

Հանրահայտ է, որ օրենքի գերակայությունը նշանակում է, որ գործադիր իշխանության որոշումները ստորադասված են օրենսդիր իշխանության օրենքներին: Եթե օրինականության սկզբունքի քննարկման դեպքում ծագում է այն հարցը, թե պետական ակտերն արդյո՞ք համապատասխանում են (գոյություն ունեն) գործող օրենքներին, ապա օրենքի վերապահման (օրենքի վրա հիմնված լինելու) սկզբունքի դեպքում առաջադրվում է այն հարցը, թե գործադիր իշխանության գործունեության համար պահանջվում է արդյո՞ք օրենսդրական որևէ հիմք, եթե այո, ապա ո՞ր դեպքերում: Գերմանացի մասնագետները նշում

են. «Օրենքի վերապահման սկզբունքն արգելում է իր իրավասության սահմաններում կառավարման մարմինների գործությունը, քանի դեռ բացակայում է կոնկրետ օրենսդրական հիմքը: Դրա հետ նախանշվում է այն ոլորտը, որտեղ գործադիր իշխանությունը կարող է գործել առանց օրենսդրական լիազորությունների»¹ :

Գերմանական սահմանադրական իրավունքում օրենքի վերապահման պայմանը բխեցվում է իրավական պետության, ժողովրդավարության սկզբունքներից, ինչպես նաև մարդու հիմնական իրավունքների սահմանափակման մասին նորմերից: Իրավական պետության սկզբունքը պահանջում է, որ պետության գործունեությունը լինի պատասխանատու և կանխատեսելի:

Ժողովրդավարության սկզբունքը պահանջում է, որ պետության գործունեությունը կառավարի պառլամենտը՝ որպես բարձրագույն ժողովրդավարական և լեգիտիմ մարմին: Կառավարման մարմինները չպետք է օժտված լինեն լիիշխանությամբ, այլ պետք է գործեն պառլամենտի կողմից տրված լիազորությունների հիման վրա:

Պատմականորեն օրենքի վերապահման պայմանը գործում էր միայն այն ոլորտներում, որտեղ գործադիր մարմինները կարող էին կիրառել հարկադրանք. այդ ժամանակահատվածում քննարկվող պահանջը մարդու մասնավոր կյանքը պաշտպանել էր միապետական գործադիր իշխանությունից: Ներկայումս օրենքի վերապահման պայմանի գործողությունն ընդլայնվել է՝ ընդգրկելով պետության հանրային ծառայություններ մատուցելը (օրինակ՝ սուբսիդիաների տրամադրումը), հատուկ իրավական հարաբերությունները (օրինակ՝ պետական ծառայություն իրականացնելը, դպրոցական կրթություն ստանալը, դպրոցից հեռացնելը, սեռական դաստիարակության դասավանդումը և այլն), ինչպես նաև՝ պետական կառավարման կազմակերպումը (օրինակ՝ արդյոք պահանջվում է օրենք, եթե նոր կազմակերպություններին հանձնարարվում է լուծել հանրային նշանակության խնդիրներ)²:

Օրենքի վերապահման պայմանի գործողության ոլորտի ընդլայնումը, ըստ գերմանացի մասնագետների մեծամասնության, չի նշանակում, որ վարչական մարմինների ցանկացած գործունեություն «տոտալ կախված է» օրենքի նորմից: Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանն այս պայմանի գործողության ոլորտը որոշում է «էականության տեսության» հիման վրա, որի համաձայն՝ օրենսդիրը բոլոր էական, կարևոր հարցերը, հատկապես մարդու իրավունքներին վերաբերող էական հարցերը պարտավոր է ինքը կարգավորել: «Էականության տեսության» հիման վրա որոշվում է ոչ միայն այն հարցերը, որոնք օրենսդիրն անմիջապես պետք է կարգավորի, այլ նաև այն հարցերը,

¹ Рихтер И., Шупперт Г. Ф. Судебная практика по административному праву, пер. с нем.: Юристъ, 2000, ISBN: 5-7975-0338-7, с. 24-34.

² Տե՛ս նույն տեղը:

որոնց կարգավորումը կարող է փոխանցվել (պատվիրակվել) գործադիր իշխանությանը³: Խնդիրը կապված է Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված՝ պատվիրակված օրենսդրության և «վստահության եռյակի» տեսության հետ, ինչի մասին կնշվի հաջորդ բաժնում:

1.3. «Օրենքի հիման վրա» պայմանը ռուսական դոկտրինում: Ռուսական դոկտրինալ աղբյուրներում հաճախ է նշվում, որ ենթաօրենսդրական ակտը պետք է հիմնված լինի օրենքի վրա, սակայն այս պայմանի բովանդակությունը բացահայտվում է տարբեր կերպ:

Նախ՝ «օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով» պայմանը կարող է նշանակել, որ առկա է օրենք, որն ուղղակիորեն մատնանշում է այն հարցերը, որոնց վերաբերյալ այս կամ այն մարմինը իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական ակտեր: Օրինակ՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության մասին» դաշնային սահմանադրական օրենքը պարունակում է նորմ, որ կառավարությունը հաստատում է դաշնային գործադիր մարմինների մասին կանոնակարգը և բաշխում է գործառույթները նրանց միջև:

Երկրորդ՝ «օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով» պայմանը կարող է ենթադրել, որ օրենքում առկա են դրույթներ, որոնք պետք է հստակեցվեն ենթաօրենսդրական ակտերով՝ օրենքի արդյունավետ կիրառման համար: Օրինակ՝ ՌԴ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 27.12 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ (...) ակոհոլային հարբածության վիճակի քննությունը և դրա արդյունքների գրանցումը, հարբածության վիճակի բժշկական զննության ուղարկումը, հարբածության վիճակի բժշկական զննումը և դրա արդյունքների գրանցումը իրականացվում են ՌԴ կառավարության սահմանած կարգով:

Երրորդ՝ ըստ «օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով» պայմանի՝ պետական մարմիններին թույլատրվում է կոնկրետ հարցով ընդունել որոշակի տեսակի կամ ձևի նորմատիվ իրավական ակտ: Օրինակ՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՌԴ օրենքը պարունակում է նորմ, ըստ որի՝ կառավարությունն իրավունք ունի ընդունելու հանրային պայմանագրերի կնքման և կատարման կանոններ⁴:

Այս օրինակներն իրարից, ըստ էության, չեն տարբերվում. եթե վերացարկվենք զուտ ձևակերպումների մեջ առկա տարբերություններից, ապա այս օրինակներն, ըստ էության, ցույց են տալիս այն, որ «օրենքի հիման վրա» պայմանը պահանջում է օրենսդրից սահմանել այն դեպքերը (հարցերը), որոնք պետք է կարգավորվեն ենթաօրենսդրական ակտով:

Ռուս առանձին տեսաբաններ ենթաօրենսդրական ակտերի հատկանիշների

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Տե՛ս **Волкова С. Н.** Регламентарные акты и их место в системе нормативных правовых актов // Сибирский юридический вестник, 2013, № 4 (63), էջ 11-12:

ցանկում նշում են ակտի՝ օրենքից ածանցյալ լինելը և այս հատկանիշը մեկնաբանում են հետևյալ կերպ.

«Ենթաօրենսդրական ակտերի ածանցյալ բնույթը որոշվում է նրանով, որ այդ ակտերի կարգավորման առարկան նույնպես ածանցյալ է օրենքի կարգավորման առարկայից: Ենթաօրենսդրական ակտերը կոչված են հստակեցնելու և կոնկրետացնելու օրենքի պահանջները, իսկ ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող հարցերն օրենքով կարգավորվող հարաբերությունների դրվագներն են: Ենթաօրենսդրական ակտերը չեն կարող կարգավորել հարցեր, որոնք օրենքով կարգավորվող հարաբերությունների մասը չեն: Ենթաօրենսդրական ակտը չի կարող օրենքից անկախ լինել: Եթե, այնուամենայնիվ, այդպիսի բան տեղի ունենա և ենթաօրենսդրական ակտը գոյություն ունենա ինքն իրեն (օրենքից անկախ, հեղ.), չհանդիսանա օրենքի շարունակությունը, դա կհամարվի օրենսդրական տեխնիկայի կոպիտ խախտում. ենթաօրենսդրական ակտը զբաղեցրել է օրենքի տեղը»⁵:

Այսպիսով՝ ռուսական դոկտրինում «օրենքի հիման վրա» պայմանն ընկալվում է այնպես, որ ենթաօրենսդրական ակտերը կարող են կարգավորել միայն օրենքից ածանցյալ (երկրորդային) հարցեր: Երկրորդային հարաբերությունները ենթաօրենսդրական ակտով կարգավորելու մասին օրենսդրի կամքը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով, որոնցից պարզ է, որ օրենսդիրը ցանկացել է, որ այդ երկրորդային հարաբերությունները կարգավորվեն գործադիր իշխանության համապատասխան մարմնի կողմից:

2. «Օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները ՀՀ սահմանադրական իրավունքում

2.1. Ընդհանուր դրույթներ

Մինչև «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմաններին անդրադառնալը պետք է քննարկել ևս մեկ տերմինաբանական հարց: ՀՀ Սահմանադրության տեքստի վերաբերելի նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ, բացի «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմաններից, օգտագործվում են նաև այլ հասկացություններ, օրինակ՝ ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունվել օրենքի սահմանված դեպքերում: Ավելին, ՀՀ Սահմանադրությամբ առանձին պետական մարմինների՝ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությունը սահմանող հոդվածներում նախատեսված չէ օրենքով նախատեսված դեպքերում ենթաօրենսդրական ակտ ընդունելու վերապահումը:

2.2. «Օրենքի հիման վրա» պայմանը

2.2.1. «Օրենքի հիման վրա» ու «օրենքով նախատեսված դեպքերում» պայմանների հարաբերակցությունը: Պետական և տեղական ինքնակառավարման

⁵ Чухвичев В. Д. Законодательная техника: учебное пособие, М., ISBN: 978-5-238-02248-2 (в пер.), 2006, с. 65.

տարբեր մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորության մասին նորմեր սահմանված են նաև ՀՀ Սահմանադրությամբ, սակայն դրանց համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք ունեն տարբեր ձևակերպումներ: Այսպես.

- 1) ինքնավար մարմիններին **օրենքով կարող է վերապահվել** ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու **իրավասություն** (ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մաս),
- 2) կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս),
- 3) կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մաս),
- 4) **օրենքով սահմանված դեպքերում** և կարգով Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 3-րդ մաս),
- 5) համայնքի ավագանին **օրենքով սահմանված կարգով** ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս),
- 6) **օրենքով սահմանված դեպքերում** և կարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 2-րդ մաս),
- 7) **օրենքով սահմանված դեպքերում** և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մաս),
- 8) **օրենքով սահմանված դեպքերում** և կարգով Կենտրոնական բանկն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածի 5-րդ մաս):

Վերը նշված հոդվածների ձևակերպումների տեքստային համադրությունից հնարավոր է կատարել մի քանի պարզ եզրահանգում:

Նախ՝ տեքստի հեղինակներին չի հաջողվել պահպանել տերմինների միասնականությունը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է ենթաօրենսդրական ակտեր ընդունելու՝ օրենքով նախատեսված **լիազորության** մասին, իսկ ինքնավար մարմիններին վերաբերող հոդվածում լիազորության փոխարեն նշվում է ենթաօրենսդրական ակտեր ընդունելու՝ օրենքով վերապահված **իրավասության** մասին: «Լիազորություն» և «իրավասություն» հասկացությունները դոկտրինալ առումով, որպես կանոն, չեն նույնացվում: Այնուամենայնիվ, դրանք սխալմամբ նույն իմաստով օգտագործելը գործնական մեծ խնդիրներ չի առաջացնում, ինչը չի կարելի ասել հաջորդ օրինակի մասին:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի, ՀՀ

կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, ՀՀ կենտրոնական բանկի վերաբերյալ հողվածներում նշվում է, որ այս մարմինները ենթաօրենսդրական ակտեր ընդունում են «օրենքով սահմանված դեպքերում», իսկ ՀՀ կառավարության, ՀՀ կառավարության անդամների, համայնքի ավագանու պարագայում «օրենքով սահմանված դեպքերում» պայման նախատեսված չէ: Հարց է ծագում, ենթաօրենսդրական ակտերը «օրենքով սահմանված դեպքում» ընդունելու պահանջն արդյոք տարածվո՞ւմ է ՀՀ կառավարության, դրա անդամների և համայնքի ավագանու վրա:

2.2.2. «Օրենքով սահմանված դեպքերում» պահանջի կիրառությունը ՀՀ կառավարության, դրա անդամների և համայնքի ավագանու ակտերի նկատմամբ: Վերը նշված հարցի կապակցությամբ առանձին սահմանադրագետներ քննարկումների ժամանակ նշում են, որ ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մասում «օրենքով սահմանված դեպքերում» պայմանի բացակայությունը տրամաբանական է, քանի որ համայնքներն ինքնավար են, և օրենսդրի խնդիրը չի կարող լինել որոշելու այն դեպքերը, թե երբ համայնքի ավագանին կարող է ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Նման փաստարկն ընդունելի չէ:

Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարությունը չի նշանակում անկախություն օրենսդիր իշխանությունից: Համայնքի ավագանին կաշկանդված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված օրինականության սկզբունքով, ըստ որի՝ նրա լիազորությունները սահմանվում են ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլ նաև օրենքներով: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում թվարկված են համայնքի ավագանու լիազորությունները: Համայնքի ավագանին կարող է ենթաօրենսդրական ակտ ընդունել բացառապես օրենքով թվարկված այդ լիազորությունների շրջանակում: Օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում նշված է, որ համայնքի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Այս լիազորության իրականացման նպատակով համայնքի ավագանին պետք է ընդունի ենթաօրենսդրական ակտ: Օրինակ՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 26.02.2022թ. № 17-Ն որոշմամբ սահմանվել են 2022 թվականի համար Արտաշատ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Այլ կերպ ասած՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելը օրենքով նախատեսված դեպք է, որի կապակցությամբ համայնքի ավագանին կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտ:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մասում «օրենքով սահմանված դեպքերում» պայմանի բացակայությունը ոչ թե տրամաբանական է, այլ պարզապես Սահմանադրության նախագծի տեքստը կազմելիս թույլ տրված վրիպակ է:

Ինչ վերաբերում է գլխավոր հարցին, թե ՀՀ կառավարությունը, նրա անդամները և համայնքի ավագանին ՀՀ Սահմանադրությամբ արդյոք կաշկանդված են միայն «օրենքով սահմանված դեպքերում» ենթաօրենսդրական ակտ ընդունելու պահանջով, ապա պատասխանը կախված է նրանից, թե «օրենքով սահմանված դեպքերում» հասկացությունն արդյոք նույնանում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «օրենքի հիման վրա» պայմանի հետ:

Վերը նշված վերլուծությունից կարելի է ենթադրել, որ «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված դեպքերում» սահմանադրական հասկացություններն արտահայտում են նույն իմաստը. օրենքի հիման վրա ընդունված կամ օրենքով սահմանված դեպքերում ընդունված ենթաօրենսդրական ակտերը կոչված են կոնկրետացնելու օրենքի կարգավորումները. դրանք ածանցյալ են օրենքից: «Օրենքի հիման վրա» կամ «օրենքով սահմանված դեպքերում» պայմանն արգելում է գործադիր իշխանության մարմիններին ենթաօրենսդրական ակտերով (ի տարբերություն ռեզլամենտային ակտերի) նախատեսել առաջնային (օրենքից անկախ) կարգավորումներ: Եթե ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի (դասական իմաստով՝ ենթաօրենսդրական ակտ), ապա դա նշանակում է, որ դրանք պարունակում են երկրորդային նորմեր, որոնք լրացնում և զարգացնում են օրենքում նշված առաջնային նորմերը⁶: Այսպիսով՝ կարելի է նշել, որ «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված դեպքեր» հասկացություններն արտահայտում են նույն իմաստը:

Նկատի ունենալով «օրենքի հիման վրա» և «օրենքով սահմանված դեպքեր» հասկացությունների նույն իմաստն արտահայտելու հանգամանքը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որն ամրագրված է սահմանադրական կարգի հիմունքներում, ընդհանուր դրույթ է, ուստի այս հոդվածի 2-րդ մասում նախատեսված «օրենքի հիման վրա» ձևակերպումը (կրկին նշենք, որ նույնանում է «օրենքով սահմանված դեպքերում» պայմանի հետ) տարածվում է նաև ՀՀ կառավարության, ՀՀ կառավարության անդամների և համայնքի ավագանու վրա: Քանի որ նշված մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտեր ընդունելու մասին սահմանադրական հատուկ նորմում նշված չէ օրենքի հիման վրա (օրենքով նախատեսված դեպքերում) պայմանը,

⁶ Տե՛ս Ա. Ղամբարյան, Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում (դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի և ռեզլամենտային ակտերի հարաբերակցության մասին), Օրինականություն, 2023, № 133, ISSN 1829-4219, էջ 61-101:

ուստի այս պարագայում գործում է ընդհանուր նորմը՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «օրենքի հիման վրա» պայմանը: Այլ կերպ ասած՝ օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է ընթերցել հետևյալ կերպ. «Կառավարությունն **օրենքով սահմանված դեպքերում** իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր»:

Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում, բացի «օրենքի հիման վրա» պայմանից, խոսվում է նաև «լիազորող նորմի» պայմանի մասին: Այժմ պետք է անդրադառնալ «լիազորող նորմի» և «օրենքի հիման վրա» պայմանների հարաբերակցությանը:

2.3. «Լիազորող նորմի» պայմանը

2.3.1. Ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին դրույթը. լիազորող նորմ, թե՞ լիազորության իրականացման իրավական ձև: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված՝ «(...) կարող է օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին» ձևակերպումից բխում է, որ՝

- 1) ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին դրույթը լիազորող նորմ է,
- 2) այդ նորմը պետք է համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ Սահմանադրության տեքստում ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորող նորմի մասին ձևակերպման առկայությունը գործնականում առաջացրել է երկու հետևանք.

1) համապատասխան պետական մարմինների կարգավիճակը սահմանող օրենքների այն հոդվածներում, որտեղ թվարկվում են այդ մարմինների գործառնություններից բխող լիազորությունները (գործառնության լիազորություններ), ենթաօրենսդրական ակտ ընդունելը ներկայացվում է (կամ նման փորձ էր արվում) իբրև առանձին լիազորություն (օրինակը՝ հաջորդիվ),

2) այդ պետական մարմինները ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին ընդհանուր լիազորության հիման վրա փորձում են իրենց առնչվող ցանկացած հարց կարգավորել ենթաօրենսդրական ակտով, նույնիսկ եթե օրենքով ուղղակի սահմանված չէ կամ նրա գործառնության լիազորությունների առարկայից չէր բխում, որ այդ հարաբերությունը պետք է կարգավորվի ենթաօրենսդրական ակտով:

ՀՀ Սահմանադրության տեքստում ենթաօրենսդրական ակտ ընդունելը որպես լիազորություն (լիազորող նորմ) ներկայացնելը ճիշտ չէ:

Նախ՝ գործադիր իշխանության մարմինների համար նորմաստեղծ գործունեությունը (ենթաօրենսդրական ակտեր ընդունելը) նրա գործառնությամբ չէ. գործադիր իշխանության մարմնի կողմից ենթաօրենսդրական ակտ ընդունելու

մասին դրույթը չի կարող որակվել որպես լիազորող նորմ. նորմաստեղծ (օրինաստեղծ) գործունեությունը միայն օրենսդիր իշխանության մարմնի էությունն արտահայտող գործառույթն է:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին օրենսդրական դրույթը դոկտրինալ առումով չի կարող համարվել լիազորող նորմ, եթե նույնիսկ այդ դրույթը օրենսդրական սխալ տեխնիկայի հետևանքով ամրագրվել է համապատասխան օրենքի՝ տվյալ պետական մարմնի լիազորությունները թվարկող հոդվածում: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածը նվիրված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին: Նշված հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում գրված է. *«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման հանրապետության ողջ տարածքում»:*

Այս հոդվածի տեքստից պարզ է դառնում, որ օրենսդիրը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներ, այդ թվում ենթաօրենսդրական ակտեր ընդունելու հնարավորությունը որակել է որպես ինքնուրույն լիազորություն: Դոկտրինալ առումով որոշումներ ընդունելու հնարավորությունը ոչ թե ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթներից բխող ինքնուրույն լիազորություն է, այլ այդ գործառույթների և լիազորությունների իրականացման իրավական ձևերից մեկն է:

Գործառութային լիազորությունների և ենթաօրենսդրական ակտերով դրանք իրականացնելու տարբերակման հարցում օրինակելի է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 37-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի լիազորությունները, իսկ 2-րդ մասում նշվում է, որ համապատասխան լիազորություններն իրականացնելիս Հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական ակտեր:

Այն, որ ենթաօրենսդրական ակտ ընդունելու հնարավորությունը ինքնին գործառութային լիազորություն չէ, ապացուցվում է նաև հետևյալ հանգամանքով. եթե պետական մարմնի օրենսդրական լիազորությունների ցանկում ենթաօրենսդրական ակտեր ընդունելու հնարավորությունը նշվում է որպես լիազորություն, ապա այդ «լիազորությունը» ինքնին կյանքի չի կարող կոչվել, քանի դեռ օրենքով սահմանված չեն այն հարցերը (դեպքերը), որոնց վերաբերյալ տվյալ մարմինը կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտ: Նման «լիազորությունը» ըստ էության առարկայագուրկ է, իսկ առարկայագուրկ լիազորություններ չեն լինում (այս մասին հաջորդիվ):

Այսպիսով՝ գործադիր իշխանության մարմինների համար նորմաստեղծ գործունեությունը նրա գործառույթը չէ. գործադիր իշխանության մարմինների

գոյութենական հիմքը ոչ թե ենթաօրենսդրական ակտերում նորմեր ամրագրելն է, այլ կառավարչական-կազմակերպչական գործառույթներ իրականացնելն է: Ենթաօրենսդրական ակտեր ընդունելը գործադիր իշխանության մարմինների գործառույթների և դրանցից բխող լիազորությունների (գործառութային լիազորություններ) իրականացման իրավական ձևերից մեկն է:

Ասվածի տեսանկյունից ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ենթաօրենսդրական ակտերի ընդունման մասին դրույթը որպես «լիազորող նորմ» ներկայացնելը խնդրահարույց է:

2005 թվականի խմբ. ՀՀ Սահմանադրության մեջ նորմատիվ իրավական ակտերի ընդունման կապակցությամբ լիազորող նորմի մասին դրույթ նախատեսված չէր: Հարց է ծագում՝ 2015 թվականի խմբ. ՀՀ Սահմանադրությամբ ինչո՞ւ նախատեսվեցին լիազորող նորմի և դրա որոշակիության մասին դրույթները: Ամենայն հավանականությամբ դրա պատճառը դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերը գերմանական իրավունքում առկա պատվիրակված օրենսդրության (Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի) հետ շփոթելն է: Կրկին նշենք, որ պատվիրակված օրենսդրություն կարելի է համարել միայն այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման հիման վրա, այսինքն՝ օրենսդիր մարմինը Սահմանադրությամբ նախատեսված կարգավորման դեպքում ընդունում է հատուկ ակտ (պատվիրակման մասին օրենք), որտեղ նշվում են, թե կոնկրետ որ մարմինը, ինչ ժամկետում և ինչ հարցերի վերաբերյալ է իրականացնելու պատվիրակված օրինաստեղծ լիազորությունները⁷:

2.3.2. Իրավական որոշակիությունը՝ ենթաօրենսդրական ակտի՞ն, թե՞ պատվիրակված օրենսդրությանը ներկայացվող պահանջ: Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Օրենքը կարող է լիազորել Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարին կամ երկրամասերի կառավարություններին ընդունելու իրավական որոշումներ: Ընդ որում, օրենքով պետք է սահմանվեն տրված լիազորությունների բովանդակությունը, նպատակը և ծավալը (...)»⁸:

Գերմանացի մասնագետները նշում են, որ գործադիր իշխանության մարմինները նման որոշումներ կայացնում են լիազորությունների պատվիրակման հիման վրա, որի նպատակն է նվազեցնել օրենսդրի ծանրաբեռնվածությունը: Այս պատվիրակումը համարվում է իշխանության բաժանման սկզբունքի գիտակցված խախտում (Հիմնական օրենքի 20-րդ հոդված), քանի որ գործադիր իշխանությանը թույլատրվում է լուծել այնպիսի խնդիրներ, որոնք պետք է լուծեր օրենսդիր իշխանությունը: Այս հանգամանքը հաշվի առնելով Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում թույլատրվում է պատվիրա-

⁷ Տե՛ս Ա. Ղամբարյան, նշվ. աշխ., էջ 61-101:

⁸ Дубровин В.Н. Конституции зарубежных стран, М., Юрлитинформ, 2001, ISBN: 5-93295-036-6, с. 151.

կումը, եթե պատվիրակման մասին օրենքում նշվում են պատվիրակման բովանդակությունը, նպատակը և ծավալը (այսպես կոչված՝ «վստահության եռյակ (Bestimmtheitstria)»⁹: «վստահության եռյակը», այսինքն՝ պատվիրակման բովանդակությունը, նպատակը և ծավալը հստակ նշելու պահանջը գործում է միայն օրենսդրի կողմից իր օրինաստեղծման լիազորությունը գործադրին փոխանցելու դեպքում: Ընդ որում, պատվիրակման բովանդակությունը, նպատակը և ծավալը հստակ նշելու պահանջը գերմանական դոկտրինում անվանվում է «վստահության եռյակ», քանի որ այն, ամենայն հավանականությամբ, կոչված է երաշխավորելու, որ այլևս չի կրկնվի իրենց պատմության այն ամոթալի էջը, երբ 1933 թվականի «Լիազորման օրենքով» (Ermächtigungsgesetz) Հիտլերի կառավարությունը լիազորություն ստացավ առանց պառլամենտի մասնակցության ցանկացած հարցով ընդունելու օրենքներ:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության կողմնակիցները «լիազորող նորմի որոշակիության» պայմանը մեկնաբանում են Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում առկա «վստահության եռյակի» իմաստով, որը, ինչպես տեսանք, վերաբերում է պատվիրակված օրենսդրությանը: Այսպես. *«Ենթաօրենսդրական ակտերի ընդունում թույլատրող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը մասնավորապես նշանակում է, որ դրանք պետք է սահմանեն կոնկրետ ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորության բովանդակությունը, նպատակը և ծավալը»*¹⁰: Վ. Պողոսյանը և Ն. Սարգսյանը նշում են. *«Լիազորող նորմը պետք է համապատասխանի որոշակիության սկզբունքին, այսինքն՝ պետք է լինի բավականաչափ հստակ՝ օրենսդրի կամքի բովանդակությունն ու սահմանները հասկանալու համար»*¹¹:

Այս մեջբերումներից պարզ է դառնում, որ հայկական իրականության մեջ գործող՝ «լիազորող նորմի որոշակիության» սահմանադրական դրույթը առանց բավարար պայմանների մեկնաբանվում է գերմանական իրավունքի «վստահության եռյակի» իմաստով: Ընդ որում, փոխանցվող (պատվիրակվող) լիազորություններին ներկայացվող բովանդակային և ժամկետային խիստ սահմանափակումները («վստահության եռյակը») ներհատուկ են օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակմանը: Օրենսդրության պատվիրակման նկատմամբ նման խիստ պահանջները բացատրվում են այն հանգամանքով, որ օրենսդիրը գործադիր իշխանության մարմնին պատվիրակում

⁹ Лундмарк Т.О. Очерки сравнительного правоведения, СПб., Алеф-Пресс, 2022, ISBN: 978-5-9059-6600-21, с. 439.

¹⁰ Գ. Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Եր., 2020, էջ 113:

¹¹ Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությանը Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Եր., Տիգրան Մեծ, 2016, էջ 30:

է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ այն հարցերի վերաբերյալ, որոնք գտնվում են օրենսդրի իրավասության ներքո, ուստի լիազորությունների պատվիրակումը պետք է ունենա հստակ սահմաններ և լինի կոնկրետ:

«Լիազորող նորմի որոշակիության» պայմանը գերմանական ավանդույթներով մեկնաբանելը թույլատրելի կլիներ առնվազն այն դեպքում, եթե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված լիներ պատվիրակված օրենսդրության ինստիտուտը: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» ձևակերպման առկայությունը ինքնին վկայում է, որ այս հոդվածը չի վերաբերում պատվիրակված օրենսդրությանը: Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում գործածվող «օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով» ձևակերպումը ուղիղ ապացուցում է, որ այդ հոդվածում խոսքը դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին է, որոնք ընդունվում են ոչ թե օրինաստեղծ լիազորությունների պատվիրակման, այլ կոնկրետ օրենքի հիման վրա և դրա իրականացման նպատակով:

Եթե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին (որոնք պետք է ընդունվեն օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքի), ապա այդ հոդվածում «օրենքի հիման վրա» պայմանին զուգահեռ ինչո՞ւ են օգտագործվում «լիազորող նորմի և դրա որոշակիության» մասին դրույթները. չէ՞ որ «օրենքի հիման վրա» պայմանն արդեն իսկ նշանակում է, որ օրենսդիրը նախատեսում է առաջնային կարգավորումներ, իսկ գործադիր իշխանության մարմինները այդ օրենքի հիման վրա և դրա իրականացումն ապահովելու նպատակով սահմանում են երկրորդային կարգավորումներ: «Օրենքի հիման վրա» պայմանի թելադրանքով օրենսդիրը սահմանում է այն հարցերի (դեպքերի) շրջանակը, որոնց վերաբերյալ գործադիր իշխանության իրավասու մարմինը կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտեր: Ասվածից պարզ է դառնում, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենքի հիման վրա» պայմանի առկայությունը իմաստագրվում է «լիազորող նորմի» պայմանի գոյությունը: Ի դեպ, Վենետիկի հանձնաժողովը «լիազորող նորմերի և դրա որոշակիության մասին» դրույթները որակել էր ոչ այնքան հասկանալի: Այսպես՝ 2015 թվականի ՀՀ Սահմանադրության նախագծի վերաբերյալ ներկայացված № 757/2014 կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշել է. «Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին» ձևակերպումը պարզ չէ: Բոլոր դեպքերում, իրավական որոշակիության սկզբունքին հղումը պետք է թողնել այս կետում, Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից կիրառվող ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ, այն չպետք է սահմանափակվի միայն «լիազորող նորմերով»¹²:

¹² Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ

Այնուամենայնիվ չենք կարող հաշվի չնստել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «լիազորող նորմի իրավական որոշակիության» պայմանի գոյություն հետ, ուստի «իրավական որոշակիության» պայմանի առկայությունն արդարացնելու նպատակով հարկադրված ենք «օրենքի հիման վրա» և «իրավական որոշակիության» պայմանները համադրել, որի արդյունքում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է ընթերցել հետևյալ կերպ՝ «ենթաօրենսդրական ակտեր կարելի է ընդունել միայն օրենքով **հստակ (որոշակի)** սահմանված դեպքերում»: Այլ կերպ ասած՝ խոսքը պետական մարմնի լիազորությունների առարկան, որը պետք է կարգավորվի նորմատիվ բնույթի ակտով, օրենքով որոշակի (հստակ) սահմանելու մասին է:

Ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող դեպքերը (լիազորության առարկան) օրենքով **հստակ (որոշակի) սահմանելու** պահանջը (in rem հստակեցում) բխեցվում է «որոշակիության» պայմանից:

3. Ենթաօրենսդրական ակտով կարգավորվող դեպքերը սահմանելու հստակությունը և ենթաօրենսդրական ակտ ընդունելու կամքի արտահայտման եղանակը

3.1. Ընդհանուր դրույթներ

Ենթաօրենսդրական ակտերի ընդունման ոլորտում հստակության (որոշակիության) ընդհանուր պայմանից բխում են in personam (ըստ սուբյեկտի) և in rem (ըստ առարկայի) հստակեցման պահանջները:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու in personam հստակեցման պահանջը օրենսդրին պարտավորեցնում է սահմանել, թե գործադիր իշխանության որ մարմնի իրավասությունների մեջ է մտնում տվյալ հարցի կարգավորումը: Ենթաօրենսդրական ակտերով հարցերը կարգավորելու ոլորտում in personam անորոշությունը կարող է առաջացնել պետական մարմինների իրավասության վերաբերյալ նեգատիվ կամ պոզիտիվ վեճեր (in personam հստակեցման պահանջը դուրս է սույն ուսումնասիրության առարկայից)¹³:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու in rem հստակեցման պահանջը Օ-

նախնական կարծիք, Ստրասբուրգ, 2015, CDL-PI (2015)015rev, Տե՛ս նաև՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2015\)015rev-arm&fbclid=IwAR1eX-gM-6BmrNQ361YerS2lRiarth1sd_KnSr5_Cwm1oSh3TaNKhUsvN7o](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)015rev-arm&fbclid=IwAR1eX-gM-6BmrNQ361YerS2lRiarth1sd_KnSr5_Cwm1oSh3TaNKhUsvN7o)

¹³ Օրինակ՝ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագծի 33-րդ հոդվածում սահմանված է հետևյալ դրույթը. «Հաշմանդամություն ունեցող, կերակրողին կորցրած կամ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է օրենսդրությամբ» (<https://www.e-draft.am/projects/5592>): Այս դրույթը ենթաօրենսդրական ակտ ընդունելու in personam հստակեցման պահանջի խախտման օրինակ է, քանի որ Նախագծից չի երևում, թե գործադիր իշխանության որ մարմնին է վերապահված կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգը սահմանելու լիազորությունը:

րենսդրին պարտավորեցնում է սահմանել, թե գործադիր իշխանության իրավասու մարմինը որ հարցերը (դեպքերը) կարող է կարգավորել ենթաօրենսդրական ակտերով (լիազորության առարկայի in rem հստակեցում):

3.2. Օրենքով սահմանված դեպքերի (in rem) հստակությունը

Որպեսզի գործադիր իշխանության մարմինները չըջանցեն միայն օրենքով սահմանված դեպքերը (հարցերը) ենթաօրենսդրական ակտերով կարգավորելու պահանջը և լուծեն իրենց իրավասությանը չվերապահված հարցեր, Օրենսդիրը պետք է հնարավորինս հստակ սահմանի այն դեպքերը (հարցերը), որոնք թողնվում են գործադիր իշխանության մարմինների կարգավորմանը:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու in rem հստակեցման պահանջի ապահովման լավագույն օրինակը կրկին ամրագրված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածում, որի 2-րդ մասում սահմանված է. *«Հանձնաժողովը սույն հոդվածի 1-ին մասի 13-31-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր»:*

Օրենսդիրն այս նորմով բավարար հստակությամբ սահմանել է հանձնաժողովի այն լիազորությունները և դրանց առարկան (հարցերի շրջանակը), որոնք իրականացվում (կարգավորվում) են ենթաօրենսդրական ակտեր ընդունելով:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու in rem հստակեցման պահանջը ապահովելու հարցում կարևոր է ոչ միայն դրա ձևական կողմը, այլ նաև այն, որ համապատասխան մարմնի լիազորությունների առարկան (հարցերը) ձևակերպված լինի (լինեն) հստակ: Ներկայացնենք ենթաօրենսդրական ակտ ընդունելու in rem հստակեցման պահանջի խախտման օրինակ: Այսպես՝ ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորներ շրջանառության մեջ էին դրել հինգ հոդվածից բաղկացած՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման մասին» (փաստաթղթային կոդ՝ Պ-1073-27.09.2016-ՖՎ-010/0) ՀՀ օրենքի նախագիծը, որի 4-րդ հոդվածում սահմանված էր. *«Սույն օրենքի պահանջները կարգավորող դրույթները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:*

Այս դրույթում հստակ չէ, թե ՀՀ կառավարությունը ինչ հարցեր պետք է սահմաներ: Ավելին, իրավաբանական և տրամաբանական տեսանկյուններից դժվար է հասկանալ, թե ինչպես է հնարավոր ՀՀ կառավարությունից պահանջել սահմանել դրույթներ, որոնք կարգավորում են օրենքի պահանջները:

Այս նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչությունը 20.10.2016 թ. թիվ ԻՎ-ե-109 եզրակացության մեջ նշել է. *«Նշված դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանդրության 6-րդ և 79-*

րդ հողվածներով (ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածը վերաբերելի չէ այս հարցին՝ հեղ.) ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի պահանջին: (...) Հիշյալ սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ լիազորող նորմերը պետք է սահմանեն այդ լիազորությունների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այլ լիազորությունների կամ իրավասությունների կրողներն կարողանան դրսևորել որոշակի վարքագիծ, մինչդեռ Նախագծի նշված դրույթը խիստ անորոշ է, մասնավորապես՝ «սույն օրենքի պահանջները կարգավորող դրույթներ» հասկացությունը որոշակի չէ և թույլ չի տալիս հստակ որոշելու կառավարության լիազորությունների ծավալը և չի սահմանում կոնկրետ վարքագծի կանոններ, ինչն իրավակիրատ պրակտիկայում կարող է առաջացնել որոշակի անորոշություն»¹⁴:

Այս նախագիծը չի ընդունվել (arlis.am համակարգում նման օրենքի մասին տեղեկություններ չկան): ՀՀ կառավարությունը 07.03.2019 թ. № 184-Լ որոշմամբ հաստատել է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը:

Ի դեպ, շեղվելով բուն հետազոտության առարկայից, նշենք, որ ՀՀ կառավարության այս որոշումն ընդունվել է «օրենքով սահմանված դեպքերում» կամ «օրենքի հիման վրա» սահմանադրական պահանջների խախտմամբ, քանի որ օրենսդիրը չի սահմանել այս հարցերով ենթաօրենսդրական կարգավորում նախատեսելու հնարավորություն:

Նախ՝ ՀՀ կառավարությունն իր այս որոշումը թեև որակել է լոկալ ակտ (որոշման հերթական համարից հետո նշված է «Լ» տառը), սակայն այն ակնհայտորեն նորմատիվ բնույթի է, քանի որ ունի արտաքին ներգործություն. Ծրագրում նշված է, որ ծրագրի նպատակն է ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը: Ծրագիրն ունի սահմանափակող դրույթներ, օրինակ՝ Ծրագրի 14-րդ կետում սահմանված է, թե ովքեր չեն կարող մասնակցել Ծրագրին, 15-րդ կետում սահմանված են վարկի մարման ժամկետները, իսկ 16-րդ կետում՝ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցնելու դեպքերը:

ՀՀ կառավարությունն արտաքին ազդեցություն ունեցող նորմատիվ բնույթի որոշումը որակել է որպես լոկալ իրավական ակտ, ամենայն հավանականությամբ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «օրենքի հիման վրա» պահանջը շրջանցելու նպատակով:

Երկրորդ՝ ՀՀ կառավարությունն այս որոշման նախաբանում օրենքի վրա

¹⁴ Տե՛ս «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման մասին» (փաստաթղթային կոդ՝ Պ-1073-27.09.2016-ՖՎ-010/0) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, տե՛ս նաև http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=3&ID=8322

հղում չի տվել, այսինքն՝ խախտվել է ենթաօրենսդրական ակտերը «օրենքի հիման վրա» ընդունելու պայմանը: Այս որոշման նախաբանում հղում է տրված միայն ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, որում նշված է. «Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը»: Պարզ է, որ ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված չէ դրույթ այն մասին, որ ՀՀ կառավարությունը կարող է լուծել ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման հարցեր:

Երբեմն գործադիր իշխանության իրավասու մարմինը դուրս է գալիս իր առարկայական իրավասության սահմաններից և ենթաօրենսդրական ակտում լուծում է այնպիսի հարցեր, որոնք ակնհայտորեն դուրս են օրենքով սահմանված դեպքերի շրջանակից: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն 20.1 հոդվածի 3-րդ մասով սահմանված է. *«Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը»:*

Օրենքի այս դրույթից հասկանալի է, որ ՀՀ առողջապահության նախարարը ենթաօրենսդրական ակտով կարող է կարգավորել անհատական պաշտպանության միջոցների կիրառման, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների հետ կապված հարցերը, բայց ոչ՝ ֆինանսական բնույթի հարցեր: Մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարը, հիմք ընդունելով վերը նշված դրույթը, 20.08.2021 թ. ընդունել է N 65-Ն հրամանը, որի 1-ին կետով աշխատողների համար սահմանել է հետևյալ պարտականությունը. *«Աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող (...) սերտիֆիկատ (...): ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին (ընդգծումը՝ հեղ.)»:*

ՀՀ սահմանադրական դատարանը 23.12.2021 թ. ՄԴՈ-1621 որոշմամբ քննարկել է այն հարցը, թե վերը նշված օրենքի 20.1 հոդվածի 3-րդ մասն արդյոք լիազորում է Նախարարին ենթաօրենսդրական ակտով սահմանելու ֆինանսական բնույթի հարցը, այսինքն՝ աշխատողների հաշվին ՊՇՌ հետազոտություն իրականացնելու պարտականություն: ՀՀ սահմանադրական դատարանը 23.12.2021 թ. ՄԴՈ-1621 որոշմամբ նշել է. *«Օրենքի այլ իրավակարգավորումներից չի բխում, որ Օրենքն Առողջապահության նախարարին վերապահել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) 31 ախտորոշման ՊՇՌ»:*

հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող սուբյեկտների (աշխատողների) շրջանակը սահմանելու լիազորություն: (...) Առողջապահության նախարարը Հրամանով աշխատողի վրա ՊՇՌ հետազոտությունը սեփական միջոցների հաշվին իրականացնելու պարտականություն սահմանելու համար համապատասխան լիազորություն չունի: (...) ՊՇՌ հետազոտության ծառայությունների մատուցման իրավահարաբերություններում գույքային պարտականությունների կրողների շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի լիազորություններից: Դրանք կարգավորվում են այլ իրավական ակտերով, որոնց սահմանադրականության ստուգումը սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակից դուրս է»:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ առողջապահության նախարարի քննարկվող հրամանի՝ «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին հակասող և անվավեր՝ նկատի առնելով, որ ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող շրջանակի սահմանումը դուրս է ՀՀ առողջապահության նախարարի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից:

Կրկին շեղվելով հետազոտության անմիջական առարկայից՝ նշենք ՀՀ սահմանադրական և ՀՀ վարչական դատարանների իրավասության տարանջատման տեսանկյունից կարևոր հանգամանքի մասին: Անհրաժեշտ է հասկանալ այս գործով ՀՀ առողջապահության նախարարի հրամանի վիճարկվող դրույթը հակասում էր անմիջապես ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին, թե՛ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1 հոդվածի 3-րդ մասին: Այնպիսի տպավորություն է, որ այս պարագայում ՀՀ առողջապահության նախարարը դուրս է եկել օրենքով հստակ սահմանված իր լիազորությունների սահմաններից, ուստի այդ ակտը հակասում էր անմիջապես ոչ թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին, այլ նշված օրենքին: Եթե այս պնդումը ճիշտ է, ապա նախարարի այս նորմատիվ որոշման իրավաչափությունը պետք է որոշեր ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանը, այլ ՀՀ վարչական դատարանը: Բոլոր դեպքերում փաստ է, որ ՀՀ սահմանադրական դատարանն այս գործով իրականացրել է արդարադատություն, ուստի ստեղծել է պրակտիկա, ըստ որի՝ գործադիր իշխանության մարմինների կողմից օրենքով հստակ սահմանված լիազորություններից դուրս գալն առաջացնում է ոչ թե այդ ակտի օրինականության, այլ սահմանադրականության հարց (նման ակտերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին), ուստի նման հարցերը պետք է քննի ՀՀ սահմանադրական դատարանը:

3.3. Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու մասին օրենսդրի կամքի արտահայտման եղանակները

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու օրենսդրի կամքը հնարավոր է սահմանել օրենքով ինչպես ուղղակի, այնպես էլ այլ եղանակով:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու կամքի ուղղակի արտահայտման եղանակի դեպքում օրենսդիրը օրենքում ուղիղ նշում է, որ օրենքով սահմանված հարցերը կարգավորելու նպատակով ընդունվում են ենթաօրենսդրական ակտեր: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու օրենսդրի կամքի ուղղակի արտահայտման եղանակի օրինակ է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը:

Պարտադիր չէ, որ օրենսդիրը յուրաքանչյուր լիազորության իրականացման կապակցությամբ ուղղակի սահմանի, որ այն իրականացվում է ենթաօրենսդրական ակտեր ընդունելու ձևով: Ենթաօրենսդրական ակտ ընդունելու Օրենսդրի կամքը հնարավոր է արտահայտել նաև անուղղակի եղանակով: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ Օրենսդիրը թեև ուղիղ չի նշում այս կամ այն հարցով ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին, սակայն պետական մարմնի լիազորության առարկան կազմող հարցերի բնույթից ակնհայտ է, որ այն կարող է լուծվել միայն նորմատիվ բնույթի ակտերի միջոցով: Օրինակ՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Մարզպետն առողջապահության բնագավառում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված կարգով կայացնում է կարանտին սահմանելու մասին որոշում»:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 4-րդ ենթակետի համաձայն. «Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են նաև (...) 4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը, 5) անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Մարզպետի այս լիազորության առարկան կազմող հարցերի բնույթից հստակ է, որ մարզպետի սահմանած՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջն անորոշ (չանհատականացված) թվով բնակչությանը հասցեագրված (արտաքին ներգործությամբ) վարքագծի պարտադիր կանոններ են, ուստի մարզպետը՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին, այս գործառնության լիազորությունը կարող է իրականացնել նորմատիվ իրավական ակտ ընդունելու ձևով:

4. «Օրենքի հիման վրա» պայմանը և ենթաօրենսդրական ակտ ընդունելու ինքնալիազորման արգելքը

«Օրենքի հիման վրա» պայմանի հետ առնչվում են նաև իրավասության իրավասություն (Kompetenz-Kompetenz) դոկտրինը և ինքնալիազորման արգելքը:

Եթե պետության իրավական համակարգում իրավասության իրավասություն դոկտրինն ունի ճանաչում, ապա այն հնարավորություն է տալիս իրավասություն կրողին ընդլայնելու սեփական լիազորությունները՝ սահմանափակելով այլ մարմինների լիազորությունները (օրինակ՝ դաշնային պետություններում դաշնության կենտրոնը ընդլայնում է իր լիազորությունները՝ սահմանափակելով դաշնության սուբյեկտի իրավասության ոլորտը): Ռուսական դոկտրինում իրավասության իրավասությունը երբեմն ներկայացվում է այլ կերպ՝ պետական մարմնի իրավասությունը՝ որոշելու այլ մարմնի իրավասությունը¹⁵: Իրականում իրավասության իրավասություն դոկտրինի էությունն այն է, որ պետական մարմինը ոչ թե որոշում է մեկ այլ մարմնի իրավասությունը, այլ ինքն իրեն նոր լիազորություններ վերապահելով՝ ընդլայնում է իր իրավասությունը և սահմանափակում մեկ այլ պետական մարմնի լիազորությունը:

Իրավասության իրավասություն դոկտրինն անհամատեղելի է «օրենքի հիման վրա» պայմանի հետ, քանի որ, ինչպես նշվեց, այս պայմանի համաձայն՝ գործադիր իշխանության մարմինը միայն օրենքով սահմանված լիազորությունների առարկայի (օրենքով սահմանված դեպքերի) վերաբերյալ կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտեր: Գործադիր իշխանության մարմինը չի կարող ինքն իրեն վերապահել լիազորություններ և դրանց առարկան կազմող հարցերի վերաբերյալ ընդունել ենթաօրենսդրական ակտեր:

«Օրենքի հիման վրա» պայմանը ներդաշնակ է ինքնալիազորման արգելքի հետ: Ի հակադրություն իրավասության իրավասություն դոկտրինի՝ ինքնալիազորման արգելքը չի հանդուրժում պետական մարմնի կողմից ինքն իրեն (առանց օրենքի վերապահման) լիազորություններ սահմանելու և դրանք իր նորմատիվ բնույթի ակտերով որոշելու պրակտիկան:

ՀՀ իրավական համակարգը մերժում է իրավասության իրավասություն դոկտրինը: ՀՀ սահմանադրական համակարգը ճանաչում է ինքնալիազորման արգելքը և «օրենքի հիման վրա» պայմանը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական մարմինը իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է օրենքներով, պահանջից և 2-րդ մասի՝ ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունվել միայն օրենքի հիման վրա, պահանջից հասկանալի է դառնում, որ, ընդհանուր առմամբ, ՀՀ-

¹⁵ Sté u **Шустров Д. Г.** Между Сциллой и Харибдой: конституционный контроль за поправками к Конституции и политика // Вестник Московского университета, Серия 11: Право, 2019, № 2, էջ 94:

ում մերժվում է իրավասության իրավասություն դրկտրինը և գործում է ինքնալիազորման արգելքը: Ասվածը չի վերաբերում պետական մարմինների իմպլիցիտ (ենթադրյալ) լիազորություններին, որոնք օրենքի տեքստում թեև ուղղակիորեն ձևակերպված չեն, սակայն անվիճելիորեն բխում են տվյալ մարմնի էությունն արտահայտող գործառույթներից (սա քննարկման այլ հարց է):

Եզրակացություններ

Գործադիր իշխանության մարմինների համար ենթաօրենսդրական ակտ ընդունելը ոչ թե գործառութային լիազորություն է, այլ օրենքով սահմանված համապատասխան գործառութային լիազորությունների իրականացման իրավական ձև է:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենքի հիման վրա» պայմանի առկայությունը իմաստագրվում է «լիազորող նորմի» պայմանի գոյությունը: «Օրենքի հիման վրա» պայմանի թելադրանքով օրենսդիրը սահմանում է այն հարցերի (դեպքերի) շրջանակը, որոնց վերաբերյալ գործադիր իշխանության իրավասու մարմինը կարող է ընդունել ենթաօրենսդրական ակտեր:

Այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում «լիազորող նորմի իրավական որոշակիության» պահանջի գոյության պայմաններում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է ընթերցել հետևյալ կերպ՝ «ենթաօրենսդրական ակտեր կարելի է ընդունել միայն օրենքով **հստակ** սահմանված դեպքերում»: Ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող դեպքերը (լիազորության առարկան) օրենքով հստակ սահմանելու պահանջը (in rem հստակեցում) բխեցվում է «որոշակիության» պայմանից:

Ենթաօրենսդրական ակտ ընդունելու օրենսդրի կամքը հնարավոր է արտահայտել ոչ միայն ուղղակի, այլ նաև անուղղակի եղանակով, երբ օրենսդիրը թեև ուղիղ չի նշում այս կամ այն հարցով ենթաօրենսդրական ակտ ընդունելու մասին, սակայն պետական մարմնի լիազորության առարկան կազմող հարցերի բնույթից ակնհայտ է, որ այն կարող է լուծվել միայն նորմատիվ բնույթի ակտերի միջոցով:

ՀՀ իրավական համակարգը ճանաչում է ինքնալիազորման արգելքը և «օրենքի հիման վրա» պայմանը:

АРТУР ГАМБАРЯН – Условия принятия подзаконного акта «на основании закона» и «уполномочивающей нормы». – В данной статье изучены общая характеристика условий принятия подзаконного акта «на основании закона» и «уполномочивающей нормы» и их соотношение в конституционном праве РА с учетом подходов и опыта немецкой и российской доктрины по указанной тематике, а также четкость определения случаев, регулируемых подзаконным актом, способ выражения воли принятия подзаконного акта и запрет самоуполномочивания на принятие подзаконного акта. Актуальность темы обусловлена отсутствием системного толкования законодательной базы принятия подзаконного акта органами исполнительной власти, что приводит к несоблюдению единообразия соответствующих терминов, наличию опечаток, неправильному толкованию функций органов исполнительной власти и других правовым проблемам. В результате

изучения темы можно сделать вывод, что в правовой системе РА действуют условие «на основании закона» и запрет на самоуполномочивание, а для органов исполнительной власти принятие подзаконного акта - это юридическая форма осуществления определенных законом соответствующих функциональных полномочий, которая может быть решена только посредством актов нормативного характера.

Ключевые слова: *подзаконный акт, «на основании закона», уполномочивающая норма, запрет на самоуполномочивание, конституционное право, органы исполнительной власти, функции*

ARTUR GHAMBARYAN – "Law-Based" and "Authorizing Norm" Conditions for Adopting a Sub-Legislative Act and Their Correlation. – This article examines the general characteristics of the "law-based" and "authorizing norm" conditions for adopting a sub-legislative act and their correlation in the RA constitutional law, taking into account the existing knowledge and experience in the German and Russian doctrines on the above topic, as well as the clarity of defining the cases regulated by the by-law, the method of expressing the will to adopt a by-law and the prohibition of self-authorization to adopt a by-law. The relevance of the chosen topic due to the lack of systematic interpretation of the legislative base for the adoption of a sub-legislative act by the bodies of the executive power leading to non-compliance of the corresponding terms, presence of bugs, incorrect interpretation of the functions of executive power bodies and other legal problems. As a result of the study of the topic, it can be concluded that the prohibition of self-authorization and the condition "on the basis of law" apply in the RA legal system, and the adoption of a sub-legislative act for the bodies of the executive power is a legal form of exercising the relevant functional powers defined by the law, which can be resolved only through acts of a normative nature.

Key words: *a sub-legislative act; "Law-based"; authorizing norm; the prohibition of self-authorization, constitutional law, executive authorities, functions*

ԻՐԱՎԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում է իրավանորմերի որակի բարելավման համար էական ազդեցություն ունեցող հասարակության ներկայացուցիչների կյանքի որակի բարելավման, կենսագործունեության հարմարավետության, իրավագիտակցության զարգացման ճանապարհով ռազմավարական և ծրագրային պետություն ձևավորելու գործընթացը: Նպատակի իրագործման տեսանկյունից կարևոր է մշակել և ներդնել այն գործիքակազմն ու բովանդակային առաջարկները, որոնք կնպաստեն իրավանորմերի որակի բարելավմանը: Ըստ այդմ՝ առաջնային են իրավանորմերի ձևավորման գործընթացում հանրային լայն ներգրավվածության ապահովումը, իրական և իրատեսական մեխանիզմների ներդրումը՝ հաշվի առնելով արտասահմանյան լավագույն փորձը, տեղայնացնելով այն տեղական պայմաններին և հասարակական պահանջունքներին: Հատկապես ուշադրության է արժանի իրավակազմավորումը՝ որպես նորմատիվի առաջնային փուլ, որը բովանդակային առումով ոլորտային իրավակարգավորումների վերաբերյալ հանրային պահանջունքների, կարծիքի, դիրքորոշումների ուսումնասիրության, վերլուծության, գնահատման, հանրային կարծիքի ձևավորման նպատակով հանրության նախապատրաստության, այն է՝ իրավագիտակցության բարձրացման քայլերի ամբողջությունն է: Իրավակազմավորման փուլը տարբեր ձևաչափով և ազդեցության արդյունավետությամբ ու աստիճանով է գործում իրավունքի տարբեր աղբյուրների համատեքստում: Այսպես, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում իրավական սովորույթը որպես իրավունքի աղբյուր, լայնորեն կիրառվում է վարչաիրավական հարաբերությունների, քաղաքացիաիրավական հարաբերություններից՝ գործարար շրջանառության հարաբերություններում: Հարկ է նշել, որ անգլոսաքսոնական իրավա-

* **Հայկ Մարտիրոսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ

Айк Мартиросян – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права

Hayk Martirosyan – Candidate of Legal Sciences, Associate Professor of the Chair of Theory and History of State and Law, YSU

Էլ. փոստ՝ hayk.martirosyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0002-1651-0318>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.03.2024

Գրախոսվել է՝ 15.04.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

կան համակարգում իրավակազմավորման փուլի կարևորագույն և լայնորեն կիրառելի գործիք է նաև լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը, որոնց գործառույթություններն առնչվում են ոչ միայն տարբեր ազգային համայնքների, այլ նաև սոցիալական համայնքների գործունեությանը: Սակայն վերջիններիս գործունեությունն ակտիվորեն համադրվում է նաև ուղեղային կենտրոնների աշխատանքի հետ:

Բանալի բառեր – նորմաստեղծում, լոբբիզմ, ուղեղային կենտրոն, լեզվատիմություն, սոցիալականություն, իրավագիտակցություն, անվտանգության համակարգ

Նորմաստեղծման կամ իրավասահմանման գործընթացում իրավական երկու փուլերի՝ իրավակազմավորման և իրավաստեղծման գործունեների համակարգային խնդրի կարևորության մասին հետխորհրդային տարածքում առաջին անգամ քննարկման առարկան ձևավորվեց Վ. Ներսիսյանցի կողմից: Որպես իրավական ակտերի որակի ապահովման կարևորագույն գործոն, հանրային մասնակցությունն ապահովող կարևորագույն մեխանիզմ՝ վերջինս մատնանշում էր, որ նորմաստեղծմանը կամ իրավասահմանման գործընթացին ամբողջապես պետք է հատուկ լինեն հետևյալ հատկանիշները.

- սոցիալական լեզվատիմություն,
- իրավական լեզվատիմություն,
- գիտական հիմնավորվածություն և պրոֆեսիոնալիզմ¹:

Ընդ որում, գիտնականի պնդմամբ՝ իրավական ակտի սոցիալական լեզվատիմությունը կարող է ապահովվել հանրային շահի արտացոլման մեխանիզմների կիրառման արդյունքում՝ նորմերի անհրաժեշտության վերաբերյալ հանրային հետաքրքրությունների ուսումնասիրության, գնահատման, վերլուծությանը: Նորմերի սոցիալական լեզվատիմությունը իրավակազմավորման փուլի արտացոլումն է: Սոցիալական լեզվատիմության բացակայությունը հետագա իրավական գործընթացները ձևականացնում է և բովանդակային առումով ընդհանուր առմամբ չի ապահովում նորմերի իրավական լեզվատիմությունը: Սոցիալական լեզվատիմության առկայությունը ապահովում է իրավունքի համընդհանուր սկզբունքների անշեղ կիրառման համար բավարար իրավական երաշխիքներ և հասարակության համար ապահովում է սոցիալական արդարության ընկալման բարձր աստիճան: Պետության պոզիտիվ պարտականության իրացումն այս առումով նշանակում է, որ պետք է ձևավորել անհրաժեշտ իրավական գործիքակազմ՝ նորմաստեղծ գործընթացում սոցիալական լեզվատիմությունն ապահովելու նպատակով: Ընդ որում, պետք է փաստել, որ հասարակական հարաբերությունների կարգավորման տարբեր ոլորտներում սոցիալական լեզվատիմության պահանջի ապահովման իրավական գործիքակազմը տարբեր է: Իրավական ակտերի որակի ապահովման վերոնշյալ

¹ Տե՛ս **Нерсисянц В.С.** Проблемы государства и права, М., 1999, էջ 58:

գործունեների վերաբերյալ իր դիրքորոշումն է արտահայտել նաև գերմանիացի գիտնական, դատական համակարգում երկարատև փորձ ունեցող Բերնդ Ռյուտերսը: Վերջինիս պնդմամբ՝ իրավական ակտի որակի ապահովումը կլինի երաշխավորված այն դեպքում, երբ նորմաստեղծ գործընթացում ապահովվեն դեմոկրատիզմն ու պրագմատիզմը: Դեմոկրատիզմի ապահովման ճանապարհը հասարակության ակտիվ ներգրավվածությունն է նորմերի հանրային պահանջի ուսումնասիրության փուլում, պրագմատիզմի ապահովման գրավականը պետական համակարգի պրոֆեսիոնալ գործունեությունն է: Ընդ որում, Ռյուտերսը հատուկ շեշտում է, որ ակտերում բացերն ու կոլիզիաներն առաջանում են ոչ միայն ձևական առումով կամ այլ կերպ ասած՝ ակտում հարաբերությունը կարգավորող դրույթի բացակայությամբ, այլ նաև սոցիալական լեգիտիմության բացակայությամբ, երբ նորմն ընդունվել է ձևական-իրավական որոշակիության պահպանմամբ, սակայն հանրային շահի և պահանջմունքների բացակայությամբ կամ անհամարժեք հաշվառմամբ²:

Իրավակազմավորման գործընթացի վերաբերյալ ուսումնասիրություններ և ըստ այդմ՝ պրակտիկայում դրա ներդրման իրավական առաջարկներ շշտում, ինչպես արդեն նշվեց, բացակայում են: Իրավակազմավորումը՝ որպես նորմաստեղծման առաջնային փուլ, բովանդակային առումով ոլորտային իրավակարգավորումների վերաբերյալ հանրային պահանջմունքների, կարծիքի, դիրքորոշումների ուսումնասիրության, վերլուծության, գնահատման, հանրային կարծիքի ձևավորման նպատակով հանրության նախապատրաստության, այն է՝ իրավագիտակցության բարձրացման քայլերի ամբողջությունն է: Իրավակազմավորման փուլը տարբեր ձևաչափով և ազդեցության արդյունավետությամբ ու աստիճանով է գործում իրավունքի տարբեր աղբյուրների համատեքստում: Այսպես, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում իրավական սովորույթը՝ որպես իրավունքի աղբյուր, լայնորեն կիրառվում է վարչաիրավական հարաբերությունների, քաղաքացիաիրավական հարաբերություններից՝ գործարար շրջանառության հարաբերություններում: Մասնավորապես ճանապարհատրանսպորտային հարաբերությունները, մինչև պետության կողմից սանկցավորվելը կամ կանոնակարգվելը, գործել են սովորութային դաշտում: Պետությունը իրավական ուժ է տվել այդ սովորութային կամ այլ կերպ ասած՝ դրանք համարել է պետության հարկադրանքի ուժով ապահովված՝ դիտարկելով դրանք իրավակազմավորման փուլով անցած և հանրային շահի տեսանկյունից դրական նորմեր:

Անգլոսաքսոնական իրավական համակարգում իրավակազմավորման փուլի կարևորագույն և լայնորեն կիրառելի գործիք է նաև լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը, որոնց գործառություններն առնչվում են ոչ միայն տարբեր ազգային համայնքների, այլ նաև սոցիալական համայնքների

² Տե՛ս **Ruthers/Fischer/Birk**, *Rechstheorie*, 2018, Rn. 938:

գործունեությանը: Սակայն վերջիններիս գործունեությունն ակտիվորեն համադրվում է նաև ուղեղային կենտրոնների աշխատանքի հետ:

Իրավունքի աղբյուրի տեսակների առումով ՀՀ-ում կիրառելի է նորմատիվ իրավական ակտը, որի առնչությամբ իրավակազմավորման գործընթացի մեխանիզմները պահանջում են համալիր, արմատական և համակարգային փոփոխություններ: Իրավակազմավորման փուլի բացակայությունը ՀՀ-ում հանգեցնում է իրավակիրառման գործընթացում բազմաթիվ խնդիրների, որոնցից հիմնականներն են.

- ընդունված նորմերի կիրառելիության անհնարինություն, աննպատակահարմարություն, մի շարք դեպքերում առանց խախտման կիրառելիության անհնարինություն,

- իրավական ակտերի անհարկի հաճախականությամբ փոփոխման գործընթաց, որն իր հետ բերում է իրավական անկայունություն,

- իրավական ակտի բովանդակության և տառի անհամապատասխանություն, իրավական անորոշություններ և բացեր, կոլիզիաներ, դրա հետ կապված՝ նորմերի մեկնաբանման գործընթացի բարդություններ:

Վերջին խնդրի հետ կապված՝ նորմերի մեկնաբանման գործընթացում ՀՀ-ում ձևավորված պրակտիկան չի արտացոլում մեկնաբանման իրավական գործընթացի իրական բովանդակությունն ու տրամաբանությունը: Մասնավորապես՝ նորմերի մեկնաբանման նպատակը դրանց ժամանակակից ընկալումը պարզելն է, այն է՝ պետք է գտնել օրենքի այն նշանակությունը, որը իրավաստեղծ մարմինն ամփոփել է իրավական ակտի տեքստում: Այս գործընթացում ՀՀ-ում էական են հակասությունները իրավական ակտի տեքստի, նորմաստեղծ մարմնի կարգավորման մտադրության և որ ամենաէականն է՝ դրանց և հանրային պահանջմունքների անհամապատասխանության միջև: Լուծման հիմնարար բանալին դրանց համադրման իրավական մեխանիզմների կիրառելիությունն է:

Իրավակազմավորման գործընթացը սկսվում է քաղաքացու իրավագիտակցության ձևավորման գործընթացից և ավարտվում իրավական ակտի տեքստում հանրային կամքի իրավական ձևակերպումներով: Իրավագիտակցության ձևավորման գործում կրթական և իրավական դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրները կարող են արդյունավետություն ապահովել հանրության կրթական գործընթացների շրջանակներում: Հարկ է նշել, որ իրավագիտակցության ու իրավամտաձողության ձևավորման և մակարդակի բարձրացման գործում հատկապես անգլոսաքսոնական համակարգի երկրներում էական աշխատանքներ են կատարվում ոչ միայն գիտակրթական համակարգերի միջոցով, այլև համայնքային կառավարման մակարդակում հանրային մասնակցայնության բարձր աստիճանի ապահովմանն ուղղված գործիքակազմի միջոցով, ինչպիսին խորհրդատվություններն են:

Իրավակազմավորման գործընթացի շրջանակներում էական է նաև հանրային կարծիքի հաշվառման, դրանց վերլուծության ու գնահատման և իրա-

վական ամրագրման գործիքակազմի ներդրումը: Գործընթացի ամբողջ նպատակը իրավաստեղծ գործընթացում հանրային պահանջմունքների առավելագույն հաշվառումն է և իրավական այնպիսի մեխանիզմների ձևավորումը, որը գործընթացը կդարձնի անշրջելի, կբարձրացնի իրավական ակտերի որակը, կիրառելիության շրջանակներում կնվազեցնի իրավախախտումների ռիսկերն ու ծավալները:

Իրավակազմավորման փուլի վերաբերյալ ուսումնասիրություններն ու առաջարկները պետք է հստակ պատասխանեն հետևյալ հարցերին.

1. իրավական կարգավորման ո՞ր ոլորտում ինչպիսի մեխանիզմներով և գործիքակազմով պետք է իրացվի իրավակազմավորումը,

2. ինչպիսի ամրագրում պետք է ունենա իրավակազմավորման փուլը՝ իրավական և սովորութային մակարդակներում:

Հարկ է արձանագրել, որ հիշյալ խնդիրների վերաբերյալ առաջարկներն էապես պայմանավորված են տվյալ պետության իրավական համակարգի զարգացման աստիճանով, հասարակության անհատական և կոլեկտիվ մակարդակներում իրավագիտակցության զարգացածության գործոնով: Ընդ որում, արդարացված չեն այն պնդումները, որ իրավագիտակցության ցածր աստիճան ունեցող հասարակություններում հանրությանը պետք է նորմաստեղծման գործընթացում ներառել հնարավորինս պասիվ աստիճանում իրավական ակտի նախագծի քննարկման միջոցով:

Իրավակազմավորման փուլում հանրային կարծիքի հաշվառման, վերլուծության, գնահատման գործընթացները տեղի են ունենում հետևյալ գործիքների կիրառմամբ՝ **ծանուցումների, խորհրդատվության, լոբբիզմի, ուղեղային կենտրոնների համալիր աշխատանքի միջոցով հանրության մեջ տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության վերլուծության, դրա գնահատման և իրավաստեղծ մարմիններին ազդակների փոխանցման եղանակով**: Հարկ է նշել, որ հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում կիրառվում է այդ մեխանիզմներից՝ տվյալ ոլորտի գնահատման առավելագույն և արդյունավետ տարբերակները:

Այսպես՝ հանրության անվտանգության, պաշտպանության ոլորտներում առավելագույն արդյունավետ մեխանիզմը ուղեղային կենտրոնների միջոցով աշխատանքն է, որի արդյունքում նաև հանրային մասնակցության ապահովմամբ վերլուծվում են պետության անվտանգային միջավայրի վերաբերյալ հասարակության սպասումներն ու ակնկալիքները, անվտանգությանը սպառնացող հանգամանքներին դիմագրավելու՝ հասարակության պատրաստվածության աստիճանը: Ըստ այդմ՝ փոխանցվում են այդ խնդիրները նաև այն մարմիններին, որոնք պետք է ընդունեն անվտանգության ոլորտի հիմնարար փաստաթղթեր: Ուղեղային կենտրոնների աշխատանքը կանոնակարգվում է պետության կողմից, սակայն դրանցում ներգրավվում են ոչ միայն պետական

համակարգի ներկայացուցիչներ, այլ նաև հանրային ներգրավվածություն ապահովող ոլորտների ներկայացուցիչներ, առաջին հերթին՝ գիտակրթական և սոցիալական հետազոտությունների ոլորտներից:

Անվտանգության ոլորտում իրավակազմավորման գործընթացի հաջող դրսևորում է ԱՄՆ անվտանգային համակարգում նորմաստեղծ աշխատանքի մոդելը: Մասնավորապես՝ ԱՄՆ անվտանգության ոլորտի ռազմավարությունը՝ որպես իրավական փաստաթուղթ, և դրանից բխող իրավական ակտերը ձևավորվում են ազգային անվտանգության մարմինների համակարգված աշխատանքի արդյունքում, որն ըստ էության ընթանում է հետևյալ գործընթացով: Մասնավորապես՝ ճյուղային ազգային անվտանգության մարմինների գործունեությունը Սպիտակ տնից համակարգվում է հետևյալ ուղղություններով. Նախագահին առընթեր բարձրագույն խորհրդատվական մարմինը՝ ԱԱԽ-ն, մշակում է ազգային անվտանգության հիմնական դրկտրինալ ռազմավարությունները, մշակում է արտաքին, պաշտպանական անվտանգության միջանկյալ և օպերատիվ միջամտություն պահանջող հանձնարարականներ՝ դրանով իսկ ապահովելով ընդհանուր ռազմավարության ղեկավարումը: *Աշխատանքներն Ազգային անվտանգության խորհուրդն իրականացնում է ուղեղային կենտրոնների հետ խիստ համաձայնեցված ռեժիմով: Ուղեղային կենտրոնների աշխատանքներն իրացվում են հանրային տրամադրվածությունների և ակնկալիքների նյութականացման դաշտում:*

21-րդ դարում անվտանգության ոլորտում ապագայի կանխատեսման, պետության գործունեության տարբեր ոլորտներին վերաբերող արտաքին և ներքին քաղաքականության մշակման գործում առանցքային նշանակություն ունեն ուղեղային կենտրոնները: Խնդրի հետազոտող Փոլ Դիքսոնը մատնանշում է, որ անվտանգության մարմինների պրոֆեսիոնալ աշխատանքի ապահովման կարևորագույն գրավականներից մեկը ուղեղային կենտրոնների հետ համադրված աշխատանքն է: Նրանք իրականացնում են գործնական քաղաքական-իրավական փորձաքննություն, պատրաստում են վերլուծական նյութեր և հիմնարար աշխատություններ, այդ թվում՝ հանրային տրամադրությունների հիման վրա, իսկ այդ գործառույթներն իրացնելիս ինտենսիվ համագործակցում են հասարակության տարբեր շերտերի ներգրավվածությունն ապահովող կենտրոնների հետ, մասնավորապես՝ գիտակրթական հաստատություններ, սոցիալական ծառայություններ: Ինտելեկտուալ արտադրանքի բոլոր այս տեսակները տարբերվում են գլոբալ գործընթացների ռազմավարական տեսլականով, որը հիմնված է աշխարհում քաղաքականության և տնտեսության ոլորտում փոփոխությունների գործընթացներում քաղաքական և սոցիալտնտեսական ցանկալի արդյունքների հասնելու վրա: Հարկ է նշել, որ անվտանգության մարմինների և ուղեղային կենտրոնների համակարգված գործակցությունը սկսվել է Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ ձևավորվեցին

համակարգ-կազմակերպություններ, որոնց խնդիրը և հետազոտական առարկայական շրջանակը հանգում է նախ պետության և հասարակության միջև կապի ապահովմանը, ապա նաև՝ պետության, հասարակության արտաքին և ներքին քաղաքականության, դրա մշակման և իրականացման վերաբերյալ բազմաուղորտ հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Ընդ որում, հարկ է նշել, որ ուղեղային կենտրոնների համակարգաստեղծ աշխատանքի արդյունք պետք է համարել տարբեր պետություններում անվտանգության մարմինների կազմակերպական առումով դիվերսիֆիկացված գործունեությունը կամ այլ կերպ ասած՝ վերջիններիս գործունեության՝ տարբեր պետական և ոչ պետական մարմիններում ներգրավվածությունը: Վերոնշյալ մեխանիզմն ապահովում է անվտանգային ոլորտի իրավական քաղաքականության, այդ թվում՝ իրավական-ռազմավարական փաստաթղթերի ընդունման ոլորտում հանրային շահի արտացոլումը:

Լավագույն ուղեղային կենտրոնները, որոնք նպաստում են անվտանգության մարմինների ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորմանը և զարգացմանը, անվտանգության ոլորտում տրամաբանված իրավական, հասարակական քաղաքականության իրականացմանը, ԱՄՆ-ի, Միացյալ թագավորության, Շվեդիայի ուղեղային կենտրոններն են:

ՀՀ-ում անվտանգության ոլորտում 2020 թ. հուլիսին ընդունված հիմնարար փաստաթուղթը՝ ազգային անվտանգության ռազմավարությունը, ընդունվել է առանց վերլուծական և հետազոտական կարողությունների իրացման: Ընդ որում, դրանում արտացոլված դրույթները փաստարկված չլինելու, անիրատեսական և ոչ պրագմատիկ ցանկությունների մակարդակից վեր չկանգնելու հանգամանքը, կանխատեսումային միջավայրում փորձաքննություն չանցնելու գործոններն իրենց զգացնել տվեցին ռազմավարության ընդունումից երկու ամիս անց սկսված և ՀՀ ու Արցախի համար ողբերգական ելք արձանագրած պատերազմում: Ընդ որում, դեռևս ռազմավարության նախագծի շուրջ ծավալված քննարկումների ժամանակ այս և այլ շատ հարցեր բարձրացվել են նաև տարբեր սուբյեկտների, այդ թվում նաև՝ ՔՀԿ-ների կողմից, որոնց պատասխանները տրվել են որևէ վերլուծություն և կանխատեսելիության ցուցանիշներ չպարունակող գեղեցիկ շարադրանքներով: Ռազմավարությունից բխող, աշխարհագրի ձևավորման իրավակարգավորումները, հարևան երկրների հետ հարաբերություններում կանխատեսումները ուղղակի ձախողվեցին պատերազմի փորձով: Սա ուղղակիորեն վկայում է այն մասին, որ հարաբերությունների կարգավորման հիմք հանդիսացող նույնիսկ ռազմավարական փաստաթղթերում բացակայում են հիմնավորող վերլուծությունները, տեղեկատվական բազաների հիմքով մշակված շտեմարանները, դրանցում արտացոլված տվյալների ազդեցության գնահատման կարողությունները նաև արհեստական բանականության ժամանակակից ռեսուրսների առկայության պարագայում:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորման դաշտում իրավակազմավորման իրացման արդյունավետ մեխանիզմը ծանուցումներն ու խորհրդատվություններն են: Այս առումով հատկապես ուշադրության է արժանի պետության ֆինանսական քաղաքականության իրականացման ոլորտում իրավակազմավորման գործընթացի բացակայությամբ պայմանավորված լրջագույն խնդիրները: Այսպես, գործարար միջավայրի բարելավման, հարկաբյուջետային քաղաքականության իրացման կարևորագույն սկզբունքներից է կանխատեսելիությունը, որը նյութականացվում է իրավական կանխատեսելիության միջոցով: Այս առումով չափազանց կարևոր է համապատասխան հասցեատերերին պետության քաղաքականության մասին իրազեկումը արդեն իսկ մտադրությունների փուլում, ինչից հետո միայն՝ տեղեկատվության վերլուծությունների հիման վրա նաև իրավաբանական ձևակերպումներին ձեռնամուխ լինելը: Վառ օրինակ է գույքահարկի դրույքաչափը կտրուկ բարձրացնելու վերաբերյալ գործող իրավակարգավորումը: Ընդ որում, թվացյալ պատկերն այն է, որ դրանով ապահովվում է սոցիալական արդարությունը՝ հաշվի առնելով գույքի արժեքը, գտնվելու վայրի գոտիականությունը և այլն: Սակայն իրականում կարգավորումն ազդում է նաև բիզնես ոլորտի վրա, քանի որ գույքահարկի դրույքաչափը ընդհուպ հինգ անգամ բարձրացել է նաև հասարակական նշանակության գույքի նկատմամբ: Այն շղթայականորեն հանգեցրել է նաև ապրանքների և մատուցվող ծառայությունների գների բարձրացման, սպառողների նյութական վիճակի վատթարացման: Չբացառելով գույքահարկի դրույքաչափի բարձրացման հնարավորությունը՝ հարկ է արձանագրել, որ նման կտրուկ բարձրացումը որևէ կերպ իրավական և տնտեսական հիմնավորումներ չունի: Ավելին, նշվածի միակ պատճառը պետական գանձարանում թերհավաքագրումն է և նաև այդ եղանակով ճեղքերը փակելը: Նմանատիպ քաղաքականություն իրականացվել է նաև հարկային օրենսդրության տարբեր ուղղություններում, ինչպես օրինակ՝ ակցիզային հարկի հարկման դաշտ լրացուցիչ ապրանքներ ներառելու վերաբերյալ 1990-ականներին ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ զգալով աճող դիմադրությունը և գործարարների ներկայացրած հիմնավոր վերլուծությունները այդ քաղաքականության արդյունքում տնտեսության մեջ կանխատեսվող բացասական հետևանքների վերաբերյալ՝ կառավարությունը հրաժարվեց այդ քաղաքականության իրականացումից: Եվ դա պատերազմական իրավիճակում, երբ պետության համար ֆինանսական սուղ միջոցների պայմաններում լրացուցիչ միջոցների ներգրավումը հրամայական էր: Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ իրավանդությունների ձևավորմանը պետք է նախորդի վերլուծական աշխատանքը: Վերլուծական տվյալների բացակայությունը հնարավորություն է ընձեռում իշխանության մարմիններին նաև չարաշահել դիրքը՝ նաև խմբային շահերից ելնելով, ինչպես օրինակ՝ հարկային արտոնությունների իրավակարգավորումների պարագայում: ՀՀ-ում հարկային արտոնությունները տարբեր սուբյեկտների շնորհիվում

են ՀՀ կառավարության որոշումներով, և այդ ցանկում ընդգրկված են նաև խոշոր գործարարներին պատկանող ընկերություններ: Առկա չէ որևէ տնտեսաիրավական վերլուծություն ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումներում, թե ինչպես դա կարող է ազդել տնտեսական մրցակցության վրա, երբ ի սկզբանե ստեղծվում են անհավասար պայմաններ՝ նաև ներդրումների չափից կախված՝ դրանով իսկ փոքր բիզնեսին դնելով անհավասար պայմաններում:

Իրավակազմավորման փուլի բացակայության, հանրային իշխանության կողմից սուբյեկտիվ որոշումների կայացման հաջորդ դաշտը վարչարարությանն առնչվող իրավակարգավորումներն են: Օրինակ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածում 2020 թ. նախաձեռնված փոփոխությունը, համաձայն որի՝ հայցի հարուցումը բավարար չէ վարչական ակտի գործողությունը կասեցնելու համար և անհրաժեշտ է լրացուցիչ միջնորդություն: Փաստաթղթի հեղինակ էկոնոմիկայի նախարարությունը հիմնավորումներում նշել է, որ նշված փոփոխությունը կձեռքբերի ներդրողներին խոչընդոտներից³: Փոփոխությունից հետո, սակայն, ներդրումների դիմումիկան չի փոխվել, իսկ դատարանների ծանրաբեռնվածությունն աճել է: Ընդ որում, փոփոխությունը դատարաններին կանգնեցրել է անլուծելի խնդրի առջև: Չլինելով քաղաքաշինության ոլորտի մասնագետներ՝ դատավորները չեն կարողանում կողմնորոշվել վարչական ակտի գործողությունը կասեցնելու հարցում և կայացնում են «կամայական» որոշումներ: Մա ևս մեկ անգամ նշանակում է, որ խնդրի լուծումը հիմնավորված չէ փաստական տվյալների վերլուծությամբ, անհրաժեշտության գնահատմամբ, սոցիալական տարբեր խմբերի, հարաբերության բոլոր մասնակիցների կարիքների ուսումնասիրությամբ:

Իրավակազմավորման փուլի իրացման կարևոր գործիքակազմ է նաև լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը: Վերջիններս պետության կողմից ծրագրվող ոլորտային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կամ ծանուցումների հիման վրա էապես նպաստում են հետադարձ կապի ապահովմանը: Բացի այդ, լոբբիստական կազմակերպությունները կարող են ներկայացնել նաև հասարակական հարաբերությունների իրավակարգավորման անհրաժեշտության վերաբերյալ իրենց նախաձեռնությունները: Օրինակ՝ ԱՄՆ նահանգային կառավարման մակարդակում օրենսդիր մարմնին իրավական նախաձեռնություններ ներկայացնելու իրավունք ունեն նաև քաղաքացիները, որոնց էապես օժանդակում են նաև լոբբիստական կազմակերպությունները: Սակայն մինչև այդ համայնքի շրջանակներում իրավակազմավորման դաշտում իրականացվում է բավականին բարդ ու ծավալուն աշխատանք և արդյունքում միայն նյութականացվում է իրավական ակտի նախագծի տեսքով⁴:

³ Փոփոխությունը կատարվել է քաղաքաշինության ոլորտում խոշոր կառուցապատողների և Երևան քաղաքի նախկին գլխավոր ճարտարապետ Ա. Մեսյանի լոբբիստական աշխատանքի արդյունքում:

⁴ Տե՛ս <https://www.scitepress.org/Papers/2018/100525/100525.pdf>, վերջին մուտք՝ 02"12"2023թ`

АЙК МАРТИРОСЯН – Концептуальные вопросы необходимости этапа правового формирования и предпосылки для реализации в РА. – Повышение качества правовых норм оказывает существенное влияние на процесс формирования стратегического и программного государства через повышение качества жизни представителей общества, комфорт жизни, развитие правосознания. С точки зрения реализации поставленной цели важно разработать и внедрить инструменты и содержательные предложения, которые приведут к повышению качества правовых норм. Первостепенное значение в этом вопросе имеет обеспечение широкого общественного участия в процессе формирования правовых норм, внедрение реальных и реалистичных механизмов, учитывающих лучший зарубежный опыт, локализирующих его под местные условия и общественные запросы. Особого внимания заслуживает правовое формирование как первичный этап нормотворчества, который по содержанию представляет собой совокупность шагов по изучению общественных запросов, мнений, позиций, анализа, оценки, формирования общественного мнения, то есть совокупность шагов повысить правовую грамотность. Законотворческий этап протекает в разном формате, с разной эффективностью и степенью влияния в контексте разных источников права. Так, в странах англосаксонской правовой системы правовой обычай как источник права широко используется в административно-правовых отношениях от отношений гражданско-правового характера до отношений делового оборота. Следует отметить, что в англосаксонской правовой системе важнейшим и широко применимым инструментом этапа законотворчества является также деятельность лоббистских организаций, деятельность которых связана не только с деятельностью различных национальных сообществ, но и деятельности социальных сообществ. Однако деятельность последних активно сочетается с работой мозговых центров.

Ключевые слова: *нормотворчество, лоббирование, мозговой центр, легитимность, социальность, правосознание, система безопасности*

HAYK MARTIROSYAN – Conceptual Issues of the Necessity of the Legal Formation Stage and the Prerequisites for Implementation in the RA. – Improving the quality of legal norms has a significant impact on the process of forming a strategic and programmatic state through the improvement of the quality of life of society representatives, the comfort of life, and the development of legal awareness. From the point of view of the realization of the goal, it is important to develop and implement the tools and substantive proposals that will lead to the improvement of the quality of legal norms. Ensuring broad public involvement in the process of forming legal norms, introducing real and realistic mechanisms that will take into account the best foreign experience, localizing it to local conditions and public demands, is of primary importance in this matter. Legal formation deserves special attention as the primary stage of rule-making, which in terms of content is the set of steps for the study, analysis, evaluation, public opinion, public demands, opinions, positions regarding the formation of public opinion, that is, the set of steps to raise legal awareness. The law-making phase operates in a different format and with the effectiveness and degree of influence in the context of different sources of law. Thus, in the countries of the Anglo-Saxon legal system, legal custom as a source of law is widely used in administrative and legal relations, from civil law relations to business circulation relations. It should be noted that in the Anglo-Saxon legal system, the most important and widely applicable tool of the law-making phase is also the operation of lobby organizations, whose operations are related not only to the operation of different national communities, but also to the operation of social communities. However, the activity of the latter is actively combined with the work of brain centers.

Key words: *Law making, lobbying, brain center, legitimacy, sociality, legal awareness, security system*

ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՔՐԵՍԴԵՍԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԿԱՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հետ կապված մի շարք հարցեր: Հոդվածում անդրադարձ է կատարվում 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 39-րդ գլուխներով նախատեսված գույքի արգելադրման նյութական հիմքի և դատավարական ընթացակարգի հետ կապված մի շարք կարգավորումների, որոնք տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում: Այսինքն, հոդվածի նպատակն է ներկայացնել այնպիսի խնդիրներ, որոնք առաջացել են իրավակիրառ պրակտիկայում: Այս առումով հոդվածը նաև արդիական է, քանի որ ներկայացվող մոտեցումները կարող են հետաքրքրել ինչպես ուսանողներին, այնպես էլ փաստաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցներին և դատավորներին: Հոդվածը նվիրված է ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող գույքն իրեն հապաքող ճանաչելու որոշումների իրավաչափության հետ կապված մի շարք խնդիրների, որոնք հանդիպում են իրավակիրառ պրակտիկայում:

Բանալի բառեր – սեփականության իրավունք, սեփականության իրավունքի սահմանափակում, դատական երաշխիքներ, իրեղեն ապացույց, գույքի արգելադրում, գույքի արգելադրման վերացում

Ներածություն

Թեմայի արդիականությունը հիմնականում պայմանավորված է այն բանով, որ պրակտիկայում հաճախ առաջանում են սեփականության իրավունքի

* **Կարեն Ամիրյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ՀՀ Վերաքննիչ հավակոռուպցիոն դատարանի դատավոր

Карен Амირян – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, Судья Апелляционного антикоррупционного суда РА

Karen Amiryan – Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Theory and History of State and Law, Judge of the Appellate Anti-Corruption Court of the RA

Էլ. փոստ՝ amiryankaren@gmail.com. ORCID: <https://orcid.org/0000-0003-2929-7429>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 02.03.2024

Գրախոսվել է՝ 27.05.2024

Հաստատվել է՝ 30.05.2024

© The Author(s) 2024

սահմանափակման քրեադատավարական կարգավորումների ընկալման և մեկնաբանման խնդիրներ: Սույն աշխատանքի խնդիրն է պարզաբանել որոշ հիմնահարցեր և օրենսդրական կարգավորումների բովանդակության բացահայտման միջոցով որոշակի լուծումներ առաջարկել՝ նպաստելու միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Նշյալ հարցերի շրջանակն էլ սույն աշխատանքի առարկան է, որի մեթոդաբանական հիմքն են կազմում անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, ձևական-տրամաբանականի մեթոդները:

Հոդվածի հիմնական մասը

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 39-րդ գլուխները կարգավորում են գույքի արգելադրման նյութական հիմքի և դատավարական ընթացակարգի հետ կապված հարաբերությունները: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք էապես տարբերվում են ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի համապատասխան կարգավորումներից, ինչն էլ իրավակիրառ պրակտիկայում որոշ դեպքերում հանգեցնում է նոր կարգավորումների ոչ համարժեք ընկալման և կիրառման:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել այդպիսի մի քանի իրավիճակներ, որոնք առավել հաճախ հանդիպում են պրակտիկայում և առկա իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանման միջոցով առաջարկել լուծումներ, որոնք կարող են ունենալ ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ նշանակություն: Այսպես, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»¹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրումը ենթակա է պարտադիր դատական ստուգման»²:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝

1) ենթադրյալ հանցագործության գործիքները կամ այն առարկաները, որոնք իրենց վրա ենթադրյալ հանցագործության հետքեր են պահպանել:

¹ ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով:

² ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-306-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189479> (վերջին մուտք՝ 17.12.2023թ.):

2) այն առարկաները, որոնք ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ են եղել.

3) ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն ձեռք բերված դրամը, այլ արժեքները և առարկաները:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված առարկաները վարույթն իրականացնող մարմնի կողմից գնվում են, համապատասխան որոշմամբ ճանաչվում են իրեղեն ապացույց և կցվում վարույթի նյութերին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

«Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարության հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:

Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ.

2) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.

3) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ.

4) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է.

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում կարող է արգելադրվել դրան համարժեք գույք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհան-

նուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը:

Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձանցից յուրաքանչյուրի՝ արգելադրման ենթակա գույքի բաժինը որոշելիս վարույթն իրականացնող մարմինը հաշվի է առնում ենթադրյալ հանցագործությանը մեղադրյալներից յուրաքանչյուրի դերը և մասնակցության աստիճանը:

Արգելադրման ենթակա չէ՝

1) այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագանձում կամ բռնագրավում տարածվել:

2) իրեղեն ապացույց ճանաչված գույքը»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան պատկանող գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրությոները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Բորժնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացած վճռում մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագ-

³ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունված 1950 թվականին:

րության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը, հետևաբար՝ պետք է ապահովել դատավարական համապատասխան երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ⁴:

Վճռաբեկ դատարանը, Ա. Հայրապետյանի գործով անդրադառնալով սեփականության իրավունքի էությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն (...)»⁵:

Վճռաբեկ դատարանն Ա. Սեկոյանի վերաբերյալ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշմամբ արձանագրել է. «(...) [Կ]անխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը:

Իր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն: (...)»⁶:

Վերոգրյալ իրավանորմերի, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն աշխատանքում քննարկման առարկա է դարձել այն հարցը, որ իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ են առաջանում ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող գույքի հետ կապված գործարքները (առնվազն տնօրինման իրավունքի փոխանցումը) արգելելու համար իրավական համապատասխան հիմքեր ստեղծելու ճիշտ ընթացակարգի ընտրության առումով: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ա. Հայրապետյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0001/11/10 որոշումը:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ա. Սեկոյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշումը:

կամ լիազորություններն անցնելու համար: Նշյալ հանցանքի տեսակային օբյեկտը հանրային ծառայության շահերն են, իսկ անմիջական օբյեկտը պետական կամ ծառայողական շահերի բնականոն գործունեությունն ապահովող հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, անձանց, պետության գույքային շահերը և այլն:

Դիտարկենք իրավիճակ, երբ տեղի է ունեցել նշյալ կամ հանրային ծառայության շահերի դեմ ուղղված այլ հանցանք, որի հետևանքով վնաս է հասցվել պետության գույքային շահերին: Այլ կերպ ասած, խոսքը տվյալ դեպքում վերաբերում է ենթադրյալ հանցավոր արարքի արդյունքում ստացված գույքին: Եթե խոսքը անշարժ գույքի մասին է, վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի այդ գույքն իրեղեն ապացույց է ճանաչում, թե՛ կայացնում է գույքն արգելադրելու մասին որոշում: Նշված հարցի իրավաչափ որոշման հիմքում ընկած է իրեղեն ապացույց ճանաչելու և գույքն արգելադրելու նպատակը: Այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր նպատակներ, որոնց ապահովման համար օրենսդրությամբ սահմանված են համապատասխան ընթացակարգեր:

Իրեղեն ապացույցներ են նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են վարույթի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ժխտման միջոց դառնալ: Այն առավել հստակեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածում, ըստ որի՝ իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել: Հետևաբար, որևէ առարկա, այդ թվում՝ անշարժ գույքը, իրեղեն ապացույց ճանաչելը չի կարող հետապնդել անձի գույքն արգելադրելու կառուցակարգերով նախատեսված նպատակները:

Ինչ վերաբերում է գույքի արգելադրմանը, ապա դրա նպատակը ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարույթային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մաս): Գույքի արգելադրման ինստիտուտը ՀՀ քրեական դատավարությամբ նախատեսված հարկադրանքի միջոցներից մեկն է, հետևաբար գույքն արգելադրելով հնարավոր չէ հետապնդել վարույթի համար նշանակություն ունեցող որևէ փաստական հանգամանք հետագայում պարզելու ու հավաստելու նպատակ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարծում եմ, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական վարույթով առկա է ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող (առաջացած, ստացված) անշարժ գույք, այն իրեղեն ապացույց ճանաչելու համար անհրաժեշտ է, որ առաջին հերթին բավարարի իրեղեն ապացույց ճանաչելու նպատակին: Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը պետք է

հստակ հիմնավորի, թե նման դեպքերում ինչու է տվյալ անշարժ գույքը ճանաչում որպես իրեղեն ապացույց: Նման իրավիճակ կարող է լինել, մասնավորապես, այն դեպքում, երբ այդ անշարժ գույքը ենթադրյալ հանցագործության հետք է պարունակում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Բավականին բարդ են այն իրավիճակները, երբ գույքը ենթադրյալ հանցագործության գործիք է, քանի որ այդ հանգամանքը, այսինքն՝ գույքի՝ հանցագործության գործիք լինելը, նախատեսված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, այնպես էլ 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում:

Նույնը վերաբերում է նաև այն իրավիճակներին, երբ խոսքը այն անշարժ գույքի մասին է, որը ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ է եղել: Այդպիսի հատկանիշը մի կողմից նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, մյուս կողմից այն կարող է բնորոշ լինել նաև 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցագործության արդյունքում ստացված անշարժ գույքին: Հետևաբար, նման իրավիճակներում անշարժ գույքի՝ միայն հանցավոր ներգործության օբյեկտ լինելու հանգամանքին վկայակոչելը բավարար չէ ենթադրյալ հանցագործության արդյունքում ստացված գույքն իրեղեն ապացույց ճանաչելու համար, այլ անհրաժեշտ են հավելյալ հիմնավորումներ ու փաստարկներ, թե վարույթն իրականացնող մարմինը երկու հնարավոր ընթացակարգերից ինչու է նախապատվությունը տվել իրեղեն ապացույց ճանաչելուն:

Այս առումով հարկ է նաև հաշվի առնել այն, որ երբ հանցագործության նպատակը պետությանը պատկանող անշարժ գույքը հանցավոր ճանապարհով մասնավորեցնելն է, այդ անշարժ գույքը հնարավոր է ինքնին չվնասվի, պահպանի իր ներքին ու արտաքին որակական հատկանիշները, իսկ հանցագործությունը կատարվում է համապատասխան փաստաթղթերի կեղծման կամ օրենսդրական համապատասխան ընթացակարգերի, պահանջների խախտման միջոցով: Նման դեպքերում այդպիսի անշարժ գույքը վարույթի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքը պարզելու տեսանկյունից կարևորվում է միայն կամ առավելապես իր գոյությամբ, լինելիությամբ, այլ ոչ թե այն պատճառով, որ այն իր արտաքին տեսքով, ներքին որակական հատկանիշներով և այլն կարող է վարույթի համար ունենալ պիտանի նշանակություն:

Հակառակ մեկնաբանության պարագայում վարույթն իրականացնող մարմինն ունենում է գործողությունների չհստակեցված և անորոշ հայեցողություն, ինչը կարող է կոնկրետ իրավիճակում հանգեցնել կամայականության, քանի որ իրեղեն ապացույց ճանաչելու որոշումն ինքնին որպես այդպիսին նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին

մասով սահմանված՝ բողոքարկման ենթակա մինչդատական ակտերի ցանկում՝ ի տարբերություն գույքի արգելադրման մասին որոշման, որը, հիմնավորող նյութերով հանդերձ, եռօրյա ժամկետում քննիչի կողմից ներկայացվում է իրավասու դատարանի հաստատմանը՝ նախնական հետաձգված դատական վերահսկողության միջոցով երաշխավորելով սեփականության սահմանադրական իրավունքին միջամտության համաչափությունը:

Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը նշյալ երկու հնարավոր տարբերակներից որևէ մեկն ընտրելու չափանիշ, ուղենիշ պետք է ընդունի դրանց՝ իրարից տարբերվող քրեադատավարական նպատակները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջամտում է անձի հիմնարար սեփականության իրավունքին: Այդ նպատակից չբխող և ոչ իրավաչափ տարբերակն ընտրելը խեղաթյուրում է ոչ միայն օրենսդրի կողմից սահմանված նպատակը, այլև կանխորոշում է դրա ընթացքը, քանի որ յուրաքանչյուրի համար նախատեսված են իրավական տարբեր կառուցակարգեր:

Ընդ որում, հարկ է նաև նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասն արգելում է իրեղեն ապացույց ճանաչված գույքը արգելադրման ենթարկելը:

Նշված վերլուծությանը հակառակ՝ իրավակիրառ պրակտիկայում հաճախ «Իրեղեն ապացույց ճանաչելու մասին» որոշումներում որպես իրեղեն ապացույց ճանաչելու հիմնավորում նշվում է, որ այդ անշարժ գույքերը հանցավոր գործողությունների օբյեկտ են եղել, և որ այդ անշարժ գույքերն ու դրանցով զբաղեցված հողամասերը ձեռք են բերվել ենթադրյալ հանցագործության արդյունքում:

Նշված մոտեցումը չի բխում գույքն իրեղեն ապացույց ճանաչելու նպատակից: Մասնավորապես, այդպիսի որոշումները հաճախ չեն պարունակում հիմնավորումներ առ այն, թե իրեղեն ապացույց ճանաչելով՝ վարույթի համար նշանակություն ունեցող որ փաստական հանգամանքի պարզմանն ու հավաստմանն է այն ուղղված: Այսինքն, հնարավոր չէ հասկանալ, թե ինչու է վարույթն իրականացնող մարմինն ընտրել իրեղեն ապացույց ճանաչելու ընթացակարգը և ոչ թե գույքն արգելադրելու դատավարական հարկադրանքի միջոցը: Ավելին, նման որոշումները նաև ներքին հակասականություն են պարունակում, ինչն արտահայտվում է նրանում, որ դրանցում նշվում է, որ անշարժ գույքերը ճանաչվում են իրեղեն ապացույց այն պատճառով, որ դրանք հանցավոր գործողության օբյեկտ են, մինչդեռ անշարժ գույքերի՝ ենթադրյալ հանցագործության արդյունքում ստացված գույք լինելու հատկանիշն ինքնին չի կարող կանխորոշել այդ գույքերն իրեղեն ապացույց ճանաչելու անվերապահ անհրաժեշտությունը:

Ընդ որում, նման որոշումներում հաճախ շարադրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնք հակասում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված պահանջներին, և իրականության մեջ ապահովված չի լինում իրեղեն ապացույց ճանաչված գույքի պահպանման ընթացակարգը:

Մասնավորապես, որպես իրեղեն ապացույց ճանաչելու հիմնավորում նշվում է «իրեղեն ապացույցների առանձնահատկությամբ պայմանավորված» անհրաժեշտությունը, մինչդեռ այդպիսի ձևակերպումը չափազանց անորոշ է և չհստակեցված: Նման դեպքերում վարույթն իրականացնող մարմինը հաճախ դատարանին չի ներկայացնում հողատարածքների առանձնահատկությունների մասին վկայող որևէ տվյալ, ավելին՝ լինում են դեպքեր, երբ նշում է, որ անգամ չի տեսել իրեղեն ապացույց ճանաչված առարկաները: Նման որոշումներում հաճախ հանդիպում է նաև հետևյալ ձևակերպումը՝ «...մինչև քրեական վարույթով որոշում կկայացվի իրեղեն ապացույցներից յուրաքանչյուրի պահպանության վերաբերյալ», ինչը նշանակում է, որ այդպիսի որոշում կայացնելու դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրեղեն ապացույցը պահպանության հանձնելու հարցը չի լուծվել:

Ավելին, վարույթն իրականացնող մարմինը նման դեպքերում հաճախ չի ներկայացնում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքի (այն է՝ իրեղեն ապացույցի մեծածավալությունը, մեծաքանակությունը կամ այլ պատճառներ, որոնցով այդ իրեղեն ապացույցը չի կարող պահվել վարույթի նյութերի հետ, կամ դրա պահպանման ծախսերը ողջամտորեն արդարացված չեն)՝ անձի համար առավել բարենպաստ տեսակը չընտրելու հիմնավորումներ: Այս նկատառման հիմքում ընկած է այն մտտեցումը, որ վարույթն իրականացնող մարմինն իրեղեն ապացույցի պահպանության՝ 98-րդ հոդվածի նշյալ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված միջոցին կարող է դիմել միայն այդ իրեղեն ապացույցն օրինական տիրապետողին, տվյալ դեպքում անշարժ գույքի սեփականատիրոջը վերադարձնելու (ի պահ հանձնելու) անհնարինությունը հիմնավորելու դեպքում, քանի որ այն առավել քիչ է միջամտում անձի սեփականության իրավունքին, ուստի պետք է բավարար փաստարկներ ներկայացնել առավել նվազ միջամտության օրենսդրական հնարավորության առկայության դեպքում առավել խիստ միջամտության անհրաժեշտության վերաբերյալ՝ պահպանելով համաչափության սահմանադրական սկզբունքից բխող իրավակիրառման ու իրավամեկնաբանման պահանջները:

Նման ձևակերպումները, նման մտտեցումը և պիտանի ու բավարար հիմնավորումների բացակայությունն օբյեկտիվ դիտորդի մոտ ձևավորում են այն համոզմունքը, որ վարույթն իրականացնող մարմինը, անշարժ գույքերն իրեղեն ապացույց ճանաչելու որոշման լույսի ներքո արգելադրելով, գործել է ոչ բարեխիղճ և ոչ իրավաչափ:

Նման որոշումների իրավաչափությունը գնահատելիս լինում են դեպքեր, երբ դատարանը նշում է, որ տվյալ դեպքում վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու միջոց առերևույթ կարող են հանդիսանալ անշարժ գույքի ձեռքբերմանը, սեփականատերերի փոփոխությանը, գույքի նկատմամբ իրավունքների գրանցմանը, գույքի ծագմանը վերաբերող փաս-

տաթղթերը, այլ ոչ թե անշարժ գույքը: Այս առնչությամբ գտնում եմ, որ այդ դատողության իրավաչափությունը գնահատման է ենթակա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ դեպքի առանձնահատկությունները և անշարժ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու որոշմամբ ներկայացված հիմնավորումների առկայությունն ու բավարարությունը: Այսինքն, նման դեպքերում իրեղեն ապացույց ճանաչելու որոշումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ վարույթի համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստական հանգամանքի պարզման ու հավաստման համար որոշիչ կամ առնվազն որոշակի նշանակություն ունեն ոչ թե անշարժ գույքի ձեռքբերմանը, սեփականատերերի փոփոխությանը, գույքի նկատմամբ իրավունքների գրանցմանը, գույքի ծագմանը վերաբերող փաստաթղթերը, այլ հենց անշարժ գույքերը:

Ընդհանրացնելով՝ հարկ է արձանագրել, որ երբեմն վարույթն իրականացնող մարմինն իրեղեն ապացույց ճանաչելու որոշման լույսի ներքո արգելադրում է անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը՝ փորձելով օրենսդրական ձևակերպման որոշակի նմանություններն օգտագործել՝ շրջանցելու գույքի արգելադրման ընթացակարգի համար նախատեսված քրեադատավարական նորմերը, անտեսելով քննարկվող երկու ընթացակարգերի նպատակների ընդգծված տարբերությունները ու չներկայացնելով անհրաժեշտ ու բավարար հիմնավորումներ: Այսպիսի համոզմունքն ամրապնդվում է այն հանգամանքի հաշվառմամբ, որ իրեղեն ապացույցի ընթացակարգի կիրառման շնորհիվ վարույթն իրականացնող մարմինն ազատվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակը հիմնավորելուց, նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված «ապացույցների գերակշռության» օրենսդրական շեմը հաղթահարելու և այդ որոշման իրավաչափությունը դատարանի հաստատմանը ներկայացնելու օրենսդրական պահանջներից:

Եզրակացություն

Անձի սեփականության իրավունքի՝ որպես սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակումը պետք է լինի օրինական և համաչափ, այսինքն՝ ապահովի վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների օրինական շահերի ողջամիտ հավասարակշռություն: Հակառակ մոտեցումը կարող է ոչ միայն վտանգել պետության իրավական անվտանգությունը, այլև հանցավորության դեմ պայքարի և հանրային շահի պաշտպանության իրավաչափ նպատակների անվան տակ հանգեցնել անձի սեփականության սահմանադրական իրավունքի էության խաթարման:

Գտնում եմ, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական վարույթով առկա է ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող (առաջացած, ստացված) անշարժ գույք, այն իրեղեն ապացույց ճանաչելու համար անհրաժեշտ է, որ առաջին հերթին

բավարարի իրեղեն ապացույց ճանաչելու նպատակին: Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը պետք է հստակ հիմնավորի, թե նման դեպքերում ինչու է տվյալ անշարժ գույքը ճանաչում որպես իրեղեն ապացույց:

КАРЕН АМИРЯН – Некоторые основные вопросы для понимания и толкования уголовно-процессуальных норм, ограничивающих права собственности. – Цель статьи – проанализировать ряд вопросов, связанных с законностью ограничения права собственности, предусмотренного Уголовно-процессуальным кодексом Республики Армения. В статье делается обращение на ряд регулирований, связанных с материальным основанием и процессуальным порядком наложения ареста на имущество, предусмотренных главами 15 и 39 Уголовно-процессуального кодекса Республики Армения от 30 июня 2021 года, которые воспринимаются и интерпретируются различным образом. Иными словами, в статье ставится цель представить проблемы, возникшие в правоприменительной практике. В этом смысле статья также является актуальной, поскольку представленные подходы могут заинтересовать как студентов, так и юристов, сотрудников правоохранительных органов и судей.

Статья посвящена ряду проблем, связанных с законностью решений о признании имущества предполагаемого преступного происхождения вещественным доказательством, с которыми приходится сталкиваться в юридической практике.

Во второй части статьи обсуждаются такие вопросы, как снятие ареста с имущества, запрещенного в соответствии с прежним уголовно-процессуальным кодексом РА, в соответствии с действующим уголовно-процессуальным кодексом РА, указание достаточной стоимости этого имущества в решении о наложении ареста на имущество (часть вторая статьи будет опубликована в периодическом издании прокуратуры РА «Законность»).


Ключевые слова: *право собственности, ограничение права собственности, судебные гарантии, вещественные доказательства, арест имущества, снятие ареста с имущества*

KAREN AMIRYAN – Some Key Issues for Understanding and Interpreting Criminal Procedure Rules Limiting Property Rights. – The purpose of the article is to analyze a number of issues related to the legitimacy of restrictions on property rights as prescribed by the Criminal Procedure Code of the Republic of Armenia. The article refers to a number of regulations related to the material grounds and procedures for imposing attachment on the assets as prescribed by Chapters 15 and 39 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia dated June 30, 2021, which are perceived and interpreted in different ways. In other words, the article aims to present the issues that have arisen in law enforcement practice. In this sense, the article is also relevant, since the presented approaches may be of interest to the students, lawyers, law enforcement authorities, and judges.

The article makes a focus on a number of problems related to the legality of decisions to recognize property of alleged criminal origin as physical evidence, which are encountered in legal practice. The second part of the article discusses issues such as eliminating the seizure of property prohibited in accordance with the previous Criminal Procedure Code of the Republic of Armenia, in accordance with the current Criminal Procedure Code of the Republic of Armenia, indicating the sufficient value of this property in the decision to seize the property (part two of the article will be published in the periodical of the RA Prosecutor's Office "Legality").

Key words: *right of ownership, limitation of right of ownership, judicial guarantees, material evidence, prohibition of property, lifting attachment from the assets*

ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՄԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հողվածում ուսումնասիրվում են իրավաբանական տեխնիկան տեսակների և ենթատեսակների տարանջատման հիմնահարցերը, ներկայացվում են նշված երևույթի դասակարգման ու տիպաբանության տարբեր վարկածները, հիմնավորվում են իրավաբանական տեխնիկայի՝ որպես իրավաբանական տեխնիկայի ինքնուրույն տեսակի գոյության անհրաժեշտությունը:

Իրավաբանական տեխնիկայի հասկացության հարցում գիտնականների տեսակետներում առկա են որոշակի տարաձայնություններ: Նրանց մի մասն իրավաբանական տեխնիկան հասկանում է միայն որպես նորմաստեղծ տեխնիկա: Այս մոտեցմանը հակառակվող հեղինակներն իրավաբանական տեխնիկան բնորոշում են լայն՝ որպես ընդհանրապես իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու, կազմելու, ձևակերպելու, դրանք համակարգելու և հաշվառելու կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն:

Թվարկված տեսակետները հիմք ընդունելով՝ հողվածում կատարվել է դրանց խմբավորում՝ ըստ բովանդակության և գործունեության ընդգրկման լայնության, և դրանք անվանվել են լայն և նեղ մոտեցումներ: Նեղ մոտեցման կողմնակիցներն այդ հասկացությունը տարածում են միայն իրավաստեղծագործության ոլորտի վրա և նույնացնում են իրավաբանական ու իրավաստեղծ տեխնիկաներն:

Իրավաբանական տեխնիկա հասկացության տարատեսակ մոտեցումներից առավել ընդունելի է համարվել լայն ու ընդհանուր իմաստով ըմբռնումը, որը ներառում է իրավաբանական գործունեության այլ ոլորտները, ընդհուպ իրավակիրառումը: Խնդրո առարկա հիմնահարցը հանգեցրել է իրավաբանական տեխնիկայի գոյություն ունեցող տեսակների առանձնացմանը, դրանց դասակարգմանը, բաժանմանը երկտեսակ և բազմատեսակ խմբերի, ինչը հնարավորություն է տվել հիմնավորելու իրավակիրառական տեխնիկայի՝ որպես իրավաբանական տեխնիկայի առանձին տեսակի «գոյության իրավունքը»:

* Մերգեյ Քոչարյան – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ

Сергей Кочарян – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ

Sergey Kocharyan - PhD, Associate Professor at YSU Chair of Theory and History of State and Law

Էլ. փոստ՝ s.kocharyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-0493-2425>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.01.2024

Գրախոսվել է՝ 29.03.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – իրավաբանական տեխնիկա, իրավական կարգավորման կառուցակարգ, իրավաբանական տեխնոլոգիա, իրավակիրառական տեխնիկա, դասակարգում, տիպաբանություն, իրավաբանական գործունեություն

Ներածություն

Իրավունքի կիրառումը բարդ մեխանիզմ է, որում օգտագործվում է օրենսդրական մեծ զանգված: Իրավունքի կիրառման սոցիալական բարձր նշանակությունն այն իրականացնող սուբյեկտից պահանջում է գիտելիքներ բոլոր այն գործողությունների և երևույթների վերաբերյալ, որոնց միջոցով իրականացվում է անհատական իրավական կարգավորումը: Այդ գործընթացում գլխավոր դեր է խաղում իրավակիրառական տեխնիկան, որն անհատական իրավակիրառ ակտերի պատրաստման ու ձևակերպման կանոնների ամբողջություն է և կոչված է մշակելու գործնական փոխհարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորման մեխանիզմ, օգնելու իշխանական սուբյեկտին իրավակիրառման գրագետ ակտեր կազմելու գործում:

Այսպիսով, այսօր իրավակիրառական տեխնիկայի հիմնախնդիրներն արդիական են և հանգամանալից իմաստավորման կարիք ունեն:

Իրավաբանական գործունեությունը, այսինքն՝ իրավական հատուկ գիտելիքների կիրառման հետ կապված գործունեությունը բազմակողմանի աշխատանք է, որն իրականացվում է կյանքի բոլոր բնագավառներում: Իրավաբանական ցանկացած աշխատանք առանձնանում է բարդությամբ: Այդ պատճառով դրան, որպես կանոն, հատուկ է հետևողականությունն առանձին գործողություններ իրականացնելիս: Դրանց կատարման ընթացքի խաթարումը հղի է բացասական լուրջ հետևանքներով: Իրավաբանական գործունեության մեջ իրավաբանական տեխնիկական կանոնների, հնարքների, միջոցների, եղանակների ամբողջություն է, թե ինչպես կազմել, ձևակերպել, մշակել, համակարգել, հաշվառել իրավաբանական փաստաթղթերը, և կարևորագույն միջոց է իրավաբանական սխալները կանխարգելելու և ուղղելու համար, հետեվաբար այն հնարավորություն է տալիս բարձրացնելու իրավաբանական աշխատանքի որակը: Այլ կերպ ասած՝ տեխնիկական իրավունքում իրավական ակտերի տեխնիկական որակի ապահովման, ինչպես նաև իրավունքը որպես համակարգ աշխատանքային վիճակում պահելու միջոց է¹:

Իրավական նորմերի սահմանումը բազմաթիվ գործողություններից կազմված աշխատատար գործընթաց է, որոնց արդյունքում հաստատվում է այս կամ այն հարաբերության իրական նշանակությունը: Իդեալական նորմ ստեղծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր այն պահերը և նրբությունները, որոնք կարող են ազդել դրա բովանդակության և իմաստի վրա և, իհարկե, այդպիսի նորմեր ստեղծելիս պահպանել համապատասխան տեխնիկան: Սակայն վարքագծի համապատասխան կանոնների մշակումն իրավական կար-

¹ Տե՛ս **Муромцев Г. И.** О некоторых особенностях законотворческой техники и методологии ее исследования в современной России // Законотворческая техника современной России: состояние, проблемы, совершенствование. Н. Новгород, 2001, էջ 76:

գավորման կառուցակարգի (մեխանիզմի) ողջ էությունը և միակ առաքելությունը չէ: Իրավունքի նորմեր ստեղծելիս օրենսդրի հետապնդած հիմնական նպատակներից է, որ սահմանված նորմն առավելագույն արդյունավետությամբ կարողանա իրականացնել իր գործնական-կարգավորիչ նշանակությունը: Դրանում գլխավոր դեր է խաղում օրենքի յուրօրինակ «ուղեցույց» հանդիսացող իրավակիրառական գործունեությունը:

Իրավաբանական գործունեությունն ընթանում է բազմաթիվ ոլորտներում, արտացոլվում հասարակական շատ երևույթներում, հետևաբար, ընդգրկված բնագավառը բավականին ընդարձակ է, քանի որ արդի հասարակական իրողությունների պայմաններում կենսական իրադրությունների ճնշող մասը կարգավորվում է իրավունքով: Բացի այդ՝ անհրաժեշտ է նշել, որ իրավաբանական գործունեությունը և իրավական գործունեությունը միանման հասկացություններ չեն: Ինչպես նշում է Ռ. Վ. Շազինան, իրավական գործունեությունն ավելի լայն հասկացություն է, և այն իրականացնում են իրավունքի բոլոր այն սուբյեկտները, որոնք իրավունքի նորմի հիման վրա բավարարում են իրենց բազմազան պահանջմունքները կյանքի տարբեր բնագավառներում: Իսկ իրավաբանական գործունեությունն իրավաբանի մասնագիտությանն առնչվող հանրային անձանց արտոնությունն է²: Իրականում սխալ կլինի իրավաբանական գործունեություն համարել ցանկացած անձի կողմից խանութից գիրք գնելը կամ կոմունալ ծախսերը վճարելը:

Իրավաբանական գործունեությանը հատուկ են խիստ որոշակիությունը, իրավագետների կողմից կատարվող գործողությունների հաջորդականությունը, ինչն իր հերթին պայմանավորված է այդպիսի գործունեության բարդությամբ և հասարակական բարձր նշանակությամբ: Այդ պատճառով իրավագետը պետք է գործի այնպես, որ առավելագույնս խուսափի սխալներից: Իրավաբանական գործունեության որակի վրա ազդող էական գործոն է համարվում իրավատեխնիկական կանոնների, միջոցների, հնարքների ամբողջությունը, այլ կերպ ասած՝ իրավաբանական տեխնիկան, որը, տեսաբաններից մեկի բնութագրմամբ, արվեստ է, բայց ոչ թե ընդհանրապես, այլ իրավաբանական գործունեության և իրավական գործչի արվեստ³:

Ինչպես «իրավաբանական տեխնիկա» եզրույթի⁴, այնպես էլ դրա հասկա-

² Տե՛ս **Шагизева Р. В.** Правовая деятельность и ее разновидности в современном российском обществе // Журнал российского права. 2004, № 10, էջ 91:

³ Տե՛ս **Грузинская Е. И.** Юридическая техника в теории права: определение содержания и границ понятия // Юридическая наука. 2014. № 1, էջ 6, ինչպես նաև **Александров А. С.** Юридическая техника – судебная лингвистика – грамматика права // Уголовное судопроизводство. 2006, № 3, էջ 6:

⁴ «Տեխնիկա» տերմինը կիրառվում է գիտության «տեխնիկական» բնագավառներում: Տեղին է նշել, որ շատ հեղինակներ մատնանշում են «տեխնիկա» եզրույթի թերությունները՝ համարելով այն ընդգրկող երևույթին ոչ համապատասխան, և առաջարկում են հրաժարվել դրանից կամ դրա մեջ դնել պայմանական իմաստ (տե՛ս **Муромцев Г. И.** Юридическая техника: некоторые аспекты содержания понятия // Проблемы юридической техники, Н. Новгород, 2000, էջ 37): Այս կապակցությամբ որոշ հեղինակներ առաջարկում են նոր եզրույթ՝ «իրավաբանական տեխնոլոգիա» բնորոշելով այն որպես կայուն նորմատիվ համակարգի կառուցման և ներդրման մեթոդ

ցության հարցում գիտնականների տեսակետներում առկա են որոշակի տարաձայնություններ: Նրանց մի մասն իրավաբանական տեխնիկան հասկանում է միայն որպես նորմաստեղծ տեխնիկա: Օրինակ՝ Ս. Ս. Ալեքսեևը, իրավաբանական տեխնիկայի մակարդակը համարելով իրավական մշակույթի ցուցանիշներից մեկը, կարևորելով իրավաբանական տեխնիկայի նշանակալի դերն իրավունքի արդյունավետության ապահովման, օրինականության ամրապնդման գործում, գտնում է, որ իրավաբանական տեխնիկայի կանոնների հիման վրա մշակված միջոցների և հնարքների կիրառումն ապահովում է իրավական ակտերի բովանդակության ճշգրիտ արտահայտումը, պարզությունն ու հասանելիությունը, դրանց առավել ռացիոնալ կիրառումը պրակտիկ աշխատանքում⁵: Ըստ նրա բնորոշման՝ իրավաբանական տեխնիկան միջոցների և հնարքների ամբողջություն է, որոնք, ընդունված կանոններին համապատասխան, կիրառվում են իրավական (նորմատիվ) ակտերի մշակման և համակարգման ժամանակ⁶: Այս տեսակետը պաշտպանող տեսաբանները երբեմն իրավաբանական տեխնիկան տարածում են անհատական իրավակիրառական ակտերի վրա, սակայն միայն դրանց մշակման գործընթացի մասով⁷: Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ իրավակիրառական տեխնիկան ներառում է ոչ միայն հենց գործունեության արդյունքները՝ փաստաթղթերը, այլև ընթացքը⁸:

Ա. Նաշիցը, խնդրո առարկան քննարկելով օրենսդրական տեխնիկայի համատեքստում, առաջարկում է այն հասկանալ լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով այն ներառում է որոշումների մշակման ողջ գործունեությունը, որի օգնությամբ պատրաստվում են օրենսդրական քաղաքականության սկզբունքները և կարգադրագրերը կյանքի կոչելու միջոցները: «Օրենսդրական տեխնիկա»

(տե՛ս **Соловьев О. Г.** Инструментарий правотворческой техники нуждается в законодательном оформлении // *Законы России: опыт, анализ, практика.* 2012, № 10, էջ 95–96; **Черненко А. К.** Философия права. Новосибирск, 1997, էջ 17; **Баранов В. М.** Предисловие // *Проблемы юридической техники / под ред. В.М. Баранова.* Н. Новгород, 2000, էջ 11–13; **Карташов В. Н.** Законодательная технология: понятие, основные элементы, методика преподавания // *Законотворческая техника современной России: состояние, проблемы, совершенствование.* Н. Новгород, 2001, էջ 25): Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ, այնուամենայնիվ, իրավունքը կարող է ամրագրել առաջին հայացքից չկապակցված երևույթներ: Իրավունքը կարգավորում է քաղաքական, տնտեսական, արտադրական և այլ բնագավառներ (նորմատիվ իրավական ակտեր ընդունելու և իրացնելու միջոցով): Այսօր արդեն կենսական պահանջումներն իրավաբանին թելադրում են մասնագետ լինել ոչ միայն իրավունքի բնագավառում, այլև ինչ-որ չափով իմանալ հաշվապահություն, աուդիտ և անգամ մաթեմատիկա:

⁵ Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права: учебник – 2-ое изд., - М.: Проспект, 2009, էջ 484:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 482:

⁷ Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права: в 2 т., М., 1982, Т. 2, էջ 267; **Власенко Н. А.** Основы законодательной техники. Иркутск, 1995, էջ 5:

⁸ Տե՛ս **Соловьев О. Г.** Применение уголовного права: проблемы содержания и соотношения понятий // *Юридическая наука и практика: Вестн. Нижегород. акад. МВД России.* 2010, № 2, էջ 239–242:

հասկացությունը նեղ իմաստով նշանակում է, ըստ էության, նորմերի տեխնիկական կառուցումը դրան հատուկ տեխնիկական միջոցներով և հնարքներով⁹:

Վ. Ա. Տոմինը, իրավաբանական տեխնիկական բնորոշելով որպես տեխնիկական միջոցների և հնարքների ամբողջություն, որի համապատասխան կանոնները կիրառվում են իրավական (նորմատիվ) ակտերի մշակման և համակարգման ընթացքում, առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի հասկացման երկու մոտեցում՝ նեղ և լայն: Նեղ մոտեցումը նա պայմանականորեն անվանում է փաստաթղթային: Այս հեղինակը յուրահատուկ է ներկայացնում իրավաբանական տեխնիկայի լայն (կամ ակտիվ) հասկացությունը, մասնավորապես՝ իրավաբանական տեխնիկական (կամ «իրավական ճարտարագիտությունը») գործնականում փորձված և գիտականորեն հիմնավորված ռացիոնալ իրավաբանական միջոցների, հնարքների և առանձին անհատների ու սոցիալական խմբերի գիտակցության, վարքագծի և գործունեության մեջ իրավունքի ներդրման ընթացակարգերի կիրառումն է¹⁰:

Իրավաբանական տեխնիկայի գուտ նորմաստեղծ հասկացությանը հակառակվող հեղինակներն իրավաբանական տեխնիկական բնորոշում են շատ լայն՝ որպես ընդհանրապես իրավաբանական փաստաթղթեր պատրաստելու, կազմելու, ձևակերպելու, դրանք համակարգելու և հաշվառելու կանոնների, հնարքների, եղանակների ամբողջություն¹¹:

Իրավաբանական տեխնիկայի բնորոշման լայն և ընդհանուր մոտեցում որդեգրած հեղինակներից է ֆրանսիացի իրավագետ Պ. Մանդևուարը¹², որը տարբերակում է իրավաբանական տեխնիկական լայն իմաստով (միջոցների և մեթոդների ամբողջություն, որոնց օգնությամբ պետական մարմինների նպատակները տեղավորվում են իրավական նորմերի հունում և իրականանում են դրանց գործնական կիրառման ճանապարհով) և նեղ իմաստով (դա իրավաբանական դատողությունների լեզվի և կառուցվածքի, ինչպես նաև տարբեր տեխնիկական հնարքների, միջոցների և կանոնների կիրառման պայմանն է)¹³:

⁹ Տե՛ս **Нашиз А.** Правотворчество. Теория и законодательная техника / под ред. Д.А. Керимова. - М., 1974, էջ 138:

¹⁰ Տե՛ս **Томин В. А.** Юридическая техника: учебное пособие, Санкт-Петербург, 2015, էջ 17:

¹¹ Տե՛ս **Черданцев А. Ф.** Теория государства и права. - М., 1999, էջ 366, ինչպես նաև՝ **Кругликов Л. Л., Спиридонова О. Е.** Юридические конструкции и символы в уголовном праве. СПб., 2005, էջ 7-8, **Соловьев О. Г.** Преступления в сфере налогообложения (ст. 194, 198, 199 УК РФ): проблемы юридической техники и дифференциации ответственности: автореф. дис. ... канд. юрид. наук. Казань, 2002, էջ 10:

¹² Տե՛ս **Сандевуар П.** Введение в право. - М., 1994, էջ 135:

¹³ Գրեթե նույնանման մոտեցում է որդեգրել **Ե. Ս. Շուգրինան**: Նա իրավաբանական տեխնիկական լայն իմաստով հասկանում է որպես միջոցների և մեթոդների ամբողջություն, որոնցով քաղաքացիական հասարակության իշխանական մարմինների նպատակները տեղավորվում են իրավունքի նորմերի հունում և իրականանում են այդ նորմերի իրական կատարմամբ: Իրավաբանական տեխնիկական նեղ իմաստով սահմանափակվում է այնպիսի հարցերով, որոնք սահմանում կամ ճշգրտում են իրավունքի լեզվի կիրառման պայմաններն ու իրավաբանական դատողությունների կառուցվածքը, ինչպես նաև զանազան տեխնիկական հնարքներով, միջոցներով,

Թվարկված մոտեցումները հիմք են տալիս իրավաբանական տեխնիկայի հասկացման վարկածները բաժանելու խմբերի՝ ըստ բովանդակության և գործունեության ընդգրկման լայնության, և դրանք անվանել լայն և նեղ մոտեցումներ: Նեղ մոտեցման կողմնակիցներն այդ հասկացությունը տարածում են միայն իրավաստեղծագործության ոլորտի վրա և նույնացնում են իրավաբանական ու իրավաստեղծ տեխնիկաները¹⁴: Մակայն այդ նույնացումը տեղին չէ մի քանի պատճառով. իրավաբանական տեխնիկա հասկացությունն իր ընդգրկման առարկայով ավելի լայն է և ներառում է ոչ միայն նորմատիվ, այլև բոլոր տեսակի իրավական ակտերի նախապատրաստման ու ընդունման գործընթացը, այն վերաբերում է ոչ միայն իրավաստեղծագործությանը, այլև մեկնաբանողական և իրավակիրառական գործունեությանը: Իրավաստեղծագործական տեխնիկան ուղղված է հասարակության համար պետքական օրենքների, ենթօրենսդրական ակտերի ստեղծմանը: Իրավակիրառական տեխնիկան անհրաժեշտ է այդպիսի նորմատիվ իրավական ակտերը կյանքում մարմնավորելու համար: Երկու դեպքում էլ տեխնիկան կարևոր դերակատարություն ունի իրավաբանական որակյալ փաստաթղթեր ստեղծելու գործում: Իրավակիրառ ակտի օրինական և հիմնավորված լինելուց կախված են իշխանության հեղինակությունը, օրենքի նկատմամբ հարգանքը, հավատը պետության նկատմամբ:

Այսպիսով, իրավաբանական տեխնիկա հասկացության տարատեսակ մոտեցումներից առավել ընդունելի է դրա ոչ թե նեղ՝ զուտ իրավաստեղծ տեխնիկան, այլ լայն ու ընդհանուր իմաստով ըմբռնումը, որը ներառում է իրավաբանական գործունեության այլ ոլորտները, ընդհուպ իրավակիրառումը: Հետևաբար, խնդրո առարկա հիմնահարցը հանգում է իրավաբանական տեխնիկայի գոյություն ունեցող տեսակների առանձնացմանը, դրանց դասակարգմանը, ինչին անդրադառնալը հնարավորություն կտա հիմնավորելու իրավակիրառական տեխնիկայի՝ որպես իրավաբանական տեխնիկայի առանձին տեսակի «գոյության իրավունքը»:

Իրավաբանական տեխնիկան որոշակի չափանիշներով ենթարկվում է դասակարգման: Իրավաբանական տեխնիկայի տեսակների դասակարգման հարցում տեսաբանների շրջանում չկա միակարծություն: Որոշ հեղինակներ, որպես դասակարգման հիմք կիրառելով իրավական ակտերի տեսակների չափանիշը, իրավաբանական տեխնիկան բաժանում են երկու տեսակի՝ օրենսդրական (իրավաստեղծագործական) և անհատական ակտերի տեխնիկաների:

կանոններով (տե՛ս **Шугрина Е. С.** Техника юридического письма: учебно-практическое пособие. - М.: Издательство "Дело", 2000, էջ 25):

¹⁴ Բացի վերը բերված հեղինակներից՝ այդ մոտեցման մասին տե՛ս նաև՝ **Бабаев В. К.** Теория советского права в конспектах лекций и схемах: учеб. пособие. Горький, 1990, էջ 68, **Соловьев О. Г.** Юридическая техника в правотворческой и правоприменительной деятельности: понятие и виды // Юридический мир. 2009, № 1, էջ 68–69; Теория государства и права: учеб. для вузов / под ред. М.М. Рассолова, В.О. Лучина, Б.С. Эбзеева. М., 2000, էջ 296, **Грузинская Е. И.**, նշվ. աշխ., էջ 5-8:

Այս մտեցման կողմնակիցներից է Վ. Մ. Դուելը, որն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի երկու տեսակ՝ իրավաստեղծագործական և իրավակիրառական՝ վերջինիս տակ հասկանալով անհատական իրավակիրառակտերի պատրաստման ու ձևակերպման հնարքների և կանոնների ամբողջությունը¹⁵: Այս դասակարգումը թեկուզև տրամաբանորեն անթերի է, այնուամենայնիվ չափազանց ընդհանուր է, որպեսզի ընդունվի անվերապահորեն, քանի որ անհատական ակտերն իրենց հերթին կարող են լինել իրավակիրացնող և իրավակիրառ: Բացի այդ, կան նաև մեկնաբանողական և անհատական իրավական ակտեր: Հետևաբար, իրավաբանական տեխնիկայի առաջադրած տեսակներն անպայմանորեն պետք է լրացվեն նորերով:

Տեսաբանների մյուս մասն իրավաբանական գործունեության իրականացման կանոնների դասակարգման չափանիշ է համարում իրավաբանական աշխատանքի տեսակները և առանձնացնում է նորմաստեղծագործական, իրավակիրառական, իրավամեկնաբանողական, իրավահամակարգողական և նույնիսկ գիտական (դոկտրինալ) իրավաբանական տեխնոլոգիաները: Օրինակ՝ Վ. Ն. Կարտաշովն իրավաբանական տեխնիկան բաժանում է հետևյալ տեսակների՝ իրավաստեղծագործական, իրավակիրառական (իրավակիրացման), մեկնաբանողական, իրավահամակարգագոյացման, դատական, քննչական, դատախազական և այլն¹⁶: Մակայն պետք է նկատի ունենալ, որ իրավաբանական գործունեության տարբերակված մասնագիտացումն աճում է հասարակական կյանքի բարդացմանը զուգընթաց, ինչի պատճառով իրավաբանական տեխնիկայի տեսակների շարքը կդառնա ոչ լրիվ: Բացի այդ՝ նշյալ շարքում հնարավոր է ներառել հետաքննության կատարման, փորձաքննությունների, դատական որոշումների կատարման, անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման աշխատանքներ տանելու, պայմանագրի կնքման, գործադուրկների հաշվառման և նպաստների նշանակման, փաստաբանական, նոտարական և այլ տեսակի տեխնիկաները:

Տեսաբաններից ոմանք իրավաբանական տեխնիկան բաժանում են հիմնական և օժանդակ ձևերի: Ըստ համապատասխան սուբյեկտի իրավաբանական կամքի իրականացման ձևի՝ երեք հիմնական, առանցքային տեսակներն են իրավաստեղծ, մեկնաբանողական, իրավակիրառական տեխնիկաները, որոնց զուգահեռ կան մի քանի օժանդակ տեսակներ՝ իրավական ակտերի համակարգման, հրապարակման, հաշվառման տեխնիկա, իրավաստեղծ ընթացակարգի տեխնիկա և այլն: Այս հեղինակներն իրավակիրառական տեխնիկան ևս տարբեր չափանիշներով են դասակարգում, մասնավորապես՝ ըստ սուբ-

¹⁵ St' u **Дуель В. М.** Юридические документы и юридическая техника // Проблемы теории государства и права: учебник / под ред. В.М. Сырых. М., 2008, էջ 386:

¹⁶ St' u **Карташов В. Н.** Юридическая техника, тактика, стратегия, технология (к вопросу о соотношении) / В кн.: Проблемы юридической техники. Т. 1. – Н. Новгород, 2000, էջ 18:

յեկտների՝ քննչական, դատական, վարչական և այլն, որոնցից յուրաքանչյուրում առկա են նաև որոշակի ենթատեսակներ: Ըստ ճյուղային հատկանիշի առանձնացվում են իրավունքի տարբեր ճյուղերի կիրառման տեխնիկաները¹⁷:

Հիմնախնդրին անդրադարձած մեկ այլ հեղինակ՝ Դ. Ն. Լիզլովը, իրավաբանական տեխնիկան բաժանում է օրենսդրական, իրավակիրառական, մեկնաբանական, իրավաիրացնող տեսակների և իրավակիրառական տեխնիկան բնորոշում որպես իրավակիրառ (անհատական) ակտեր կազմելու (պատրաստելու և ձևակերպելու) ժամանակ կիրառվող գիտականորեն հիմնավորված և գործնականում դրսևորված եղանակների և միջոցների համակարգ¹⁸:

Իրավաբանական տեխնիկայի տեսագործական հիմնահարցերի մշակման գործում մեծ ավանդ ունի պրոֆեսոր Ս. Վ. Կաշանինան, որի ջանքերի շնորհիվ իրավաբանական տեխնիկան դիտարկվեց ոչ միայն որպես ինքնուրույն գիտական ուղղություն իրավունքի տեսության մեջ¹⁹, այլ նաև որպես ամբողջական ուսումնական դասընթաց²⁰: Ս. Վ. Կաշանինան, իրավաբանական տեխնիկայի դասակարգման հիմնական չափանիշ ընտրելով իրավական կարգավորման կառուցակարգի փուլերը (իրավաստեղծագործություն, իրավունքի գործողություն, իրավունքի իրացում), գտնում է, որ գործնականում դրանցից յուրաքանչյուրում իրականացվում են իրավաբանական գործողություններ, և, որպես կանոն, կազմվում են իրավական փաստաթղթեր: Սակայն երբեմն իրավական կարգավորման հիմնական փուլերն «աճում են» կամ լրացվում են օժանդակ կամ լրացուցիչ փուլերով, երբ հարկ է լինում կատարել նաև իրավաբանական այլ գործողություններ: Օրինակ, եթե հրապարակվել է նորմատիվ ակտ, անպայման պետք է հոգ տանել այն տպագրելու մասին, ընդ որում՝ դա պետք է անել ոչ թե այն ժամանակ, երբ կցանկանաս, այլ պահպանելով հրապարակման և այլ կանոնների սահմանային ժամկետները, կամ երբ օրենսդրական ակտի ստեղծման գործընթացում պետք է կատարվի (կա՛մ

¹⁷ Տե՛ս **Соловьев О. Г., Санташов А. Л.** Дискуссионные вопросы определения видов юридической техники в теории права. // Юридическая наука. 2013, № 4, էջ 37-38:

¹⁸ Տե՛ս **Лызлов Д. Н.** Юридическая техника: учебное пособие / Д. Н. Лызлов, В. Ю. Картухин. – М.: Осъ-89, 2009, էջ 8, 15:

¹⁹ Ներկայումս իրավագիտության մեջ իրավաբանական տեխնիկան համարվում է ոչ միայն միջոցների, հնարքների, կանոնների համակցություն, այլ նաև գիտական իմացություն այն մասին, թե ինչպես կատարել իրավաբանական աշխատանքը: Ս. Վ. Կաշանինան, դիտարկելով իրավաբանական տեխնիկան որպես ճանաչողական նշանակություն ունեցող գիտական իմացության համակարգ, նշում է, որ դրա խնդիրն է ուսումնասիրել իրավաստեղծագործության և իրավակիրառման բնագավառներում օբյեկտիվ իրականությունը, հաստատել դրանցից յուրաքանչյուրում, ինչպես նաև դրանց միջև կապերը, սահմանել այդ բնագավառներում գոյություն ունեցող օրինաչափությունները (տե՛ս **Кашанина Т. В.** Юридическая техника. – М. Эксмо, 2007, էջ 25-29):

²⁰ Դրանից հետո սկսեցին հրատարակվել համապատասխան ուսումնական ձեռնարկները, օրինակ՝ **Суслин Э. В.** Юридическая техника: учебное пособие / Э. В. Суслин. – СПб., СЮА, 2017, 336 էջ, **Томин В. А.** Юридическая техника: учебное пособие / В. А. Томин. – 2-е изд., перераб. и доп. – СПб., Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2018, 88 էջ:

մինչև, կա՛մ հետո) աշխատանք նորմատիվ ակտերի հաշվառման և համակարգման ուղղությամբ, հակառակ դեպքում իրավաստեղծ աշխատանքը կարող է լինել անարդյունավետ, կամ նախքան իրավական հարաբերությունը հաստատելը հարկ է կատարել իրավունքի նորմի մեկնաբանություն, կամ նախքան որևէ իրավահարաբերության մեջ մտնելն անհրաժեշտ է կանոնակարգել իրավական կարգավիճակը (օրինակ՝ ձեռք բերել քաղաքացիություն)²¹: Այս մտտեցմամբ Տ. Վ. Կաշանինան առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի վեց տեսակ. իրավաստեղծագործական, նորմատիվ ակտերի հրապարակման, նորմատիվ ակտերի համակարգման, մեկնաբանման, իրավախրացման, իրավակիրառական:

Իրավաբանական տեխնիկայի դասակարգման հիմնախնդրի հետ կապված՝ նույն մտտեցումն է որդեգրել Վ. Ա. Տոմինը, որը ևս, հիմք ընդունելով իրավական կարգավորման հիմնական երեք փուլերը (էտապները), առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի հետևյալ տեսակները՝ իրավաստեղծագործական, նորմատիվ ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու, մեկնաբանական, իրավահամակարգման, իրավախրացման, իրավակիրառական²²:

Եզրակացություն

Իրավաբանական տեխնիկան կանոնների, հնարքների, միջոցների, եղանակների ամբողջություն է, թե ինչպես կազմել, ձևակերպել, մշակել, համակարգել, հաշվառել իրավաբանական փաստաթղթեր, և ունի իր տեսակները, որոնցից մեկն էլ իրավակիրառական տեխնիկան է:

Ամփոփելով իրավաբանական տեխնիկայի տեսակների առանձնացման (դասակարգման) հիմնահարցի վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետների վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ իրավաբանական տեխնիկայի տեսակների առկա դասակարգումները հնարավոր է բաժանել երկու տիպային խմբերի՝ երկտեսակ (իրավաստեղծագործական և անհատական իրավական ակտերի) և բազմատեսակ: Եղած դասակարգումներից առավել ճշգրիտ են նրանք, որոնք դասակարգման չափանիշ են համարում իրավական կարգավորման կառուցակարգի փուլերը և որպես իրավաբանական տեխնիկայի տեսակներ առանձնացնում են իրավաստեղծագործական, նորմատիվ ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու, մեկնաբանողական, իրավահամակարգման, իրավախրացման, իրավակիրառական տեխնիկանները: Լայն իմաստով իրավակիրառական տեխնիկան գործնականում փորձված և գիտականորեն հիմնավորված, ձևական և բովանդակային առումով անթերի իրավունքի կիրառման ակտեր ստեղծելու սկզբունքների, մեթոդների, կանոնների ամբողջություն է: Նեղ իմաստով իրավակիրառական տեխնիկան իրավունքի կիրառման ակտեր կազմելու կանոնների և միջոցների կիրառման գործնական հանձնարարությունների ամբողջություն է:

²¹ Տե՛ս **Кашанина Т. В.** Юридическая техника. - М., Эксмо, 2007, էջ 85:

²² Տե՛ս **Томин В. А.**, նշվ. աշխ., էջ 20:

СЕРГЕЙ КОЧАРЯН – Проблема понятия правоприменительной техники в контексте теории юридической техники. – В статье исследуются проблемы разграничения юридической техники на виды и подвиды, приводятся различные варианты классификации и типологии указанного феномена, обосновывается существование правоприменительной техники как самостоятельного вида юридической техники.

Относительно понятия юридической техники существуют определенные разногласия во взглядах ученых. Некоторые из них понимают юридическую технику только как нормотворческую технику. Авторы, выступающие против такого подхода, определяют юридическую технику в широком смысле как совокупность правил, приемов, способов подготовки, составления, формулирования, согласования и учета юридических документов в целом. На основании перечисленных точек зрения в статье они сгруппированы по содержанию и охвату деятельности и названы широким и узким подходами. Сторонники узкого подхода распространяют это понятие лишь на область правотворчества и выделяют правовые и правотворческие приемы.

Из различных подходов к понятию юридической техники наиболее приемлемым было признано широкое и общее понимание, включающее и другие области юридической деятельности, в том числе правоохранительную. Рассматриваемый вопрос привел к выделению существующих видов юридической техники, их классификации, разделению на двухвидовые и многовидовые группы, что позволило обосновать «право на существование» юридической техники как отдельного вида юридической техники.

Ключевые слова: *юридическая техника; механизм правового регулирования; юридическая технология; правоприменительная техника; классификация; типология; юридическая деятельность*

SERGEY KOCHARYAN – The Issue of the Concept of Law Enforcement Technique in the Context of Legal Technique Theory. – The issues of classification legal techniques into types and subtypes are studied in the article, where different hypotheses of the mentioned phenomenon are presented and the necessity of the existence of legal technique as an independent type of legal technique is substantiated.

Regarding the concept of legal technique, there are certain disagreements in the views of scholars. Some of them understand the legal technique only as a rule-making technique. Authors opposed to this approach define legal technique broadly as a set of rules, tricks, ways of preparing, compiling, formulating, coordinating and accounting legal documents in general.

Based on the listed points of view, the article grouped them according to the breadth of content and activity coverage, and they were called broad and narrow approaches. Proponents of a narrow approach extend this concept only to the field of law-making and identify legal and law-making techniques.

Of the various approaches to the concept of legal technique, the broad and general understanding, which includes other areas of legal activity, including law enforcement, was considered the most acceptable. The issue in question led to the separation of existing types of legal techniques, their classification, division into two-type and multi-type groups, which made it possible to justify the "right to exist" of legal technique as a separate type of legal technique.

Key words: *legal technique; legal framework regulation; legal technology; law enforcement technique; classification; typology; legal activity*

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հողվածում քննարկվում են իրավական պետության և ժողովրդավարության իրավական ամրագրման հայեցակարգային հիմքերն ու պրակտիկ դրսևորումները, որոնց միջև ծագում են բազմաշերտ համակարգային հակամարտություններ: Դրանց կանխարգելման և լուծման կառուցակարգի բացակայությունը առաջացնում է ոչ միայն խրոնիկ լարվածություն, այլև բախումների մեծ հավանականություն՝ տեղափոխելով այդ հակամարտությունները ավելի խորը և, համապատասխանաբար, ծայրահեղ մակարդակ, որն ամբողջովին ձևափոխում է ոչ միայն միջազգային հարաբերությունների, այլ ներպետական համակարգի իրավական բնույթն ու հյուսվածքները:

Այդ հակամարտությունները բացահայտում են հիմնախնդիրը տարբեր հարացույցներով ներկայացնելու մեթոդաբանությամբ: Համակարգային հակամարտությունը ընտրված է որպես մեթոդաբանական հիմք՝ նկարագրելու այն շեղումները, որոնք դրսևորվում են ժողովրդավարական պետության գործառնական ժամանակ: Նույն տրամաբանությամբ հողվածում գուցահեռաբար ներկայացվում են նաև համակարգային հակամարտությունները միջազգային իրավունքի համակարգում: Համակարգային հակամարտությունների հաղթահարման կառուցակարգ է դիտարկվում սահմանադրականության սիստեմատիկական՝ որպես իրավական ձևաչափ և հիմնարար սկզբունք, որը ոչ միայն հստակորեն սահմանում է պետության և իրավական համակարգի որակի չափանիշները, այլև վեր է հանում գործառնական շեղումները: Միևնույն ժամանակ ներկայացվում են իրավական պետության և ժողովրդավարության համակարգային հակամարտությունների ծագումնաբանությունը և աստիճանակարգումը, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտելու դրանց էության պատճառահետևանքային կապը:

* **Վարդան Այվազյան** – իրավագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Вардан Айвазян – кандидат юридических наук, доцент, заведующий кафедры конституционного права ЕГУ

Vardan Ayyvazyan – Candidate of Law, Associate Professor, Head of YSU Chair of Constitutional Law

Էլ. փոստ՝ vardanayvazyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-3321-5406>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.01.2024

Գրախոսվել է՝ 09.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – համակարգ, հակամարտություն, իրավունքի էություն, ժողովրդավարություն, իրավական համակարգ, սիստեմատիկական, սահմանադրականություն, միջազգային իրավունք, պետություն, ժողովուրդ, հասարակություն

Նորագույն պատմության վերջին ժամանակահատվածը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. Երկիր մոլորակը աշխարհակարգի կառուցվածքի առումով մտել է ծայրահեղ հակամարտության փուլ:

Հակամարտության կանխարգելման և լուծման կառուցակարգի բացակայությունը առաջացնում է ոչ միայն խրոնիկ լարվածություն, այլև մեծ բախումներ՝ տեղափոխելով այդ հակամարտությունը ավելի խորը և ծայրահեղ մակարդակ, որը ամբողջովին ձևափոխում է միջազգային հարաբերությունների համակարգի իրավական բնույթն ու հյուսվածքները:

Անտարակույս, միջազգային հարաբերությունների իրավական կարգավորման շրջանակներում որպես հակամարտության կանխարգելման և լուծման օպերացիոն մեխանիզմ պետք է հանդես գա միջազգային իրավունքը, որը պետք է գործառավորի բացառապես իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա:

Վերոշարադրյալի ապացույցն է այն, որ միջազգային հարաբերությունների կարգավորման միասնական համակարգը անունակ է ոչ միայն պահպանելու հավասարակշռությունը ներպետական և Մերձավոր Արևելքի տարածաշրջանային մակարդակներում, այլև խրախուսում է առանձին պետությունների հանցավոր վարքագիծը: Ասվածի վառ օրինակը ՄԱԿ-ի մշտադիտական առաքելության բացահայտ ցինիկ արձանագրումն էր, թե Արցախի հայությունը առանց որևէ բռնաճնշումների և գոյութենական սպառնալիքի ինքնակամ լքել է հազարամյակների իր բնօրրանը¹:

Առաջին հայացքից կարծես թե գոյություն ունի ՄԱԿ-ի կանոնադրություն, բազում միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք կոչված են ապահովելու մարդու տարրական բնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ապահովելու արդարությունն ու հավասարությունը մոլորակի վրա:

¹ Քաղաքի այն հատվածներում, որտեղ թիմն այցելել է, քաղաքացիական, հասարակական ենթակառուցվածքներին, ներառյալ հիվանդանոցներին, դպրոցներին և բնակարաններին, ինչպես նաև *մշակութային և կրոնական կառույցներին* վնաս հասցված չէ: Ոչ մի խանութ բաց չի եղել: Առաքելությունը նկատել է, որ Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը պատրաստվում է վերսկսելու քաղաքում առողջապահական ծառայությունների և հիմնական որոշ կոմունալ ծառայությունների գործունեությունը: *Թիմը համայնքների ներկայացուցիչներից տեղեկացել է, որ Ղարաբաղում մնում է 50-ից 1000 էթնիկ հայ. Առաքելությանը զարմացրել է, թե որքան անսպասելիորեն է տեղի բնակչությունը լքել իր տները, և այն տատապանքները, որոնց առերեսվել է այս փորձության ընթացքում: Թե՛ հարցված տեղի բնակչության, թե՛ մյուսների կողմից առաքելությունը որևէ տեղեկություն չի ստացել վերջին հրադարարից հետո խաղաղ բնակիչների նկատմամբ բռնությունների [կիրառման] մասին: Առաքելությունը չի նկատել գյուղատնտեսական ավերված ենթակառուցվածքներ կամ ճանապարհին սատկած կենդանիներ:* Մանրամասն տե՛ս <https://www.amerikayidzayn.com/a/7293759.html> համացանցային հղումը 30.11.2023 ի դրությամբ:

Սակայն իրողությունն ամենևին չի համապատասխանում այդ փաստաթղթերի տրամաբանությանը: Որտե՞ղ է անհրաժեշտ փնտրել երևույթի պատճառները:

Մարդու տարրական էկզիստենցիալ իրավունքների ապահովման համար անհրաժեշտ է բացահայտել «մարդ» և «իրավունք» երևույթների էությունը՝ կիրառելով համալիր մեթոդաբանություն, այսինքն՝ այդ երևույթները դիտարկել հենց բնական իրավունքի տրամաբանության շրջանակներում: Այսպես, «մարդ» հասկացության և իրավունքի համատեղ գոյությունը ենթադրում է, որ մարդը համարվում է բնականության օրինաչափություններով գործող տիեզերքի բաղկացուցիչ մաս և պետք է գտնվի որոշակի իրավահարաբերություններում, որոնք համակարգային հիմքերի վրա բնություն-մարդ հարաբերությունների շրջանակներում սահմանում են տիեզերքի և նրա օբյեկտների հետ մարդու փոխգործակցությունը: Իրավունքի և մարդու համատեղ գոյությունը հակառակ պարագայում դիտարկելիս կխաթարվի տիեզերքի կարգավորվածության հարացույցը՝ վերացնելով տիեզերքի գլոբալ բանականության սկզբունքը կամ լավագույն դեպքում տեղ հատկացնելով բանականությանը իրավիճակային կարգավորվածության մակարդակում: Կանտի դասակարգմամբ՝ դա մաքուր բանականության չեղարկումն է՝ թողնելով միայն պրակտիկ բանականությունը, կամ պրակտիկ բանականությունը գերիշխում է տեսականին², իսկ վատագույն դեպքում քառսը հռչակվում է որպես տիեզերքի գոյի հիմնական սկզբունք: Այս տեսակետն էլ ձևավորում է պոզիտիվ իրավունքի հարացույցը, որն անընդունելի է:

Բոլոր դեպքերում մարդն իր փաստացի գոյությամբ դատապարտված է հավաքական գոյի շրջանակներում արտաքին աշխարհի այլ օբյեկտների հետ համակարգային հարաբերությունների:

Նույնիսկ անհատական գոյի ձևաչափում տեղի է ունենում փոխհարաբերություններին աշխարհի օբյեկտների հետ, որոնք անպատճառ համարվում են մարդ-բնականություն հարաբերությունների ենթահամակարգ և ենթարկվում են բնականության օբյեկտիվ օրինաչափություններին, որոնք սահմանում են ներքին աշխարհի գործառավորումը:

Այս երկու ենթահամակարգերը փոխկապակցված են և համարվում են միասնական ամբողջականության մասեր, և հետևաբար պետք է գտնվեն միասնական սահմանադրական ամրագրման իրավասության ներքո:

Հենց մարդու բովանդակային ամբողջականությունն է հանդես է գալիս որպես սահմանադրական օբյեկտ՝ սահմանելով բազիսային ածանցյալ բովանդակությունները, որոնք ձևավորում են մարդու երևութաբանությունը տիեզերքի գործառավորման բնական ընթացքում՝ որպես հատուկ երևույթի, որին վերագրվում են կյանքի, ազատության և երջանկության իրավունքները:

² Տե՛ս **Կանտ**. Критика чистого разума, Издательство Наука, М., 1999, էջ 52-54:

Այդ ամբողջականության խաթարումը ունահարում է դրանցից յուրաքանչյուրի իրավակերպությունը (правосообразность) և նախադրյալներ է ստեղծում համակարգային հակամարտության ծագման համար, որում մասնավոր կյանքի, անհատական երջանկության և ազատության իրավունքները, որպես ներքին աշխարհի օբյեկտներ, հավաքական գոյի իրավասահմանների (правоустановками) հետ հակադրության մեջ են մտնում այնպիսի համակարգային օբյեկտների շրջանակներում, որպիսիք են ժողովուրդը, հասարակությունը, պետությունը:

Փամանակակից Եվրոպայի ամենաինքնատիպ քաղաքական փիլիսոփաներից մեկի՝ Էնտոնի Դե Յասայի «Պետություն» աշխատությունը սկսվում է հետևյալ հարցադրմամբ՝ «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք պետություն»³: Եթե այս նախադասությունը փոխենք «Ի՞նչ կանեիք, եթե լինեիք ժողովուրդը» հարցադրմամբ, ապա պատասխանը կլիներ հետևյալ պոստուլատը, որն էլ կազմում է ժողովրդաիշխանության սիստեմատեխնիկան.

Ժողովուրդը պետք է պատասխանատու կերպով և միանշանակորեն գիտակցի, որ իր գոյատևումն ու կենսագործունեությունը չեն կարող ունենալ ոչ համակարգային բնույթ և գտնվել անկառավարելի ինքնաձևավորման ռեժիմում և գլոբալ քաղաքակրթական էկզիստենցիալ համակարգի շրջանակներում, որպես մարդկության բաղկացուցիչ մաս՝ նա պետք է կյանքի կոչի համաշխարհային հանրության հավաքական գոյը՝ իրավական կարգավորման համարժեք գործուն կառուցակարգերով:

Վերը նշված պոստուլատի ընդունման պարագայում ժողովուրդը հանդես է գալիս որպես ներունակ իրավագիտակցությամբ օժտված բանականության կրող, որի հիման վրա գործի են դրվում իրավագենեզը և իրավաձևավորման գործընթացը, որում ձևավորվում է ժողովրդի՝ որպես էկզիստենցիալ համակարգի շրջանակներում իրավական ամրագրման օբյեկտի իրավասուբյեկտությունը: Այս դեպքում իրավական մետրիկան կառուցակարգվում է բանականության առկայության պարտադիրության սկզբունքի հիման վրա, համակարգի՝ որպես ցանկացած գոյի սուբստանցիալ հիմքի օբյեկտիվ սկզբի և համակարգայնության՝ որպես հասարակության գոյության ձևի պարտադիր հատկության, որը հանդես է գալիս որպես լեգիտիմության առաջնային դրսևորում հիմնակառուցման (constitution) շրջանակներում: Լեգիտիմությունը որպես իրավական չափանիշ գործի է դնում ինչպես ժողովրդի, այնպես էլ համաշխարհային հանրության՝ որպես իրավական օբյեկտների իրավաբանական կարգավիճակը ամրագրող սահմանադրականության ակտը:

Առանձին վերցրած պետականության տիրույթում դիտարկելիս այս պոստուլատը ուժի մեջ է մտնում ժողովրդի կամահայտնության միջոցով: Այստեղ ժողովուրդը հանդես է գալիս որպես հասարակության էկզիստենցիալ համակարգի հայեցակարգային մոդելը հաստատող ներունակ իրավունքի կրող: Այդ

³ Энтони де Ясай, Государство. Москва: Челябинск: ИРИСЭН, Социум, 2016, с. 13.

մոդելը միանշանակ ձևականացման մակարդակում լիարժեքորեն առարկայական նկարագրում և բացահայտում է արժեհամակարգը՝ որպես իրավական ամրագրման օբյեկտ, որի հիման վրա պետք է մշակվի արդեն էկզիստենցիալ համակարգի գործառական մոդելը, գործի դնելով իրավական տարածությունը, որում պետք է տեղավորվեն ինչպես հասարակությունը, այնպես էլ վերջինիս կողմից հիմնադրվող պետությունը (իր գործառական առաքելության և լիազորությունների իրավաբանական ամրագրմամբ), ինչպես նաև համալիր հասարակական գործընթացների իրավական կարգավորման համակարգը:

Ժողովուրդը պետք է ունենա կամք և գործառական ունակություն՝ կառուցելու իր էկզիստենցիալ համակարգը՝ որպես համալիր տեխնոլոգիական գործընթաց, որը ներառում է բոլոր ենթահամակարգերի կառուցումը, որոնց համակարգային փոխգործակցության արդյունքում ապահովվում է հասարակության ներդաշնակ ու հավասարակշռված գործառական էկզիստենցիան ինչպես ներպետական ու ազգային, այնպես էլ վերապետական և վերագգային մակարդակներում:

Այս պոստուլատի ընդունումը նշանակում է, որ ժողովուրդը, արդեն ունենալով համարժեք իրավագիտակցություն և ինքնագիտակցություն՝ նույնականացնելու իրեն որպես բանական գոյի (բարձր կազմակերպված բանականության կրողի բնական իմանենտ իրավասուբյեկտություն), ճանաչելով համակարգային մակարդակում իր էկզիստենցիայի կառավարման անհրաժեշտությունն ու օբյեկտիվ բնույթը, որպես ֆունկցիոնալ-ակտիվ արարող, ստեղծագործող, պարտականություն է ստանձնում կառուցելու էկզիստենցիայի համակարգ ֆունկցիոնալի իրավասուբյեկտության ձևաչափում:

Այս մակարդակում «ժողովուրդ» և «համաշխարհային հանրություն» իրավական օբյեկտները, ունենալով կյանքի և գոյատևման սահմանադրական իրավունք, արդեն որպես ֆունկցիոնալներ ծանրաբեռնվում են իրենց ճակատագրի և կենսապահովման համար պատասխանատվությամբ՝ դրանով իսկ ավարտելով լիարժեք իրավասուբյեկտության ակտը: Այդպիսով տեղի է ունենում իրավունքի ֆունկցիոնալ գործողության տարածականագոյացումը: Այսինքն՝ տեղի է ունենում իրավունքի օնտոգենեզ՝ որպես իրավունքների և պարտականությունների սինթեզ միասնական ամբողջում, որի արդյունքում գործառականորեն իրացվում է իրավագոյացումը, քանի որ արդեն առկա է ինչպես իրավունքի կառուցվածքը, այնպես էլ դրա կրողը, որի դերում հանդես է գալիս սուբյեկտը: Այդպիսով համակարգագոյացումը ձեռք է բերում իրավական բնույթ իրավական օբյեկտի հատկության, համապատասխանաբար և իրավական բովանդակության պարտավորվածության, կարգավորվածության և կառավարելիության կազմվածքով ստեղծվող համակարգի շրջանակներում:

Նման դրվածքում դիտարկվում է նաև երրորդ՝ սահմանադրական ակտը՝ եզրափակելով իրավագենեզի ամբողջականության սիստեմատեխնիկական

կառուցվածքը, գործի է դրվում իրավունքի օպերացիոն գործողության տարածությունը՝ դրանում տեղադրելով պետությունը՝ որպես իրավական օբյեկտ տեխնիկական ընթացակարգային մակարդակում՝ հիմնական օրենքի ընդունման իրավաբանական կանոնակարգի շրջանակներում:

Հավաքական գոյի շրջանակներում մարդու գոյության սկզբունքի գիտակցումը պետք միտված լինի այն բանին, որ յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք: Հետևաբար, պետությունն ունի պարտականություն ապահովելու քաղաքացիների կյանքի անձեռնմխելիությունը՝ որպես վերջիններիս բազային և առաջնային իրավունք: Առանց նման գիտակցության հասարակության իրավագիտակցության ինստիտուտը կլինի ոչ լիարժեք՝ քաղաքացիների կողմից գիտակցական մակարդակում իրենց իրավունքների ու պարտականությունների չընկալման ռեցիդիվով:

Մասնավորապես այդ ասպեկտն էլ համարվում է անկատարության և երբեմն նաև անկոնֆլիկտ իրավական կարգավորման համարժեք համակարգի ստեղծման անհնարինության պատճառական մակարդակը: Օրինակ՝ միջազգային իրավունքի համակարգի ճգնաժամը, երկմակարդակ սահմանադրության գործառնավորումը վերազգային, դաշնային մակարդակներում և իրավունքի գործողությունը ինքնավարության մակարդակում՝ ինքնիշխանության այս կամ այն մոդելով:

Բացասական պատասխանը, այսինքն՝ իրավական պոստուլատը չընդունելը, գործի է դնում անհամակարգայնության թույլատրելիությունը, որի արդյունքում հնարավոր չի դառնում գոյատևման ներդաշնակ ու հավասարակշռված էկզիստենցիալ համակարգի կառուցումը, կամ նեղացվում է համակարգագոյացման դրվածքը ժողովրդի այն անդամների շահերի իրավիճակային պայմանավորվածությունների ձևաչափում, որոնց դիրքորոշումները հնարավոր չէ անտեսել ուժի իրավունքի տեսանկյունից:

Այս դրվածքի պայմաններում առաջանում է իրավունքի համակարգագոյացման համակարգային հակամարտություն, որում հնարավոր չի լինում կառուցել իրավունքի համակարգ, որն ապահովի իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը, և որի պայմաններում իրավագոյացման սուբստանցիալ հյուսվածքները փոխարինվում են վարքագծի կանոնագոյացմամբ, որը դուրս է լեգիտիմության իրավական մետրիկայից, փոխարինելով իրավական իմպերատիվը (սահմանադրական իրավական լեգիտիմության օբյեկտիվ բնույթը) որոշում կայացնող ուժային խմբի բռնապետական թելադրանքով, ինչի արդյունքում ժողովուրդը կորցնում է իր բարձրագույն իշխանությունը:

Իրավական համակարգի նման սիստեմատեխնիկայի արդյունքում իրավունքի գործողությունը գործի է դրվում ակտիվ իրավասուբյեկտության հարացույցի ձևաչափում: Այս պարագայում ընդունվում է պետության՝ որպես ակտիվ գործող սուբյեկտի հանդես գալու թույլատրությունը, որը հետապնդում է սեփական շահերը, որոնք հակադրվում են և փոխադարձաբար բացառում են պետականության մոդելը, հիմնված քաղաքական-փիլիսոփայական

հայեցակարգի վրա, որի համաձայն՝ «պետությունը «պասիվ գործիք է», որը ծառայում է բացառապես ժողովրդի շահերին ամբողջությամբ: Հասարակության ինքնագիտակցության ոչ բավարար մակարդակի պարագայում վերը նշված իրավիճակը սահուն կերպով վերաճում է ամբոխավարության, երբ իշխանության մի թևը կամ մարդկանց խումբը սեփականաշնորհում է ժողովրդաիշխանությունը՝ օգտագործելով բնակչության գայրույթը և հասարակության դժգոհությունը, որպեսզի ճնշում գործադրելով իշխանության մյուս թևերի նկատմամբ՝ յուրացնի ամբողջ իշխանությունը:

Այս տարբեր հայեցակարգերի իրավական բովանդակությունը տարբեր է և անհամադրելի, որոնց սահմանադրական էությունն ու բովանդակությունը տարբեր են: Պետության սուբյեկտության ակտիվ մոդելի դեպքում սահմանադրաիրավական կարգավորումը իր մեջ կրում է եզրութային հայեցակարգային հակամարտություն, որը *վերացնում է իրավունքի էությունը* և փոխարինում է այն *համապարտադիր կանոններով*, իրավագոյացումը՝ կանոնագոյացմամբ, պարտավորության ինստիտուտը՝ հարկադրական կանոնակիրառմամբ: Պետության օպերացիոն գործառնական տեսանկյունից դա կարող է լինել աննկատ, քանի որ իրավունքի դրսևորման իրավակիրառ մակարդակը «իրավունք չունի» քննարկել կամ սահմանել արդարադատության արդարության չափանիշները, որպես ֆունկցիոնալ իր գործադիր բնույթի բերումով պարտավոր է պահպանել «համապարտադիր վարքագծի կանոնները»:

Արդյունքում նշմարվում է պետականագոյացման համակարգային հակամարտություն. այսինքն՝ պետականության մեթոդաբանական բազիսը և պետության գործառնական օպերացիոն բազիսը, որը դիտարկվում է քաղաքական փիլիսոփայությունից դուրս, նեղացվում է տնտեսագետների մոտեցման շրջանակներում, որոնք պետությունը դիտարկում են որպես բիզնես սուբյեկտ, որպես ունիվերսալ կոնստրուկտիվ, միայն պետության դեպքում է, որ վերջինս ձգտում է առավելագույնի հասցնել ոչ թե շահույթը, այլ իշխանական լիազորությունների ծավալը՝ դրանք օգտագործելով սեփական վերջնական նպատակներին հասնելու համար, ինչպիսին որ նրանք չլինեն:

Նման համակարգային հակամարտության պայմաններում ձևավորվում է համակարգային ռեցիդիվ, համաձայն որի՝ ամեն ինչ դիտարկվում է օգուտի շրջանակներում: Պետության դիսֆունկցիան հանդես է գալիս որպես իրավական էության փոխարինման արդյունք, որտեղ էկոնոմիկան չի բխում պետականության աստիճանակարգային կառուցվածքից՝ որպես հասարակական կառուցվածքի համակարգի, այլ ընդհակառակը՝ պետությունը հանդես է գալիս որպես օգուտի տնտեսական կոնստրուկտիվի մասնավոր դեպք: Պետության էության նման գաղափարախոսական իրավասահմանման արդյունքում, որպես պարտավորության անվիճելի և առաջնային սահմանադրական առարկա, էկոնոմիկան փոխարինվում է ժողովրդի և պետության միջև առևտրով, որոնք ունեն օգուտի տարբեր ոլորտներ:

Նման դասավորվածությամբ «պետության հիմնական գործիքը համարվում է այս կամ այն խմբի հպատակների սատարման գրավումը նրանց օգտին ուրիշներից զավթած հարստության վերաբաշխման» միջոցով...

Այս պարագայում պետությունը պարփակվում է քաղաքական իշխանության ներքին բնույթի մեջ՝ ունենալով կենտրոնական նպատակ և խնդիր՝ ցանկացած միջոցով փոփոխվող հանգամանքների պայմաններում ապահովել իշխանության համակարգի հավերժությունն ու անխափանությունը, սահմանելով այն ուղին, որով զարգանում են կառավարման ձևերը, այլ ոչ թե ուղին է սահմանվում այդ ձևերով: Սա սահմանադրականության համակարգային հակամարտության թաքնված ռեցիդիվ է, երբ սահմանադրությունը գրվում է կամ փոփոխվում է հարմարավետ կառավարման ձևի համար, այլ ոչ հակառակը, որ կառավարման ձևը և հասարակական համալիր գործընթացների կառավարման համակարգը բխեցվում են պարտավորության (долженствование) սահմանադրական կարկասից, որն իրացնում է հասարակության արժեքների համակարգը՝ պետական շահերի իրավական մետրիկայով (պոզիտիվիզմի կոնֆլիկտաբանական բնույթը):

Պետության և ժողովրդի շահերի միջև անհավասարակշռությունը հնարավոր չէ լուծել առանց լեգիտիմության իրավական մետրիկայի, որը որոշում և ուրվագծում է իրավական թույլատրելիության սահմանները (շահերը որպես այդպիսիք), որն էլ իր հերթին կարող է դուրս մղվել պետության շահերի իրավական բովանդակության և ժողովրդի շահերի իրավական բովանդակության կոնստրուկտիվներից:

Եզրակացություն

Իրավագիտության տրամաբանական հարթակը տեսականորեն թույլատրում է նման հակամարտության առկայությունը որպես «իրերի բնական վիճակ» պետության զարգացման դինամիկայի պայմաններում և, համապատասխանաբար, պետություն-ժողովուրդ հարաբերություններում նոր հանգամանքների ի հայտ գալով: Ավելին, այդ ամենը բնական և օրինաչափ չեն և բացառում են սահմանադրականությունը, որի խնդիրն է սահմանել պետականության բազիսի անփոփոխելիությունը (արժեհամակարգի և կառավարման ձևի սահմանադրական կոնստրուկտիվը, որն ապահովում է այդ արժեքների համակարգի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը) և իրավական համակարգը, որն ապահովում է այդ պետականության իրավական ամրագրումը և իրավաբանական ուղեկցումը արդեն օպերացիոն գործառական մակարդակում:

Այս պարագայում սահմանադրականության էությունը անորոշ է դառնում հասարակության քաղաքացիական իրավասությանը համաչափ՝ երբեմն իջնելով մինչև կենցաղային մտածողության մակարդակ, ձևավորելով անկարողություն՝ հասկանալու սահմանադրական բազիսի փոփոխության իրավա-

կան բովանդակության և կարգավիճակի տարբերությունը և այն հանգամանքները, որոնք փոխգործակցության կոնֆիգուրացիայի փոփոխության ուժով պահանջում են իրավական ամրագրում համալիր հասարակական գործընթացի շրջանակներում, որոնք նոր հանգամանքների (որոնց իրավական բովանդակությունը չպետք է դուրս գա սահմանադրական բազիսի շրջանակներից) բերումով պահանջում են կատարելագործում և լրացուցիչ իրավական ամրագրում: Մա իրավական վերլուծության որակի համարժեքության համար պատասխանատվության առանցքային հիմնահարցն է, որն ի վիճակի է հասկանալու իրավունքի էությունն ընդհանրապես և սահմանադրականության իրավական բովանդակությունը, որպեսզի «ակնածանքով» վերաբերվի իրավունքի գեներալիսի, հասարակության, պետության, պետականության ինստիտուտի ամրագրման իրավագոյացման և պետության իրավասուբյեկտության գործառական նախագծման հիմքերին վերաբերող ցանկացած հարցի: Սահմանադրությունը ընթացիկ իրավիճակի ներքո չի կարող գրվել: Սահմանադրականության՝ որպես պետականության իրավական ամրագրման դիսցիպլինի գաղափարը չի կարող հիմնվել կարճաժամկետ կամ նույնիսկ միջնաժամկետ հանգամանքների իրավաստեղծագործության վրա, սակայն օբյեկտը սահմանադրական օրինաստեղծագործության կարգավիճակ ձեռք է բերում միայն այն դեպքում, եթե ունենում է համակարգաստեղծ ֆունկցիոնալություն, այսինքն՝ բովանդակային և մասնավորապես նրա իրավական բովանդակության կազմվածքի առումով ունենում է ոչ միայն երկարաժամկետ ֆունկցիոնալության բնույթ, այլև, որպես բազային օբյեկտ, անփոփոխելիության ներունակ կարգավիճակ, որից կախված է համակարգային ամբողջականությունը: Մասնավորապես, պետությունը չունի բարձրագույն իշխանության իմանենտ իրավունք, այն պատկանում է բացառապես ժողովրդին-հասարակությանը (հասարակության իրավական բովանդակությունը):

Համակարգային հակամարտությունների գեներալիսի մեթոդաբանական համալիրի առջև ծառայած կենտրոնական առանցքային հարցը իրավունքի էության տեսանկյունից շարունակում է մնալ մարդկության պատմության մեջ հավաքական գոյի ամենասկանդալային ռեցիդիվին առնչվող հարցին պատասխանելու փաստացի ունակությունը. ինչպե՞ս են պետությունն ու ժողովուրդը (հասարակությունը) միմյանց հետ փոխգործակցում, որի արդյունքում չեն արդարացնում մեկը մյուսին՝ միմյանց զգելով խղճուկ և անարժան վիճակի մեջ:

ВАРДАН АЙВАЗЯН – Системный конфликт правового государства и демократии. – В статье рассматриваются концептуальные основы и практические проявления верховенства права и правового закрепления демократии, между которыми возникают многослойные системные конфликты. Отсутствие системы их предотвращения и разрешения обуславливает не только хроническую напряженность, но и высокую вероятность возникновения конфликтов, переводя эти конфликты на более глубокий и, соответственно, критический уровень, что полностью меняет правовую природу и текстуру не только международных отношений, но и внутригосударственной системы.

Эти конфликты представлены с методологией представления проблемы в разных парадигмах. В качестве методологической основы для описания отклонений, проявляющихся в функционировании демократического государства, выбран системный конфликт. С той же логикой в статье представлены и системные конфликты в системе международного права. В статье рассматривается системотехника конституционализма как правовая форма и первооснова преодоления системных конфликтов, которая не только четко определяет стандарты качества государства и правовой системы, но и выявляет отклонения в ее функционировании. При этом в научной статье представлены генезис и иерархия системных конфликтов между верховенством права и демократией, что дает возможность раскрыть их природу на причинном уровне.

Ключевые слова: *система, конфликт, сущность права, демократия, правовое государство, правовая система, системотехника, конституционализм, международное право, государство, человек, общество*


VARDAN AYVAZYAN – *Systemic Conflict of the Rule of Law State and Democracy.* – The article discusses the conceptual basis and practical display of the rule of law state and the legal consolidation of democracy, between which arise multi-layered systemic conflicts. The lack of a framework for their prevention and resolution causes not only chronic tension, but also a high probability of conflicts, moving these conflicts to a deeper and, accordingly, extreme level, which completely changes the legal nature and textures of not only international relations, but also the domestic system.

These conflicts are presented with the methodology of presenting the problem in different paradigms. Systemic conflict is chosen as a methodological basis to describe the deviations that are displayed in the functioning of a democratic state. With the same logic, the article also presents systemic conflicts in the international law system.

The article considers the system engineering of constitutionalism as a legal format and a fundamental principle as a framework for overcoming systemic conflicts, which not only clearly defines the quality standards of the state and the legal system, but also highlights deviations in its functioning. At the same time, the scientific article presents the genealogy and gradation of systemic conflicts between the rule of law and democracy, which provides an opportunity to reveal their nature at the causal level.

Key words: *system, conflict, essence of law, democracy, rule of law, legal system, system engineering, constitutionalism, international law, state, human, society*

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՈՒՅԹԻ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԱՅԱԴ ԲԱԴԱԼՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Վերաքննիչ վարույթի պարզեցման և վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման հարցը ներկայումս վարչական դատավարության ոլորտում ամենաարդիականներից է: Դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո մինչև վերաքննիչ բողոքի քննության առաջին դատական նիստի օրն ընկած ժամանակահատվածը միջինը 1.5 տարի է: Ընդ որում, այս ժամանակահատվածն անընդհատ աճելու միտում ունի: Գործերի քննության չափազանց երկար ժամկետները խախտում են ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները՝ սահմանված, համապատասխանաբար, ՀՀ Սահմանադրության 63-րդ և 61-րդ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներում: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործերի քննության անհարկի երկար ժամկետների առկայությունը համարում է դատական իշխանության վատ գործունեության վկայություն: Պետությունը պատասխանատու է ոչ միայն դատավարության ցանկացած անհարկի հետաձգման համար, այլ նաև վերջինիս պարտավորությունն է բարեփոխել դատական իշխանությունն այնպես, որ հաղթահարվի կրկնվող, բազմաքանակ գործերով դատական իշխանությունը ծանրաբեռնելու խնդիրը: Նախորդ տարիներին փորձ է արվել քննարկվող խնդիրը կարգավորել վերաքննիչ դատարանի դատավորների թվակազմն ավելացնելու միջոցով, սակայն պրակտիկան ցույց է տվել, որ դա չի տվել ցանկալի արդյունքներ: Նման պայմաններում խնդրի լուծումը պետք է գտնել դատավարական ընթացակարգերի պարզեցման միջոցով:
Վերը նշվածի հաշվառմամբ՝ հոդվածում քննարկվում են վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման դատավարական մի շարք գործիքներ (օրինակ՝

* **Սայադ Բադալյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ
Саяд Бадалян – кандидат юридических наук, доцент кафедры конституционного права ЕГУ
Sayad Badalyan - Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Constitutional Law
Էլ. փոստ՝ sayad.badalyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-4692-8176>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 18.03.2024
Գրախոսվել է՝ 18.04.2024
Հաստատվել է՝ 17.05.2024
© The Author(s) 2024

որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքի սահմանափակումը կամ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատարանից նախնական թույլտվություն ստանալու պահանջի սահմանումը), որոնց ներդրումը վարչական դատավարության օրենսգրքում կարող է զգալիորեն նպաստել այս խնդրի լուծմանը:

Բանալի բառեր – *վարչական դատավարություն, վերաքննիչ վարույթ, վարչական դատարան, վերաքննիչ դատարան, վերաքննիչ բողոք, վարչական դատավարության օրենսգրք, դատական ծանրաբեռնվածություն, դատավարական ժամկետներ*

Վերաքննիչ վարույթի պարզեցման և վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման հարցը ներկայումս վարչական դատավարության ոլորտում ամենաարդիականներից է: Դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայումս վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո մինչև վերաքննիչ բողոքի քննության առաջին դատական նիստի օրն ընկած ժամանակահատվածը միջինը 1.5 տարի է: Ընդ որում, այս ժամանակահատվածն անընդհատ աճելու միտում ունի: Նախորդ տարիներին փորձ է արվել խնդիրը կարգավորել վերաքննիչ դատարանի դատավորների թվակազմն ավելացնելու միջոցով, սակայն պրակտիկան ցույց է տվել, որ դա չի տվել ցանկալի արդյունքներ: Նման պայմաններում խնդրի լուծումը պետք է գտնել դատավարական ընթացակարգերի պարզեցման միջոցով: Ընդ որում, այդ պարզեցված ընթացակարգերը փնտրելիս պետք է հաշվի առնել, որ թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդարադատության մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և, ելնելով այդ իրավունքի բնույթից, այն պահանջում է կարգավորում պետության կողմից, իսկ այդ կարգավորումները կարող են սահմանափակումներ առաջացնել¹, սակայն դրանք չպետք է լինեն այնպիսին, որ խաթարեն դատարանի իրավունքի բուն էությունը: Ավելին, այդ իրավունքի սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ և լինեն համաչափ, որպեսզի համապատասխանեն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի պահանջներին²:

Միջազգային փորձը³ վկայում է, որ, վերը նշվածի հաշվառմամբ, առկա են վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման դատավարական մի շարք գործիքներ, որոնց ներդրումը վարչական դատավարության օրենսգրքում կարող է զգալիորեն նպաստել խնդրի լուծմանը: Վերը նշվածի հաշվառմամբ և ամփոփմամբ՝ կարող ենք առանձնացնել վերաքննիչ վարույթի պարզեցման հետևյալ ուղղությունները.

¹ Sté u Stanev v Bulgaria (թիվ 36760/06), 17 հունվարի 2012, պարբ. 230:

² Sté u Lupeni Greek Catholic Parish and Others v Romania (թիվ 76943/11), 29 նոյեմբերի 2016, պարբ. 84:

³ Sté u, օրինակ, Recommendation No. R (95) 5 of the Committee of Ministers of the Council of Europe concerning the introduction and improvement of the functioning of appeal systems and procedures and civil and commercial cases, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c> (մուտք՝ 01.12.2023):

1. Որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքի սահմանափակում:

2. Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատարանից նախնական թույլտվություն ստանալու պահանջի սահմանում:

3. Որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքի քննության իրականացում ոչ թե երեք դատավորի կազմով, այլ միանձնյա դատավորի կողմից:

4. Վերաքննիչ բողոքների քննության առավելապես գրավոր ընթացակարգի անցում:

5. Վերաքննիչ դատարանի որոշումների պատճառաբանության շարադրման համար ծախսվող ժամանակի հնարավորինս կրճատում:

6. Վարչական դատարանի մի շարք միջանկյալ ակտերի նկատմամբ հետաձգված բողոքարկման հնարավորության սահմանում:

7. Վերաքննիչ վարույթում գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի առանձնահատկությունների, ինչպես նաև դատավարության մասնակիցների դատավարական կարգապահության ամրապնդմանն ուղղված միջոցների սահմանում:

Վերաքննիչ վարույթի պարզեցման վերը թվարկված 1-ին և 2-րդ եղանակները ենթադրում են դատավարական օրենսդրության առավել արմատական փոփոխություններ: Միննույն ժամանակ, այդ միջոցները նորույթ չեն միջազգային պրակտիկայում և առերևույթ չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններին: Ընդհակառակը, եթե դատական իշխանությունը ծանրաբեռնվում է մանր գործերով, և վտանգվում է իրավունքների ու ազատությունների արդյունավետ և ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության իրավունքը, ապա հանրային իշխանության պարտականությունն է կազմակերպել դատական իշխանության գործունեությունն այնպես, որ վերանա այդ ծանրաբեռնվածությունը: Այս առումով պետությունները պարտավորված չեն կազմավորել հատուկ տեսակի դատարաններ, օրինակ վերաքննիչ⁴: Հետևաբար, եթե վերջիններս կազմավորում են այդպիսի դատարաններ, ապա նրանք ազատ են նախատեսելու սահմանափակումներ վերաքննիչ բողոքարկման համար, ինչպիսիք են որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքի սահմանափակումը կամ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատարանից նախնական թույլտվություն ստանալու պահանջի սահմանում: Ընդ որում, դրանք առավել արմատական լուծումներ են և վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության թեթևացման ավելի մեծ ներուժ ունեն, քան մյուս միջոցները: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև, որ թեև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը պետություններին չի պարտավորեցնում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, բայց այն

⁴ St´u Council of Europe, European Court of Human Rights, European Union Agency for Fundamental Rights, Handbook on European law relating to access to justice, Publications Office, 2017, էջ 26, <https://data.europa.eu/doi/10.2811/846864> (մուտք՝ 01.12.2023):

երկրներում, որտեղ դրանք գործում են, պետությունները պարտավոր են երաշխավորել, որ տվյալ դատարաններում դատավարության մասնակիցներն օգտվեն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված հիմնարար երաշխիքներից⁵:

Օրինակ, Գերմանիայում վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատարանից նախնական թույլտվություն ստանալու պահանջը սահմանվել է 1996 թ., և այդ ժամանակից ի վեր թե՛ քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, թե արդյոք վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածության թեթևացման և գործերի քննության ժամկետների կրճատման գինը շատ բարձր չի եղել: Մինչդեռ տասնամյակներ անց լայնորեն ընդունված է այն տեսակետը, որ այս բարեփոխմամբ վերաքննիչ դատարանների ծանրաբեռնվածությունը զգալիորեն թեթևացավ, որն էլ իր հերթին կրճատեց գործերի քննության ժամկետները: Բացի այդ, զգալիորեն ամրապնդվեց առաջին ատյանի դատարանի դերը, քանի որ դատավարության մասնակիցներն այլևս առաջին ատյանի դատարանը չեն համարում պարզապես որպես անցումային օղակ դեպի վերաքննիչ ատյան:

Գերմանիայի վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հինգ հիմնական հիմքեր, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր է առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնել (օրինակ՝ եթե գործը փաստական կամ իրավական առումով ունի առանձնահատուկ դժվարություններ, կամ եթե գործն ունի հիմնարար կարևորություն)⁶:

Ինչ վերաբերում է վերաքննիչ վարույթի պարզեցման վերը թվարկված 3-7-րդ եղանակներին, ապա դրանք կարող են ներդրվել առանց դատավարական օրենսդրության արմատական վերանայումների, և դրանք ևս կարող են մեծապես օգտակար լինել քննարկվող խնդրի լուծման համար: Ստորև կքննարկենք այդ եղանակներից յուրաքանչյուրի բնույթը:

Որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքի քննության իրականացում ոչ թե երեք դատավորի կազմով, այլ միանձնյա դատավորի կողմից:

Վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՎԴՕ) գործող կարգավորումների համաձայն՝ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքները վերաքննիչ դատարանը քննում է երեք դատավորի կազմով: Բացառություն են միայն նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով բերված բողոքները, որոնք քննվում են հինգ դատավորի կազմով: Վերաքննիչ դատարանը միանձնյա քննում է միայն վարչական դատարանի միջանկյալ ակտերի դեմ բերված բողոքները: Առաջարկում ենք ընդլայնել վերաքննիչ բողոքների միանձնյա քննության դեպքերը: Մասնավորապես, նպատակահարմար ենք համարում միանձնյա քննության կարգ նախատեսել նաև ՎԴՕ 117-րդ հոդվածի 1.1 մասով նախատեսված գործերով վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական

⁵ St' u Andrejeva v Latvia (թիվ 55707/00), 18 փետրվարի 2009, պարբ. 97:

⁶ St' u Գերմանիայի վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 124, մաս 2, https://www.gesetze-im-internet.de/englisch_vwgo/englisch_vwgo.html (մուտք՝ 01.12.2023):

ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության համար: ՎՂՕ նշված դրույթով կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության կարգը: Դրանք քանակով շատ, սակայն ոչ մեծ բարդության գործեր են, ինչի հաշվառմամբ էլ վարչական դատարանում դրանց քննության համար արդեն իսկ ներդրված է պարզեցված գրավոր ընթացակարգ: Կարծում ենք, որ վերաքննիչ դատարանում դրանց վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների միանձնյա քննությունը ևս արդարացված կլինի և կնպաստի դատավորների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

Վերաքննիչ բողոքների քննության առավելապես գրավոր ընթացակարգի անցում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) որոշումներում արտահայտված դիրքորոշումների համաձայն՝ *քաղաքացիական և վարչական գործերով անձանց վերապահված է ներպետական դատական համակարգում առնվազն մեկ ատյանի կողմից բանավոր կարգով լսված լինելու իրավունքը*⁷: *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույցների հետազոտումը, փաստերի հաստատումը ԵՄ բազմաթիվ երկրներում տեղի են ունենում առաջին ատյանի դատարաններում, նպատակահարմար է, որ բանավոր քննությունն իրականացվի հենց այդ ատյանում*⁸:

Ներկայումս ՎՂՕ-ն բողոքի քննության գրավոր ընթացակարգի հնարավորություն է նախատեսում միայն ՎՂՕ 18-րդ գլխով սահմանված գործերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների համար: Իրավական որևէ խոչընդոտ չկա, սակայն, որ բողոքների քննության գրավոր ընթացակարգի հնարավորությունը տարածվի բոլոր վերաքննիչ բողոքների համար: Իհարկե պետք է նախատեսվի նաև վերաքննիչ դատարանի հայեցողությունը դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասով, եթե գործի առանձնահատկությունների հաշվառմամբ վերաքննիչ դատարանը անում է նման եզրահանգում: Ընդ որում, դեռևս 2018 թ. Քաղաքացիական դատավարության օրենսգրքով համանման կարգավորում ներդրված է վերաքննիչ քաղաքացիական դատարանում բողոքների քննության համար, և շուրջ հինգ տարվա պրակտիկան վկայում է այս կարգավորման կենսունակության մասին:

Վերաքննիչ դատարանի որոշումների պատճառաբանության շարադրման համար ծախսվող ժամանակի հնարավորինս կրճատում:

⁷ St´u Hakansson and Sturesson v Sweden (թիվ 11855/85), 21 փետրվարի 1990, պարբ. 64:

⁸ St´u Salomonsson v Sweden (թիվ 38978/97), 12 նոյեմբերի 2002, պարբ. 37:

Առհասարակ, վերաքննիչ վարույթի պարզեցման ամենակարևոր ուղղություններինց մեկն է երկրորդական, ոչ էական նշանակություն ունեցող գործողություններին համար դատարանի աշխատաժամանակի կրճատումը, ինչը հնարավորություն կտա խնայված ժամանակը ծախսելու առավել առաջնային խնդիրների լուծման համար: Այս համատեքստում անհրաժեշտ է խնայել վերաքննիչ դատարանի աշխատաժամանակն այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը և չի տեսնում վարչական դատարանի դատական ակտը լրացուցիչ պատճառաբանելու կարիք: Այս դեպքում ստացվում է, որ վերաքննիչ դատարանը համաձայն է վարչական դատարանի դատական ակտի թե՛ պատճառաբանական, թե՛ եզրափակիչ մասերի հետ: Նման պայմաններում անիմաստ է վերաքննիչ դատարանի կողմից իր որոշման պատճառաբանական մասը շարադրելու վրա ժամանակ ծախսելը: Նշվածի հաշվառմամբ արդարացված է նախատեսել այնպիսի կարգավորում, ըստ որի, եթե վերաքննիչ դատարանը կիրառում է ՎԴՕ 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունը, և վերաքննիչ դատարանի գնահատմամբ վարչական դատարանի անփոփոխ թողնված դատական ակտը լրացուցիչ պատճառաբանելու կարիք չկա, ապա վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը կարող է պատճառաբանական մաս չունենալ, այլ միայն պարունակել նշում այն մասին, որ վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջը հիմնավոր չէ վարչական դատարանի դատական ակտի պատճառաբանությամբ:

Վարչական դատարանի մի շարք միջանկյալ ակտերի նկատմամբ հետաձգված բողոքարկման հնարավորության սահմանում:

Վերաքննիչ վարույթի պարզեցման կարևոր ուղղություններից մեկն էլ առանձին բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի թվի սահմանափակումն է այն դեպքում, երբ անձի իրավունքների պաշտպանությունը կարող է արդյունավետորեն երաշխավորվել նաև այդ ակտերի հետաձգված բողոքարկման միջոցով: Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ ակտերը սահմանված են ՎԴՕ 131-րդ հոդվածով: Առաջարկում ենք այդ հոդվածում թվարկված միջանկյալ դատական ակտերից ստորև նշվածների առանձին բողոքարկման հնարավորությունը սահմանափակել և իրականացնել հետաձգված բողոքարկման կարգով: Այս միջանկյալ ակտերն են.

1. բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին,
2. դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին,
3. կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին,
4. ինքնաբացարկի մասին:

Վերաքննիչ վարույթում գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի առանձնահատկությունների, ինչպես նաև դատավարության մասնակիցների դատավարական կարգապահության ամրապնդմանն ուղղված միջոցների սահմանում:

Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքը, ըստ էության, վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությանը հանգեցնող հիմնական գործոններից է: Եթե վարչական դատարանում այս սկզբունքի լրիվ ծավալով կիրառումն արդարացված է, ապա նույնը չի կարելի ասել վերաքննիչ վարույթի դեպքում: Բհարկե, վերաքննիչ դատարանը կոնկրետ գործի առանձնահատկությունների հաշվառմամբ կարող է անհրաժեշտ համարել այս սկզբունքի լիարժեք կիրառումը, սակայն դա պետք է թողնվի վերաքննիչ դատարանի հայեցողությանը և ոչ թե պարտադրվի բոլոր գործերով:

Վերաքննիչ վարույթի պարզեցմանն ուղղություններից մեկն էլ կարող է լինել գործին մասնակցող անձանց դատավարական կարգապահության ամրապնդման մեխանիզմների սահմանումը: Պրակտիկայում հազվադեպ չեն դեպքերը, երբ դատավարության մասնակիցը բաց է թողնում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետը և հետո ներկայացնում է տարբեր վերտառությամբ դիրքորոշումներ, կամ դատավարության մասնակիցները ներկայացնում են նոր ապացույցներ բողոքի քննության դատական նիստից մի քանի օր առաջ, ինչը հանգեցնում է ևս մի քանի ամսով բողոքի քննության հետաձգմանը: Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել դատավարական կարգավորումներ՝ ուղղված դատավարության մասնակիցների նմանատիպ վարքագծի կանխմանը:

Վերոնկարագրյալից բացի, արդիական խնդիր է նաև ՎԴՕ-ում որոշակի կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոքի քննության ժամկետների սահմանման հարցը: Խոսքն այն գործերի մասին է, որոնցով ներկայացված են պարտավորեցման կամ գործողության կատարման պահանջներ: Խնդիրն այն է, որ վարչական գործերի քննության երկարատև ընթացքը, առաջին հերթին, խախտում է այն անձանց իրավունքը, ովքեր դատարան են դիմել նման պահանջներով: Օրինակ՝ վիճարկման հայցերի դեպքում խնդիրն ավելի մեղմ է. հատկապես այն պայմաններում, երբ վարչական ակտի կատարումը կասեցվում է, հայցվորների իրավունքների երաշխավորման տեսակետից գործերի երկարատև քննությունը ռիսկեր գրեթե չունի: Այլ է վիճակը պարտավորեցման և գործողության կատարման հայցերի դեպքում: Եթե անձը, օրինակ, դիմել որևէ թույլտվություն ստանալու համար և վարչական մարմնից ստացել է անհիմն մերժում, ապա ստիպված է սպասել մի քանի տարի իր իրավունքների վերականգնման համար, որպիսի պայմաններում անձի իրավունքների պաշտպանությունը, ըստ էության, իմաստազրկվում է: Համապատասխան կարգավորումները պետք է ապահովեն պարտավորեցման և գործողության կատարման հայցերի քննության ժամկետների հարցում որոշակի կանխատե-

սելիություն: Դա նաև թույլ կտա վերաքննիչ դատարանին գործերը որոշակիորեն դասակարգել և, նախևառաջ, քննել այն բողոքները, որոնցով գործի քննության ձգձգումը անձի իրավունքների պաշտպանության և վերականգնման առումով հատկապես խնդրահարույց է:

Այսպիսով, գործերի քննության չափազանց երկար ժամկետները խախտում են ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները՝ սահմանված, համապատասխանաբար, ՀՀ Մահմանադրության 63-րդ և 61-րդ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներում: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործերի քննության անհարկի երկար ժամկետների առկայությունը համարում է դատական իշխանության վատ գործունեության վկայություն: Պետությունը պատասխանատու է ոչ միայն դատավարության ցանկացած անհարկի հետաձգման համար, այլ նաև վերջինիս պարտավորությունն է բարեփոխել դատական իշխանությունն այնպես, որ հաղթահարվի կրկնվող, սակայն բազմաքանակ գործերով դատական իշխանությանը ծանրաբեռնելու խնդիրը: Այսպես, Ջիմերմանը և Շտայներն ընդդեմ Շվեյցարիայի գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է.

«Կոնվենցիան անդամ պետությունների համար սահմանում է պարտավորություն կազմակերպելու իրենց իրավական համակարգն այնպես, որ դատարաններին հնարավորություն տրվի ապահովելու 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ներառյալ ողջամիտ ժամկետում գործի քննությունը»:

«Պետությունների պատճառաբանությունն առ այն, որ գործերի քննության չափազանց երկար ժամկետները պայմանավորված են դատարանների ծանրաբեռնվածությամբ, չեն կարող արդարացնել իշխանություններին գործերի քննության հետաձգված ժամկետների հարցում իրենց պատասխանատվության առումով»⁹:

Հաշվի առնելով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում գործերի քննության ներկայիս ժամկետները՝ այժմ ամենաճիշտ ժամանակն է կիրառելու բոլոր գործիքակազմերը (Մահմանադրության և միջազգային-իրավական փաստաթղթերի շրջանակներում թույլատրելի) պետության վերը նշված պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Սույն հոդվածում քննարկված իրավական հնարավորությունների կամ դրանց մի մասի փոխկապակցված կիրառումը կարող է զգալիորեն արդյունավետ լինել այս խնդրի լուծման համար:

САЯД БАДАЛЯН – Проблема обеспечения разумных сроков апелляционного производства в административном судопроизводстве. – Вопрос упрощения апелляционного производства и снижения загруженности административного суда является одним из наиболее актуальных проблем административного судопроизводства. Исследование судебной статистики свидетельствует о том, что период между принятием апелляционной жалобы к производству и датой

⁹ Zimmermann and Steiner v Switzerland (թիվ 8737/79), 13 հուլիսի 1983, պարբ. 29:

первого судебного заседания рассмотрения апелляционной жалобы составляет в среднем около 1,5 лет. Притом, этот период имеет тенденцию к постоянному увеличению. Чрезмерно длительные сроки судебного разбирательства нарушают права на справедливое судебное разбирательство в разумные сроки и эффективную судебную защиту прав и свобод, которые предусмотрены, соответственно, в статьях 63 и 61 Конституции РА, а также в статьях 6 и 13 Европейской конвенции «О защите прав человека и основных свобод». Более того, Европейский суд по правам человека считает наличие неоправданно длительных сроков расследования дел свидетельством плохой работы судебной власти. Более того, Европейский суд по правам человека считает наличие неоправданно длительных сроков расследования дел свидетельством плохой работы судебной власти. Государство несет ответственность не только за любое неуместное откладывание судопроизводства, но также обязанностью последней является реформирование судебной власти таким образом, чтобы была преодолена проблема загруженности судебной власти в результате повторяющихся, но многочисленных дел. В предыдущие годы была предпринята попытка урегулировать проблему за счет увеличения количества судей апелляционного суда, однако практика показала, что это не принесло желаемых результатов. В таких условиях надо найти решение путем упрощения судопроизводственных процедур.

С учетом вышесказанного, в статье обсуждается ряд судопроизводственных средств снижения загруженности апелляционного суда (например - ограничение права на апелляционное обжалование по отдельным категориям дел или установление требования о получении предварительного разрешения суда на подачу апелляционной жалобы), внедрение которых в кодекс административного судопроизводства может существенно способствовать решению данной проблемы.


Ключевые слова: *административное судопроизводство; апелляционное производство; административный суд; апелляционный суд; апелляционная жалоба; кодекс административного судопроизводства; загруженность судов; сроки судопроизводства*

SAYAD BADALYAN – *The Issue of Ensuring Reasonable Period for Appellate Proceedings in Administrative Trials.* – The issue of simplifying the appellate proceedings and reducing the workload of the appellate court is currently one of the most relevant issues in the field of administrative trials. The study of judicial statistics proves that the period between the appeal being accepted for proceedings and the date of the first court hearing of the appeal is about 1.5 years on average. Moreover, this period tends to increase constantly. Excessively long periods for examining cases violate the rights to a fair trial within a reasonable time and effective judicial protection of rights and freedoms, as defined respectively in the Articles 63 and 61 of the RA Constitution, as well as the Articles 6 and 13 of the European Convention For the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Moreover, the European Court of Human Rights considers the unnecessarily long periods of examination of cases as evidence of the poor functioning of the judiciary. The State is not only responsible for any unnecessary delay in the trial, but it is also the latter's obligation to reform the judiciary so that to overcome the issue of overloading the judiciary as a result of repeated but numerous cases. During past years an attempt was made to settle the subject issue by increasing the number of judges of the appellate court, but the practice shows that it did not bring the desired results. In such conditions the solution to the matter should be gained through the simplification of judicial procedures.

Taking into account the foregoing, the article covers a number of procedural tools for reducing the workload of the appellate court (for example, limiting the right to appeal in a certain category of cases or establishing the requirement to obtain a prior court permission to file an appeal), the implementation of which in the Code of Administrative Procedure can significantly contribute to solving the issue.

Key words: *administrative trial; appellate proceedings; Administrative Court; Appellate Court; appeal; the Code of Administrative Procedure; judicial workload; trial terms*

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում համակողմանիորեն ուսումնասիրվել են պատշաճ վարչարարության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ վարչական վարույթում լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքները: Նշված ոլորտում առաջացող խնդրահարույց իրավիճակները նկարագրվել են հետևյալ հարցադրումների միջոցով՝ (1) արդյո՞ք վարչական վարույթում լաված լինելու իրավունքի խախտումը բոլոր դեպքերում պետք է հանգեցնի այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը, (2) արդյո՞ք վարչական վարույթում լաված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչվելուց հետո վարչական մարմինը կարող է կրկին կայացնել նույն վարչական ակտը՝ լաված լինելու իրավունքի խախտումը վերացնելու պայմանով: Նշված հարցադրումների վերլուծությամբ հիմնավորվել է վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների վերաբերյալ նոր մոտեցումներ ու լուծումներ մշակելու և կիրառելու անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա ապահովել մի կողմից, մարդու հիմնական իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետությունն ու հանրային շահի կենսագործումը:

Բանալի բառեր – վարչարարություն, պատշաճ վարչարարություն, կրկնակի վարչարարություն, լաված լինելու իրավունք, վարչական ակտ, մարդու իրավունքների պաշտպանություն, վարչական մարմինների գործունեության արդյունավետություն, հանրային շահ

Ներածություն

Վարչական վարույթում անձի լաված լինելու, այսինքն՝ ընդունվելիք միջամտող ազդեցություն ունեցող վարչական ակտի վերաբերյալ վարույթի մասնակցի կողմից իր դիրքորոշումը և ապացույցները ներկայացնելու իրավունքը

* **Կարեն Հակոբյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ

Карен Акопян – кандидат юридических наук, ассистент кафедры конституционного права ЕГУ

Karen Hakobyan – Candidate of Law, Lecturer at the Chamber of Constitutional Law, YSU

Էլ. փոստ՝ karen.hakobyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-2804-2694>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.01.2024

Գրախոսվել է՝ 13.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

վարչական վարույթում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվող ընթացակարգային երաշխիքների անկյունաքարն է¹ և վարչական մարմինների առջև անձի արդյունավետ իրավական պաշտպանության կարևորագույն միջոցը: Վարչական վարույթում անձի լաված լինելու իրավունքը պատշաճ վարչարարության հիմնական չափանիշներից է² և համարվում է պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ մասը, այդ իրավունքի օրգանական տարրը³: Ավելին, լաված լինելու իրավունքը համընդգրկուն⁴, արքիտմատիկ իրավաբանական սկզբունք է, որը, մի շարք ձևական տարբերություններով հանդերձ, պաշտպանվում է զարգացած իրավական համակարգ ունեցող բոլոր պետություններում⁵:

Ինչպես տեսական գրականությունում⁶, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում⁷ առանձնացվում են լաված լինելու իրավունքի հետևյալ երկու գործառույթները՝ վարչական մարմնի կողմից կիրառվող միջամտող միջոցի դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց արդյունավետ անհատական պաշտպանության ապահովում և վարչական գործի փաստական հանգամանքների պարզում:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական մարմինների կողմից լաված լինելու իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության⁸ 50-րդ հոդվածի 3-րդ մասում՝ որպես մարդու պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ: Այսինքն՝ վարչական մարմինների կողմից լաված լինելու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում ճանաչվել է որպես մարդու սահմանադրական (հիմնարար) իրավունք:

¹ Տե՛ս Itai Rabinovici, “The Right to be Heard in the Charter of Fundamental Rights of the European Union”, *European Public Law* (18), 2012, էջ 149-173:

² Տե՛ս Hanns Peter Nehl, *Principles of Administrative Procedure in EC Law*, Oxford: Hart Publishing, 1999, էջ 70:

³ Տե՛ս, օրինակ, *M. M. v Minister for Justice, Equality and Law Reform and Others (C-277/11)* գործով Եվրոպական միության դատարանի (The Court of Justice of The European Union) 22.11.2012 թվականի վճիռը:

⁴ Տե՛ս *Jussila v. Finland (73053/01)* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.11.2006 թվականի վճիռը, 42-րդ կետ:

⁵ Տե՛ս Jürgen Schwarze, *European Administrative Law*, Sweet and Maxwell, London 1992, էջ 1243-1371:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ. Լուվիթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել – Եր.: Բավիդ, 2011, էջ 307-308:

⁷ Տե՛ս *Սարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/7107/05/14 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը, ինչպես նաև *Տիգրան Աբադյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի՝ թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը:

⁸ Ընդունվել է 05.07.1995 թվականին, փոփոխվել է 27.11.2005 թվականին (ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, Հոդ. 1426) և 06.12.2015 թվականին (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118):

Վարչական վարույթում լսված լինելու իրավունքի՝ սահմանադրական մակարդակում ամրագրման պատճառով այդ իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների առնչությամբ ծագում են մի շարք խնդրահարույց իրավիճակներ: Այդ խնդիրները կարելի է նկարագրել հետևյալ հարցադրումների միջոցով.

1) *արդյո՞ք վարչական վարույթում լսված լինելու իրավունքի խախտումը բոլոր դեպքերում պետք է հանգեցնի այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը,*

2) *արդյո՞ք վարչական վարույթում լսված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչվելուց հետո վարչական մարմինը կարող է կրկին կայացնել նույն վարչական ակտը՝ լսված լինելու իրավունքի խախտումը վերացնելու պայմանով:*

Առաջին հարցադրմամբ ձևակերպված խնդրի էությունը

Մի կողմից՝ վարչական վարույթում անձի լսված լինելը վարչարարության ընթացակարգային (ձևական-իրավաբանական) պահանջ է. լսված լինելու իրավունքի իրացումը պարզապես ենթադրում է վարչական վարույթի մասնակցի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին սեփական դիրքորոշումն ու ապացույցները ներկայացնելը վարչական մարմնին: Վարչական վարույթի մասնակիցն ազատ է որոշելու՝ ներկայանալ լ հրավիրված լսումներին, թե՞ ոչ, լսումների ընթացքում ներկայացնել իր դիրքորոշումը և ապացույցները, թե՞ ոչ, ներկայացնել լ գրավոր դիրքորոշում, թե՞ ոչ, ի՞նչ դիրքորոշում և ապացույցներ ներկայացնել վարչական մարմնին: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթի մասնակիցն է «տնօրինում» լսված լինելու իրավունքից օգտվելու (կամ չօգտվելու) իրեն ընձեռված հնարավորությունը:

Վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի իրացումը որպես կանոն ապահովվում է վարչական մարմնի այն պարտականություններով, որ վերջինս հրավիրում է լսումներ, պատշաճ և ժամանակին իրագրելում է վարույթի մասնակցին լսումների վայրի և ժամանակի մասին, հնարավորություն է տալիս վարույթի մասնակցին լսումների ընթացքում կամ օրենքով սահմանված դեպքում այլ կերպ (օրինակ՝ գրավոր ձևով) արտահայտելու իր դիրքորոշումը և ներկայացնելու իր ապացույցները ընդունվելիք միջամտող վարչական ակտի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, հաշվի է առնում վարույթի մասնակցի դիրքորոշումը և ներկայացրած ապացույցները վարչական ակտ կայացնելիս:

Փաստորեն, վարչական մարմնի՝ վարչական վարույթում անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովվելուն ուղղված պարտականությունների կատարման դեպքում ձևական-իրավաբանական տեսանկյունից կարող են առաջանալ, *inter alia*, հետևյալ իրավիճակները.

- վարչական մարմինը կատարում է անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելուն ուղղված իր բոլոր պարտականությունները, սակայն վարչական վարույթի մասնակիցը չի ներկայացնում որևէ դիրքորոշում կամ ապացույց, այսինքն՝ չի օգտվում լսված լինելու իր իրավունքից, վարչական մարմինը կայացնում է ըստ էության իրավաչափ վարչական ակտ,

- վարչական մարմինը կատարում է անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելուն ուղղված իր բոլոր պարտականությունները, որի արդյունքում վարույթի մասնակիցը ներկայացնում է իր դիրքորոշումը և ապացույցները, սակայն դրանք չեն ազդում ընդունվելիք վարչական ակտի իրավաբանական բովանդակության վրա. վարչական մարմինը կայացնում է նույն իրավաչափ վարչական ակտը, որը կայացվելու էր՝ անկախ վարույթի մասնակցի՝ իր դիրքորոշումը և ապացույցները ներկայացնելու հանգամանքից:

Ակնհայտ է, որ նշված երկու դեպքում էլ վարչական մարմինն ապահովում է վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքը, և այդ իրավունքի խախտման մասին խոսք լինել չի կարող: Մինչդեռ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի ապահովման՝ քննարկվող երկու տարբերակներում էլ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի ապահովումը չի ազդում վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա:

Փաստորեն, վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի իրացումը ոչ միշտ է ազդում ընդունվելիք վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա:

Ընդունվելիք վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա ազդեցության տեսանկյունից ճիշտ նույն իրավիճակն է առաջանում այն դեպքում, երբ վարչական մարմինը խախտում է վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքը, սակայն այդ իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտը նյութաիրավական տեսանկյունից իրավաչափ է: Խոսքն իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն դեպքերի մասին է, երբ վարչական մարմինը չի կատարում վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելուն ուղղված իր պարտականությունները, զրկում է վարույթի մասնակցին իր դիրքորոշումը և ապացույցները ներկայացնելու հնարավորությունից, սակայն վերջիվերջո կայացնում է այնպիսի միջամտող վարչական ակտ, որը համապատասխանում է այն ընդունելու համար հիմք հանդիսացող նյութաիրավական կարգավորումներին: Այլ կերպ ասած՝ եթե անգամ վարչական վարույթի մասնակիցն իրացնել իր լսված լինելու իրավունքը, ապա, միևնույնն է, վարչական մարմինը իրավաչափորեն կայացնելու էր այն նույն վարչական ակտը, որը կայացվել է առանց վարչական վարույթի մասնակցին լսելու:

Վերոգրյալ վերլուծությունների արդյունքում հարց է ծագում. նյութաիրավական տեսանկյունից իրավաչափ վարչական ակտը ինչո՞ւ պետք է անվավեր

ճանաչվի միայն վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման հիմքով, եթե այդ իրավունքի իրացման պայմաններում անգամ, միննույն է, կայացվելու էր նույնաբովանդակ վարչական ակտ:

Գործող օրենսդրական կարգավորումները և դրանց իրավակիրառական պրակտիկան այսօր տալիս են այս հարցի միանշանակ պատասխանը. վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի⁹ 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իմաստով և ենթակա է անվավեր ճանաչման այդ նույն իրավադրույթի ուժով: Այլ կերպ ասած՝ գործող իրավակիրառական պրակտիկայի համաձայն՝ վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտումն ինքնին (per se) անվերապահորեն հանգեցնում է այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը, քանի որ լաված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտը «օրենքի խախտմամբ ընդունված» վարչական ակտ է:

Վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների վերաբերյալ վերը նշված մոտեցումն այնքան է արմատացել դատական պրակտիկայում¹⁰, որ թվում է, թե այս հարցով երկրորդ կարծիք լինել չի կարող:

Երկրորդ հարցադրմամբ ձևակերպված խնդրի էությունը

Եթե վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտումն ինքնին (per se) անվերապահորեն հանգեցնում է այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը, ապա իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջանալ (և հաճախ առաջանում է), *inter alia*, հետևյալ իրավիճակը.

- անվավեր ճանաչված վարչական ակտով կարգավորված՝ հանրային իրավունքի բնագավառի նույն գործի կարգավորման նպատակով վարչական մարմինը հարուցում է նոր վարչական վարույթ,
- այդ նոր վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը շտկում է նախկին վարույթում թույլ տրված թերությունը՝ ապահովելով վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի իրացումը,
- վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի իրացումը չի ազդում ընդունվելիք վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա,

⁹ Ընդունվել է 18.02.2004 թվականին, ուժի մեջ է մտել 31.12.2004 թվականին, տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317), Հոդ. 413:

¹⁰ Տե՛ս, օրինակ, *Մարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտունների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության թիվ ՎՂ/7107/05/14 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը:

- արդյունքում վարչական մարմինը կայացնում է անվավեր ճանաչված վարչական ակտին նույնաբովանդակ վարչական ակտ՝ այս անգամ արդեն առանց լաված լինելու իրավունքի խախտման դեֆեկտի¹¹:

Վերը նկարագրված իրավիճակի իրավաչափությունը քննարկման առարկա է դարձել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը 2022 թվականին կայացրած որոշումներով արտահայտել է այնպիսի իրավական դիրքորոշում, որի համաձայն՝ վարչական մարմինն իրավասու չէ հարուցել վարչական վարույթ և միջամտող վարչական ակտ ընդունել այն անձի վերաբերյալ, որի նկատմամբ միննույն առարկայի վերաբերյալ և միննույն հիմքերով նախկինում ընդունված վարչական ակտը ճանաչվել է անվավեր՝ օրենքի ընթացակարգային պահանջների, այդ թվում նաև՝ լաված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով:

Այսպես՝ ըստ Վճռաբեկ դատարանի՝ «(...) իրավական որոշակիության սկզբունքն իրենից ենթադրում է, որ վարչական մարմինը չպետք է ունենա վերջնական և պարտադիր վարչական ակտի վերանայման հնարավորություն՝ գուտ գործի կրկնակի քննության և գործով նոր վարչական ակտ կայացնելու նպատակով: Ընդ որում, այն դեպքերում, երբ վարչական ակտն անվավեր է ճանաչվում վարչական մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային նորմերի պահանջների խախտված լինելու հիմքով, որոնք ազդեցություն են ունեցել որոշման նյութական իրավաչափության վրա և խախտել շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները, ապա տվյալ դեպքում վարչական մարմինը չի կարող իրականացնել գործի կրկնակի քննություն և վերացնելով գործի քննության նախորդ վարույթի շրջանակներում թույլ տրված խախտումները՝ կայացնել նույնաբովանդակ վարչական ակտ: Հակառակ դեպքում, ընթացակարգային իրավանորմերի խախտումներով ընդունված վարչական ակտերը վերացվելուց հետո միննույն հարցի վերաբերյալ երկրորդ և ավելի անգամներ վարչական վարույթ հարուցելու և նոր վարչական ակտ ընդունելու հնարավորությունը ոչ միայն չի համապատասխանի [ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված] իրավակարգավորումներին և դրանց վերաբերյալ արված վերլուծություններին, այլ նաև ուղղակիորեն կնպաստի վարչական մարմնի կողմից ընթացակարգային իրավանորմերի պարբերական անտեսմանը՝ ստեղծելով իրավական որոշակիությունն ու անվտանգությունը խաթարող պարարտ միջավայր: Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման գործելառճը նաև էական չափով

¹¹ Իհարկե, նշված իրավիճակի առաջացումն արդիական է, և սույն աշխատանքում այն քննարկվում է միայն հանրային իրավունքի բնագավառի տվյալ գործի կրկին կարգավորման համար օրենքով սահմանված արգելքների բացակայության, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտ կայացնելու համար սահմանված իրավադադարեցնող (կամ վաղեմության) ժամկետները լրացած չլինելու համատեքստում:

հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի, քանի որ վարչական մարմնի անբարեխիղճ գործելաոճի հետևանքով միևնույն հարցի վերաբերյալ կհարուցվեն և կիրականացվեն մեկից ավելի վարույթներ՝ կատարելով լրացուցիչ, չարդարացված ծախսեր: Ընդ որում, որոշ դեպքերում այդ ծախսերը կարող են գերազանցել նույնիսկ գանձման առաջադրվող հարկային պարտավորությունների չափը: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտով (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է այն ճանաչվել անվավեր) առաջադրված պարտավորությունները չեն կարող կրկին առաջադրվել նոր վարչական ակտի տեսքով (...)¹²:

Վճռաբեկ դատարանի վկայակոչված իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ վարչական վարույթում լսված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչվելուց հետո վարչական մարմինը չի կարող կրկին կայացնել նույն վարչական ակտը՝ լսված լինելու իրավունքի խախտումը վերացնելու պայմանով:

Վճռաբեկ դատարանի այս մոտեցումը հիմնված է այն պատճառաբանության վրա, որ լսված լինելու իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտը վերացվելուց հետո միևնույն հարցի վերաբերյալ երկրորդ և ավելի անգամներ վարչական վարույթ հարուցվելու և նոր վարչական ակտ ընդունվելու դեպքում խախտվում են հետևյալ սկզբունքները.

- 1) իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները,
- 2) օրինականության սկզբունքը,
- 3) տնտեսավարության սկզբունքը՝ լրացուցիչ, չարդարացված ծախսեր կատարելու տեսանկյունից:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ եթե հանրային իրավունքի բնագավառի կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված վարչական ակտն անվավեր է ճանաչվել միայն լսված լինելու իրավունքի խախտման հիմքով, ապա վարչական մարմինը գրկվում է տվյալ գործի կարգավորման նպատակով կրկին վարչական վարույթ հարուցելու և նոր վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի խախտումը վերացնելու պայմանով կրկին նույնաբովանդակ վարչական ակտ կայացնելու հնարավորությունից, քանի որ հակառակ պարագայում, ըստ Վճռաբեկ դատարանի, կխախտվեն վերը նշված սկզբունքները:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ հիմնավորումները արժանի են քննադատության:

Այսպես՝ լսված լինելու իրավունքի խախտման հիմքով վարչական ակտը

¹² Տե՛ս *Գոհար Հակոբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՂ/8932/05/18 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 10.05.2022 թվականի որոշումը կամ *Տիգրան Ղազարյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՂ/8884/05/18 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 04.11.2022 թվականի որոշումը:

վերացվելուց հետո «կրկնակի» վարչարարության իրականացումը չի կարող հակասել որոշակիության և անվտանգության սկզբունքներին, քանի որ համապատասխան օրենսդրական կարգավորումների և ճիշտ իրավաբանական առկայության դեպքում անձանց համար «կրկնակի» վարչարարության իրականացումը կարող է դառնալ կանխատեսելի և սովորական երևույթ: Ընդհակառակը, հենց նման դեպքերում «կրկնակի» վարչարարություն չիրականացնելն է խաթարում իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, քանի որ «կրկնակի» վարչարարություն չիրականացնելու պարագայում այդպես էլ անկատար է մնում այն վարչական ակտով կիրառված միջամտող միջոցը, որը նյութաիրավական տեսանկյունից իրավաչափ էր և բովանդակալիս առումով ճիշտ էր՝ անկախ լսված լինելու իրավունքի խախտումից:

Լսված լինելու իրավունքի խախտման հիմքով վարչական ակտը վերացվելուց հետո «կրկնակի» վարչարարության իրականացումը չի կարող հակասել օրինականության սկզբունքին, քանի որ հանրային իրավունքի բնագավառի տվյալ գործի կրկին կարգավորման համար օրենքով սահմանված արգելքների, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտ կայացնելու համար սահմանված իրավադադարեցնող (կամ վաղեմության) ժամկետների լրացած լինելու բացակայության պայմաններում «կրկնակի» վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինը գործում է հանրային իրավունքի բնագավառի տվյալ գործի կարգավորման համար օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

Ի վերջո՝ ավելորդ է խոսել «կրկնակի» վարչարարության իրականացմամբ լրացուցիչ, չարդարացված ծախսեր կատարելու մասին, քանի որ իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ «կրկնակի» վարչարարության արդյունքում ընդունվող վարչական ակտով սահմանված միջամտող միջոցը բավական մեծ չափերի հասնող հանրային իրավական դրամական պահանջ է, որի մուտքագրումը պետական կամ համայնքային բյուջե ծածկում է «կրկնակի» վարչարարության ծախսերը և լրացուցիչ եկամուտներ է ապահովում պետության կամ համայնքի համար¹³:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները չի կարելի ընկալել որպես միանշանակ ճշմարտություններ: Վճռաբեկ դատարանն այդպես էլ չի կարողացել հստակ և աներկբա իրավաբանորեն հիմնավորել, թե նյութաիրավական տեսանկյունից իրավաչափ վարչական ակտը միայն վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի խախտման հիմքով անվավեր ճանաչվելուց հետո ինչու պետք է վարչական մարմինը զրկված լինի հետագայում այդ խախտումը վերացնելու պայմանով նույնաբովանդակ վարչական ակտ կայացնելու հնարավորությունից:

¹³ Նշված դատողությունը հիմնված է այն իրողության վրա, որ իրավակիրառ պրակտիկայում «կրկնակի» վարչարարությունը, որպես կանոն, իրականացվում է չկատարված հարկային պարտավորությունների գանձմանն ուղղված վարչական վարույթներով:

Սույն հոդվածով առաջ քաշվող հարցադրումներով ձևակերպված խնդիրների վերաբերյալ նոր լուծումների և մոտեցումների մշակման անհրաժեշտությունը

Վերոգրյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների առնչությամբ գործող օրենսդրական կարգավորումները և իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը հանգեցնում են այնպիսի իրավիճակի, որ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի խախտումը ոչ միայն ինքնին (per se) անվերապահորեն հանգեցնում է այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը, այլ նաև վարչական մարմնին զրկում է հետագայում այդ խախտումը վերացնելու պայմանով նոր վարչական ակտ կայացնելու հնարավորությունից՝ անկախ այն հանգամանքից, որ լսված լինելու իրավունքի խախտումը չի ազդել վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա:

Սակայն այս մոտեցումը հակասում է պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բուն էությանը: Այսպես՝ պատշաճ վարչարարության էությունը վարչարարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեության արդյունավետության ապահովման գործառույթների միաժամանակյա ապահովումն ու դրանց միջև փոխադարձ հավասարակշռվածության հաստատումն է: Պատշաճ վարչարարության իրավունքը համընդգրկուն իրավական ինստիտուտ է, որը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են մի կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ վարչարարությանն առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետության ապահովմանը: Չկա պատշաճ վարչարարություն առանց վարչական մարմինների գործունեության արդյունավետության հանրային շահի պաշտպանության:

Փաստորեն, պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքը կոչված է ապահովելու ողջամիտ հավասարակշռություն երկու կարևոր իրավաբանական արժեքների միջև. դրանք են՝ մի կողմից վարչական մարմինների առջև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների իրացումն ու պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինների գործունեության արդյունավետության հանրային շահը: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրատարր, պետք է ապահովի վերը նշված երկու իրավաբանական արժեքների

միաժամանակյա գործողությունն ու ողջամիտ հավասարակշռություն հաստատի դրանց միջև:

Հետևաբար, վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքը չի կարող իրացվել ու պաշտպանվել միակողմանիորեն՝ խաթարելով իրավական պաշտպանության միջոցի սուբյեկտիվ իրավունքի և հանրային շահի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Մինչդեռ վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների առնչությամբ գործող օրենսդրական կարգավորումները և իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը խաթարում են այդ հավասարակշռությունը՝ հոգուտ մարդու իրավունքների ձևական պաշտպանության՝ առանց հաշվի առնելու հանրային շահի պաշտպանության հրամայականը, որը ևս պատշաճ վարչարարության անքակտելի հիմքն է:

Այսպիսով, վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքները վարչական մարմինների գործունեության արդյունավետության և հանրային շահի պաշտպանության պարադիգմով դիտարկելու դեպքում առաջանում է խնդրո առարկա հարցի վերաբերյալ այնպիսի նոր մոտեցումներ և լուծումներ մշակելու ու կիրառելու անհրաժեշտություն, որոնք թույլ կտան ապահովել, մի կողմից, մարդու հիմնական իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետությունն ու հանրային շահի կենսագործումը:

Եզրակացություն

Պատշաճ վարչարարության էությունից բխող՝ վարչական մարմինների առջև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինների գործունեության արդյունավետության հանրային շահի ապահովման միաժամանակյա գործողությունն ապահովելու և դրանց միջև ողջամիտ հավասարակշռություն հաստատելու նպատակով վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների վերաբերյալ հայեցակարգը պետք է հիմնված լինի հետևյալ թեզերի վրա.

1) վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտումն ինքնին (per se) չի կարող անվերապահորեն հանգեցնել այդ խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավերությանը, եթե լաված լինելու իրավունքի խախտումը չի ազդել վարչական ակտի բովանդակության (կամ նյութաիրավական իրավաչափության) վրա,

2) եթե հանրային իրավունքի բնագավառի կոնկրետ գործի կարգավորմանն ուղղված վարչական ակտն անվավեր է ճանաչվել միայն լաված լինելու իրավունքի խախտման հիմքով, ապա վարչական մարմինը պետք է ունենա տվյալ գործի կարգավորման նպատակով կրկին վարչական վա-

րույթ հարուցելու, նոր վարչական վարույթի ընթացքում անձի լաված լինելու իրավունքի խախտումը վերացնելու և կրկին նույնաբովանդակ վարչական ակտ կայացնելու հնարավորություն պայմանով, որ բացակայում են տվյալ գործի կրկին կարգավորման համար օրենքով սահմանված արգելքները, մասնավորապես միջամտող վարչական ակտ կայացնելու համար սահմանված իրավադադարեցնող (կամ վաղեմության) ժամկետները լրացած լինելը,

3) միննույն ժամանակ, նշված իրավիճակներում վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտումն անհետևանք չթողնելու նպատակով անհրաժեշտ է մշակել և գործի դնել պատշաճ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ լաված լինելու իրավունքի՝ որպես հիմնարար իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը կենսագործելու համար:

Վարչական վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի խախտման իրավաբանական հետևանքների վերաբերյալ վերը նկարագրված նոր հայեցակարգը հնարավորություն կտա կանխելու լաված լինելու իրավունքի խախտումները, իսկ խախտումների առկայության դեպքում պաշտպանելու մարդու այդ հիմնարար իրավունքը՝ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի միջոցով, ինչպես նաև պահպանելու նյութաիրավական տեսանկյունից իրավաչափ վարչական ակտերի կայունությունը՝ հաստատելով ողջամիտ հավասարակշռություն մարդու իրավունքների պաշտպանության և հանրային շահի ապահովման միջև:

КАРЕН АКОПЯН – Юридические последствия нарушения права быть услышанным в административном производстве. – В данной научной статье всесторонне изучены юридические последствия нарушения одной из важных составляющих права на хорошую администрацию – права быть услышанным в административном производстве. Проблемные ситуации, возникающие в указанной сфере, были описаны с помощью следующих вопросов: (1) должно ли нарушение права быть услышанным во всех случаях приводить к недействительности административного акта, принятого с этим нарушением?, (2) после того, как административный акт, принятый с нарушением права быть услышанным, признан недействительным, может ли административный орган повторно принять тот же административный акт при условии устранения нарушения права быть услышанным? В результате анализа данных вопросов обоснована необходимость разработки и применения новых подходов и решений относительно правовых последствий нарушения права участника административного производства быть услышанным, что позволит обеспечить, с одной стороны, защиту основных прав человека, а с другой стороны, эффективность управления и функционирование общественных интересов.


Ключевые слова: административная деятельность, хорошая администрация, двойное администрирование, право быть услышанным, административный акт, защита прав человека, эффективность административных органов, общественный интерес

KAREN HAKOBYAN – *Legal Consequences of Violation of the Right to be Heard in Administrative Proceedings.* – This scientific article is devoted to the comprehensive research of the legal consequences of violating the right to be heard in administrative proceedings, one of the important components of the right to good administration. The problematic situations that arise in this area were described using the following questions: (1) Should a violation of the right to be heard in all cases lead to the invalidity of an administrative act adopted with that violation? (2) After an administrative act adopted in violation of the right to be heard is declared invalid, can the administrative authority re-adopt the same administrative act, provided that the violation of the right to be heard is eliminated.

As a result of the analysis of these issues, it was justified the need to develop and apply such new approaches and solutions regarding the legal consequences of violating the right to be heard of a participant in administrative proceedings, which will ensure, on the one hand, the protection of fundamental human rights, and, on the other hand, the effectiveness of public administration and the realization of public interests.

Key words: *administration, good administration, double administration, the right to be heard, administrative act, protection of human rights, effectiveness of the administrative authorities, public interest*

ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Հողվածում անդրադարձ է կատարվել գիտագործնական նշանակություն ունեցող այնպիսի խնդիրների, ինչպիսիք են «ուժի կիրառում» հասկացության բնորոշումը և ուժի կիրառման համաչափության ապահովման հիմնական բաղադրիչների մշակումը: Հեղինակը «ուժի կիրառում» է համարել ոչ միայն անձանց կամ առարկաների նկատմամբ ֆիզիկական միջոցների անմիջական գործադրումը, այլ նաև դրանց գործադրման նախագրուշացումը կամ սպառնալիքը՝ անձանց վրա ֆիզիկական կամ հոգեբանական ներգործության միջոցով նրանց որոշակի վարքագիծ հարկադրելու կամ վարքագծի վրա ազդելու, ինչպես նաև գույքը վնասելու նպատակով: Ուժի կիրառման համաչափության ապահովման հիմնական բաղադրիչներ են համարվել իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական և նյութական պատրաստվածությունը, գործողությունների նախնական պլանավորումը կամ նախագրուշացման սկզբունքը, ինչպես նաև ուժի առանձին տեսակները մանրամասն կարգավորող կանոնների առկայությունը:

Բանալի բառեր – *ուժի կիրառում, համաչափություն, իրավապահ մարմիններ, խոշտանգում, մարդկային արժանապատվություն, հրազեն, հատուկ միջոցներ*

Ներածություն

Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից անձի, հասարակության և պետության շահերը պաշտպանելու համար կիրառվող վարչական հարկադրանքի միջոցների թվում է ուժի կիրառումը (գործադրումը): Դրա հետևանքով, որպես կանոն, սահմանափակվում են մարդու այնպիսի կարևորագույն իրավունքներ, ինչպիսիք են՝ կյանքի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի, մարդկային արժանապատվության, ֆիզի-

* **Քրիստինե Ալեքսանյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ

Кристина Алексанян – кандидат юридических наук, ассистент кафедры конституционного права ЕГУ

Kristine Aleksanyan – Candidate of Law, Assistant at YSU Chair of Constitutional Law

Էլ. փոստ՝ aleksanyan.kristine@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0000-1635-0812>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 24.01.2024

Գրախոսվել է՝ 13.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

կական և հոգեկան անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքները¹: Ուժի կիրառման դեպքում մարդու իրավունքների պաշտպանության կարևորությամբ է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում ձևավորվել է առանձին իրավունքի կիրառման միջազգային իրավունքը², որը մանրամասնորեն կարգավորում է ուժի կիրառումը ոստիկանության կողմից:

Այնուամենայնիվ, թե՛ օրենսդրական և թե՛ տեսական մակարդակներով դեռևս սահմանված չէ «ուժի կիրառում» հասկացությունը, ինչը հնարավորության կտար հստակորեն որոշելու այն շրջանակը, երբ համաչափության սկզբունքը կիրառվում է իրավունքների սահմանափակման այս միջոցի առանձնահատկություններին համապատասխան: Այս համատեքստում, հաշվի առնելով, որ ուժի կիրառումն անխուսափելիորեն շոշափում է մարդու վերը նշված սահմանադրական իրավունքները, դրանց սահմանափակման համաչափության հարցի ուսումնասիրությունը և դրա հիման վրա այս սկզբունքի կիրառումը ապահովելու համար որոշակի չափանիշների մշակումը ձեռք են բերում կարևոր գիտագործնական նշանակություն:

«Ուժի կիրառման» բնորոշումը

Ուժի կիրառումը կարգավորող համապատասխան կանոններից շատերն առաջին անգամ ձևակերպվել են փափուկ իրավունքի երկու փաստաթղթերում՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հովանու ներքո: Դրանք են՝ Իրավապահ պաշտոնատար անձանց վարքագծի 1979 թվականի կանոնագիրքը³ (այսուհետ՝ Կանոնագիրք) և Իրավապահ աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման 1990 թվականի հիմնական սկզբունքները⁴ (այսուհետ՝ Սկզբունքներ): Ինչպես ՄԻԵԴ-ը, այնպես էլ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը վկայակոչել են ՄԱԿ-ի սկզբունքները՝ որպես իրավապահ մարմիններում ուժի կիրառումը կարգավորող միջազգային նորմերի հեղինակավոր դրույթներ⁵:

Ուժի կիրառմանը ներկայացվող հիմնական պահանջը, որը նաև դրա իրավաչափությունը որոշող կարևորագույն չափանիշն է, համաչափության

¹ «Ոստիկանության մասին» օրենքում օգտագործվում է «գործադրում» եզրույթը:

² Տե՛ս **Casey-Maslen, S., & Connolly, S.** (2017). *Police Use of Force under International Law*. Cambridge: Cambridge University Press, էջ 2, doi:10.1017/9781108186575:

³ Տե՛ս Code of Conduct for Law Enforcement Officials, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/lawenforcementofficials.aspx>:

⁴ Տե՛ս Basic Principles on the Use of Force and Firearms by Law Enforcement Officials, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/useofforceandfirearms.aspx>

⁵ Տե՛ս, օրինակ, European Court of Human Rights (ECtHR), *Benzer v. Turkey*, Judgment (Former Second Section), 12 November 2013, պարագրաֆ 90, InterAmerican Court of Human Rights (IAmCtHR), *Cruz Sánchez and Others v. Peru*, Judgment (Preliminary Objections, Merits, Reparation, and Costs), 17 April 2015, պարագրաֆ 264:

սկզբունքն է: Այսպես, «Ոստիկանության մասին» օրենքի⁶ (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածը սահմանում է, որ ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, **այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար**, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել: Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է **եղևելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից**:

Ներպետական շրջանակներում ուժի կիրառման համաչափությանը վերաբերող հարցերը հատկապես լայնորեն սկսեցին քննարկվել 2008 թվականի մարտի 1-ին ոստիկանության և անվտանգության ուժերի կողմից ցուցարարների նկատմամբ ուժի կիրառումից հետո⁷, որը ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարը որակեց «ուժի չափազանց կիրառում»⁸:

Ուժի կիրառման համաչափության համատեքստում գիտագործնական նշանակություն ունի այն հարցի ուսումնասիրությունը, թե ինչն ենք մենք համարում ուժի կիրառում, որը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին՝ հոդվածում ներկայացվող առանձնահատկություններին (բաղադրիչներին) համապատասխան:

Նախքան բարձրացված խնդրի վերաբերյալ եզրակացության կառուցումը հարկ ենք համարում անդրադառնալ ուժի կիրառման հասկացության վերաբերյալ ներպետական օրենսդրությունում, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների փաստաթղթերում առկա հիմնական բնորոշումներին:

Այսպես, ոստիկանության ծառայողի կողմից ուժի կիրառման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենքի 4-րդ գլխում: Դրանում թեև կարգավորվում են ուժի առանձին տեսակների գործադրմանը վերաբերող իրավահարաբերությունները, սակայն չի բնորոշվում «ուժի կիրառումը»:

«Միջազգային համաներում» կազմակերպությունը «ուժը» բնորոշում է որպես ցանկացած ֆիզիկական միջոց, որը կիրառվում է մարդու դեմ՝ իրավապահ նպատակին հասնելու, մասնավորապես՝ հրամանի կատարումն ապահովելու համար: Այդ առումով ուժը ընկալվում է լայն իմաստով՝ սկսած մարդուն ուղղակի հպումից մինչև (պոտենցիալ և նույնիսկ դիտավորյալ մահացու) հրազենի կիրառումը, ինչպես նաև սահմանափակող միջոցների օգտագործումը⁹:

⁶ Ընդունվել է՝ 16.04.2001, ուժի մեջ է մտել՝ 10.06.2001: Տե՛ս ՀՀՊՏ, 2001.05.31/15(147), Հոդ. 378:

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի զեկոյցը 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ, <http://ombuds.am/main/en/10/31/1389/>:

⁸ Տե՛ս CommDH(2008)11REV. Strasbourg, 20 March 20081. SPECIAL MISSION TO ARMENIA. By Thomas Hammarberg. Commissioner for Human Rights, էջ 5, <https://rm.coe.int/16806db801>:

⁹ Տե՛ս Use of force: Guidelines for implementation of the UN basic principles on the use of force and

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի և Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակների հեղինակած՝ «Իրավապահ մարմիններում ուժի և հրազենի կիրառման» ձեռնարկում «ուժի կիրառումը» բնորոշվում է որպես *Ֆիզիկական միջոցների* օգտագործում, որոնք կարող են *վնասվածք* հասցնել մարդուն կամ վնասել գույքը: Ֆիզիկական միջոցները ներառում են իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ձեռքերի և մարմնի մասերի օգտագործումը, ցանկացած գործիքների, զենքի կամ սարքավորումների, ինչպիսիք են՝ մահակները, քիմիական գրգռիչ միջոցները, օրինակ՝ պղպեղի բալոնը, սահմանափակող միջոցները, ինչպիսիք են՝ ձեռնաշղթաները, շները և հրազենը¹⁰: ՄԱԿ-ի շրջանակներում մշակված մեկ այլ փաստաթղթում *վնասվածքը* բնորոշվում է ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական վիճակ, որը պատճառվել է էներգիայի (մեխանիկական, ջերմային, էլեկտրական կամ ճառագայթային կամ էքստրեմալ ճնշման) հետ օրգանիզմի փոխազդեցության արդյունքում՝ ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական դիմացկունությունը գերազանցող փոխանցման քանակությամբ կամ թունավոր քիմիական նյութերով¹¹:

ՄԱԿ-ի՝ վերը նշված գրասենյակների և «Միջազգային համաներում» կազմակերպության փաստաթղթերում «ուժ» և «ուժի կիրառում» հասկացությունների բնորոշումներից հետևում է, որ դրանք վերաբերում են միայն ուժի փաստացի կիրառմանը: Օրենքի՝ ուժի կիրառումը կարգավորող հոդվածների ուսումնասիրությունից ևս հետևում է, որ դրանում «գործադրում» տերմինը վերաբերում է ուժի նեղ՝ միայն փաստացի կիրառմանը: Ավելին, Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ պարբերությունից հետևում է, որ ուժի գործադրման մասին նախազգուշացումը նույնպես չի ընդգրկվում «ուժի կիրառում» եզրույթի ներքո: Դրույթը նախատեսում է, որ ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն *գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել* դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար:

Մյուս կողմից՝ «Միջազգային համաներում» կազմակերպության՝ «ուժ» հասկացության բնորոշումից ուղղակիորեն հետևում է, որ այն տարածվում է *միայն մարդու նկատմամբ* դրա գործադրման վրա: Սկզբունքների 1-ին հոդվածը ևս սահմանում է, որ կառավարությունները և իրավապահ մարմինները պետք է ընդունեն և իմպլեմենտացնեն իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից *մարդու նկատմամբ* ուժի և հրազենի գործադրմանը վերաբերող կանոններ ու կարգավորումներ: Նույն ձևով Օրենքի 30-րդ հոդվածը սահմանում

firearms by law enforcement officials, Amnesty International, Dutch Section, Police and Human Rights Programme, August 2015, էջ 11:

¹⁰ St´u Resource Book on the Use of Force and Firearms in Law Enforcement, Criminal Justice Handbook Series, United Nations Office on Drugs and Crime, 2018, էջ 1:

¹¹ St´u OHCHR, United Nations Human Rights Guidance on Less-Lethal Weapons in Law Enforcement, 2020, էջ 43, doi.org/10.18356/5c14b275-en:

է, որ ֆիզիկական ուժը գործադրվում է **իրավախախտների** նկատմամբ, 31-րդ հոդվածը սահմանում է, որ հատուկ միջոցները գործադրվում են ինչպես մարդկանց, այնպես էլ օբյեկտների նկատմամբ, իսկ հրազենի գործադրումը կարգավորող 32-րդ հոդվածը սահմանում է, որ այն կարող է գործադրվել ինչպես անձանց, այնպես էլ օբյեկտի՝ տրանսպորտային միջոցների նկատմամբ: Օրենքի կարգավորումներից հետևում է, որ այն նախատեսում է ուժի կիրառումը միայն անձանց նկատմամբ, իսկ օբյեկտների նկատմամբ ուժի կիրառումը նպատակաուղղված է հենց դրանց վրա ներգործությանը: Այս առումով թերևս հնարավոր է բացառություն համարել հատուկ միջոցները, որոնք, համաձայն Օրենքի, կարող են օգտագործվել նաև անձանց նկատմամբ հոգեբանական ներգործություն ունենալու համար:

Մեր կարծիքով՝ «ուժի կիրառում» հասկացության ընդգրկման շրջանակի վերաբերյալ ինչպես ներպետական օրենսդրության մեջ, այնպես էլ միջազգային փաստաթղթերում առկա մոտեցումները վիճելի են: Նախ՝ ուժի գործադրումը իրականում պետք է տարածվի ոչ միայն դրա փաստացի կիրառման, այլ նաև կիրառման սպառնալիքի և նախազգուշացման վրա:

Այսպես, ուժի կիրառման մասին բանավոր նախազգուշացումը, եթե անձը չի կատարում իրավապահ մարմինների աշխատակցի հրամանը, չի կարող դուրս մնալ ուժի կիրառումը կարգավորող կանոնների գործողության շրջանակից: Իրավապահ մարմինների աշխատակցի սպառնալիքը կամ նախազգուշացումը ուժի կիրառման մասին կարող է շատ վախեցնող լինել, առաջացնել սթրեսի ուժեղ զգացում: Ավելին, որոշ իրավիճակներում հրազենի կամ որոշ հատուկ միջոցների կիրառման մասին սպառնալիքը կարող է հոգեբանական ավելի մեծ ազդեցություն ունենալ անձի վրա, քանի ֆիզիկական ուժի փաստացի կիրառումը:

Միացյալ Թագավորությունում, օրինակ, ոստիկանը, ով իր ատրճանակը հանում է պատյանից և պահում է մարդու վրա, «օգտագործում է» զենքը, և նույնիսկ եթե ոչ մի կրակոց չի արձակվել, այդ գործողությունը կարձանագրվի որպես ուժի կիրառում¹²: Դանիայում ոստիկանության կողմից հրազենի կիրառումը ներառում է ոչ միայն ատրճանակի նշանառությունն ու փամփուշտի արձակումը, այլ նաև նախազգուշական կրակոցը կամ հրազենի ցուցադրումը և որևէ մեկին վախեցնելը՝ տվյալ հրամանի կատարումն ապահովելու նպատակով¹³: Բեյլին ընդդեմ Միացյալ Նահանգների (ԱՄՆ) 1995 թվականի գործով իր որոշման մեջ Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը բնորոշել է հրազենի «օգտագործումը» (թեև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված, դաշնային քրեական օրենսգրքի նպատակների համար¹⁴, այլ ոչ

¹² St' u College of Policing, 'Armed Policing: Use of Force, Firearms and Less Lethal Weapons', § 2, www.app.college.police.uk/app-content/armed-policing/use-offorce-firearms-and-less-lethal-weapons/:

¹³ St' u **Olsen F. Z.**, 'The Use of Police Firearms in Denmark', Copenhagen, 2008, էջ 2, www.politi.dk/NR/rdonlyres/20DE43AF-33F4-48C5-A710-6A58457E35D2/0/Engelskresum%C3%A9afendeligrapport.pdf.

¹⁴ St' u **Gilbert A. M.**, 'Defining Use of a Firearm', Journal of Criminal Law & Criminology, Vol. 87 (1996-97), 842-63, էջ 843, <http://scholarlycommons.law.northwestern.edu/cgi/viewcontent.cgi?article=6923&context=jclc>:

թե ոստիկանության կողմից) որպես «ակտիվ կիրառում»: Դատարանը հայտարարել է, որ ակտիվ կիրառումը «անկասկած ներառում է թափահարումը, ցուցադրումը, հարվածներ հասցնելը և, ինչն առավել ակնհայտ է, կրակելը կամ հրազենից կրակելու փորձը»: 2016 թվականին ԱՄՆ արդարադատության նախարարության (DOJ) Բալթիմոր քաղաքի ոստիկանության վարչության մասին զեկույցը ենթադրում էր, որ սպաների կողմից զենքի ցուցադրումը «անզեն և անմեղ քաղաքացիական անձանց, որպեսզի վերահսկեն իրավիճակը»¹⁵, հավասարեցվում է ուժի կիրառմանը: Արդարադատության նախարարությունն այնուհետև նշում է, որ ընդհանուր վերահսկողության համար մարդուն ատրճանակի ցուցադրումը հրազենի ոչ պատշաճ օգտագործում է և մահաբեր ուժի կիրառման սպառնալիք, եթե ենթադրյալ հանցագործությունը չի արդարացնում մահաբեր ուժի կիրառումը¹⁶:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ուժի կիրառումը, բացի փաստացի կիրառումից, ներառում է դրա կիրառման նախագրոշացումն ու սպառնալիքը: Վերջինը հրազենի և հատուկ միջոցների դեպքում ենթադրում է նաև դրանց ցուցադրումը՝ որպես ուժի կիրառման սպառնալիքի տեսակ:

Ինչ վերաբերում է ուժի կիրառման կանոնները միայն այն դեպքերի վրա տարածելուն, երբ ուժը փաստացի կիրառվում է հենց մարդու նկատմամբ, գտնում ենք, որ առարկաների նկատմամբ ուժի կիրառման որոշ եղանակներ կարող են պայմանավորված լինել նույն նկատառումներով, ինչ անձանց նկատմամբ ուժի կիրառումը: Կարևոր է հաշվի առնել, որ որոշ առարկաների նկատմամբ ուժի կիրառումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ նաև մարդկանց համար: Դա կարող է ոչ միայն ազդել սեփականության իրավունքի վրա, այլ նաև, կախված առարկայից և ուժի կիրառման եղանակից, մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Այսպես, եթե առարկան կենսական նշանակություն ունի մարդու համար, դրա նկատմամբ ֆիզիկական միջոցների կիրառումը կարող է նաև հանգեցնել անմիջական ֆիզիկական և հոգեբանական հետևանքների հենց անձի համար: Ասվածի օրինակներ են հաշմանդամի անվասայլակը կամ այն մարդու ակնոցը վնասելը, ով առանց դրա շատ վատ է տեսնում: Տուժող անձը կարող է տառապել ինչպես ֆիզիկական վնասվածքից, այնպես էլ ուժի կիրառումից առաջացած սթրեսի և վախի հետևանքով: Մասնավորապես, երբ ոստիկանների ջոկատը հրազենով և հատուկ միջոցներով զինված գիշերվա կեսին տուն է ներխուժում՝ ձերբակալում իրականացնելու համար՝ վնասելով մարդու համար հատուկ արժեք ներկայացնող առարկան: Բնականաբար, այս դեպքերը կարող են ընկալվել որպես մարդու դեմ ուժի անմիջական կիրառումից վատ բան: Այս օրինակները ցույց են տալիս ի-

¹⁵ Տե՛ս US DOJ, Investigation of the Baltimore City Police Department, 10 August 2016, էջ 75, www.justice.gov/opa/file/883366/download:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 79:

րավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի ցանկացած կիրառման համաչափությունն ապահովելու կարևորությունը, թե՛ անձանց, թե՛ առարկաների նկատմամբ, եթե ուժի նման ձևով կիրառումն իրականացվում է որոշակի նպատակով և կարող է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական ազդեցություն ունենալ անձի վրա:

Այսպիսով, ելնելով վերը շարադրվածից՝ ուժի կիրառման համաչափությունը գնահատելիս առաջարկում ենք «ուժի կիրառում» համարել ոչ միայն անձանց կամ առարկաների նկատմամբ ֆիզիկական միջոցների անմիջական գործադրումը, այլ նաև դրանց գործադրման նախազգուշացումը կամ սպառնալիքը՝ անձանց վրա ֆիզիկական կամ հոգեբանական ներգործության միջոցով նրանց որոշակի վարքագիծ հարկադրելու կամ վարքագծի վրա ազդելու, ինչպես նաև գույքը վնասելու նպատակով:

Ուժի կիրառման համաչափությունը ապահովելու բաղադրիչները

Ինչպես նշեցինք, համաչափությունը ուժի կիրառմանը ներկայացվող կարևորագույն պահանջն է: Ուժի տարբեր տեսակների ոչ համաչափ կիրառումը հանգեցնում է մարդու սահմանադրական իրավունքների խախտման: ՄԻԵԴ-ը մի քանի վճիռներում հայտարարել է, որ «*ֆիզիկական ուժի* ցանկացած կիրառում» իրավապահ մարմինների պաշտոնատար անձի կողմից, որը «*խիստ անհրաժեշտ*» չի եղել մարդու վարքի պատճառով, «նվաստացնում է *մարդկային արժանապատվությունը և սկզբունքորեն խախտում է խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը*, որը շարադրված է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածում»¹⁷: Նույն ձևով՝ մարդու իրավունքները, որոնք առավել հաճախ կարող են խախտվել Օրենքով թվարկվող *հատուկ միջոցների* կամ, ինչպես նշվում է միջազգային փաստաթղթերում, քիչ մահաբեր զենքի անհամաչափ կիրառման արդյունքում, կյանքի և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի իրավունքներն են¹⁸: *Հրազենի* կիրառման հետրանքով սահմանափակվող ամենակարևոր իրավունքները ևս *կյանքի և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի* արգելքի իրավունքներն են: Երբ իրավապահ մարմինների աշխատակցի կողմից համաչափության սկզբունքի խախտմամբ հրազենի կիրառումը հանգեցնում է մահվան, գործ ունենք կյանքի իրավունքի խախտման հետ: Երբ հրազենի ոչ համաչափ կիրառման արդյունքը վնասվածքն է, այլ ոչ թե մահը, ավելի հավանական է մարդկային վերաբերմունքի իրավունքի խախտումը¹⁹: Այն իրավիճակում, երբ ոստիկանության կրակոցների գոհը ողջ է մնում, կյանքի իրավունքի

¹⁷ Տե՛ս, օրինակ, ECtHR, Zakharov and Varzhabetyan v. Russia, (Applications nos. 35880/14 and 75926/17), 13 October 2020:

¹⁸ Տե՛ս, օրինակ, ECtHR, Halime Kılıç v. Turkey (Application no. 63034/11), 27 November 2018:

¹⁹ Տե՛ս European Court of Human Rights (ECtHR), Andronicou and Constantinou v. Cyprus, Judgment (Chamber), 9 October 1997, պարագրաֆ 171:

խախտում, այնուամենայնիվ, դեռևս կարող է արձանագրվել, եթե պարզվի, որ պետությունը կա՛մ մտադիր էր սպանել, բայց դա ձախողել է, կա՛մ անխոհեմորեն վտանգի է ենթարկել կյանքը: Ինչպես եվրոպական, այնպես էլ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանները նման որոշումներ կայացրել են, թեև շատ քիչ դեպքերում և բացառիկ հանգամանքներում²⁰:

Անդրադառնալով ներպետական օրենսդրությամբ ուժի կիրառմանը վերաբերող կարգավորումներին՝ պետք է նկատել, որ Օրենքում նախատեսված են բազմաթիվ դրույթներ, որոնք չեն համապատասխանում ուժի կիրառմանը կարգավորող միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Կանոնագրքում և Սկզբունքներում ամրագրված հիմնական մոտեցումներին: Նման անհամապատասխանությունները թերևս առավել ակնհայտ են հրազենի գործադրումը կարգավորող դրույթներում: Այսպես, Կանոնագրքի 3-րդ հոդվածի մեկնաբանությունում մասնավորապես ասվում է. «Որպես կանոն՝ հրազեն չպետք է օգտագործվի, բացառությամբ այն դեպքերի, երբ կասկածյալը զինված դիմադրություն է ցուցաբերում կամ այլ կերպ վտանգում է այլ անձանց կյանքը, և պակաս ծայրահեղ միջոցները բավարար չեն կասկածյալին բռնելու կամ ձերբակալելու համար»: Սկզբունքների 9-րդ կարևորագույն սկզբունքը նախատեսում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները չպետք է հրազեն կիրառեն անձանց դեմ՝ բացառությամբ ինքնապաշտպանության կամ այլ անձանց անխուսափելի մահվան սպառնալիքից կամ լուրջ վնասվածքներից պաշտպանելու, կյանքի համար լուրջ սպառնալիքով զուգորդված առանձնապես ծանր հանցագործության կատարումը կանխելու, նման վտանգ ներկայացնող և նրանց դիմադրող անձին ձերբակալելու կամ նրա փախուստը կանխելու, և միայն այն դեպքերում, երբ պակաս ծայրահեղ

²⁰ Իլհանն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատը նշել է. «Գրեթե բոլոր դեպքերում, երբ որևէ անձ հարձակման կամ դաժան վերաբերմունքի է ենթարկվում ոստիկանության կամ զինվորների կողմից [և ողջ է մնում], նրանց բողոքները ավելի շուտ կդիտարկվեն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում» (ECtHR, Ilhan v. Turkey, Judgment (Grand Chamber), 27 June 2000): Աքարի գործով Եվրոպական դատարանի պալատը պետք է որոշեր, թե արդյոք խախտվել է երկու դիմումատուների կյանքի իրավունքը: Նրանք վերավորվել են Թուրքիայի հարավ-արևելքում գտնվող Մարդին նահանգում 1992 թ. ապրիլին պետության գործակալների կողմից գյուղացիների զանգվածային գնդակահարության ժամանակ: Դատարանը հավանություն է տվել Իլհանի այն եզրակացությանը, որ «միայն բացառիկ հանգամանքներում պետական պաշտոնյաների կողմից ֆիզիկական դաժան վերաբերմունքը, որը մահվան չի հանգեցնում, կարող է վկայել [եվրոպական] Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման մասին [որը պաշտպանում է կյանքի իրավունքը]»: Այնուամենայնիվ, դատարանը վճռեց, որ երկու դիմումատուները վերավորվել են երկարատև և մահացու հարձակման ընթացքում, հրազենի գործադրմամբ, որի հետևանքով զոհվել են ութ համագյուղացիներ: Այս հանգամանքներում, մասնավորապես, ուժի կիրառման աստիճանի և ձևի առումով դատարանը եզրակացրել է, որ դիմումատուները դարձել են այնպիսի վարքագծի զոհ, որը իրենց բնույթով լուրջ վտանգ է ներկայացնում իրենց կյանքի համար, թեև այդ դեպքում նրանք ողջ են մնացել: Այսպիսով, Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սովյալ դեպքում կիրառելի է դիմումատուների նկատմամբ (Acar and Others v. Turkey, Judgment (Fourth Section), 24 May 2005 (rendered final on 12 October 2005), պարագրաֆ 77):

միջոցները բավարար չեն այդ նպատակներին հասնելու: Այսպիսով, եթե նշված փաստաթղթերը հրազենի կիրառումը թույլատրելի են համարում միայն **մահվան կամ լուրջ վնասվածքների անխուսափելի սպառնալիքից** պաշտպանելու համար, ապա Օրենքն այն թույլատրելի է համարում քաղաքացիների առողջությունը վտանգավոր ցանկացած հարձակումից պաշտպանելիս, զավթված պետական պահպանության ենթակա օբյեկտները ազատելիս, անգամ սեփականության դեմ ուղղված ծանր հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս: Պետք է նշել, որ ինչպես ՄԻԵԴ-ի, այնպես էլ ՄԱԿ-ի տարբեր հարցերով զեկուցողների և գրասենյակների մշակած փաստաթղթերում այս, ինչպես նաև Օրենքում նշված որոշ այլ թույլատրելի դեպքերում հրազենի կիրառման արգելվում է, քանի որ չի համապատասխանում համաչափության սկզբունքին:

Նպատակ չունենալով մանրամասն անդրադառնալու Օրենքում առկա կարգավորումների՝ համաչափության սկզբունքին համապատասխանության հարցին, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորման համատեքստում օրենսդրական ակտերով նախատեսված սահմանափակումների համաչափության քննարկումն այս աշխատանքի շրջանակներից դուրս է՝ այժմ կփորձենք առանձնացնել այն հիմնական բաղադրիչները, որոնց պահպանումն ու իրացումը, մեր կարծիքով, կապահովեն տարբեր իրավիճակներում ուժի կիրառման համաչափությունը: Ընդ որում, նշված բաղադրիչները կարող են կիրառելի լինել ինչպես ոստիկանության, այնպես էլ ներպետական օրենսդրության համաձայն ուժի կիրառման լիազորություն ունեցող ցանկացած այլ իրավապահ աշխատակիցների կողմից ուժի կիրառման նկատմամբ²¹:

Ուժի կիրառման համաչափության ապահովման **առաջին բաղադրիչը**, որը կառանձնացնենք, **իրավապահ մարմինների աշխատակիցների պատրաստվածությունն** է: Ընդ որում, իրավապահ մարմինների պատրաստվածությունն առաջարկում ենք հասկանալ մասնագիտական և նյութական առումներով:

Մասնագիտական պատրաստվածությունը նախ նշանակում է, որ պետությունը պետք է ուսուցանի իր իրավապահ մարմինների աշխատակիցներին, որպեսզի նրանք իմանան հրազենի կիրառումը թույլատրող իրավական դրույթները և ձեռք բերեն համապատասխան գործնական հմտություններ, որոնք թույլ կտան բացառել ուժի կիրառումը, իսկ ուժի կիրառման անհրաժեշտության դեպքում նվազագույնի հասցնեն վնասները:

Հենց սրանով է պայմանավորված այն, որ Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը նախատեսում է, որ ոստիկանության ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստություն՝ սովորելով բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և

²¹ Այսպես, օրինակ, «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի համաձայն՝ բնապահպանական պետական տեսուչն ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու լիազորություն ունի:

հրազենի գործադրումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտությունն առաջացնող իրադրություններում գործելու ունակության ստուգումներ:

Այսպես, 2016-ի փետրվարին խաղաղ հավաքների վերաբերյալ Մարդու իրավունքների խորհրդին ուղղված իրենց համատեղ զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները նշել են, որ իրավունքները «ապահովելու» պետության դրական պարտավորությունը պահանջում է, որ իշխանությունները աջակցեն խաղաղ հավաքների անցկացմանը²²: Սա պահանջում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները պատրաստված լինեն օրենսդրությանը համապատասխան հավաքներ անցկացնելու մարդկանց իրավունքի իրականացմանը²³, իսկ այդ պատրաստությունը պետք է ներառի «մեղմ հմտություններ», ինչպիսիք են՝ արդյունավետ հաղորդակցությունը, բանակցությունները և միջնորդությունը, որոնք թույլ են տալիս իրավապահ մարմիններին խուսափել բռնության սրացումից և նվազագույնի հասցնել բախումները²⁴:

Այս համատեքստում ուժի կիրառման լիազորություն ունեցող պաշտոնատար անձի թերևս ամենակարևոր հմտությունը պետք է լինի բացառել այնպիսի սուր իրավիճակը, երբ առաջանա ուժի կիրառման անհրաժեշտություն: Այսպես, Ֆերգյուսոնի ոստիկանական վարչության (FPD) մասին ԱՄՆ-ի արդարադատության նախարարության 2015 թվականի զեկույցում նշվում է. «Իրավիճակը հանդարտեցնելու ոստիկանության աշխատակցի ունակությունը ոստիկանի հիմնական հմտությունն է»²⁵: Մասնագիտական պատրաստվածության բացակայությունն է պատճառը, որ շատ հաճախ ոստիկաններն իրենք են սրում իրավիճակը, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում է ուժի կիրառման անհրաժեշտությանը²⁶:

²² Տե՛ս Joint Report of the Special Rapporteur on the Rights to Freedom of Peaceful Assembly and of Association and the Special Rapporteur on Extrajudicial, Summary or Arbitrary Executions on the Proper Management of Assemblies', UN doc. A/HRC/31/66, 4 February 2016, պարագրաֆ 37, <https://www.refworld.org/docid/575135464.html>:

²³ Տե՛ս նույն տեղը, պարագրաֆ 42:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ US DOJ, Investigation of the Ferguson Police Department, 4 March 2015, p. 26, https://www.justice.gov/sites/default/files/opa/press-releases/attachments/2015/03/04/ferguson_police_department_report.pdf:

²⁶ ԱՄՆ արդարադատության նախարարության 2015-ի զեկույցում նշվում է Ֆերգյուսոնի ոստիկանության աշխատակիցների կողմից ուժի կիրառման հետևյալ գնահատականը. շատ աշխատակիցներ արագորեն սրում են բախումները այն սուբյեկտների հետ, որոնց նրանք համարում են իրենց հրամաններին չենթարկվող կամ ձերբակալությանը դիմադրող: Նրանք սովոր են ապավինել էլեկտրոնային հսկողության միջոցների, մասնավորապես էլեկտրաշոկերի, որտեղ ավելի փոքր ուժ է պետք, կամ ընդհանրապես ոչ մի ուժ պետք չէ (Տե՛ս US DOJ, Investigation of the Ferguson Police Department, 4 March 2015, էջ 28):

Ինչ վերաբերում է նյութական պատրաստվածությանը, ապա Սկզբունքների 2-րդ հոդվածը կոչ է անում կառավարություններին և իրավապահ մարմիններին «մշակել միջոցների հնարավորինս լայն շրջանակ և իրավապահ մարմինների աշխատակիցներին վերազինել զենքի և զինամթերքի տարբեր տեսակներով, որոնք թույլ կտան տարբերակված կերպով կիրառել ուժ և հրա՛գեն»: Ի թիվս այլնի՝ սա պետք է ներառի ոչ մահաբեր, շարքից հանող զենքը՝ համապատասխան իրավիճակներում օգտագործելու համար՝ մարդկանց մահվան կամ վիրավորվելու պատճառ հանդիսացող միջոցների կիրառումն ավելի ու ավելի սահմանափակելու նպատակով: Այսպիսով, ոչ մահաբեր զենքի կիրառման հիմնավորումը ոչ միայն որոշակի հանգամանքներում հրագենի արդյունավետ փոխարինումն է, այլև ընդհանուր առմամբ իրավապահ նպատակներով ուժի կիրառման ժամանակ պատճառված վնասվածքների թվի և աստիճանի կրճատումը: Մասնագիտացված օգտագործման դեպքում նման զենքը կարող է և իսկապես փրկում է կյանքը՝ չարդարացված ռիսկի չենթարկելով իրավապահ մարմինների աշխատակիցների անվտանգությունը կամ հասարակական կարգի պահպանումը:

Ոստիկանության կողմից ուժի կիրառման անհրաժեշտությունը կարող է նաև վերացվել կամ առնվազն նվազագույնի հասցվել համապատասխան ինքնապաշտպանության միջոցներով, ինչպիսիք են՝ վահանակները, սաղավարտները, զրահաբաճկոնները և չվնասվող տրանսպորտային միջոցները (3-րդ սկզբունք):

Այս համատեքստում հատկանշական են նաև ՄԻԵԴ-ի որոշումները: Գյուլին ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի իր որոշման մեջ, որը վերաբերում էր ցուցարարների նկատմամբ հրագենի կիրառմանը, Եվրոպական դատարանը հրագենին այլընտրանք չունենալը «անընդունելի» համարեց՝ նշելով, որ անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել հետապնդվող նպատակի և դրան հասնելու համար օգտագործվող միջոցների միջև: Ոստիկանները շատ ուժեղ զենք են օգտագործել, քանի որ նրանք, ըստ երևույթին, չունեին մահակներ, անկարգությունների վահաններ, ջրցան մեքենաներ, ռետինե փամփուշտներ կամ արցունքաբեր գազ²⁷: Նույն ձևով 2005 թվականին Շիմշեքի գործով իր որոշման մեջ, որը նույնպես վերաբերում էր Թուրքիայում տեղի ունեցած բողոքի ցույցերին, Եվրոպական դատարանը վճռեց, որ «անվտանգության ուժերը, որոնք գիտեին երկու շրջաններում լարված իրավիճակի մասին, պետք է ունենային անհրաժեշտ սարքավորումներ, ինչպիսիք են արցունքաբեր գազը, պլաստիկ փամփուշտները, ջրցանները և այլն, ամբոխը ցրելու համար»²⁸: Դատարանը կրկին վճռել է, որ նման սարքավորումների բացակայությունը «անընդունելի» է:

²⁷ Sté u European Court of Human Rights (ECtHR), Güleç v. Turkey, Judgment (Chamber), 27 July 1998, պարագրաֆ 71:

²⁸ Sté u ECtHR, Şimşek and Others v. Turkey, Judgment, 26 July 2005 (as rendered final on 26 October 2005), §§ 111, 112:

Համաչափության ապահովման **երկրորդ բաղադրիչը**, որը մենք կառանձնացնենք, գործողությունների նախնական պլանավորումը կամ **նախագուշակման սկզբունքն** է:

Այս սկզբունքն առաջին անգամ ձևակերպվել է ՄԻԵԴ-ի կողմից Մակբենի գործով 1995 թվականի դարակազմիկ որոշման մեջ. «Դատարանը պետք է քննի ... ոչ միայն այն, թե արդյոք զինվորների կիրառած ուժը խիստ համաչափ է եղել մարդկանց անօրինական բռնությունից պաշտպանելու նպատակին, այլ նաև այն, թե արդյոք հակահարեկչական գործողությունը պլանավորված էր և վերահսկվում էր իշխանությունների կողմից այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի մահացու ելքով ուժի կիրառումը»²⁹: Նմանատիպ մոտեցում որդեգրել է նաև Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը³⁰:

Այսպիսով, նախագուշակման սկզբունքը պահանջում է, որ պետությունները ապահովեն իրավապահ գործողությունների պլանավորումն ու իրականացումն այնպես, որ նվազագույնի հասցնեն վնասվածքների վտանգը:

Բացի այդ, համաչափության պահպանման նպատակով իրավապահ մարմինների աշխատակիցները նաև պետք է ապահովեն, որ օգնություն և բժշկական օգնություն ցուցաբերվի վիրավոր կամ տուժած անձանց հնարավորինս սեղմ ժամկետում: Մա պետք է լինի նաև իրավապահ մարմինների գործողությունների պլանավորման գործընթացի մի մասը: Այսպես, Ֆինոգենովի գործում Եվրոպական դատարանը քննել է այն հարցը, թե արդյոք փրկարարական գործողությունը ծրագրված է եղել և իրականացվել է կյանքի իրավունքի (Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդված) պաշտպանության իշխանությունների դրական պարտավորությունների համաձայն, «այն է՝ արդյոք իշխանությունները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ նախագուշակական միջոցները՝ նվազեցնելու գազի ազդեցությունը պատանդների վրա, արագ տարհանելու և նրանց անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար»³¹:

Ուժի կիրառման համաչափությունն ապահովող **հաջորդ բաղադրիչը, որը մենք առանձնացնում ենք, ուժի առանձին տեսակների կիրառումը մանրամասն կարգավորող կանոնների առկայությունն** է, լինի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, թե ուղեցույցի ձևով: Ճիշտ է՝ հատուկ կանոններով

²⁹ ECtHR, McCann and Others v. UK, Judgment (Grand Chamber), 27 September 1995, § 194. Տե՛ս նաև՝ ECtHR, Tagayeva and Others v. Russia, Judgment (First Section), 13 April 2017, § 574:

³⁰ Դատարանը որոշել է, որ համաչափությունը նաև կապված է կանխարգելիչ միջոցառումների պլանավորման հետ, քանի որ այն ներառում է ուժի կիրառման ողջամտության գնահատումը: Դորսեմի գործում Միջամերիկյան դատարանը հաստատել է, որ պետությունները «պարտավոր են պատշաճ կերպով պլանավորել իրենց գործակալների կողմից ձեռնարկվող գործողությունները, որպեսզի նվազագույնի հասցնեն ուժի կիրառումն ու դրա հետևանքով առաջացած զոհերի թիվը»: Inter-American Court of Human Rights (IACtHR), Nadege Dorzema and Others v. Dominican Republic, Judgment (Merits, reparations and costs), 24 October 2012, § 88:

³¹ ECtHR, Finogenov and Others v. Russia, Judgment (First Section), 20 December 2011 (as rendered final on 4 June 2012), § 237:

հնարավոր չէ սպառիչ կարգավորել ուժի կիրառման բոլոր դեպքերն ու հանգամանքները, սակայն հնարավորինս մանրամասն կարգավորումը ոչ միայն կօգնի ուժի կիրառման լիազորություն ունեցող պաշտոնատար անձին կոնկրետ դեպքում ուժի համաչափ կիրառումն ապահովելու գործում, այլ նաև կբացառի կամայականությունները: Գտնում ենք, որ նման կանոնների սահմանումը կապահովի նաև ուժի կիրառման կանխատեսելիությունը:

Հարկ է նկատել, որ ուժի կիրառման համաչափության ապահովման այս բաղադրիչը ևս ամրագրվել է ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայում: Եվրոպական դատարանի դատական պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ Դատարանը համաչափության սկզբունքի խախտումը պայմանավորվել է ուժի կիրառումը մանրամասն կարգավորող կանոնների բացակայությամբ: Ալի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի 2012 թ. ապրիլի 10-ի որոշմամբ, համաձայնվելով Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի հետ, որը մտահոգություն է հայտնել իրավապահ գործունեության մեջ արցունքաբեր գազի օգտագործման կապակցությամբ՝ Եվրոպական դատարանը կոչ է արել այս հարցի վերաբերյալ ազգային օրենսդրության մեջ հստակ ցուցումներ տալ³²:

Այս առումով հարկ է նկատել, որ Օրենքի՝ միայն հատուկ միջոցների գործադրումը կարգավորող 31-րդ հոդվածի 8-րդ պարբերությունն է նախատեսում ոստիկանության պետի կողմից հատուկ միջոցները գործադրելու կարգի սահմանում: Այսպիսով, գործնականում ուժի կիրառման համաչափությունն ապահովող վերը թվարկված երեք բաղադրիչներից Օրենքում մասամբ նախատեսված են միայն երկուսը՝ մասնագիտական պատրաստվածությունն ու հատուկ միջոցների կիրառմանը վերաբերող կանոնների սահմանումը:

Հաջորդ հարցը ուժի կիրառմանը վերաբերող պահանջների, մասնավորապես և հատկապես համաչափության սկզբունքի կիրառելիությունն է մասնավոր անձանց նկատմամբ: Ինչպես նշեցինք, ուժի կիրառման վերաբերյալ մեր եզրահանգումները տարածվում են վարչական մարմիններ հանդիսացող բոլոր իրավապահ մարմինների աշխատակիցների վրա, ովքեր ներպետական օրենսդրության համաձայն՝ ուժ կիրառելու լիազորություն ունեն: Ուժ կիրառելը, սակայն, դրա լիազորությունն ունեցող վարչական մարմիններով չպետք է սահմանափակվի. այն պետք է տարածվի նաև ուժի կիրառման իրավունք ունեցող ցանկացած մասնավոր անձի նկատմամբ: Օրինակ՝ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքով³³ նախատեսված պահնորդների և թիկնապահների կողմից ուժի կիրառումը:

Այս մոտեցումը հիմնավորելը դժվար չէ: Բանն այն է, որ պետությունը այս

³² St´u EctHR, Ali Güneş v. Turkey (Application no. 9829/07), 10 April 2012: St´u նաև՝ EctHR, Ataykaya v. Turkey, (Application no. 50275/08), 22 July 2014, EctHR, Halime Kılıç v. Turkey (Application no. 63034/11), 27 November 2018:

³³ Ընդունվել է՝ 09.02.2012, ուժի մեջ է մտել 01.01.2013: St´u ՀՀՊՏ, 2012.03.07/13(887), Հոդ. 183:

անձանց պատվիրակել է ոստիկանական լիազորություններ: Երբ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը աշխատում է մասնավոր պայմանագրով, առնվազն համաչափության ընդհանուր սկզբունքը պետք է սահմանափակի դրա անձնակազմի կողմից ուժի ցանկացած կիրառում (ի լրումն, ի հարկե, այլ օրենսդրական դրույթների):

Այսպես, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը կարևորել է. «Պետությունները պետք է ընդունեն հստակ օրենսդրական շրջանակներ իրավապահ մարմինների կամ այլ անձանց կողմից ուժի կիրառման համար, որոնք պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին, ներառյալ անհրաժեշտության և համաչափության սկզբունքներին»³⁴:

Այսպիսով, թեև ընդունված մոտեցման համաձայն՝ մեր կողմից քննարկվող վարչարարության համաչափության սկզբունքն իր բնույթով վարչական իրավունքի սկզբունք է, որով որոշվում է վարչական մարմինների կողմից մարդու իրավունքներին միջամտության սահմանները, այն նաև կիրառելի է մասնավոր անձանց կողմից ուժի կիրառման նկատմամբ:

Եզրակացություն

Ամփոփելով ուժի կիրառման համաչափության մասին մեր ուսումնասիրությունը՝ կատարել ենք հետևյալ հիմնական եզրահանգումները.

- ուժի կիրառման համաչափությունը գնահատելիս առաջարկում ենք «ուժի կիրառում» համարել ոչ միայն անձանց կամ առարկաների նկատմամբ ֆիզիկական միջոցների անմիջական գործադրումը, այլ նաև դրանց գործադրման նախազգուշացումը կամ սպառնալիքը՝ անձանց վրա ֆիզիկական կամ հոգեբանական ներգործության միջոցով նրանց որոշակի վարքագիծ հարկադրելու կամ վարքագծի վրա ազդելու, ինչպես նաև գույքը վնասելու նպատակով.

- որպես ուժի կիրառման համաչափության ապահովման հիմնական բաղադրիչներ կարող ենք առանձնացնել՝

1. իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական և նյութական պատրաստվածությունը: Մասնագիտական պատրաստվածությունը նշանակում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները ոչ միայն պետք է իմանան հրազենի կիրառումը թույլատրող իրավական դրույթները, այլ նաև տիրապետեն այնպիսի հմտությունների, որոնք թույլ կտան բացառել ուժի կիրառումը, իսկ ուժի կիրառման անհրաժեշտության դեպքում նվազագույնի հասցնեն վնասները: Նյութական պատրաստվածությունը նշանակում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցների մոտ նյութական միջոցների (հրազեն, հատուկ միջոցներ) հնարավորինս լայն շրջանակ՝ տարբերակված ուժ կիրառելու համար:

³⁴ UN Human Rights Council (HRC), Use of Force in Law Enforcement and the Right to Life: The Role of the Human Rights Council, 2016, p. 20.

2. գործողությունների նախնական պլանավորումը կամ նախազգուշացման սկզբունքը, որը պահանջում է, որ պետությունները ապահովեն իրավապահ գործողությունների պլանավորումն ու իրականացումն այնպես, որ նվազագույնի հասցնեն վնասվածքների վտանգը:

3. ուժի առանձին տեսակները մանրամասն կարգավորող կանոնների առկայությունը, որոնք հնարավորինս կապահովեն ուժի համաչափ կիրառումը տարբեր իրավիճակներում:

- ուժի կիրառման համաչափության պահանջը պետք է կիրառելի լինի ոչ միայն վարչական մարմիններ հանդիսացող իրավապահ մարմինների, այլ նաև ներպետական օրենսդրության համաձայն ուժի կիրառման իրավասություն ունեցող մասնավոր անձանց նկատմամբ:


КРИСТИНЕ АЛЕКСАНИЯН – Особенности реализации принципа пропорциональности при применении силы. – В статье были затронуты такие научно-практические проблемы, как определение понятия «применение силы», а также разработка основных компонентов для обеспечения пропорциональности применения силы. В статье «применение силы» рассматривалось не только как прямое применение физических мер в отношении лиц или объектов, но также предупреждение или угроза их применения с целью принуждения людей к определенному поведению или воздействия на их поведение посредством физического или психологического воздействия, а также с целью нанесения ущерба имуществу. Основными компонентами обеспечения пропорциональности применения силы были названы профессиональная и материальная подготовка сотрудников правоохранительных органов, предварительное планирование действий или принцип предупреждения, а также наличие правил, подробно регулирующих отдельные виды силы.

Ключевые слова: применение силы; соразмерность; правоохранительные органы; пытки, человеческое достоинство; огнестрельное оружие; спецсредства

KRISTINE ALEKSANYAN – Features of the Implementation of the Principle of Proportionality in the Use of Force. – The article has touched upon such scientific and practical problems as the definition of the concept of "use of force", as well as the development of basic components to ensure the proportionality of the use of force. In the article, "the use of force" was considered as not only the direct use of physical measures against persons or objects, but also the prevention or threat of their use in order to force people to a certain behavior or influence their behavior through physical or psychological influence, as well as with the aim of causing damage to property. The main components of ensuring the proportionality of the use of force were called professional and material training of law enforcement officers, preliminary planning of actions or the principle of prevention, as well as the existence of rules regulating in detail certain types of force.

Key words: use of force; proportionality; law enforcement agencies; torture; human dignity; firearms; special equipment

ՈՉ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄԱՍՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքը քրեական վարույթի համակարգում նորույթ է, որի գիտական ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ վարույթի մասնավոր մասնակիցները հաճախ թույլ են տալիս իրավունքի չարաշահումներ կամ պատշաճ չեն իրականացնում իրենց պարտականությունները: Իրականում անձը կատարում է գործողություն, որի իրավունքն օրենքով ունի, բայց դրա իրականացման արդյունքում ոչ միայն խաթարվում է վարույթի բնականոն ընթացքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավաչափ շահերը, օրինակ՝ ժամանակին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու տուժողի իրավունքը: Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը ոչ միայն վերաբերում է իրավունքների ոչ իրավաչափ իրականացմանը, այլև օրենքով նախատեսված պարտականությունների չկատարմանը:

Այն անձի նկատմամբ, ում գործունեությունը քրեական վարույթի ընթացքում ճանաչվում է որպես իրավունքի չարաշահում, նրա նկատմամբ բացասական հետևանքները միանգամայն արդարացված են և պետք է հանգեցնեն նրա կողմից իր իրավունքների հետագա չարաշահումների կանխման: Վարույթի մասնավոր մասնակցի գործողության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գնահատականը՝ որպես իրավունքի չարաշահում, պետք է հիմնված լինի փաստերի վրա: Իհարկե, վարույթն իրականացնող մարմինը պետք է գործի իր լիազորությունների սահմաններում և թույլ չտա հայեցողական իրավունքների չարաշահում, որի արդյունքում անհիմն սահմանափակվեն մասնավոր անձանց իրավունքների իրականացման հնարավորությունները:

Բանալի բառեր – քրեական վարույթ, ոչ պատշաճ վարքագիծ, ոչ իրավաչափ վարքագծի արգելք, իրավունքի չարաշահում, պարտականություն, հանրայնություն, պատշաճ ապացուցում, Եվրոպական դատարան, իրավախախտում, դատավարական սանկցիա

* **Մասնվել Դիլբանդյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ

Дилбандян Самвел – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики, ЕГУ

Samvel Dilbandyan – Doctor of Law, Professor, Head of YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

Էլ. փոստ՝ s.dilbandyan@ysu.am ORCID: <https://orcid.org/0000-0001-6494-2791>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.03.2024

Գրախոսվել է՝ 08.03.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Ներածություն

Քրեական վարույթի սկզբունքներն այն ելակետային և հիմնարար գաղափարներն են, որոնք ընկած են քրեական դատավարության հիմքում և կոչված են ապահովելու ոչ միայն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այլև արդարադատության պատշաճ իրականացումը: Ակնհայտ է, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումները հիմնված են մի շատ կարևոր հիմնարար գաղափարի՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության ապահովման վրա, որն ըստ էության բխում է քրեական վարույթի հանրային բնույթից: Քանի որ քրեական վարույթի ընթացքում այդ շահերն էապես հակադրվում են միմյանց, ուստի ցանկացած վարույթային հարցի կարգավորումը պետք է դիտարկել այդ տեսանկյունից:

Նշված գաղափարախոսությունն արտացոլված է նաև քրեական վարույթի սկզբունքներում, որոնցում տեղ են գտել կարգավորումներ, որոնք նպատակամղված են հավասարապես պաշտպանելու ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը: Քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) առանձնահատկություններից են նոր սկզբունքները, որոնք քրեական դատավարության նախկին օրենսգրքում որպես այդպիսին առանձնացված չէին: Մասնավորապես՝ խոսքը հանրայնության մասին է, պատշաճ ապացուցման, ողջամիտ ժամկետի և ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքների: Դրանք բնույթով օբյեկտիվ են և կախված չեն օրենսդրի սուբյեկտիվ կամքից և պայմանավորված են քրեական վարույթի պատշաճ իրականացման, ինչպես նաև վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության պահանջով:

Պետք է նշել, որ Օրենսգրքում ամրագրված սկզբունքները հիմնականում ունեն իրենց սահմանադրական հիմքերը և առավել ընդարձակ կարգավորված են քրեական դատավարության օրենսգրքում: Նման կարգավորումը վկայում է այն մասին, որ քրեական վարույթը հանրային գործունեություն է, որի ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում սահմանափակելու անձի հիմնարար իրավունքները, իսկ դրանց պաշտպանության համար առաջնահերթ երաշխիք են քրեական վարույթի սկզբունքները:

I. Ոչ պատշաճ վարքագծի արգելքի սկզբունքի իրավական հիմքերը

Քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի պաշտպանության համատեքստում հանրային շահերի պաշտպանության իրականացմանն է նպատակաուղղված ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքի նախատեսումը: Գաղափարն այն է, որ վարույթի մասնակիցները քրեական վարույթի շրջանակներում պետք է դրսևորեն պատշաճ վարքագիծ, մասնավոր-

րապես՝ չիրականացնեն իրավունքի չարաշահումներ, որոնք կարող են հանգեցնել այլ անձանց իրավունքների խախտման կամ խոչընդոտել արդարադատության իրականացումը: Այն, որոշակի անձանց համար պարտադիր վարքագծի տարրեր սահմանելով, պաշտպանության տակ է վերցնում այլոց իրավաչափ շահերը, ինչպես նաև արդարադատության շահը¹: Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման նպատակներից մեկն իրավունքի չարաշահման վերացմանն ուղղված իրավական կարգավորումն է, որն առաջին անգամ որպես առանձին սկզբունք ամրագրվեց Օրենսգրքում: Նշված սկզբունքի օրենսդրական ամրագրման նպատակը վարույթի մասնավոր մասնակիցների կողմից վարույթի ընթացքում իրենց իրավունքների իրականացումը չարաշահելու արգելքն է: Իհարկե, չարաշահման բացառման համար կարևոր է իրավունքների իրացման հստակ պայմանների և կարգի սահմանումը: Որոշակիությունը և հստակությունն իրավական նորմի կարևոր երաշխիքներ են, որոնք իրավակիրառողին հնարավորություն չեն տալիս ավելի շատ հայեցողություն կիրառելու և իրավունքը չկիրառելու տվյալ նորմի իրավական կարգավորման նպատակներին հակառակ: Այսպես, վարույթին մասնակցող փաստաբանը կամ լիազոր ներկայացուցիչը կամ օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև հանրային մեղադրողը վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ կարող է հեռացվել վարույթից, եթե՝ 1) երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը կամ 2) առանց հարգելի պատճառի երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները²: Օրենսգրքում նախատեսված՝ վերը նշված դատավարական սանկցիայի կիրառումը երաշխիք է նշված սկզբունքի իրացման, այսինքն՝ քրեական վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար:

Առաջին հայացքից օրենսդրության մեջ ոչ իրավաչափ վարքագծի արգելքի կամ իրավունքի չարաշահման արգելքի գաղափարի ամրագրումը կարծես թե խնդրահարույց է, քանի որ ինչպե՞ս կարող է իրավունքի իրականացումը դիտարկվել չարաշահում, բայց իրականում շատ հաճախ անձը, իրականացնելով օրենքով իրեն վերապահված իրավունքները, նպատակ է հետապնդում ոչ թե իրավաչափ շահերի պաշտպանության, այլ վարույթի բնականոն ընթացքի խոչընդոտման, հետևաբար նման վարքագիծը չի կարող իրավաչափ գնահատվել, և այն արժանի է համապատասխան արձագանքի: Անկասկած, նման գործողությունները չեն կարող գնահատվել իրավաչափ, քանի որ դրանք, օրի-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022, էջ 87:

² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 147, մաս 1:

նակ, կարող են հանգեցնել քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ընթացակարգի արհեստական ձգձգման կամ դատական նիստերի անհարկի հետաձգման: Իրականում անձը կատարում է գործողություն, որի իրավունքն ունի օրենքով, բայց դրա արդյունքում ոչ միայն խաթարվում է վարույթի բնականոն ընթացքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավաչափ շահերը, օրինակ՝ ժամանակին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու տուժողի իրավունքը: Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը ոչ միայն վերաբերում է իրավունքների ոչ իրավաչափ իրականացմանը, այլև օրենքով նախատեսված պարտականությունների չկատարմանը:

Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքը ևս ունի իր սահմանադրաիրավական հիմքերը: Սահմանադրության մեջ նշված գաղափարի ամրագրումը, կարծում ենք, կարևոր է, քանի որ այն իրավական հիմք է ճյուղային օրենսդրության մեջ դրա արտացոլման և կիրառման համար: Իրավագիտության մեջ իրավունքի չարաշահման արգելքի գաղափարը միանշանակ չի ընկալվում, իսկ գործնականում առաջանում են բազմաթիվ հարցեր, որոնք պահանջում են համապատասխան լուծումներ:

ՀՀ Սահմանադրությամբ հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքի նախատեսումը հիմք է տալիս պնդելու, որ այն համընդհանուր իրավական սկզբունք է: Սահմանադրությամբ նախատեսված է, որ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով (ՀՀ Սահմանադրության հոդված 77-րդ): Սահմանադրությունում ամրագրված այս գաղափարը վերաբերում է սահմանադրական կարգի տապալմանը, ատելության բորբոքմանը կամ բռնության քարոզմանը, բայց ընդհանուր իմաստն այն է, որ իրավունքը չպետք է օգտագործվի ի չարս հանրային շահերի:

Քանի որ դատավարությունը ընթացակարգ է, և այդ գործընթացին մասնակցում են բազմաթիվ մասնակիցներ կամ կողմեր, հետևաբար, հանրային կամ մասնավոր շահերի իրականացումից ելնելով, կարող է վարույթի ընթացքում նաև դատավարական իրավունքների չարաշահումներ թույլ տրվեն: Նշված սկզբունքից բխող կարգավորումները ստեղծում են զսպիչների և հակակշիռների յուրօրինակ համակարգ, որով հանրային և մասնավոր շահերի համար ապահովվում է հավասարակշիռ պաշտպանություն³: Հատկանշական է

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եր., 2022, էջ 88: Practical guide to the interpretation of conceptual solutions, innovative approaches and main institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, Yerevan, 2022, p. 88:

այն, որ այս սկզբունքն ուղղակի ամրագրվեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (հոդված 14), ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 29):

Անհրաժեշտ է ընդգծել, որ «իրավունքի չարաշահում» իրավական կատեգորիան նախատեսված է նաև միջազգային իրավական ակտերում, ինչպիսիք են 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (29-րդ հոդվածի 2-րդ մաս), 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (22-րդ հոդվածի 2-րդ մաս), 1950 թվականի նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (6, 17, 35 հոդվածներ), Հանցագործության և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը (հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/34 բանաձևով): Նշված փաստաթղթերում տեղ են գտել բազմաթիվ կարգավորումներ, որոնք վերաբերում են իրավունքի չարաշահման արգելքին:

Կոնվենցիան կիրառելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) իր գործունեության հենց սկզբում՝ 1961թ., ուրվագծեց «Իրավունքի չարաշահման» իր ըմբռնումը՝ քննելով «Lawless v. Ireland» բողոքը⁴: ՄԻԵԴ-ը քաղաքացի Լովլեսի գործողություններում ճանաչեց միավորումների ազատության իրավունքի չարաշահման առկայությունը (խնդիրը վերաբերում էր Իռլանդիայի Հանրապետական կուսակցությանն անդամակցելուն)՝ նշելով, որ Եվրոպական կոնվենցիայի 17-րդ կետն արգելում է ցանկացած պետության, անձի կամ անձանց խմբի **չարաշահել** Կոնվենցիայով իրենց երաշխավորված իրավունքները:

ՄԻԵԴ-ն իր հետագա որոշումներում ընդլայնեց «Իրավունքների չարաշահման» վերաբերյալ իր մոտեցումները: Այսպես, Դատարանը նշեց, որ օրենքի չարաշահումը տեղի է ունենում նաև այն դեպքում, երբ ոտնահարվում են ոչ միայն ժողովրդավարության կարևոր արժեքները, այլ նաև Կոնվենցիայի ոգին: Մասնավորապես, 2005 թվականին «Witzsch v. Germany» բողոքով որոշման մեջ նշվեց, որ խնդրո առարկա հոդվածն ուղղված է կանխելու այն գաղափարների տարածումը, որոնք հակասում են Կոնվենցիայի տեքստին և ոգուն⁵:

ՄԻԵԴ-ի որոշումների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ Դատարան բողոք ներկայացնելիս բողոքարկման իրավունքի չարաշահում է գնահատվում այն իրավիճակը, եթե այն հիմնված է իրականությանը չհամապատասխանող, գիտակցաբար կեղծ փաստերի կամ կեղծված ապացույցների վրա: Այս դեպքում բողոքը մերժվում է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի

⁴ Տե՛ս Lawless v. Ireland, 26 мая 2016, թիվ 332/57 բողոքը:

⁵ Տե՛ս Witzsch v. Germany, 13.12.2005, թիվ 41448/98 բողոքը:

իմաստով՝ իրավունքի չարաշահման վերաբերյալ հղում անելով: Ըստ Եվրոպական դատարանի՝ բողոք ներկայացնելու իրավունքը կչարաշահվի նաև այն դեպքում, եթե փաստերը նկարագրելիս դիմողը դիտավորությամբ բաց է թողնում կամ խեղաթյուրում է գործի ճիշտ լուծման համար կարևոր հանգամանքները: Այսպես, ՄԻԵԴ-ի 2006 թվականի մայիսի 2-ի՝ «Կերեչաշվիլին ընդդեմ Վրաստանի» գործով թիվ 5667/02 բողոքի ընդունելիության մասին որոշումն ուղղակի վկայում է այդ մասին⁶:

«Կոլոսովցկին ընդդեմ Ռուսաստանի» գործով 2003 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 46082/99 բողոքի վերաբերյալ որոշման մեջ Եվրոպական դատարանը նշել է, որ անընդունելի է դիմումատուների կողմից հատկապես վիրավորական, սպառնալից և սադրիչ արտահայտություններ օգտագործելը ՄԻԵԴ դատավորների և պատասխանող պետության նկատմամբ: Այս պահվածքը դատարանը որակում է նաև որպես իրավունքների չարաշահում (*Rehdk v. the Czech Republic, Chernitsyn v. Russia*)⁷:

II. Ոչ պատշաճ վարքագծի արգելքի սկզբունքի էությունը և կիրառման առանձնահատկությունները

«Իրավունքների չարաշահում» հասկացության ուսումնասիրությունը ենթադրում է, որ պետք է առանձնացնել իրավունքների չարաշահման հատկանիշները: ՄԻԵԴ-ն իր որոշումներում նշել է, որ իրավունքը կարող է չարաշահել ինչպես անձը, այնպես էլ պետությունը՝ ի դեմս իր իրավապահ մարմինների⁸: Բացի այդ, չարաշահումը հնարավոր է միայն դիտավորյալ, այսինքն՝ երբ մարդը հասկանում է, որ իրեն տրված իրավունքները կիրառում է ի չարս, սուբյեկտիվ իրավունքի էությանը հակառակ: Բողոքի վերաբերյալ որոշման մեջ («*Mirolubovs and Others v. Latvia*»⁹) ՄԻԵԴ-ը ձևակերպել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դիմումատուի ցանկացած վարքագիծ, որն ակնհայտորեն հակասում է Կոնվենցիայով նախատեսված անհատական դիմումի իրավունքի նպատակին, և որը խոչընդոտում է դատարանի բնականոն գործունեությունը կամ վարույթի պատշաճ ընթացքը, դիմումի իրավունքի չարաշահում է»:

⁶ Տե՛ս *Kerechashvili v Georgia*, 28.04.2009, թիվ 5667/02 բողոքը:

⁷ Տե՛ս *Rehdk v. the Czech Republic*, 18.05.2004, թիվ 67208/01 բողոքը, *Chernitsyn v. Russia* թիվ 5964/02 բողոքը:

⁸ Քրեական դատավարության օրենսգրքում ոչ իրավաչափ վարքագծի արգելքն առավելապես վերաբերում է քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին, թեպետ նմանատիպ չարաշահումներ, կաճում ենք, որ կարող են դրսևորել նաև վարույթի հանրային մասնակիցները: Այսպես, իրավունքի չարաշահում պետք է գնահատել այն դեպքը, երբ քննիչը նախաքննության ավարտին քրեական վարույթի մասնավոր մասնակցին ակնհայտորեն շատ քիչ ժամանակ է հատկացնում քրեական վարույթի նյութերին ծանոթանալու համար, ինչը սահմանափակում է վարույթի մասնավոր մասնակցի հնարավորությունը՝ լիարժեք իրականացնելու իր իրավաչափ շահի պաշտպանությունը:

⁹ *Mirolubovs and Others v. Latvia*, թիվ 798/5, 15.09.2009 թ. բողոքը:

Իրավունքի չարաշահման վերաբերյալ գնահատականների հանդիպում ենք նաև Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի որոշումում, որում մասնավորապես նշվում է, որ գործերը քննելիս դատարանները միշտ պետք է հիմնավորեն իրավունքների և ազատությունների սահմանափակման անհրաժեշտությունը՝ հիմնվելով հաստատված փաստական հանգամանքների վրա: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները թույլատրվում են միայն այն դեպքում, եթե կան համապատասխան և բավարար հիմքեր նման սահմանափակման համար, ինչպես նաև՝ եթե պահպանվում է հավասարակշռությունն անձի օրինական շահերի, իրավունքների և ազատությունների ու հանրային շահերի միջև¹⁰:

Կարծում ենք, որ արդարացված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «ոչ իրավաչափ վարքագծի արգելք» իրավական կատեգորիայի ամրագրումը որպես սկզբունք¹¹, քանի որ այն ունի ինչպես ընդհանուր իրավական սկզբունքին, այնպես էլ քրեական վարույթի շրջանակներում իրականացվող սկզբունքին բնորոշ բոլոր հատկանիշներն ու հատկությունները և գործում է քրեական վարույթի ողջ ընթացքում: Օրենսգրքում մասնավորապես հռչակվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին¹²:

Քրեական վարույթի շրջանակներում դատավարական իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքը նախ՝ նպատակ ունի կանխել իրավունքների իրականացման չարաշահման ցանկացած ձև, երկրորդ՝ թույլ տալ հստակեցնել քրեական վարույթի մասնակիցների իրավունքները, որոշել այդ իրավունքների իրականացման սահմանները և օպտիմալացնել դրանց իրականացման մեխանիզմները, երրորդ՝ ապահովել օրենքով նախատեսված պարտականությունների կատարումը: Հասարակության մեջ անսահմանափակ ազատությունը ճիշտ չէ, քանի որ այն կհանգեցնի անարխիզմի և մասնավոր շահերի անվերջ բախումների: Քրեական վարույթի մասնակիցն իր իրավունքներից օգտվելիս պետք է հաշվի առնի, որ գործընթացին մասնակցող այլ անձինք

¹⁰ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 30.06.2015 թ., № 29 որոշումը «Դատարանների կողմից քրեական դատավարությունում պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովող օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին»:

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 29:

¹² ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսդրությամբ քրեական դատավարության սկզբունքների շարքում այն նախատեսված չէր, բայց օրենսգրքում նախատեսված էին դրույթներ, որոնք կոչված էին ապահովելու վարույթի մասնակիցների իրավաչափ վարքագիծը: Մասնավորապես քրեական դատավարության մասնակիցների համար նախատեսված պարտականությունները, ինչպես նաև դատավարական այն սանկցիաները, որոնք կոչված էին ապահովելու քրեական վարույթի մասնակիցների պատշաճ վարքագիծը:

նույնպես պետության կողմից վերապահված համանման կամ այլ իրավունքների կրողներ են, հետևաբար պետք է գործեն բարեխղճորեն և չչարաշահեն իրենց իրավունքները:

Քանի որ վարույթի մասնավոր մասնակիցները կարող են թույլ տալ ինչպես իրավունքի չարաշահում, այնպես էլ կատարել իրավախախտում, որպեսզի գործնականում խնդիրներ չառաջանան, կարծում ենք, որ դրանք պետք է հստակեցնել և տարանջատել միմյանցից:

Թեև «իրավունքի չարաշահում» իրավական կատեգորիան ունի իր միջազգային իրավական և ներպետական օրենսդրական հիմքերը, այնուամենայնիվ դատավարական գրականության մեջ «իրավունքի չարաշահում» հասկացության վերաբերյալ չկա միասնական կարծիք: Որոշ դատավարագետներ գտնում են, որ իրավունքի չարաշահումը հակաիրավական և իրավական չէ, տարբերությունն այն է, որ իրավունքի չարաշահման դեպքում իրավասու անձը իր իրավունքի իրացմամբ չի խախտում օրենքը, բայց դուրս է գալիս իրավունքի իրականացման սահմանված սահմաններից¹³:

Միննույն ժամանակ «իրավախախտում» կատեգորիան իրավունքի տեսության հիմնարար հասկացություններից է, որն իրավունքի չարաշահումից տարբերվում է հետևյալ բնութագրական հատկանիշներով:

Նախ՝ այն ակտիվ կամ պասիվ վարքագծի որոշակի հոգեֆիզիկական գործողություն է, երբ սուբյեկտը պարտավոր է օրենքի պահանջներին համապատասխան կատարել որոշ գործողություններ,

երկրորդ՝ իրավախախտումը ապօրինի գործողություն է, որը խախտում է օրենքի գերակայությունը,

երրորդ՝ իրավախախտումը միշտ որոշակի վնաս է հասցնում հասարակության մեջ ճանաչված արժեքներին,

չորրորդ՝ այն մեղավոր արարք է: Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ իրավախախտումը երբեք կապված չէ իրավախախտի սուբյեկտիվ իրավունքի իրականացման հետ և իր բնույթով ապօրինի է խախտման սկզբից մինչև վերջ, որին միշտ հետևում են պատասխանատվությունը և պատիժը¹⁴:

Իրավունքի չարաշահումը իրավախախտում չէ, բայց սոցիալական տեսանկյունից ոչ ցանակալի վարքագիծ է: Եթե իրավունքի իրականացման նպատակը իրավաչափ շահի պաշտպանությունն է, ապա այն արդարացված է, և վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ իրավունքի իրականացման սահմանափակումը դատավարական օրենքի էական խախտում է, բայց եթե մասնավոր անձն իրավունքի իրականացմամբ հետապնդում է ոչ ցանակալի նպատակ, որի արդյունքում խախտվում են վարույթի բնականոն ընթացքը կամ վարույթի այլ մասնակիցների իրավունքները, անկասկած, այդ իրավունքների իրականացման սահմանափակումն արդարացված է: Քրեական

¹³ Տե՛ս **Брагусь С.И.** О пределах осуществления гражданских прав //Правоведение. 1967, № 4, էջ 31:

¹⁴ Տե՛ս **Петров А.В.** Теория государства и права. Учебное пособие. - Челябинск, 2009, էջ 131-132:

վարույթի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինները չեն կարող չարձագանքել իրավունքը չարաշահող վարքագծերին: Ոչ իրավաչափ վարքագծի կամ իրավունքի չարաշահման փաստը բացահայտվում և հաստատվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, բայց դրա դրսևորման մասին կարող են բարձրաձայնել նաև վարույթի մասնավոր մասնակիցները:

Իրավունքի չարաշահման փաստի հաստատման համար առանձին ապացուցողական գործողություններ կատարելու անհրաժեշտության չկա, քանի որ դա ակնհայտ է դատավարության մասնակիցներին վարույթի ընթացքում՝ վարույթի մասնակցի կողմից իր իրավունքների ակնհայտ անբարեխիղճ իրականացմամբ:

Վարույթն իրականացնող մարմնի արձագանքը իրավունքի չարաշահման փաստին կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ սանկցիաների կիրառմամբ, միջնորդությունների մերժմամբ: Բոլոր դեպքերում, քանի որ վարույթն իրականացնող մարմինը իրավունքի շարաշահման փաստն արձանագրելով համապատասխան սանկցիաներ է կիրառում և սահմանափակում է մասնավոր մասնակցի՝ օրենքով նախատեսված իրավունքի իրականացումը, այն պետք է հիմնված լինի որոշակի փաստերի վրա՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1) Իրավունքը, որը չարաշահվել է վարույթի մասնավոր մասնակցի կողմից, պետք է նախատեսված լինի քրեադատավարական օրենսդրությամբ: Եթե նշված իրավունքը նախատեսված չէ օրենքով, ապա իրավունքի չարաշահման մասին խոսք լինել չի կարող:

2) Իրավունքի չարաշահում հնարավոր է օրենքով նախատեսված իրավունքի իրականացման ընթացքում: Այսինքն՝ մասնավոր անձն իրականացնում է իր իրավունքը՝ իմանալով, որ դրանով հետապնդում է այլ նպատակներ՝ անբարեխիղճ գտնվելով իրավունքի իրականացման նկատմամբ: Լինում են դեպքեր, երբ պաշտպանը նույն միջնորդությունը քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ներկայացնում է մի քանի անգամ կամ ակնհայտորեն ձգձգում է քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամանակը կամ առանց հարգելի պատճառների չի ներկայանում դատական նիստին:

Վարույթի մասնավոր մասնակցի վարքագծի գնահատման համար կարելի է նշանակություն ունի այն հանգամանքը, որ մասնակիցը հասկանում է, որ իր կողմից կոնկրետ իրավունքն իրականացվում է նշված իրավունքի ոգուն և նպատակին հակառակ: Եթե անձը չի գիտակցում այդ հանգամանքը, ապա այդ անձի գործողություններում չկա իրավունքի չարաշահում:

Ըստ էության, այս հանգամանքը ցույց է տալիս իրավունքը չարաշահած անձի մեղքը: Անձը հասկանում է, որ դուրս է գալիս օրենքով սահմանված իրավունքների շրջանակից, որ իր գործողությունները չեն համընկնում չարաշահած իրավունքի նպատակին, հակասում են այդ իրավունքի իմաստին, բայց

միննույն ժամանակ շարունակում է չարաշահել: Այսպես վարույթի մասնակիցը բազմիցս ներկայացնում է նույն միջնորդությունները, թեև առաջինի վերաբերյալ արդեն ստացել է հիմնավոր պատասխան:

Եզրակացություն

Այսպիսով, իրենց դատավարական իրավունքները չարաշահած անձանց նկատմամբ ազդեցության միջոցների կիրառումն այնպիսի գործունեություն է, որն ուղղված է վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանությանը և քրեական վարույթի պատշաճ իրականացմանը: Սա նշանակում է, որ արդարացված և հիմնավորված են այն սահմանափակումները, որոնք կիրառվում են իրենց իրավունքների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ:

Այն անձի նկատմամբ, որի գործունեությունը քրեական վարույթի ընթացքում ճանաչվում է որպես իրավունքի չարաշահում, բացասական հետևանքները միանգամայն արդարացված են և պետք է հանգեցնեն նրա կողմից իր իրավունքների հետագա չարաշահումների կանխման: Վարույթի մասնավոր մասնակցի գործողության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի գնահատականը՝ որպես իրավունքի չարաշահում, պետք է հիմնված լինի փաստերի վրա: Իհարկե վարույթն իրականացնող մարմինը պետք է գործի իր լիազորությունների սահմաններում և թույլ չտա հայեցողական իրավունքի չարաշահում, որի դեպքում անհիմն կսահմանափակվեն մասնավոր անձանց իրավունքների իրացման հնարավորությունները:

САМВЕЛ ДИЛБАНДЯН – *Запрет неправильного поведения в системе принципов уголовного процесса.* – Указанная статья посвящена принципу запрещения противоправного поведения, который является новшеством в системе принципов уголовного процесса. Научное изучение указанного принципа важно, поскольку часто случается, когда частные участники процесса допускают злоупотребление правами или ненадлежащее исполнение своих обязанностей. Фактически человек совершает действие, на которое имеет право по закону, но в результате нарушается не только нормальный ход судопроизводства, но и законные интересы других участников процесса, например, право потерпевшего на получение своевременного возмещения ущерба, причиненного преступлением. Запрет противоправного поведения относится не только к незаконному осуществлению прав, но и к неисполнению предусмотренных законом обязанностей.

Негативные последствия для лица, деятельность которого признана злоупотреблением правами в ходе уголовного судопроизводства, вполне оправданы и должны привести к предотвращению дальнейшего злоупотребления его правами. Оценка действий частного участника процесса как злоупотребления правами со стороны органа, ведущего производство, должна быть основана на фактах. Разумеется, орган, ведущий производство, должен действовать в пределах своих полномочий и не допускать злоупотребления дискреционными правами, в результате чего возможность реализации прав частных лиц будет необоснованно ограничена.


Ключевые слова: *уголовное производство, ненадлежащее поведения, запрет противоправного поведения, злоупотребление правом, обязанностью, гласность, надлежащее доказывание, Европейский суд, правонарушение, процессуальная санкция*

SAMVEL DILBANDYAN – *Prohibition of Improper Conduct in a Set of Principles of Criminal Procedure.* – The article focuses on the principle of prohibiting unlawful behavior, which is a new addition to the principles of criminal procedure. It emphasizes the importance of studying this principle as it often occurs that individuals involved in legal proceedings either abuse their rights or fail to fulfill their responsibilities. This can disrupt the normal flow of proceedings and negatively influence the legitimate interests of other participants, such as the right of the victim to receive timely compensation for the crime committed against them. The prohibition of illegal behavior extends beyond the abuse of rights to include the failure to fulfill obligations specified by law.

It is justified to impose negative consequences on individuals who engage in abusive actions during criminal proceedings in order to prevent further misuse of their rights. The assessment of a private participant's actions as an abuse of rights should be based on factual evidence by the governing body conducting the proceedings. However, it is important for the governing body to exercise its powers responsibly and prevent the abuse of discretionary rights, which could unreasonably limit the rights of individuals involved in the proceedings.

Key words: *criminal proceedings, improper conduct, prohibition of unlawful conduct, abuse of right, duty, publicity, proper proof, European Court, offense, procedural sanction*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ (ՀԻՄՔԵՐԻ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածում հեղինակը քննարկել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման հիմնահարցերը: Հիմնվելով նաև միջազգային փաստաթղթերի ուսումնասիրության վրա՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանքի կիրառման հարցը քննարկելիս կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման նկատմամբ չի կարող ցուցաբերվել նույնական մոտեցում, ինչ մեղադրյալի մասնակցությամբ խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս: Այդ համատեքստում հեղինակը ներկայացրել է խնդրո առարկա դեպքում կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման վերաբերյալ իր դիտարկումները: Մասնավորապես, հեղինակը նշել է, որ ՀՀ սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի դեպքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս առաջնահերթ անհրաժեշտ է պարզել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված կալանավորման նպատակի համատեքստում գնահատական տալ նրան, թե արդյոք վարույթի նյութերից հնարավոր է ողջամիտ ենթադրություն անել առ այն, որ մեղադրյալը մինչ Հայաստանի Հանրապետության տարածքը լքելը տեղեկացված է եղել (կամ պետք է տեղեկացված լիներ) սկսված (առանձին դեպքերում՝ սկսվելիք) դատավարական գործընթացների մասին. բացասական պատասխանի դեպքում միջնորդությունը, ըստ հեղինակի, ինքնին ենթակա է մերժման, իսկ դրական պատասխանի պարագայում քրեական վարույթին խոչընդոտելու կամ հանցանք կատարելը կանխելու հավանականության

* **Արմեն Հովհաննիսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր

Армен Оганесян – кандидат юридических наук, доцент кафедры Уголовно-процессуального права и криминалистики ЕГУ, судья Апелляционного антикоррупционного суда РА

Armen Hovhannisyán – Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Judge of the Appellate Anti-Corruption Court of the RA

Էլ. փոստ՝ armen.hovhannisyán@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-3655-9255>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 22.04.2024

Գրախոսվել է՝ 30.04.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

առկայությունը կամ բացակայությունը, հեղինակի կարծիքով, ենթակա է գնահատման մեղադրյալի մասնակցությամբ կալանքի հարցի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վերստին քննարկման ժամանակ:

Բանալի բառեր – *մեղադրյալ, կալանավորման նպատակ, հեռակա կալանավորում, փախուստը կանխել, քրեական վարույթին խոչընդոտել, հանցանք կատարելը կանխել, խափանման միջոց*

Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով (...):»

Ինչպես հայտնի է, մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցի վերաբերյալ ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, այնպես էլ ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարաններն իրենց ձևավորած նախադեպային իրավունքում արտահայտել են, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- անձին կալանքի տակ վերցնելը հեռակա կարգով, երբ նա թաքնվում է արդարադատությունից, հատկապես երբ նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին¹,

- Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ չափանիշները կիրառելի են նաև այն դեպքում, երբ քրեական հանցանք կատարելու մեջ կասկածվող և քննությունից ենթադրաբար թաքնվող անձն արգելանքի է վերցվում կալանավորելու մասին որոշման հիման վրա, որը դատարանը կայացրել է նրա բացակայությամբ: Դատարանի կողմից արդարադատությունից թաքնվող անձին հեռակա կարգով (in absentia) կալանավորելու հնարավորությունը, ըստ էության (per se), չի հակասում Կոնվենցիայի դրույթներին, եթե վերջինս հայտնաբերվելու դեպքում անհապաղ տարվում է դատավորի մոտ, ինչպես որ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչից որևէ հնարավոր բացառություն նախատեսված չէ²,

- նկատի ունենալով, որ հետախուզման մեջ գտնվող անձը փաստացիորեն ազատությունից զրկված չէ՝ նրա բացակայության պայմաններում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ այդ անձը չի օգտվում համապատասխան երաշխիքներից, այդ թվում՝ դատարանում լսվելու իրավունքից: Ուստի նման իրավիճակում մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման կայացումը չի կարող հանգեցնել Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման³,

- ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո արդեն նրա ներկայությամբ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը⁴,

- հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հնարավորություն նախատեսող իրավակարգավորումն ինքնին վիճահարույց չէ, եթե անձին հայտնաբերելու դեպքում ապահովվում է վերջինիս դատարանի առջև կանգնելու և լսվելու իրավունքը, ինչպես որ երաշխավորված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով⁵:

¹ Տե՛ս *Գարաբանն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հունիսի 7-ի վճիռը, կետ 101:

² Տե՛ս *Վախիտովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի վճիռը, կետեր 50-51:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-827 որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս *Տիգրան Վահրադյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ Լ՛Դ/0197/06/08 գործով որոշման 33-րդ կետը:

⁵ Տե՛ս *Ներսես Շահինյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԴ/0120/06/18 գործով որոշման 15.1.-րդ կետը:

Այսպիսով, գործող իրավակարգավորումներից, այնպես էլ ձևավորված նախադեպային իրավունքից անմիջականորեն բխում է, որ մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելը ինքնին խնդրահարույց չէ, եթե վերջինիս հայտնաբերելուց հետո ապահովվում են նրա՝ դատարանի առջև կանգնելու և լավելու հիմնարար իրավունքները⁶:

Թեև հիշյալ հանգամանքին, այնուամենայնիվ, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ պարագայում գործնականում առաջանում են հիմնահարցեր կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման տեսանկյունից:

Վերոգրյալի համատեքստում վերլուծության ենթարկելով կալանավորման նպատակները (հիմքերը)՝ նախևառաջ հարկ ենք համարում նշել, որ առանց մեղադրյալի մասնակցության (մասնավորապես այն դեպքում, երբ առկա տվյալների համաձայն՝ մեղադրյալը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս)՝ վերջինի նկատմամբ խափանման միջոց կալանքի կիրառման հարցը քննարկելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կալանավորման նպատակների (հիմքերի) գնահատման նկատմամբ, մեր համոզմամբ, չի կարող ցուցաբերվել նույնական մոտեցում, ինչ մեղադրյալի մասնակցությամբ խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս⁷:

Այսպես, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի դեպքում կալանավորման նպատակներից (հիմքերից)՝ փախուստի կանխման հավանականությունը, մեր դիտարկմամբ, ենթակա է գնահատման այն համատեքստում, թե արդյոք վարույթի նյութերից հնարավոր է ողջամիտ ենթադրություն անել առ այն, որ մեղադրյալը մինչ Հայաստանի Հանրապետության տարածքը լքելը տեղեկացված է եղել (կամ պետք է տեղեկացված լիներ) սկսված (առանձին դեպքերում՝ սկսվելիք, օրինակ՝ երբ անձը ենթադրյալ հանցանքը կատարելուց անմիջապես հետո լքում է ՀՀ սահմանները՝ գիտակցելով, որ իր վերաբերյալ սկսվելու են քրեադատավարական գործընթացներ) դատավարական գործընթացների մասին: Կալանավորման սույն նպատակի գնահատման նկատմամբ որոշակիորեն նվազ այսպիսի շեմը պայմանավորում ենք ոչ միայն օրենսդրական այն երաշխիքով, որ մեղադրյալի բացակայությամբ կայացված կալանավորման որոշման պարագայում կալանավորման հարցն արդեն նրա մասնակցությամբ պետք է վերստին քննարկվի և լուծվի, այլև ՀՀ վավերացրած միջազգային փաստաթղթերից և միջազգային իրավա-

⁶ Այդպիսի մոտեցում ձևավորվել է նաև գիտական շրջանակներում. տե՛ս, օրինակ, **Цоколова О. И.** Теория и практика задержания, ареста и содержания под стражей в уголовном процессе: диссертация на соискание ученой степени доктора юридических наук, М., 2007, էջ 337-342:

⁷ Տե՛ս, օրինակ, **Павлов А.В.** Задержание обвиняемого, находящегося в розыске (теоретический и прикладной аспекты), монография, Юрлитинформ, М., 2015:

կան գործընթացներից բխող այն հանգամանքով, որ անձի նկատմամբ միջազգային հետախուզում հնարավոր է հայտարարել, ըստ էության, այն դեպքերում, երբ առկա է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում: Այլ կերպ՝ սույն մոտեցումը բխում է Հայաստանի Հանրապետության վավերացրած ինչպես «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի Մինսկի և 2002 թվականի Քիշնևի կոնվենցիաների⁸, այնպես էլ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի⁹ պահանջներից¹⁰: Ավելին, հարկ է նկատել, որ հիշյալ հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանը դեռևս 2009 թվականի որոշման շրջանակներում փաստել է հետևյալը. «*Հաշվի առնելով, որ ձերբակալումը հարկադրանքի կարճաժամկետ միջոց է, իսկ հանձնման գործընթացը պահանջում է շատ ավելի երկար ժամանակ, հանձնման ենթակա անձին ավելի երկար ժամկետով անազատության մեջ պահելու օրինական հիմք, հետևաբար, հետախուզվող անձի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը հնարավոր է դառնում միայն սույն անձի վերաբերյալ կալանքի որոշման առկայության դեպքում: Բացի դրանից, 1977 թ. Ստոկհոլմում կայացած Բնտերպոլի 46-րդ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում ընդունված թիվ 15 որոշման, 2008 թ. Սանկտ Պետերբուրգում կայացած 77-րդ նստաշրջանում ընդունված թիվ AG-2008-RAP-06 որոշման և այս կազմակերպության կողմից ընդունված մի շարք այլ ակտերի համաձայն Բնտերպոլի խորհրդակներով հետախուզվող անձանց նկատմամբ միջազգային հետախուզում հնարավոր չէ հայտարարել՝ առանց հետախուզվողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդունելու մասին որոշման առկայության»¹¹:*

Այսպիսով, ելնելով հիշյալ հանգամանքներից՝ կարծում ենք, որ համապատասխան դեպքերում կալանավորման խնդրո առարկա նպատակի գնահատումը պետք է իրականացվի որոշակիորեն նվազ շեմով:

Ինչ վերաբերում է քրեական վարույթին խոչընդոտելու կամ հանցանք կատարելը կանխելու հավանականության գնահատմանը, ապա այդ դեպքերում, մեր դիտարկմամբ, արդեն իսկ գործում է տրամագծորեն հակառակ մոտեցումը: Մասնավորապես, կարծում ենք՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի դեպքում կալանավորման այդ նպատակների (հիմքերի) առկայությանը կամ բացակայությանը գնահատական տալը որոշակիորեն առարկայագուրկ

⁸ Այդ առումով մանրամասն տե՛ս Մինսկի և Քիշնևի կոնվենցիաների՝ համապատասխանաբար 58-62 և 67-70-րդ հոդվածները:

⁹ Մանրամասն տե՛ս Կոնվենցիայի 12-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածները:

¹⁰ Այդ առումով տե՛ս նաև Ս. Մարաբյան, Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելը որպես հեռակա (մեղադրյալի բացակայությամբ) կալանավորման այլընտրանք ՀՀ քրեական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2019, № 1 (28), էջ 59-72: Տե՛ս նաև Ներսես Շահինյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵՂ/0120/06/18 գործով որոշման 16.3.-րդ կետը:

¹¹ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-827 որոշումը:

է դառնում, քանի որ եթե մեղադրյալը ֆիզիկապես չի գտնվում վարույթն իրականացնող մարմնի հասանելիության տակ, ապա այդ նպատակներով (հիմքերով) անձին հեռակա կալանավորելը առնվազն չի կարող տվյալ վարույթով դրա զսպման, չեզոքացման արդյունավետ գործիք դառնալ, այլ կերպ՝ նշյալ պայմաններում կալանավորման այդ նպատակները, ըստ էության, չեն կարող համարժեք գնահատման ենթարկվել:

Այսպիսով, կարծում ենք, որ ՀՀ սահմաններից դուրս գտնվող մեղադրյալի դեպքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս առաջնահերթ անհրաժեշտ է պարզել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված կալանավորման նպատակի համատեքստում գնահատական տալ նրան, թե արդյոք վարույթի նյութերից հնարավոր է ողջամիտ ենթադրություն անել առ այն, որ մեղադրյալը մինչ Հայաստանի Հանրապետության տարածքը լքելը տեղեկացված է եղել (կամ պետք է տեղեկացված լիներ) սկսված (առանձին դեպքերում՝ սկսվելիք) դատավարական գործընթացների մասին: Բացասական պատասխանի դեպքում միջնորդությունն ինքնին ենթակա է մերժման, իսկ դրական պատասխանի պարագայում քրեական վարույթին խոչընդոտելու կամ հանցանք կատարելը կանխելու հավանականության առկայությունը կամ բացակայությունն արդեն իսկ ենթակա է գնահատման մեղադրյալի մասնակցությամբ կալանքի հարցի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վերստին քննարկման ժամանակ:


АРМЕН ОГАНЕСЯН – Отдельные вопросы для оценки целей (оснований) содержания под стражей обвиняемого, находящегося за пределами Республики Армения. – В данной статье автор рассмотрел вопросы оценки целей (оснований) содержания под стражей обвиняемого за пределами Республики Армения. Основываясь также на изучении международных документов, автор пришел к выводу, что при обсуждении вопроса о содержании под стражей в качестве меры пресечения обвиняемого за пределами Республики Армения нельзя применять аналогичный подход к оценке целей (оснований) содержания под стражей в качестве меры пресечения, как и в случае с участием обвиняемого. В этом контексте автор представил свои замечания относительно оценки целей (оснований) содержания под стражей в данном случае. В частности, автор отметил, что в случае обвиняемого, находящегося за пределами Республики Армения, при решении вопроса о применении содержания под стражей в качестве меры пресечения, необходимо предварительно выяснить и в контексте цели меры пресечения, предусмотренной пунктом 1 части 2 статьи 116 Уголовно-процессуального кодекса Республики Армения, оценить можно ли из материалов уголовного производства сделать обоснованное предположение, что обвиняемый до выезда с территории Республики Армения был проинформирован (или должен был быть проинформирован) о начавшемся (в ряде случаев начинающихся) процедурных процессов: в случае отрицательного ответа, по мнению автора, отклонению подлежит само ходатайство, а в случае положительного ответа - наличие или отсутствие возможности воспрепятствования производству или предотвращению совершения преступления, по мнению автора, подлежит оценке с участием обвиняемого при повторном рассмотрении вопроса о применении содержания под стражей в порядке, предусмотренном частью I ст. 290 УПК РА.

Ключевые слова: обвиняемый, цель содержания под стражей, заочное содержание под стражей, предотвращение побега, воспрепятствование уголовному производству, предотвращение совершения преступления, мера пресечения

ARMEN HOVHANNISYAN – *Separate Basic Questions for Assessing the Purposes (Grounds) of Detention of an Accused Located Outside the Borders of the Republic of Armenia.* – In this article, the author examined the issues of assessing the purposes (grounds) of the detention of the accused outside the Republic of Armenia. Based also on the study of international documents, the author came to the conclusion that when discussing the issue of detention as a preventive measure of the accused outside the Republic of Armenia, a similar approach cannot be applied to assessing the purposes (grounds) of detention as in the case with the participation of the accused. In this context, the author presented his observations regarding the assessment of the purposes (grounds) of detention in this case. In particular, the author noted that in the case of the accused who is outside the borders of the Republic of Armenia, when solving the issue of applying detention as a preventive measure, it is necessary to first find out and in the context of the purpose of the detention provided for in Article 116, Part 2, Clause 1 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, evaluate whether it is possible to make a reasonable assumption from the proceedings materials that the accused before leaving the territory of the Republic of Armenia was informed (or should have been informed) about the started (in some cases, to be started) legal proceedings: in the case of a negative answer, in the author's opinion, the petition itself is subject to rejection, and in the case of a positive answer, the presence or absence of an opportunity to obstruct the proceedings or prevent the commission of a crime, in the author's opinion, is subject to assessment with the participation of the accused when reconsidering the issue of applying detention as a preventive measure in the manner provided for in Part I of Art. 290 of the RA Code of Criminal Procedure.

Key words: *accused, detention, detention in absentia, preventing escape, obstructing criminal proceedings, preventing the commission of a crime, preventive measure*

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում է անմեղության կանխավարկածի քրեադատավարական սկզբունքի և մեղավորության քրեաիրավական կանխավարկածի հարաբերակցությունը: Հեղինակը նախ բացահայտում է անմեղության կանխավարկածի՝ որպես ապացույցների գնահատման չափանիշի էությունը, այն քննարկում պատշաճ ապացուցման սկզբունքի համատեքստում և փաստում, որ այդ սկզբունքների բովանդակությունը կազմող պահանջներն անհարկի բացարձակացված են և երբեմն՝ անիրագործելի: Հեղինակը պնդում է, որ քրեական դատավարությունում ապացուցման ենթակա որոշ հանգամանքներ, ինչպես մեղավորությունն է կամ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները, ապացույցի կոնկրետ տեսակներով, որպես կանոն, ապացուցել հնարավոր չէ: Այնուհետև հոդվածում ներկայացվում է մեղքի նոր հայեցակարգը, քննարկվում դրա բաղադրիչը հանդիսացող՝ մեղավորության քրեաիրավական կանխավարկածը և արձանագրվում, որ մեղավորության կանխավարկածը հակադրվում է անմեղության կանխավարկածի և պատշաճ ապացուցման սկզբունքներին: Հեղինակը հիմնավորում է, որ անմեղության քրեադատավարական կանխավարկածի և մեղավորության քրեաիրավական կանխավարկածի հակադրությունը գործնականում լուծված է հոգուտ մեղավորության կանխավարկածի՝ թղթի վրա թողնելով անմեղության կանխավարկածից բխող անիրագործելի այն պահանջը, որ հանցագործությունը մեղավորությամբ կատարելու հանգամանքը ենթակա է ապացուցման վերաբերելի, թույլատրելի ու հավաստի ապացույցների ամբողջությամբ և չի կարող հիմնվել ենթադրությունների վրա:

Բանալի բառեր – անմեղության կանխավարկած, ենթադրություն, ապացուցում, չփարատված կասկած, մեղք, մեղավորության կանխավարկած, արարքի հակաիրավականություն

* **Գևորգ Բաղդասարյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական

Геворг Багдасарян – кандидат юридических наук, преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, государственный советник юстиции третьего класса

Gevorg Baghdasaryan – Candidate of Law, Lecturer at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, State Councilor of Justice of the Third Class

Էլ. փոստ՝ g.baghdasaryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-6407-6253>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 08.03.2024

Գրախոսվել է՝ 12.04.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Ներածություն

Անմեղության կանխավարկածը քրեական արդարադատության անկյունաքարերից մեկն է, արդար դատաքննության համընդհանուր սկզբունքի հիմքերից, քրեական մեղադրանքից անձի պաշտպանության, վարույթի արդարացիության երաշխիքներից մեկը, միջոցներից մեկը՝ ապահովելու, որ անձը հանցանք կատարելու համար մեղավոր համարվի միայն իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից դատապարտվելուց հետո: Այս պնդումներն ուղղված են ոչ միայն և ոչ այնքան անմեղության կանխավարկածի սկզբունքը կարևորելուն, որքան ընդգծելուն դրա անշեղ կապը արդար դատաքննության երաշխիքային համակարգի այլ բաղադրիչների հետ: Իսկ անմեղության կանխավարկածի կարևորությունը, դրա դերն ու նշանակությունը հատուկ ընդգծելու կարիք չկա էլ, քանի որ այն ամենահեռակավոր կանխավարկածն է ոչ միայն քրեական դատավարությունում, այլ նաև իրավունքի այն ճյուղերում, որոնցում կանխավարկածներն այլ ուղղվածություն ունեն, կամ որոնցում սկզբունքը հենց մեղավորության կանխավարկածն է:

Անմեղության կանխավարկածը նաև ամենաքննարկված քրեադատավարական սկզբունքներից է: Դա պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ ինքնին հետաքրքիր է բացահայտել, թե, օրինակ, կարո՞ղ է արդյոք որևէ մեկը վարույթի ընթացքում՝ նախքան դատավճիռը, հաստատապես հայտարարել մեղադրյալի մեղավորության մասին, և եթե այո՝, ապա ո՞վ, որտե՞ղ և որքա՞ն հաստատապես, այլ նաև նրանով, որ քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումները մշտապես ուղղակիորեն կամ առնվազն անուղղակիորեն հասցեագրված են եղել նաև անմեղության կանխավարկածին:

Միաժամանակ, անմեղության կանխավարկածի սկզբունքի երեք հիմնական բաղադրիչները՝ անձի անմեղության, ապացուցման բեռի և չփարատված կասկածների կամ ապացույցների գնահատման վերաբերյալ կանոնները, թեև օրգանապես կապված են միմյանց հետ ու փոխպայմանավորված միմյանցով, այդուհանդերձ հավասար գիտական ու նաև գործնական ուշադրության չեն արժանացել, և դրանց հետ կապված հիմնախնդիրները հավասարաչափ հետազոտված չեն:

Ուսումնասիրությունները վկայում են, որ անմեղության կանխավարկածի՝ ապացուցման հետ կապված բաղադրիչների հետազոտություններն ու դրանց վերաբերյալ դիրքորոշումներն ընդգծված խուսափողական են և զուսպ: Այս հանգամանքը բացատրվում է նախ նրանով, որ յուրաքանչյուր դեպքի ապացուցումն առանձնահատուկ է և անհատական, ուստի դրա հստակ ու կոնկրետ չափանիշներ սահմանել հնարավոր չէ: Այդ պատճառով է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ հնարավորինս զերծ է մնում ապացուցման հարցերին անդրադառնալուց՝ դրանք համարելով ներպետական իրավասությանը ենթակա, քանի դեռ դրանք դատաքննությունն ընդհանուր առմամբ անարդար չեն դարձրել: Բացի այդ, անմեղության կանխավարկածի՝ ապացուց-

ման գործընթացի հետ կապված բաղադրիչների խորքային քննարկումը դրա հեղինակին կանգնեցնում է բարդագույն խնդրի առաջ՝ որոշել անմեղության կանխավարկածի գործողության սահմանները, զծել դրա ու դրան հակադիր կանխավարկածների, այսօր արդեն՝ անմեղության քրեադատավարական կանխավարկածի ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածի սահմանագիծը:

Անմեղության կանխավարկածն ու մեղադրանքի պատշաճ ապացուցումը

«Կանխավարկած» հասկացության, կանխավարկածների էության, բովանդակության, դասակարգման, քրեական արդարադատության համակարգում դրանց գոյության ու կիրառության հարցերը բազմաշերտ են, խորը բովանդակություն ունեն, հետաքրքիր են, բայց առանձին հետազոտության առարկա են¹: Այստեղ ընդամենը փաստենք, որ իրավական կանխավարկածներն իրավական նշանակություն ունեցող փաստերի մասին նախնական, կանխակալ պնդումներ կամ ենթադրություններ են, որոնք հիմնվում են այդ փաստերի հետ կապված այլ փաստերի վրա²: Իրավական կանխավարկածների դեպքում իրավական նշանակություն ունեցող փաստը հաստատված ու ապացուցված է համարվում ոչ թե ապացույցների հիման վրա, այլ բխեցվում է արդեն իսկ ապացուցված մեկ կամ մի քանի փաստերից: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածի դեպքում փաստի ապացուցման միջոցը ոչ թե ապացույցն է, այլ արդեն ապացուցված մեկ այլ փաստը կամ փաստերը, որոնք իրենց գոյությամբ ենթադրում են դրանց հետ օրգանապես կապված կամ դրանցից ողջամտորեն բխող այլ փաստի գոյությունը: Քրեական արդարադատության համակարգում կիրառվող կանխավարկածի դասական գործնական օրինակ է թմրամիջոցն անձի կողմից իրացնելու նպատակով պահելու մասին հետևությունը՝ բխեցված ոչ թե այդ նպատակի մասին որևէ ապացույցից՝ ցուցմունքից կամ վարությային գործողության արձանագրությունից և այլն, այլ այնպիսի ապացուցված փաստերից, ինչպիսիք նրա մոտ հայտնաբերված թմրամիջոցի քանակն է, դրա բաժանումն ու փաթեթավորումը հավասար ու առերևույթ իրացման համար հարմար չափերի, այդ անձի կողմից թմրամիջոց անձամբ չօգտագործելու հանգամանքը և այլն³:

Բայց քրեական արդարադատության համակարգի որոշ կանխավարկածներ համընդհանուր բնույթ ունեն և գոյություն ունեն ոչ թե կոնկրետ քրեական

¹ Տեսության մեջ կարելի է հանդիպել իրավական կանխավարկածի՝ որպես ի սկզբանե իրավական երևույթի, իրավունքի ոլորտում գործադրվող տրամաբանական երևույթի, իրավական կարգավորման եղանակի և բազմաթիվ այլ բնորոշումներ, որոնցում չկա նույնիսկ միասնական տերմինաբանություն:

² Տե՛ս **Տրոգովիչ Մ. Ս.** Учение о материальной истине в уголовном процессе, М., 1947, էջ 168, **Бабаев В. К.** Презумпции в советском праве, Горький, Изд-во ГВШ МВД СССР, 1974, էջ 13, **Иоффе О. С., Шаргородский М. Д.** Вопросы теории права, М., 1961, էջ 262, **Каминская В. И.** Учение о правовых презумпциях в уголовном процессе, М., 1948, էջ 3:

³ Տե՛ս Մարտիկ Բոլյանի վերաբերյալ ՎԲ-135/07 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թ. օգոստոսի 30-ի որոշումը:

վարույթում ու կոնկրետ փաստակագմի շրջանակներում, այլ անկախ կոնկրետ վարույթից, և բխում են ոչ թե տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստից, այլ համընդհանուր ճանաչում ունեցող գաղափարից կամ արժեքից: Այդ կանխավարկածներից մեկն անմեղության կանխավարկածն է:

Անմեղության կանխավարկածի հիմքը մարդու՝ որպես արժեքի ընկալումն է, համընդհանուր ճանաչում ստացած պատկերացումը նրա բնական վիճակի մասին, համոզմունքը, որ մարդու համար բնականն իրավահպատակ վարքագիծն է, հանցագործություն կատարած չլինելը, հանցագործության մեջ նրա անմեղությունը: Բնարկե, անմեղության կանխավարկածը նաև ընդգծված երաշխիքային նշանակություն ունի, և բխեցվելով մոտեցումից, որ մարդուն պետք է ընկալել որպես անմեղ, դարձել է երաշխիք առ այն, որ նրա անմեղության մասին համոզմունքից բացառությունը պետք է հիմնված լինի ծանրակշիռ փաստերի վրա:

Անմեղության կանխավարկածի հիմքը ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված դրույթն է . «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան 6-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակում է. «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»: Եվրոպական դատարանը մեկնաբանել է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետ[ով], ի թիվս այլնի, պահանջվում է, որպեսզի **ա)** դատարանի անդամներն իրենց պարտականությունները կատարելիս չսկսեն գործել նախաձևավորված այն կարծիքով, թե մեղադրյալը կատարել է հանցանքը, որի կատարման մեջ մեղադրվում է, **բ)** ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, և **գ)** ցանկացած չփարատված կասկած պետք է մեկնաբանել հոգուտ մեղադրյալի»⁴:

Մրան համահունչ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 17-րդ հոդվածում հռչակում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ սահմանելով, որ անձն անմեղ է, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որ ապացուցման ենթակա է հանցագործության կատարման մեջ անձի մեղավորությունը, իսկ մեղավորությունը չապացուցելը հավասարազոր է անմեղությունն ապացուցելուն, որ մեղավորությունն ապացուցելը քրեական հետապնդման մարմինների դատավարական բեռն է, և անձը ոչ միայն պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, որը, ինչպես բխում է ան-

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը՝ Barberà, Messegué and Jabardo v. Spain 10590/83, 06.12.1988 թ., § 77:

մեղության կանխավարկածից, ապացուցման կարիք չունի էլ, այլ նաև պարտավոր չէ որևէ աջակցություն ցույց տալ նույն քրեական հետապնդման մարմիններին իր մեղավորությունն ապացուցելիս, և վերջապես՝ որ մեղադրանքն ապացուցված լինելու մասին բոլոր ողջամիտ կասկածները, որոնք չեն հերքվել, պետք է մեկնաբանվեն հոգուտ մեղադրյալի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ «մեղադրանք[ը] որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած [է], որն ունի փաստական և իրավական հիմնավորում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են՝

1) դեպքը և դրա հանգամանքները (ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) ենթադրյալ հանցագործության քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերդիկտ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը.

1) ապացուցված են արդյոք մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը).

2) ապացուցված է արդյոք այդ արարքի քրեական հակաիրավականությունը.

3) ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը.

4) ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը տվյալ արարքը կատարելու մեջ:

(...):»:

«Մեղադրանք» հասկացության, ապացուցման ենթակա հանգամանքների ու վերդիկտ կայացնելիս դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակի վերլուծությունից ակնհայտ է, որ մեղադրանքն ապացուցելն անձին մեղսագրվող արարքը, դրա հանգամանքները, այդ արարքի հակաիրավականությունը, այն հենց այդ անձի կողմից կատարված լինելը և արարքը կատարելու մեջ նրա մեղավորությունն ապացուցելն է: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածն իր հերթին պատշաճ ապացուցման սկզբունքի համատեքստում որոշակիացնում է, թե ինչ է ենթադրում նշված հանգամանքների ապացուցումը՝ սահմանելով, որ.

«1. Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:

2. Եզրափակիչ դատավարական ակտը պետք է հիմնվի հետազոտված ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման վրա:

3. Մեղադրական դատավճռի հիմքում դրվող յուրաքանչյուր փաստական

հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած հիմնավոր կասկած: Դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առնվի անհրաժեշտ և հնարավոր ապացույցների բացակայությունը:

(...)

5. Հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա. այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ:

(...)

7. Մեղադրյալի դատապարտումը հակակշռող բավարար գործոնների բացակայության պայմաններում չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն տվյալ մեղադրյալը կամ նրա պաշտպանը կամ ներկայացուցիչը չի ունեցել:

(...):»:

Իրացնելով պատշաճ ապացուցման սկզբունքի պահանջները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «մեղադրական վերդիկտը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված է դատաքննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ ապացուցման արդյունքների վրա, հանգում է մեղադրյալի մեղավորության մասին հետևության»:

Այսինքն՝ անմեղության կանխավարկածը հաղթահարելու և անձին դատապարտելու համար պետք է թույլատրելի, վերաբերելի ու հավաստի ապացույցների ամբողջությամբ ապացուցել, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել, արարքը կատարվել է, այդ արարքը հակահրավակյան է, այն կատարել է կոնկրետ անձը և, իհարկե, որ անձն այդ արարքը կատարել է մեղավորությամբ: Հետևաբար, անմեղության կանխավարկածը կանխավարկած է այն մասին, որ անձին մեղսագրվող արարքը չի կատարվել, կամ որ այդ արարքը հակահրավակյան չէ կամ այդ անձի կողմից չի կատարվել կամ տվյալ անձի կողմից կատարվել է առանց մեղքի, և այդ կանխավարկածը՝ նշված նախնական պնդումները, պետք է հաղթահարել հակառակն ապացուցելով այնպես, որ դրանց ապացուցվածության վերաբերյալ հիմնավոր կասկածներ չպետք է լինեն:

Պատշաճ ապացուցման սկզբունքի ու դրան համապատասխան՝ անմեղության կանխավարկածի չփարատված կասկածների մասին կանոնի բովանդակությունն ու դրանց երաշխիքային արժեքը ներկայացնող ու այդ համատեքստում միանգամայն գովելի այս դրույթները միաժամանակ արտահայտում են

անմեղության կանխավարկածի անհարկի բացարձակացումն ու ծայրահեղացումը: Իսկապես մեջբերված դրույթների երաշխիքային նշանակությունը շատ բարձր է, ու կարելի է ժողովրդավարական համարել քրեական դատավարությունը, որտեղ անձի մեղավորության ապացուցման համար այսպիսի երաշխիքներ կան: Բայց, գործնականում ամեն ինչ չէ, որ այսպես է ու ամեն ինչ չէ, որ կարող է այսպես լինել, որովհետև քրեական արդարադատության համակարգում գոյություն ունեցող, ապացուցման գործընթացում կիրառվող, օրենքով նախատեսված ու չնախատեսված այլ կանխավարկածները սահմանափակում են դատավարական այս սկզբունքների ծայրահեղացումը:

Այդ կանխավարկածներից մեկն այսօր մեղավորության քրեաիրավական կանխավարկածն է:

Մեղավորության քրեաիրավական կանխավարկածն՝ ինքնին

«Մեղավորության կանխավարկած» հասկացությունը քրեական դատավարության եզրութաբանության համար նույնիսկ խորթ է, և այդ կանխավարկածին առաջին արձագանքը վստահաբար այն է, որ դա քրեական դատավարության հետ համատեղելի չէ: Այս ընկալումը բնական է, քանի որ անմեղության կանխավարկածը քրեական դատավարությունում ոչ թե զուտ կարգավորող, այլ բացարձակ արժեքային նշանակություն ունի, իսկ մեղավորության կանխավարկածը գոյություն ունի ի հակադրություն այդ արժեքի կամ առնվազն հնչում է այդպես:

Չնայած դրան՝ մեղավորության կանխավարկածի կամ դրա որոշ դրսևորումների մասին քիչ չի խոսվել, օրինակ, դատական քննության արագացված կարգի ինստիտուտը ներդնելիս, ապօրինի հարստացման հանցակազմը սահմանելիս կամ *Մալաբիակուի*⁵ գործի⁵ օրինակով անձի մոտ հայտնաբերված թմրամիջոցի պատկանելության ապացուցման կամ փաստերի ապացուցվածության նմանատիպ կոնկրետ հարցեր քննարկելիս և, արդյունքում, բացասաբար է ընդունվել ցանկացած իրավակարգավորում ու իրավամեկնաբանություն, որը թեկուզ անուղղակի շեղում է ենթադրել անմեղության կանխավարկածի՝ խիստ ժողովրդավարական հնչող արժեքներից: Հանդիսանում են իրականում նշվածները մեղավորության կանխավարկածի դրսևորումներ, պարունակում են դրա տարրեր, թե՛ ոչ, առանձին՝ կանխավարկածների էության, տեսակների ու օրենսդրական ամրագրման եղանակների համատեքստում քննարկման ենթակա հարց է, հատկապես որ մեղավորության կանխավարկածի ու անմեղության կանխավարկածի հարաբերակցության հարցն ուղիղ քննարկելու ավելի հստակ պատճառ կա, այն է՝ ՀՀ քրեական օրենսգիրքն ուղիղ սահմանել է մեղավորության քրեաիրավական կանխավարկածը:

ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Հանցանք է համարվում սույն օրենսգրքով նախատեսված, պատժի

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը՝ *Salabiaku v. France*, 10519/83, 07.10.1988 թ.:

սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությանը կատարված արարքը»:

(...)

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարել է մեղավորությամբ:

2. Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա:

3. Սույն օրենսգրքը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա»:

Մեղավորությունը, որը, ըստ անմեղության կանխավարկածի ու պատշաճ ապացուցման սկզբունքների, ենթակա է ապացուցման վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների ամբողջությամբ, հանցագործության հատկանիշներից մեկն է: ՀՀ քրեական օրենսգրքը, ինչպես ակնհայտ է մեջբերված նորմերից, փոխել է մեղքի հայեցակարգը՝ հոգեբանական տեսությունից անցում կատարելով նորմատիվիստական տեսությանը: Մեղքն այսուհետ ոչ թե անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կատարած արարքի նկատմամբ, ինչպես համարել ենք նախկինում, այլ անձի կողմից իր արարքի հակաիրավականությունը գիտակցելը, այսինքն՝ գիտակցելը, որ այդ արարքն արգելված է իրավական ակտով: Մեղքի նորմատիվիստական տեսությունը հնարավորություն է տալիս համարելու, որ անձն արարքը մեղավորությամբ է կատարել և դատապարտելու նրան ոչ թե այն դեպքում, երբ նա գիտակցել է, թե ինչ արարք է կատարում կամ նախատեսել է դրա հետևանքները և այլն, այլ երբ անձը գիտակցում է, որ կատարում է արարք, որը հակաիրավական է ու պարսավելի: Մեղքի այս տեսությունը թույլ է տալիս անձին դատապարտել ոչ թե նրա համար, որ գիտակցաբար է արարք կատարել, այլ որ նա գիտակցաբար պարսավելի արարք է կատարել⁶:

Մեղքի նորմատիվիստական տեսությունը դրա նոր ընկալման հետ քրեական արդարադատության համակարգ է բերել այդ համակարգի համար խորթ կանխավարկածը՝ մեղավորության կանխավարկածը՝ օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն սահմանելով, որ քրեական օրենսգրքը հիմնվում է անձի կողմից իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա: Կրկնելով, որ արարքը մեղավորությամբ կատարված լինելը այդ արարքը կատարելիս դրա հակաիրավականությունը գիտակցելն է, իսկ քրեական օրենսգրքը հիմնվում է անձի կողմից իր արարքի

⁶ Մեղքի նորմատիվիստական տեսության մասին ավելի մանրամասն՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, էջ 50-55, <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (մուտք՝ 05.03.2024 թ.):

հակաիրավականությունը գիտակցելու կամ դրա կարողության կանխավարկածի վրա, արձանագրենք, որ քրեական օրենսգիրքն այդպիսով սահմանել է հենց մեղավորության կանխավարկածը, և քրեական հետապնդման մարմինները պարտավոր չեն ապացուցել, որ կոնկրետ դեպքում անձը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ կարող էր գիտակցել դա⁷:

Մեղավորության կանխավարկածի գաղափարի ամրագրումը բազմաթիվ մեկնաբանություններ կարող է ունենալ: Օրինակ, նկատի ունենալով տեսության մեջ առկա կանխավարկածների՝ որպես ապացուցման գործընթացում կիրառվող ու ապացուցման բեռից ազատող ֆիկցիայի⁸ ընկալումը, ողջամիտ է, որ այն կարող է դիտարկվել որպես հնարք կամ միջոց, որը նախատեսված է քրեական հետապնդման մարմիններին այն իրավիճակներում մեղադրանքն ապացուցելու անհնարինությունից ազատելու համար, երբ, օրինակ, պարզված չէ խմբով կատարված հանցանքը կատարողներից մեկն, ու, հետևաբար, նրա կողմից իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու հանգամանքը կամ դրա ունակությունը ապացուցելու մասին խոսելն ավելորդ է:

Միննույն ժամանակ, մեղավորության կանխավարկածի գոյությունը ևս ոչ միայն պատահական չէ և ունի հստակ հիմք, այլև այդ հիմքը ևս գաղափարական ու արժեքաբանական է, ինչպես անմեղության կանխավարկածի դեպքում է: Մեղավորության, այսինքն՝ արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դրա կարողության կանխավարկածի հիմքը իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագիծն իրարից զանազանելու ունակության կանխավարկածն է, համոզմունքը, որ հասարակության յուրաքանչյուր անդամ խելամտորեն կարող է գիտակցել, թե որ արարքն է թույլատրելի և որը՝ ոչ, ի վիճակի է տարանջատել իրավաչափ վարքագիծը ոչ իրավաչափ վարքագծից: Հետևաբար, մեղավորության կանխավարկածը անմեղության կանխավարկածի պես հիմնված է մարդու բնական վիճակի հայեցակարգի, մարդու՝ որպես գիտակից ու ողջամիտ հասարակության անդամի ընկալման վրա:

Անմեղության և մեղավորության կանխավարկածների հակադրությունն ու դրա լուծումը

«Մեղք» և «մեղավորություն» եզրույթները երբեմն կիրառվում են ավելի լայն իմաստով, քան դրանց քրեաիրավական բովանդակությունն է: «Մեղքն ապացուցել» հասկացությունը հաճախ օգտագործվում է՝ իմաստավորելու արարքն անձի կողմից կատարելու հանգամանքը կամ ամբողջ մեղադրանքն ապացուցելը, և «անձը մեղավոր չէ» ձևակերպումն ընկալվում է որպես պնդում, որ անձը չի կատարել

⁷ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, էջ 53, <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> (մուտք՝ 05.03.2024 թ.):

⁸ Տե՛ս **Коголовский И. Р.** Понятие и признаки правовой презумпции, Теория и практика общественного развития, 2012 թ., № 12, էջ 589:

մեղսագրվող արարքը: «Մեղավորություն» հասկացության այսպիսի ընկալումը հիմք կարող է դառնալ պնդման, թե իբր անմեղության կանխավարկածն ու մեղավորության կանխավարկածն անձի մեղավորությունը վերաբերում են տարբեր դիտանկյուններից, և դրանցում հակադրություն չկա: Բայց տեղին է կրկնել՝ անձի անմեղության կանխավարկածը կանխավարկած է, ի թիվս այլնի, անձի կողմից արարքն առանց մեղքի կատարելու մասին, և հակառակը՝ անձի մեղավորությունը, այսինքն՝ արարքը կատարելիս դրա հակաիրավականությունը գիտակցելը կամ առնվազն դրա ունակությունը ենթակա է ապացուցման պատշաճ իրավական ընթացակարգով ձեռք բերված ու գնահատված վերաբերելի, թույլատրելի ու հավաստի ապացույցներով, անձի մեղավորության մասին հետևությունը պետք է հիմնվի ոչ թե ենթադրությունների, այլ ապացույցների վրա, և անձի մեղավորության մասին ևս ողջամիտ կասկածներ չպետք է լինեն, պետք է բացակայի ողջամիտ հավանականությունը, որ անձն արարքը մեղավորությամբ չի կատարել:

Ոչինչ չի փոխում նաև այն հանգամանքը, որ ըստ քրեական օրենսգրքի մեջբերված դրույթի՝ մեղավորության կանխավարկածի վրա հիմնվում է մեղքի նյութաիրավական բովանդակությունը սահմանող քրեական օրենսգիրքը, իսկ մեղադրանքի ապացուցման կարգն ու չափանիշները սահմանող քրեական դատավարության օրենսգիրքը հիմնվում է անմեղության կանխավարկածի վրա: Բանն այն է, որ անմեղության կանխավարկածի ու դրա հետ փոխկապակցված պատշաճ ապացուցման սկզբունքի չափանիշներով ապացուցման ենթակա է հենց քրեական օրենսգրքով սահմանված մեղավորությունը, իսկ քրեադատավարական մեղավորություն չկա էլ, և «մեղավորության ապացուցում» հասկացության այլ կիրառություններն ընդամենը կենցաղային են:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված և արդար դատաքննության անկյունաքարերից մեկը կազմող անմեղության կանխավարկածի ու մեղքի հայեցակարգի բաղադրիչը կազմող մեղավորության քրեաիրավական կանխավարկածի հակադրությունն իսկապես առկա է, իսկապես քրեական դատավարության օրենսգիրքը, հիմք ընդունելով անձի անմեղության բնական վիճակի գաղափարը, հռչակում է, ի թիվս այլնի, կանխավարկածն առ այն, որ անձն արարքը կատարել է առանց մեղքի և պահանջում ապացուցել հակառակը, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը, հիմնվելով իրավաչափ վարքագծի սահմանների գիտակցման գաղափարի վրա, հռչակում է կանխավարկածն առ այն, որ անձն արարք կատարելիս գիտակցում է, որ այն արգելված է որևէ իրավական ակտով:

Փաստը, որ կանխավարկածներից երկուսն էլ վերացական չեն ու ունեն գաղափարական լուրջ հիմքեր, ինքնին թույլ չի տալիս դրանց հակադրությանը մոտենալ ստանդարտ, օրինակ՝ անձի համար դրանց հետևանքների բարենպաստության տեսանկյունից, ու հեշտորեն պնդել, որ մեղավորության կանխավարկածը հետընթաց է մարդու իրավունքներից և խարխլում է անձի անմեղության երաշխիքային համակարգը: Այդպիսի պնդումը միգուցե թղթի վրա ավելի

կրնդգծեր անմեղության կանխավարկածի արժեքը, բայց այդ արժեքը պետք է դրսևորվի այն գործնականում իրացնելիս: Հետևաբար, անմեղության կանխավարկածի ու մեղավորության կանխավարկածի հակադրությունը պետք է լուծվի բացառապես այն չափանիշով, թե դրանցից որն է ավելի մոտ իրականությանը, որն է ավելի բնական ու իրական, ոչ պատրանքային և գործնականում իրացվելի: Դա պահանջում է հստակ պատասխանել հարցին, թե արդյոք հնարավոր է ապացուցել անձի մեղավորությունը՝ նրա կողմից արարքը դրա հակաիրավականությունը գիտակցելով կատարելը այնպես, ինչպես դա պահանջում են անմեղության կանխավարկածն ու պատշաճ ապացուցման սկզբունքը:

Մեղավորությունը՝ որպես հանցագործության տարր, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված առանձին հանցակազմերի մի շարք հատկանիշներ, հատկապես՝ սուբյեկտիվ կողմի հատկանիշները՝ դիտավորությունը, անզգուշությունը, դրանց տեսակները, նպատակը, շարժառիթը, հույզերը և այլն, իրենց բնույթով բացարձակ սուբյեկտիվ են: Ընդհանրապես ի՞նչ է գիտակցել, նախատեսել կամ ցանկացել անձը արարք կատարելիս, արդյո՞ք գիտակցել է, որ իր կողմից կատարվող արարքը հակաիրավական է, կամ ի՞նչն է նրան մղել այս կամ այն արարքը կատարելուն, բառի իսկական իմաստով գիտի՞, կարո՞ղ է իմանալ և այդ մասին տեղեկություն, տվյալ կարո՞ղ է հայտնել, այդ մասին ապացույցի աղբյուր կարո՞ղ է հանդիսանալ բացառապես նա ինքը:

Արարքի հակաիրավականությունը գիտակցելն օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող հանգամանք է այնպես, ինչպես, օրինակ, այդ արարքն այդ անձի կողմից կատարելու փաստը: Բայց այդ փաստն իր սուբյեկտիվ բնույթի ու բովանդակության պատճառով ապացուցել այնպես, ինչպես հնարավոր է ապացուցել արարքն այդ անձի կողմից կատարելու փաստը, կամ վարույթի համար նշանակություն ունեցող որևէ այլ հանգամանք, օրինակ՝ ինչ-որ առարկայի գույնը, ձևը, չափը և այլ, գործնականում հնարավոր չէ⁹: Սուբյեկտիվ՝ անձի գիտակցության մեջ կամ մտքում առկա հանգամանքի հաստատման միջոց կարող է լինել բացառապես այդ անձից բխող ապացույցը, դրա վերաբերյալ տվյալի ու տեղեկության աղբյուր կարող է լինել բացառապես տվյալ անձը, իսկ եթե չնոռանանք, որ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել բացառապես նրա խոստովանության վրա, ավելի ու ավելի անհնար է դառնում պնդելը, որ անձի մեղավորությունը՝ հանգամանքը, որ նա արարք կատարելիս գիտակցել է դրա հակաիրավականությունը, առհասարակ հնարավոր է ապացուցել ապացույցների միջոցով այնպես, ինչպես պահանջվում է պատշաճ ապացուցման սկզբունքի համատեքստում:

Հետևաբար, անմեղության կանխավարկածի ու մեղավորության կանխավարկածի հակադրության պատճառն անմեղության կանխավարկածի ու

⁹ Տե՛ս **Գ. Բաղդասարյան**, Անմեղության կանխավարկածը որպես ապացույցների բավարարության չափանիշ // Պետություն և իրավունք, 2018, 3-4(81-82), էջ 4-14:

պատշաճ ապացուցման սկզբունքների անհարկի բացարձակացումն ու ծայրահեղացումն է, դրանց շրջանակներում այնպիսի կանոնի սահմանումը, որ վարույթի համար նշանակություն ունեցող կամ մեղադրանքի հիմքում դրված ցանկացած հանգամանք պետք է ապացուցվի վերաբերելի, թույլատրելի ու հավաստի ապացույցի վրա՝ բացառելով դրանցից և որևէ մեկի ու հատկապես անձի մեղավորության հաստատումը փաստերի կանխավարկածի հիման վրա: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը անմեղության կանխավարկածն ու պատշաճ ապացուցման սկզբունքը կամ ընդհանրապես ապացուցման ինստիտուտի նորմերը սահմանելիս հռչակել է նաև ընդամենը հնչեղ, բայց գործնականում անիրական գաղափարներ ու չափանիշներ՝ անտեսելով, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները գործնականում երբեք էլ չեն ապացուցվում ապացույցներով, այլ դրանք հաստատվում են փաստի կանխավարկածով: Նման բացարձակ պահանջներ սահմանելիս օրենսդիրն անտեսել է, որ, օրինակ, կյանքից զրկելու ուղղակի դիտավորությունն ապացուցվում է ոչ թե ապացույցի հիման վրա, այլ ելնելով նրանից, թե ինչ առարկայով, քանի անգամ և տուժողի մարմնի որ մասերին է հարվածել հանցավորը¹⁰, որոնք ոչ թե ապացույցներ են, այլ ապացուցման ենթակա փաստեր՝ նույնպիսի փաստեր, ինչպիսին հենց սպանության դիտավորությունն է, և որոնք հաստատվելով՝ իրենց հետ հաստատելու են նաև հանգամանքը. ունեցել է արդյոք անձը սպանության դիտավորություն, թե ոչ:

Այսինքն՝ անմեղության քրեադատավարական կանխավարկածը պատշաճ ապացուցման սկզբունքի համակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրվել է ընդգծված երաշխիքային ուղղվածությամբ՝ սահմանելով անձի դատապարտման հիմքում դրվող ցանկացած փաստ ապացույցների միջոցով ապացուցելու անբեկանելի պահանջներ, բայց անտեսելով այդ փաստերի բնույթն ու բովանդակությունը և, որ ամենակարևորն է, այն հանգամանքը, որ դատապարտման հիմքում ընկած մի շարք փաստեր, այդ թվում՝ անձի մեղավորությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցների տեսակների բացարձակ մեծամասնության համար անմատչելի են: Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցների մեծ մասն ուղղակի չի կարող տեղեկություններ պարունակել այն մասին, թե անձը գիտակցել է արդյոք իր արարքի հակահրավականությունը, թե՞ ոչ, հետևաբար՝ մեղավորությամբ է կատարել արարքը, թե՞ ոչ, իսկ այն ապացույցները, որոնք կարող են նման տվյալ պարունակել, այդ փաստն ապացուցելու համար գործնականում բավարար լինել չեն կարող:

Հետևաբար, անմեղության քրեադատավարական կանխավարկածի և մեղավորության քրեաիրավական կանխավարկածի հակադրությունը գործնականում լուծված է հոգուտ մեղավորության կանխավարկածի և լուծված է նրանով,

¹⁰ Տե՛ս Գևորգ Թոսունյանի և մյուսների վերաբերյալ ՍԴ/0319/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի որոշումը:

որ գործնականում այդ հակադրությունը չի էլ առաջանում՝ ընդամենը թղթի վրա թողնելով անմեղության կանխավարկածից բխող, բայց անիրագործելի այն պահանջը, որ հանցագործությունը մեղավորությամբ կատարելու հանգամանքը ենթակա է ապացուցման վերաբերելի, թույլատրելի ու հավաստի ապացույցների ամբողջությամբ և չի կարող հիմնվել ենթադրությունների վրա:

ГЕВОРГ БАГДАСАРЯН – Уголовно-процессуальная презумпция невиновности и уголовно-правовая презумпция виновности. – Статья посвящена соотношению уголовно-процессуального принципа презумпции невиновности и уголовно-правовой презумпции виновности. Автор сначала раскрывает суть презумпции невиновности как критерия оценки доказательств, обсуждает ее в контексте принципа надлежащего доказывания и утверждает, что требования, составляющие содержание этих принципов, излишне абсолютизированы, а иногда и невыполнимы. Автор утверждает, что некоторые обстоятельства, подлежащие доказыванию в уголовном процессе, такие как вина или признаки субъективной стороны преступления, как правило, невозможно доказать с помощью конкретных видов доказательств.

В статье также представлена новая концепция вины, обсуждается уголовно-правовая презумпция вины, которая является ее компонентом, и констатируется, что презумпция вины противоречит принципам презумпции невиновности и надлежащего доказывания. Автор обосновывает, что противопоставление уголовно-процессуальной презумпции невиновности и уголовно-правовой презумпции виновности на практике разрешается в пользу презумпции виновности, оставляя на бумаге невыполнимым требование, вытекающее из презумпции невиновности, о том, что факт совершения преступления с признанием вины подлежит доказыванию относимыми, допустимыми и достоверными доказательствами в полном объеме и не может основываться на предположениях.

Ключевые слова: презумпция невиновности; предположение; доказывание; неподтвержденное сомнение; вина; презумпция виновности; противоположность деяния

GEVORG BAGHDASARYAN – The Criminal Procedural Presumption of Innocence and the Criminal Substantive Presumption of Fault. – The correlation between the criminal substantive presumption of fault and the criminal procedural concept of the presumption of innocence is the main focus of this article. First, the author reveals the essence of the presumption of innocence as a criterion for assessing evidence, discusses it within the framework of the proper proof principle and makes the case that the requirements that make up the content of these principles are unnecessarily absolutized, and sometimes unrealizable. The author makes the case that some conditions, such fault or signs of the subjective side of the crime are typically impossible to establish through the use of particular kinds of evidence in criminal procedures.

Additionally, the article introduces a new concept of fault, examines the component of criminal law the presumption of guilt, and argues that it contradicts the concepts of the presumption of innocence and proper proof.

The author substantiates that the opposition of the criminal procedural presumption of innocence and the criminal legal presumption of fault in practice is resolved in favor of the presumption of fault, leaving on paper an impossible requirement arising from the presumption of innocence that the fact of committing a crime with a confession of guilt is subject to proof by relevant, admissible and reliable evidence in full and cannot be based on assumptions.

Key words: presumption of innocence; assumption; proof; unjustified doubts; fault; presumption of fault; illegality of the act

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎ

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Խորհրդարանական լսումները՝ որպես հանրային հարցերի քննարկման կարևոր հարթակ, նպաստում են պետական նշանակության տարբեր հարցերի շուրջ որոշումներ կայացնելիս հանրության լայն շերտերի մասնակցությանը: Այս ձևաչափն է՛լ ավելի է կարևորվում, երբ օրակարգում հայտնվում են հասարակությանը հուզող և հասարակական մեծ հնչեղություն ստացած նախագծեր: Հետևաբար, այս ինստիտուտի պատշաճ իրավակարգավորումը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել խորհրդարանական լսումների կազմակերպման և անցկացման իրավակարգավորումներին, որին զուգահեռ ներկայացվել է նաև մի շարք հարցերի առնչությամբ օտարերկրյա փորձը: Մասնավորապես, ի թիվս այլնի, քննարկվել են նաև խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավասություն ունեցող սուբյեկտների, խորհրդարանական լսումներին մասնակցության համար հայտեր ներկայացնելու, խորհրդարանական լսումները վարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց լիազորությունների թերի ամրագրման, խորհրդարանական լսումների ամփոփման, դրա արդյունքում համապատասխան արձանագրություն կազմելու և այն խորհրդարանի ինտերնետային կայքում հրապարակելու, խորհրդարանական լսումներում հեռավար մասնակցության կարևորության, նման մասնակցության օրենսդրական ամրագրման բացակայությանն առնչվող հարցեր:

Կատարված վերլուծությունների արդյունքում վեր հանված թերությունների և բացերի վերացման և լրացման նպատակով արվել են մի շարք առաջարկներ, որոնք կնպաստեն այս կարևոր ինստիտուտի հետագա կատարելագործմանը:

Բանալի բառեր – խորհրդարանական լսումներ, հանրային քննարկումներ, լսումների կազմակերպում, լսումների ամփոփում, լսումների արձանագրություն, լսումների առցանց մասնակցություն, լսումների հեռավար մասնակցություն

* **Արտակ Ասատրյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ

Арта́к Асатрян – кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой Европейского и международного права ЕГУ

Artak Asatryan – Candidate of Law, Associate Professor, Head of YSU Chair of European and International Law

Էլ. փոստ՝ artakasatryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0001-6166-9988>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 23.04.2024

Գրախոսվել է՝ 02.05.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Խորհրդարանական լուսմները՝ որպես հանրային քննարկումների իրակա-նացման ձև, խորհրդարանի կողմից պետության արտաքին և ներքին քաղաքականության կարևոր հարցերի քննարկման հարթակ են, որին ներգրավվում են պաշտոնյաներ, փորձագետներ, շահագրգիռ կազմակերպություններ և հանրության այլ ներկայացուցիչներ:

Սույն հոդվածի շրջանակներում կանդիդատանք Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական լուսմների հրավիրման և անցկացման իրավական կարգավորումներին՝ նպատակ ունենալով վեր հանել դրանցում առկա թերությունները և բացերը, ինչպես նաև վերջիններիս վերացման, հաղթահարման կամ լրացման վերաբերյալ կատարել համապատասխան առաջարկություններ:

Ի սկզբանե նշենք, որ ՀՀ Սահմանադրությամբ¹ խորհրդարանական լուսմների հրավիրմանն առնչվող կարգավորումներ ամրագրված չեն²:

ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի³ (այսուհետ՝ Կանոնակարգ) համապատասխան կարգավորումները սահմանում են պատգամավորի իրավունքը մասնակցելու խորհրդարանական լուսմներին (հոդված 3), պատգամավորի պարտականությունը մասնակցելու իր անդամակցած մշտական հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լուսմներին (հոդված 4), խորհրդարանական լուսմներ հրավիրելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը (Ազգային ժողովի նախագահ՝ 5-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետ, խմբակցություն՝ 8-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ, մշտական հանձնաժողով՝ 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Խորհրդարանական լուսմների հրավիրման և անցկացման բուն ընթացակարգային նորմերը սահմանված են Կանոնակարգի 125-րդ հոդվածով և ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՌ-267-Ն որոշման⁴ (այսուհետ՝ Աշխատակարգ) Հավելվածի 87-90-րդ կետերով:

Կանոնակարգի 125-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանական լուսմներ կարող են հրավիրել՝

- 1) Ազգային ժողովի նախագահը.

¹ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>

² Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 101-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խորհրդարանական լուսմներում քննարկվում են Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ, դաշնային սահմանադրական օրենքներով և դաշնային օրենքներով Պետդոմայի իրավասությանը վերաբերող հարցեր:

³ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175794>

⁴ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121700>

2) մշտական հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով:

3) խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով:

Լուումները հրավիրվում են Ազգային ժողովի նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ:

Խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել մեկ լուում:

Լուումների անցկացման օրը չպետք է համընկնի Ազգային ժողովի նիստի օրվա հետ:

Լուումների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատվում է լուումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Լուումների հրավիրման, ինչպես նաև արդյունքների ամփոփման ընթացակարգերը սահմանվում են Աշխատակարգով:

ԱԺ աշխատակարգի համաձայն՝ լուումները հրավիրելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ սահմանվում են լուումների օրը, ժամը, անցկացման վայրը և ընթացակարգը (Աշխատակարգի 87-րդ կետ):

Աշխատակարգի 88-րդ կետը սահմանում է, որ լուումների հրավիրման մասին հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշումն ուղարկվում է Ազգային ժողովի նախագահին: Լուումների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ լուումների վերաբերյալ տեղեկատվությունը լուումների անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:

Լուումներ հրավիրող Ազգային ժողովի նախագահը, հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող է նախապատրաստել իր հրավիրած լուումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լուումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ (Աշխատակարգի 90-րդ կետ):

Խորհրդարանական լուումների իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բավականին նեղ են թե՛ իրավական ակտերի շրջանակի, թե՛ բովանդակության տեսանկյունից: Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Սահմանադրությունը որևէ դրույթ չի պարունակում խորհրդարանական լուումների վերաբերյալ:

Կանոնակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանում

խորհրդարանական լուսմների վերաբերյալ կարգավորումները բավականաչափ ընդգրկուն չեն: Օրինակ՝ Կանոնակարգով չեն բացահայտվում խորհրդարանական լուսմների անցկացման նպատակը: Ավելին, Կանոնակարգի 125-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումն առ այն, որ լուսմների հրավիրման, ինչպես նաև արդյունքների ամփոփման ընթացակարգերը սահմանվում են Աշխատակարգով, կարծես ուղենշում է, որ խնդրո առարկա ինստիտուտի մանրամասն կարգավորումը պետք է տրվեր Աշխատակարգով: Մակայն Աշխատակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ծավալային և բովանդակային առումով Աշխատակարգը առանձնապես չի տարբերվում Կանոնակարգից:

Խորհրդարանական լուսմների ընթացակարգային կարգավորումներ սահմանելու տեսանկյունից Կանոնակարգը ոչ միատեսակ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, խորհրդարանական լուսմներ հրավիրելու լիազորություն ունեցող սուբյեկտների շարքում միայն Ազգային ժողովի նախագահին է իրավունք վերապահված սահմանելու դրանց անցկացման կարգը:

Սրան գուցահեռ՝ Աշխատակարգի 87-րդ կետը սահմանում է, որ լուսմները հրավիրելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ սահմանվում են լուսմների օրը, ժամը, անցկացման վայրը և **ընթացակարգը** (ընդգծումը մերն է՝ Ա.Ա.): Ըստ էության, հակասություն կա Կանոնակարգի և Աշխատակարգի միջև, քանի որ Աշխատակարգը, Ազգային ժողովի նախագահից բացի, մշտական, ժամանակավոր հանձնաժողովներին և խմբակցություններին ևս իրավունք է վերապահում սահմանելու խորհրդարանական լուսմների անցկացման ընթացակարգը, ինչը կարծես նույնանում է անցկացման կարգի հետ, որի սահմանման լիազորությունը Կանոնակարգով վերապահված է միայն Ազգային ժողովի նախագահին: Բուն ընթացակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հաճախ նույնանում են խորհրդարանական լուսմների օրակարգերի հետ, որոնք պարունակում են նաև որոշ ընթացակարգային ձևակերպումներ (ո՞վ է բացման խոսքով հանդես գալու, որքա՞ն է այն տևելու, ելույթների, հարց ու պատասխանի համար հատկացված ժամանակը և այլն):

Ինչ վերաբերում է խորհրդարանական լուսմների անցկացման օրվան և դրա վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակահատվածին, ապա այս մասով ո՛չ Կանոնակարգը և ո՛չ էլ Աշխատակարգը կարգավորումներ չեն պարունակում, թե առնվազն քանի օր առաջ պետք է խորհրդարանական լուսմ հրավիրող սուբյեկտը դրա մասին որոշում կայացնի: Սա կարևոր է այն առումով, որ հնարավորություն կտա ժամանակային առումով կանխատեսելի դարձնելու խորհրդարանական լուսմների կազմակերպչական աշխատանքները:

Աշխատակարգի 88-րդ հոդվածի 1-ին նախադասությունը սահմանում է, որ լուսմների հրավիրման մասին հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության

որոշումն ուղարկվում է Ազգային ժողովի նախագահին: Նախ, Աշխատակարգով չի կոնկրետացվում լուսմների հրավիրման որոշումը ԱԺ նախագահին ուղարկելու նպատակը: Բացի այդ, անորոշ է, թե այդ որոշումը ե՞րբ պետք է ուղարկվի ԱԺ նախագահին:

Առկա իրավակարգավորումների պայմաններում անորոշ է նաև այն հարցը, թե արդյո՞ք խորհրդարանական լուսմների համար մասնակցությունն ազատ է, այսինքն՝ յուրաքանչյուր ցանկացող կարող է դիմել հրավիրվող խորհրդարանական լուսմներին մասնակցելու համար, թե՞ լուսմների մասնակիցների շրջանակը որոշվում է կազմակերպիչների կողմից: Աշխատակարգի 88-րդ կետի 2-րդ նախադասությունը սահմանում է, որ լուսմների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, սակայն դրանում չի բացահայտվում որոշման տեղադրման նպատակը, արդյո՞ք դա արվում է լսմանը մասնակցելու ցանկություն ունեցողների կողմից մասնակցության հայտ ներկայացնելու համար: Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հրապարակված ոչ բոլոր հայտարարություններն են խորհրդարանական լուսմներին մասնակցելու համար հայտեր ներկայացնելու ձևակերպումներ պարունակում, իսկ նման հայտարարություններն էլ հայտերի ներկայացման ոչ միասնական ձևաչափ ունեն: Ողջունելի կլինի, որ դիմելու համար յուրաքանչյուրի իրավունքն ամրագրված լինի Կանոնակարգով կամ Աշխատակարգով: Սա առավել թափանցիկ և ներառական լուսմներ անցկացնելու հնարավորություն կտա, քանի որ հետագայում սովորույթի հիման վրա ձևավորված պրակտիկայից շեղումը չի դիտարկվի օրենքի խախտում:

Աշխատակարգի 88-րդ կետը սահմանում է, որ լուսմների հրավիրման մասին որոշումը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ առանց կոնկրետացնելու, թե երբ պետք է այն տեղադրվի: Այս դիտարկումը տրամաբանորեն կապված է նախորդի հետ, քանի որ լուսմներին նախորդող ողջամիտ ժամկետում որոշման հրապարակումը կարևոր է հավանական մասնակիցների կողմից մասնակցության հայտերի ներկայացման և լուսմներին առնչվող կազմակերպչական աշխատանքների առավել արդյունավետ իրականացման համար: Օրինակ՝ Լեհաստանի Սեյմի Աշխատակարգի 70a հոդվածի համաձայն՝ հանրային լուսմների վայրի մասին որոշումը և տեղեկատվությունը Սեյմի տեղեկատվական համակարգում պետք է հասանելի լինեն հանրային լուսմների օրվանից առնվազն 14 օր առաջ⁵: Բերենք մեկ այլ օրինակ. ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N

⁵ St' u https://oide.sejm.gov.pl/oide/en/index.php?option=com_content&view=article&id=14798:the-standing-orders-of-the-sejm-of-the-republic-of-poland&catid=7&Itemid=361#9

296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշման⁶ Հավելվածի 24-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկում իրականացնող մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում և միասնական կայքում հրապարակում է հայտարարություն հանրային լսման մասին, որը պետք է պարունակի հանրային քննարկումների իրականացման վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից հանրային քննարկմանը մասնակցելու դիմումների ներկայացվող վերջնաժամկետի (եթե, ըստ հանրային քննարկում իրականացնող մարմնի, նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ: Ընդ որում, **դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել, քան հանրային քննարկումների հայտարարության հրապարակման պահից տասը օրը** (ընդգծումը մերն է): Հանրային քննարկում իրականացնող մարմինը հանրային քննարկումների հայտարարությունը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվության միջոցներով:

Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակային առումով միասնական մոտեցում չի ապահովվել խորհրդարանական լսումների մասին որոշումների հրապարակման առնչությամբ: Օրինակ, ՀՀ Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի որոշումը 2023 թվականի փետրվարի 24-ին «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ խորհրդարանական լսումներ հրավիրելու մասին ՀՀ ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվել է 2023 թվականի փետրվարի 14-ին⁷: Իսկ, օրինակ, ԱԺ «Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ 2023 թվականի փետրվարի 3-ին Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու վերաբերյալ խմբակցության ներկայացրած ԱԺ հայտարարության նախագծի առնչությամբ խորհրդարանական լսումներ անցկացնելու մասին որոշումը ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվել է լսումներից ընդամենը 1 օր առաջ՝ 2023 թվականի փետրվարի 2-ին⁸: ՀՀ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ «Վարկերի և ժամկետանց այլ պարտավորությունների նկատմամբ տույժերի, տուգանքների և վարկային տոկոսադրույքների կիրառման, դրանց համաներման և այլ վարկային հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով 2020 թվականի սեպտեմբերի 24-ին խորհրդարանական լսումներ անցկացնելու մասին հայտարարությունը ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում

⁶ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>

⁷ Տե՛ս <http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111217&showdoc=3109&lang=arm>

⁸ Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=02&month=02&year=2023&NewsID=18111&lang=arm

տեղադրվել է կրկին մեկ օր առաջ՝ 2020 թվականի սեպտեմբերի 23-ին⁹: Մեկ այլ դեպքում ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ 2020 թվականի դեկտեմբերի 7-ին «Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակից դուրս գալու գործողությունների ծրագիր սահմանելու մասին» ԱԺ հայտարարության նախագծի քննարկման առնչությամբ խորհրդարանական լսումներ հրավիրելու հայտարարությունը հրապարակվել է նույն օրը՝ դեկտեմբերի 7-ին¹⁰: Եղել են դեպքեր, երբ հայտարարությունը հրապարակվել է լսումներից 3 օր առաջ¹¹, 8 օր առաջ¹², 6 օր առաջ¹³ և այլն:

Ինչ վերաբերում է լսումներ անցկացնելու իրավունքի իրացման պարբերականությանը, ապա անհասկանալի է մնում Կանոնակարգի 125-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման տրամաբանությունը: Համաձայն հիշատակված նորմի՝ խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել մեկ լսում: Եթե մտքում ունենանք, որ խմբակցության իրավունքն արդեն իսկ սահմանափակված է միայն իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցի առնչությամբ լսում հրավիրելով, ապա ողջամիտ չէ նման պայմաններում խմբակցությանը վերապահել նստաշրջանի ընթացքում միայն մեկ խորհրդարանական լսում հրավիրելու հնարավորություն: Այս հարցի կարևորությունն այն է, որ էականորեն սահմանափակվում է խմբակցությունների (հատկապես՝ ընդդիմադիր) հնարավորությունը լսումներ անցկացնելու հարցում: Այսպես, եթե ընդդիմադիր խմբակցությունը արդեն իսկ իրացրել է իր իրավունքը և հերթական նստաշրջանի ընթացքում հրավիրել է խորհրդարանական լսում, բայց դրանից հետո տեղի ունեցած տարաբնույթ զարգացումների արդյունքում ներկայացրել է նախագիծ և ցանկանում է դրանում բարձրացված հարցի առնչությամբ խորհրդարանական լսում հրավիրել, փաստորեն չի կարող, քանի որ, ինչպես վերևում նշեցինք, արդեն իսկ իրացրել է իր իրավունքը: Մշտական հանձնաժողովների միջոցով էլ չի կարող խորհրդարանական լսում հրավիրելու որոշման կայացմանը հասնել, քանի որ հանձնաժողովներում ներկայացված ընդդիմադիր խմբակցության ձայները չեն բավարարում այդ հարցով որոշում կայացնելու համար:

⁹ Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=23&month=09&year=2020&NewsID=13298&lang=arm

¹⁰ Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=07&month=12&year=2020&NewsID=13506&lang=arm

¹¹ Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=29&month=01&year=2021&NewsID=13625&lang=arm

¹² Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=4&day=14&month=09&year=2021&NewsID=15086&lang=arm

¹³ Տե՛ս http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=17&month=06&year=2022&NewsID=16935&lang=arm

Մի դիտարկում ևս, Ազգային ժողովի հանձնաժողովները զրկված են համատեղ խորհրդարանական լուսմներ իրականացնելու հնարավորությունից: Նման կարգավորում չեն նախատեսում ո՛չ Կանոնակարգը և ո՛չ էլ Աշխատակարգը: ԱԺ նախագահի նախաձեռնությամբ ԱԺ մշտական հանձնաժողովները համատեղ հրավիրվել են խորհրդարանական լուսմներ, բայց այս ձևաչափի համար ևս իրավական հիմքը բացակայում է:

Ինչ վերաբերում է լուսմների ամփոփումներին, ապա Կանոնակարգի 125-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ լուսմների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատվում է լուսմները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նախ նշենք, որ ո՛չ Կանոնակարգը և ո՛չ էլ Աշխատակարգը չեն հստակեցնում, թե հաստատված արձանագրությունը ինչ ժամկետում պետք է տեղադրվի ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում: Բացի այդ, Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խորհրդարանական լուսմների արձանագրությունները կայքում չեն տեղադրվում: Պարզ չէ՝ արդյո՞ք դրանք կազմվում են, թե՞ ոչ, սակայն չեն տեղադրվում: Խորհրդարանական լուսմների վերջին արձանագրությունը, որը ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվել է եղել է 2018 թվականի հունիսի 25-ին Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից հրավիրված «Աղետների դիմակայության ամրապնդումը և զարգացումը» թեմայով խորհրդարանական լուսմների արձանագրությունը, որը կայքում տեղադրվել է 2018 թվականի հոկտեմբերի 16-ին¹⁴:

Խնդրահարույց է թվում նաև Աշխատակարգի 90-րդ կետի կարգավորումը, համաձայն որի՝ լուսմներ հրավիրող Ազգային ժողովի նախագահը, հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող է նախապատրաստել իր հրավիրած լուսմների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լուսմների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ: Ինչո՞ւ պետք է հանձնաժողովները և խմբակցությունները նախապատրաստված նյութերի հրապարակման համար ԱԺ նախագահի համաձայնությունը ստանան: Նախ, անհասկանալի է նաև, թե ինչ պետք է նկատի ունենալ «հրապարակվել» ասելով: Արդյո՞ք խոսքը նշված նյութերի՝ ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու մասին է, թե առհասարակ հրապարակելու: Երկու դեպքում էլ կարելի է կանխատեսել, որ հանձնաժողովները և խմբակցությունները որևէ մոտիվացիա չեն ունենա այդ ելույթների, առաջարկների, եզրակացությունների և տեղեկանքների գոյության մասին

¹⁴ Տե՛ս <http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111190&showdoc=2642&lang=arm>

բարձրաձայնելու և դրանց բովանդակությունը կհանրայնացնեն հենց լուսմներին ընթացքում՝ նկատի ունենալով, որ լուսմները այսպես թե այնպես բաց են և հրապարակային: Ինչ վերաբերում է լուսմների արդյունքներն ամփոփող այլ նյութերին, ապա անհասկանալի է՝ ինչ նյութերի մասին է խոսքը, քանի որ Կանոնակարգը, որպես լուսմների ամփոփիչ փաստաթուղթ, առանձնացնում է դրանց արձանագրությունները, որոնք էլ, ինչպես վերևում նշեցինք, պետք է հրապարակվեն ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում՝ առանց որևէ նախապայմանի կամ որևէ պաշտոնատար անձի համաձայնության:

Կանոնակարգը և Աշխատակարգը չեն անդրադառնում նաև խորհրդարանական լուսմները վարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց, վերջիններիս լիազորություններին (օրինակ, էլույթի համար մասնակիցների ձայնի իրավունքի տրամադրում, լուսմների դահլիճում կարգուկանոնին հետևում, անհրաժեշտության դեպքում սանկցիաների կիրառում և այլն): Թվարկված հարցերի առնչությամբ մանրամասն կարգավորումներ է նախատեսում, օրինակ, Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կանոնակարգը, որի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խորհրդարանական լուսմները վարում են Պետդումայի նախագահը, Պետդումայի փոխնախագահը կամ նրանց հանձնարարությամբ՝ Պետդումայի համապատասխան հանձնաժողովի նախագահը կամ փոխնախագահը¹⁵:

Խորհրդարանական լուսմների համատեքստում անդրադառնանք մի կարևոր հարցի ևս: Խոսքը հանդիպումների, ժողովների, քննարկումների, լուսմների անցկացման հեռավար ձևաչափի մասին է: Ժամանակակից աշխարհում գնալով ավելի է մեծանում տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց ընձեռած հնարավորությունների դերն ու նշանակությունը: Այդպիսի գործիքները հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում ներթափանցել են նաև կառավարման համակարգ և նպաստել տարբեր գործընթացների արդյունավետ կազմակերպմանը: Խոսքը հատկապես հեռավար ձևաչափով տարբեր ժողովների և հանդիպումների կազմակերպման մասին է, որոնց պայմաններում տարածությունը մասնակցության համար որևէ խոչընդոտ չէ: Հեռավար քննարկումներն իրենց կայուն տեղն են զբաղեցնում մեր օրերում ժողովների, սեմինարների կամ տարբեր միջոցառումների կազմակերպման գործում: Այդպիսի քննարկումների դերը է՛լ ավելի բարձրացավ հատկապես նոր տիպի կորոնավիրուսային համավարակի (COVID-2019) ի հայտ գալուց հետո, երբ հանրային իշխանությունները, համավարակի հաղթահարման նկատառումներից ելնելով, սահմանափակեցին մարդու և քաղաքացու մի շարք իրավունքներ, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը: Մրան զուգահեռ՝ աշխատանքային տարաբնույթ գործընթացների հարաբերականորեն բնականոն ըն-

¹⁵ Առավել մանրամասն տե՛ս ՌԴ Պետդումայի կանոնակարգի 66-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածները, <http://95.173.130.41/duma/about/regulations/chapter-6/>

թացքն ապահովելու համար ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում սկսեցին լայնորեն կիրառել աշխատանքների կազմակերպման հեռավար ձևաչափերը: Բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ, ստեղծված իրավիճակով պայմանավորված, ոչ միայն սկսեցին օգտվել ժամանակակից գործիքներից, այլև օրենսդրական հիմքեր ստեղծվեցին դրանց կիրառության համար: Այսպես, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 252-Լ որոշման¹⁶ Հավելվածի 140-րդ կետի համաձայն՝ բացառիկ դեպքերում նիստը վարողի նախաձեռնությամբ նախանիստերը, կոմիտեների նիստերը և Կառավարության նիստերը կարող են անցկացվել հեռավար՝ տեսաձայնային կապի միջոցով¹⁷:

Հատկանշական է, որ հեռավար ձևաչափով քննարկումներ կազմակերպելու կարգավորումներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել են նաև նախքան համավարակի ի հայտ գալը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշման Հավելվածի 23-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկում իրականացնող մարմնի նախաձեռնությամբ հանրային լուսններն իրականացվում են տվյալ ոլորտում մասնագիտացված կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, **ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով քննարկումների ձևով** (ընդգծումը մերն է)¹⁸:

Այս պայմաններում առնվազն տարօրինակ է, որ խորհրդարանական լուսնների նման կարևոր ինստիտուտի առնչությամբ հեռավար մասնակցության որևէ կարգավորում չի նախատեսվել ո՛չ Կանոնակարգով և ո՛չ էլ Աշխատակարգով: Հարցը առավել հրատապ և կարևոր է դառնում հատկապես համավարակի պարբերական բռնկումների և, ինչու չէ, նաև հայ-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակի հաճախակի սրման ֆոնին, ինչի արդյունքում համապատասխան բնակավայրերի բնակիչները և այդ բնակավայրերում գործունեություն ծավալով հասարակական կազմակերպությունները ամենայն հավանականությամբ կգրկվեն խորհրդարանի կողմից կազմակերպվող լուսններին մասնակցելու հնարավորությունից: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ազգային ժողովի կազմակերպած խորհրդարանական լուսններում բոլորովին վերջերս հեռավար մասնակցության ձևաչափ կիրառվել է: Մասնավորապես, խոսքը «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները» թեմայով 2024 թվականի հունվարի 24-ին ՀՀ Ազգային ժողովում կազմակերպված լուսնների մասին է, որին

¹⁶ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188272>

¹⁷ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175985>

¹⁸ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>

տեսակապի միջոցով մասնակցել են նաև միջազգային փորձագետներ: Սրան զուգահեռ նշենք, որ ներպետական մակարդակում դեռ ոչ ոք չի կարողացել օգտվել տեսակապի ընձեռած հնարավորություններից:

Բարձրացված հարցի առնչությամբ օտարերկրյա պետություններում արդեն իսկ առկա են համապատասխան իրավակարգավորումներ, որոնք թույլ են տալիս խորհրդարանական լուսմները անցկացնել նաև հեռավար ձևաչափով: Այսպես՝ Նորվեգիայի խորհրդարանի (Ստորտինգի) կանոնակարգի¹⁹ 27-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը կարող է ձայների պարզ մեծամասնությամբ որոշել, որ լուսմները կարող են անցկացվել ամբողջությամբ կամ մասամբ հեռավար հանդիպումների տեխնոլոգիաների օգնությամբ: Նմանատիպ կարգավորում կարելի է նախատեսել նաև մեզ մոտ, ինչը հնարավորություն կտա լուսմներն անցկացնելու նաև հեռավար:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ խորհրդարանական լուսմներին վերաբերող իրավակարգավորումները թերի են, ոչ ամբողջական, դրանցում առանձին դեպքերում նկատվում են հակասություններ և անորոշություններ, որոնց վերացման, լրացման և հստակեցման ուղղությամբ արվում են հետևյալ առաջարկները.

1. Սահմանել, թե խորհրդարանական լուսմներ հրավիրելու մասին ԱԺ նախագահի, խմբակցության կամ հանձնաժողովի որոշումը լուսմների օրվանից առնվազն քանի օր առաջ պետք է հրապարակվի ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Հստակ ամրագրել, որ լուսմների մասին որոշումը հրապարակվելուց հետո բոլոր շահագրգիռ կողմերը կարող են դիմել դրանց մասնակցելու համար, ինչպես նաև կարգավորում նախատեսել, թե որոշումը հրապարակվելուց հետո առնվազն քանի օր պետք է ժամկետ նախատեսվի մասնակցության հայտեր ներկայացնելու համար: Բացի այդ, մասնակցության համար հայտ ներկայացրած անձանց վերաբերյալ միասնական տեղեկություններ ունենալու նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է հաստատել դիմումի ձևաթուղթ:

3. Կարգավորումներ սահմանել նաև ըստ անհրաժեշտության մասնակիցների քանակը կրճատելու մասով՝ նկատի ունենալով տարածքի հետ կապված հնարավոր խնդիրները: Նման պարագայում սահմանել օբյեկտիվ չափանիշներ մասնակիցների թիվը նվազեցնելու համար: Օրինակ՝ նախապատվությունը տալ ավելի վաղ դիմում ներկայացրած մասնակիցներին կամ հնարավորինս ապահովել լուսմներին Հայաստանի բոլոր մարզերի ներգրավվածությունը և այլն:

4. Աշխատակարգով ամրագրել լուսմների հրավիրման մասին հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշումը Ազգային ժողովի նախագահին ուղարկելու հստակ ժամկետ:

¹⁹ https://www.stortinget.no/globalassets/pdf/english/2022_rules_of_procedure.pdf

5. Կանոնակարգից հանել խմբակցությունների յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում խորհրդարանական մեկ լսում հրավիրելուն վերաբերող դրույթը:

6. Կարգավորումներ նախատեսել խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավասությամբ օժտված սուբյեկտների կողմից համատեղ խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավունքի իրացման առնչությամբ:

7. Սահմանել խորհրդարանական լսումները վարելու լիազորություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև լսումները վարողի լիազորությունները, ինչպես որ դա սահմանված է օտարերկրյա մի շարք պետությունների խորհրդարանների գործունեությունը կարգավորող ակտերում:

8. Սահմանել լսումների արդյունքում կազմված արձանագրությունը հաստատելու ժամկետ, ապա նաև հաստատելուց հետո ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու ժամկետ: Բացի այդ, վերականգնել լսումների արդյունքում կազմված արձանագրությունը կայքում հրապարակելու պրակտիկան՝ պահպանելով Կանոնակարգի պահանջը:

9. Աշխատակարգի 90-րդ կետից հանել հանձնաժողովի կամ խմբակցության կողմից նախապատրաստված իրենց հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթները, առաջարկները, եզրակացությունները, տեղեկանքները, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութերը հրապարակելու համար Ազգային ժողովի նախագահի համաձայնությունը ստանալու վերաբերյալ դրույթը:

10. Նկատի ունենալով համաճարակային ռիսկերը, ինչպես նաև լսումներին ներգրավվելու ցանկություն ունեցողների մասնակցությունը տարածքային, ժամանակային կամ ֆինանսական գործոններով պայմանավորված չսահմանափակելու նկատառումները՝ առաջարկվում է կարգավորումներ նախատեսել խորհրդարանական լսումները նաև հեռավար հաղորդակցության միջոցներով անցկացնելու համար:

АРТАК АСАТРЯН – Парламентские слушания как форма проведения общественного обсуждения. – Парламентские слушания как важная платформа для обсуждения общественных вопросов способствуют участию широких слоев общественности в решении различных вопросов государственного значения. Этот формат становится еще более важным, когда в повестке дня появляются проекты, которые волнуют общественность и получают большой общественный резонанс. Поэтому правильное правовое регулирование данного института приобретает особое значение. В рамках данной статьи была сделана ссылка на правовые нормы организации и проведения парламентских слушаний, а также представлен зарубежный опыт по ряду вопросов.

В частности, обсуждались вопросы, связанные с подачей заявлений об участии в парламентских слушаниях, полномочия должностных лиц, проводящих парламентские слушания, подведение итогов парламентских слушаний, подготовка соответствующего протокола и размещение его на сайте парламента, отсутствие законодательного закрепления дистанционного участия в парламентских слушаниях и т. д.

В результате анализа был сделан ряд предложений с целью устранения и восполнения

недостатков и пробелов, что будет способствовать дальнейшему совершенствованию этого важного института.

Ключевые слова: *Парламентские слушания, общественные обсуждения, организация слушаний, итоги слушаний, протоколы слушаний, онлайн-участие в слушаниях, дистанционное участие в слушаниях*

ARTAK ASATRYAN – *Parliamentary Hearings as a Form of Public Discussion.* – Parliamentary hearings, as an important platform for the discussion of public issues, contribute to the participation of broad layers of the public in deciding on various issues of state importance. This format becomes even more important when legal drafts that received a great public interest appear on the agenda. Therefore, the proper legal regulation of this institution acquires special importance. Within the framework of this article, reference was made to the legal regulations for the organization and conduct of parliamentary hearings, along with which the foreign experience regarding a number of issues was also presented. In particular, among others, issues related to entities with the authority to call parliamentary hearings, submitting applications for participation in parliamentary hearings, the incomplete determination of the powers of the officials authorized to conduct the parliamentary hearings, summarizing the parliamentary hearings, drawing up the relevant minutes and publishing them on the website of the parliament, the importance of remote participation in parliamentary hearings and the lack of legal regulation of such participation were also discussed.

As a result of the analysis, a number of proposals have been made to eliminate and fill in the shortcomings and gaps, which will contribute to the further improvement of this important institution.

Key words: *Parliamentary hearings, public discussions, organization of hearings, summary of hearings, minutes of hearings, online participation in hearings, remote participation in hearings*

LEX VOLUNTARIS ԿՈՒԻՉԻՈՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ* 

Երևանի պետական համալսարան

Իրավունքի գիտության մեջ կամքի ինքնավարության սկզբունքը նախապես ձևավորվել է որպես պայմանագրային շրջանառության սպասարկման միջոց, սակայն տարբեր երկրների իրավական համակարգերում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, կամքի ինքնավարության սկզբունքը կիրառվում է նաև արտապայմանագրային հարաբերությունների նկատմամբ: Դեռևս լիարժեք քննարկված չէ պայմանագրային և արտապայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառելիս այն հենվում է նույն գործիքակազմի վրա, թե, կախված թիրախային հարաբերությունների էությունից, գործիքակազմն էլ տարբեր պետք է լինի: Կարելի է այս հարցերի պատասխաններն անվերջ փնտրել իրավակիրառ պրակտիկայում, սակայն փորձը ցույց է տալիս, որ համապատասխան դեպքերում էլ իրավակիրառ պրակտիկան է անհրաժեշտ պատասխաններ ունենալու համար անվերջ փնտրում իրավունքի գիտության զինանոցում: Կասկածից վեր է, որ գիտություն-պրակտիկա համագործակցության մեջ դրոշակակիրը գիտությունն է, և գիտությունը պետք է պրակտիկային մատուցի հիմնախնդիրների լուծման բանալիները: Սույն գիտական հոդվածում քննարկվելու են բարձրացված խնդիրները, և առաջարկվելու են լուծումներ, որոնք կարող են ունենալ ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Բանալի բառեր – սկզբունք, պայմանագրի ազատություն, կամքի ինքնավարություն, օտարերկրյա իրավունք, կոլիզիոն նորմ, պայմանագրի բովանդակություն, պայմանագրի ձև, պայմանագրային հարաբերություն, արտապայմանագրային հարաբերություն

1. Պայմանագրի՝ ազատության և կամքի ինքնավարության սկզբունքների համադրության առնչությամբ անհրաժեշտ ենք համարում հստակ նշել, որ այս

* **Արմեն Հայկյանց** – իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ

Armen Haykants – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского права ЕГУ

Armen Haykants – Doctor of Law, Professor, Head of YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ ahaykants@ysu.am, haykants@yahoo.com. ORCID: <https://orcid.org/0000-0003-4531-4647>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 05.02.2024

Գրախոսվել է՝ 29.05.2024

Հաստատվել է՝ 30.05.2024

© The Author(s) 2024

սկզբունքները միմյանցից անկախ են, թեև իրենց էությունականության մեջ բավականին ընդհանրություններ ունեն:

Պայմանագրի ազատության սկզբունքն ուղղված է քաղաքացիական պայմանագրի կողմերին՝ ազատորեն որոշելու՝

- Կնքում են պայմանագիր, թե ոչ,
- Ինչպիսի պայմանագիր են կնքում,
- Պայմանագիրն ինչպիսի պայմաններով են կնքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածը մանրամասն շարադրում է այն գործիքակազմը, որի կիրառմամբ պայմանադիր կողմերն իրացնում են պայմանագրի ազատության սկզբունքը: Այս սկզբունքը պայմանադիր կողմերին իրավունք է վերապահում շրջանցելու քաղաքացիական օրենսդրության դիսպոզիտիվ նորմերը և կողմերի համար սահմանելու փոխընդունելի վարքագծային կանոններ: Այն կիրառվում է ինչպես ներպետական, այնպես էլ արտաքին տնտեսական պայմանագրային հարաբերություններում:

Կամքի ինքնավարության սկզբունքի էությունն այն է, որ միջազգային մասնավոր պայմանագրային հարաբերություններում պայմանադիր կողմերն իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ ընտրելու այն պետության իրավունքը, որով կցանկանային առաջնորդվել իրենց պայմանագրային հարաբերությունները կառուցելիս: Կամքի ինքնավարության սկզբունքը ոչ մի պարագայում կիրառելի չէ ներպետական մասնավոր հարաբերությունների նկատմամբ. այն ուղղված է բացառապես միջազգային մասնավոր հարաբերություններին: Կամքի ինքնավարության սկզբունքն արտաքինապես բավականին նման է պայմանագրի ազատության սկզբունքին այն դրսևորմամբ, որ երկուսի պարագայում էլ պայմանադիր կողմերն իրենք են որոշում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող պայմանները. այսքանով ավարտվում է այս երկու սկզբունքների նմանությունը¹: Այդ նմանությունն այնքան մեծ է, որ առանձին հեղինակներ նույնիսկ նշում են, որ կամքի ինքնավարության սկզբունքը ներառում է պայմանագրի ազատության սկզբունքը, ուստի կամքի ինքնավարության սկզբունքը մի կողմից նյութական իրավունքի ինստիտուտ է (որպես պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորում), մյուս կողմից՝ կոլիզիոն իրավունքի ինստիտուտ (որպես կիրառման ենթակա իրավունքի ընտրության հնարավորություն)²: Իրականում դրանք տարբեր են իրենց խոր-

¹ Ст' у Правовое регулирование внешней торговли в СССР // под ред. Д.М.Генкина. М., 1961, էջ 480; **Загирняк М.Ю.** Значение учения о воле Ж.Ж. Руссо и И.Канта для становления философско-правовой концепции С.И.Гессена // <https://cyberleninka.ru/article/n/znachenie-ucheniya-o-vole-zh-zh-russo-i-i-kanta-dlya-stanovleniya-filosofsko-pravovoy-kontseptsii-s-i-gessena>; **Антонова Е.И.** Автономия воли сторон в договорных отношениях между субъектами права разных государств // Вестник Чебоксарского кооперативного института. 2008, № 1, էջ 64-73:

² Ст' у **Дармокрик В.Ф.** Пределы принципа автономии воли и право, применимое сторонами при

քային ընկալումներում. կամքի ինքնավարությունն ուղղված է միայն կիրառման ենթակա իրավակարգի ընտրությանը³, որից հետո, երբ կողմերը սկսում են որոշել նաև իրենց պայմանագրային պայմանները, այստեղ արդեն «ավարտվում է» կամքի ինքնավարության սկզբունքը, և «սկսվում է» պայմանագրի ազատության սկզբունքը⁴:

Պայմանագրի ազատության և կամքի ինքնավարության սկզբունքների միջև առկա է նաև որոշակի ներգործական կապ⁵. պայմանագրի ազատության սկզբունքը չի կարող ազդեցություն ունենալ կամքի ինքնավարության սկզբունքի վրա, սակայն վերջինս որոշակի հանգամանքներում կարող է ներգործել պայմանագրի ազատության սկզբունքի վրա: Այսպես, երբ կողմերը կամքի ինքնավարությամբ ընտրում են կիրառման ենթակա պետության իրավունքը, պայմանագրի ազատության սկզբունքի իրացումը «հանձնում են» այդ իրավակարգի հսկողությանը, թե որքանով և ինչ սահմաններում կարող է պայմանագրի ազատության սկզբունքը դրսևորվել ընտրված իրավակարգի շրջանակներում:

Պայմանագրի ազատության և կամքի ինքնավարության սկզբունքների համադրությամբ շեշտադրում ենք, որ կամքի ինքնավարության սկզբունքը տարածելի չէ ներպետական պայմանագրային հարաբերությունների նկատմամբ, իսկ պայմանագրի ազատության սկզբունքը տարածելի է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մասնավոր պայմանագրային հարաբերությունների նկատմամբ:

2. Ժամանակակից բոլոր պետությունների իրավական համակարգերում նախատեսվում է ինքնավար կամքի սկզբունքը, ինչն իրավամբ պետք է համարել ժամանակակից իրավաբաղադրյալ կրթական չափանիշ:

Կամքի ինքնավարության սկզբունքի դոկտրինալ հիմքերը դրվել են 16-րդ դարում ֆրանսիացի հանճարեղ իրավաբան Շառլ Դյումուլեի կողմից⁶: Այս սկզբունքի արմատավորմամբ Շառլ Դյումուլեն ճեղքում էր իր ժամանակների իրավագիտական պարտիկուլյարիզմը, երբ միջազգային առևտրային հարաբերությունները կարգավորվում էին հիմնականում պայմանագրի կնքման վայրի, երբեմն էլ՝ պայմանագրի կատարման վայրի օրենքներով⁷: Շառլ Դյու-

выборе условий сделки в международных договорах // Вестник Саратовской юридической академии № 1(108), 2016, էջ 94-100:

³ Տե՛ս **Толстых В.Л.** Международное частное право: коллизийное регулирование. СПб., 2004, էջ 63:

⁴ Տե՛ս **Новикова Т.В.** Принцип автономии воли в международном частном праве: Монография. М, РГУП, 2021, էջ 106.

⁵ Տե՛ս **Малкин О.Ю.** Правовое регулирование выбора права сторонами договора. М., 2008, էջ 17:

⁶ Տե՛ս **Beale J.** A Treatise on the Conflict of Laws or Private International Law. Vol.I.Part i. Cambridge, 1916, էջ 32:

⁷ Տե՛ս **Гельман-Павлова И.В.** Шарль Дюмулен – основоположник теории автономии воли в международном частном праве // <https://cyberleninka.ru/article/n/sharl-dyumulen-osnovopolozhnik-teorii-avtonomii-voli-v-mezhdunarodnom-chastnom-prave/viewer>

մուլեն նախատեսում էր, որ երբ նույնիսկ միջազգային առևտրային պայմանագրային հարաբերության կողմերը հստակ չէին սահմանում, թե որ օրենքով են ցանկանում առաջնորդվել, ապա կիրառման ենթակա օրենքը կարող է ենթադրվել նրանց ընդհանուր կամքից, վարքագծից, այն համեմատելի հանգամանքներից, որոնց պարագայում կողմերը սովորաբար ընտրում են կամ կարող էին ընտրել այս կամ այն պետության իրավունքը: Միջազգային առևտրային հարաբերությունների զարգացման պայմաններում մյուս երկրների իրավական համակարգերը շատ բուռն արձագանքեցին Շառլ Դյումուլեի կամքի ինքնավարության տեսությանը և սկսեցին ներդնել կամքի ինքնավարության սկզբունքը, որովհետև միջազգային առևտրային հարաբերություններն իրենց էությանմբ ինտերնացիոնալ հարաբերություններ են, որոնք հակադրվում են ցանկացած պարտիկուլյարիզմի, իսկ կամքի ինքնավարության սկզբունքն իր էությանմբ հենց իրավական պարտիկուլյարիզմը շրջանցող սկզբունք էր⁸: Իրերի նման դրությունը լիովին համապատասխանում էր աստիճանաբար գլոբալացվող աշխարհի պահանջներին: Այստեղ պետք է շատ ուշագրավ մի հանգամանք նկատել ու շեշտել: Կամքի ինքնավարության տեսությունը վերաբերում էր պետության իրավունքի ընտրությանը, որով պետք է կարգավորվեին միջազգային առևտրական շրջանակների իրավունքներն ու պարտականությունները, այսինքն՝ միջազգային առևտրական պայմանագրի բովանդակությունը: Այս սկզբունքը որևէ կերպ չէր վերաբերում և չէր կարգավորում միջազգային առևտրային պայմանագրի ձևին առաջադրվող պահանջները: Միջազգային առևտրական պայմանագրերի ձևին առաջադրվող պահանջները միշտ կարգավորվել և շարունակում են կարգավորվել պարտիկուլյարիզմով կամ այլ կերպ ասած՝ սուվերենի կամքով, ներպետական օրենքներով: Եթե զուգահեռ անցկացնենք պայմանագրի ազատության սկզբունքի հետ, պետք է ասել, որ այստեղ էլ պայմանադիր կողմերն իրավունք ունեն իրենց կամքով սահմանել միայն պայմանագրի բովանդակությանը վերաբերող հարցերը, իսկ պայմանագրի ձևին վերաբերող հարցերի կապակցությամբ կողմերն իրավունքներ չունեն. այդ հարցերը կրկին կարգավորվում են սուվերենի կամքով, ներպետական օրենքներով: Եվ սա պատահական չէ: Շատ հաճախ պատահում է այնպես, որ իրավունքների և պարտականությունների շրջանակը, բնույթը, ուղղությունը կախված են լինում պայմանագրի ձևից: Եթե պայմանագրի բովանդակությունը չի կարող ազդել պայմանագրի ձևի վրա, ապա պայմանագրի ձևը կարող է ազդել պայմանագրի բովանդակության վրա: Քաղաքացիական շրջանառության վրա ազդելու այս հզոր լծակը, բնականաբար, կարող էր գտնվել միայն սուվերենի ձեռքում, ով ոչ մի պարագայում այդ լծակը չի զիջի մասնավոր անձանց: Առանց այն էլ պետությունն իր սուվերենությունից բավական

⁸ Տե՛ս **Новикова Т.В.**, նշվ. աշխ., էջ 93:

բան զիջել է մասնավոր անձանց, ներպետական քաղաքացիական շրջանառությունում դա պայմանագրի ազատության սկզբունքն է, իսկ արտաքին տնտեսական շրջանառությունում՝ նաև՝ կամքի ինքնավարության սկզբունքը: Ամենայն հավանականությամբ, իրերի նման դրությունը քաջ գիտակցել է նաև Շառլ Դյումուլեն, ով, կամքի ինքնավարության տեսությունը զարգացնելով, որևէ կերպ չշոշափեց այն հարցը, որ դա կարող էր վերաբերել նաև միջազգային առևտրային պայմանագրի ձևը որոշելու կողմերի ազատությանը: Իրերի դրությունն այս կերպ էլ տարածվեց ողջ աշխարհում, և ցայսօր որևէ մեկը չի փորձել **պայմանագրի ձևին** վերաբերող ինքնավար կամքի տեսություն առաջ քաշել: Արտաքին տնտեսական պայմանագրի ձևը ենթարկվում է պայմանագրի կնքման վայրի օրենքի պահանջին, այսինքն՝ այն որոշվում է կնքման վայրի պետության կամքով սահմանված պահանջներին համապատասխան: Այս օրինաչափությունն ամրագրված է ոչ միայն ազգային օրենքներով, այլև բոլոր միջազգային պայմանագրերով, որոնք անդրադառնում են մասնավոր պայմանագրերի ձևի և բովանդակության կոլիզիոն կարգավորման հարցերին:

Կամքի ինքնավարության ինստիտուտը թեև երևութապես նույնկերպ է ընկալվում բոլոր պետություններում, սակայն տարբեր իրավական համակարգերում տարբեր մեխանիզմներ են կիրառվում այդ սկզբունքը կյանքի կոչելու համար: Նույնիսկ տարակերպ են մոտեցումները միջազգային պայմանագրերում: Մասնավորապես, միասնական չեն մոտեցումները, թե ինչ ձև պետք է ունենա կամքի ինքնավարության վերաբերյալ համաձայնությունը, հարցերի ինչ շրջանակի է այն վերաբերում, ու նաև՝ թե հարցերի ինչ շրջանակի այն չի վերաբերում: Բնականաբար, միևնույն սկզբունքի տարակերպ ընկալումն ու իրացումը պրակտիկայում նվազեցնում է այդ ինստիտուտի կարգավորիչ հնարավորությունը, որը բոլորովին չի նպաստում միջազգային մասնավոր շրջանառությանը:

Կամքի ինքնավարության սկզբունքի գործիքակազմը ներկայացնենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1284-րդ հոդվածի իրավակարգավորումների օրինակով՝ այն հաստատ համոզմամբ, որ այն արտահայտում է օտարերկրյա և միջազգային լավագույն փորձը:

2.1. Համաձայն ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 1-ին կետի՝ *«Պայմանագիրը կարգավորվում է կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով»:*

«Պայմանագիրը կարգավորվում է...» արտահայտությունը կարիք ունի պարզաբանման, այլապես կարող է տպավորություն ստեղծվել, թե կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով կարգավորել պայմանագրի հետ կապված ցանկացած հարց՝ թե՛ ձևի, թե՛ բովանդակության առումով:

Այս հարցի պարզաբանումը տրված է ՀՀ քաղ.օր. 1287-րդ հոդվածում, համաձայն որի՝ *«Պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքը ներառում է*

կողմերի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև պայմանագրի՝

- 1) մեկնաբանումը.
- 2) կատարումը.
- 3) չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքները.
- 4) դադարելը.
- 5) առոչինչ լինելու կամ անվավերության հետևանքները.
- 6) հետ կապված պահանջի զիջումը և պարտքի փոխանցումը»:

ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը որևէ կերպ չի սահմանափակել պայմանադիր կողմերի ազատությունը կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրության հարցում, այստեղ նշանակություն չունի՝ ընտրված օտարերկրյա իրավունքը որևէ հանգամանքով կապված է կողմերի պայմանագրային հարաբերության հետ, թե ոչ: Ըստ էության արձանագրում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ կամքի ինքնավարությունն ունի անսահմանափակ բնույթ՝ ի տարբերություն կամքի սահմանափակ ինքնավարության, որն ընդունված է առանձին երկրներում և միջազգային առանձին պայմանագրերում:

ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված խնդիրներից մեկն այն է, թե ինչ հասկանալ «... ընտրված պետության **իրավունքով**» արտահայտության ներքո. ընտրված պետության իրավունքը ներառում է տվյալ պետության միայն ներպետական օրենսդրությունը, թե նաև տվյալ պետության վավերացրած միջազգային պայմանագրերը: Այս խնդրահարույց հարցը բավականին բուռն քննարկումների է արժանացել մասնավորապես Ռուսաստանի Դաշնության իրավագիտական և իրավակիրառ շրջանակների կողմից⁹: ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի Նախագահության կողմից 2013 թ. արբիտրաժային պրակտիկայի ամփոփման շրջանակներում նշվել է, որ երբ կամքի ինքնավարության սկզբունքի ուժով «ընտրվում է կիրառման ենթակա իրավունք», ապա այդ «իրավունքի» ներքո պետք է հասկանալ ցանկացած այլ տերմին, որը կողմերը կարող են օգտագործել՝ օրենսդրություն, օրենք, նորմատիվ ակտ, իրավունքի նորմ¹⁰:

Ընդ որում, այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ երկու հանգամանքներ:

Առաջին՝ «պետության իրավունք»-ի ներքո նախևառաջ պետք է հասկանալ միջազգային պայմանագրերը, որոնք վավերացրել է պետությունը, քանի որ տվյալ պետության իրավունքի բաղկացուցիչ մասն են: Դրանից հետո նոր միայն

⁹ См. у Новикова Т.В. О толковании терминов «право» и «законодательство» в контексте автономии воли сторон частноправового отношения международного характера // Вестник Томского государственного университета. Право, 2020, № 37, էջ 151-168:

¹⁰ См. у Обзор судебной практики по некоторым вопросам, связанным с рассмотрением арбитражными судами дел с участием иностранных лиц: информационное письмо Президиума Высшего Арбитражного Суда РФ от 09.07.2013 № 158. URL: <https://www.garant.ru/products/ipo/prime/doc/70321600/>

«պետության իրավունք»-ի ներքո պետք է հասկանալ ընթացիկ օրենսդրությունն այնքանով, որքանով այն չի հակասում միջազգային պայմանագրերին¹¹:

Երկրորդ, բավականին բարդ դրություն է ստեղծվում, երբ կողմերը Lex voluntaris համաձայնություն կայացնելիս այնտեղ օգտագործում են ոչ թե «իրավունք», այլ «օրենսդրություն» տերմինը: Այս կապակցությամբ ՌԴ առևտրաարդյունաբերական պալատին կից գործող Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանն իր որոշումներից մեկով մեկնաբանել է, որ երբ կողմերն իրենց Lex voluntaris համաձայությամբ կիրառել են «օրենսդրություն» տերմինը, դա պետք է մեկնաբանել, որ կողմերը նկատի են ունեցել ընտրված պետության միայն նորմատիվ ակտերը, որոնց շրջանակից դուրս են պետության վավերացրած միջազգային պայմանագրերը¹²:

ՌԴ առևտրաարդյունաբերական պալատին կից գործող Միջազգային առևտրային արբիտրաժային դատարանն իր մեկ այլ որոշմամբ էլ մեկնաբանել է, որ Lex voluntaris համաձայնություն կայացնելիս կիրառված «օրենսդրություն» տերմինը ներառում ինչպես ներպետական նորմատիվ ակտերը, այնպես էլ միջազգային պայմանագրերը¹³:

Այս հարցի կապակցությամբ միասնական չեն նաև իրավաբան-գիտնականների մտեցումները: Օրինակ՝ հայտնի իրավագետ Ս. Գ. Ռոզենբերգը նշում էր, որ «օրենսդրության» ընտրությունը նշանակում է միայն պետության նորմատիվ աղբյուրների ընտրություն՝ առանց տվյալ պետության միջազգային պայմանագրերի¹⁴:

Ս. Ս. Էրդելևսկին փորձում է ավելի մեղմ դիրքերից հանդես գալ՝ նշելով, որ Lex voluntaris համաձայնությամբ կիրառված տերմինները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ կողմերը գործել են ողջամտորեն և բարեխղճորեն, արտահայտել են իրենց կամքը որոշակի տերմինների և արտահայ-

¹¹ St' u Decision of the ICAC at the RF CCI dated December 12, 2012, on Case No. 53/2012 (document on the materials of the decision; Decision of the ICAC at the Chamber of Commerce and Industry of the Russian Federation dated December 1, 2008, in Case № 39/2008 (document on the materials of the decision)). [Online] Available from: <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ARB&n=97834>; Decision of the ICAC at the Chamber of Commerce and Industry of the Russian Federation of December 14, 2006, in Case № 26/2006 (document on the materials of the decision)). [Online] Available from: <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ARB&n=39418>

¹² St' u Decision of the ICAC at the RF CCI dated December 22, 2008, in Case No. 83/2008 (document on the materials of the decision)). [Online] Available from: <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ARB&n=97838>

¹³ St' u Decision of the ICAC at the RF CCI dated December 30, 2009, in Case No. 74/2009 (document on the materials of the decision)). [Online] Available from: <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=ARB&n=162983>.

¹⁴ St' u **Розенберг М.Г.** К вопросу о толковании условий договора в практике МКАС / **Розенберг М.Г.** // Международный коммерческий арбитраж: современные проблемы и решения: Сборник статей к 80-летию Международного коммерческого арбитражного суда при Торгово-промышленной палате Российской Федерации / под ред. А.А. Костина; МКАС при ТПП РФ. – М.: Статут, 2012, էջ 329:

տությունների միջոցով, և որ դատարանը կամ արբիտրաժը պետք է առավելազույն ջանքեր գործադրի պարզելու կողմերի իրական կամքը, որն արտահայտվել է կիրառված տերմինների և արտահայտությունների միջոցով¹⁵:

Ինչպես նկատում ենք, բարձրացված հարցի կապակցությամբ միասնականություն չկա ինչպես իրավագետների, այնպես էլ իրավակիրառների շրջանում:

Մեր գնահատմամբ (որը չենք ցանկանում ներկայացել որպես անատարկելի)՝ եթե կողմերն իրենց *Lex voluntaris* համաձայնությամբ կիրառեն «օրենսդրություն» տերմինը, ապա դրա ներքո պետք է հասկանալ ոչ միայն պետության նորմատիվ աղբյուրները, այլև պետության միջազգային պայմանագրերը: «Օրենսդրություն» տերմինի ներքո պետք է հասկանալ միայն պետության նորմատիվ աղբյուրները, եթե կողմերն այդ մասին ուղղակիորեն նշել են *Lex voluntaris* համաձայնությամբ՝ դրանով իսկ բացառելով իրենց հարաբերությունների նկատմամբ միջազգային պայմանագրերի կիրառումը:

2.2. Համաձայն ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 2-րդ կետի. «Պայմանագրի կողմերը կիրառվելիք իրավունքը կարող են ընտրել ինչպես ամբողջ պայմանագրի, այնպես էլ դրա առանձին մասերի համար»:

Ինքնավար կամքի դրսևորման այս գործիքը կիրառելիս «ինչպես ամբողջ պայմանագրի, այնպես էլ դրա առանձին մասերի համար» «արտահայտություն»-ը պետք է մեկնաբանել այնպես, որ առանձին մասեր են համարվում ոչ միայն կողմերի կնքած հիմնական պայմանագիրը և դրան սպասարկող լրացուցիչ պայմանագիրը (օրինակ՝ գրավի պայմանագիրը), այլև պայմանադիր կողմերից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները: Թեև այս մոտեցումը ցանկալիներից չէ, սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ արտաքին տնտեսական պայմանադիր կողմերն այնուամենայնիվ կիրառում են սույն տարբերակը, երբ պայմանադիր կողմերից մեկի իրավունքներն ու պարտականությունները ենթարկվում են մի պետության իրավունքի կարգավորման, իսկ մյուս պայմանադիր կողմի իրավունքներն ու պարտականություններն էլ բոլորովին այլ պետության:

2.3. Համաձայն ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Պայմանագրի կողմերը, պայմանագիր կնքելիս և հետագայում, կարող են ցանկացած ժամանակ ընտրել կիրառվելիք իրավունքը: Կողմերը կարող են նաև ցանկացած ժամանակ պայմանավորվել պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքի փոփոխման մասին»: Այս գործիքը կողմերին մանրերելու մեծ հնարավորություններ է տալիս՝ հարմարվելու մասնավոր շրջանառության արագ փոփոխվող պայմաններին: Այստեղ, սակայն, հստակ չէ, թե կողմերն արդյոք կարող են կիրառման ենթակա իրավունքի ընտրություն կատարել նաև այն ժամանակ, երբ նրանց միջև ծագած վեճով նախաձեռնվել է դատական կամ արբիտրաժային վարույթ: Ընտրված օտարերկրյա իրավունքի բովանդակությունը պարզելու

¹⁵ St' u Эрделевский А. Толкование договора // "Российская юстиция", № 4, апрель, 1999:

գործընթացը բավականին ժամանակատար և ծախսատար գործընթաց է՝ համաձայն ՀՀ քաղ.օր. 1255-րդ հոդվածի: Պատկերացնենք մի պահ, երբ դատարանը պարզում է ընտրված օտարերկրյա պետության իրավունքը, և այդ պարագայում կողմերը, օգտվելով ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 3-րդ կետով ընձեռված հնարավորությունից, ընտրում են կիրառման ենթակա օտարերկրյա նոր իրավունք և շարունակաբար կրկին փոխում են այն: Նման իրավիճակները հասկանալի պատճառներով ցանկալի չեն, որոնք, սակայն, կարող են ստեղծվել օրենսդրական ներկա կարգավորման պայմաններում:

Ցանկալի է օրենսդրորեն ամրագրել, որ կողմերը փոխադարձ համաձայնությամբ չեն կարող օտարերկրյա նոր իրավունք ընտրել, երբ նրանք իրենց միջև ծագած վեճով դիմել են դատարան կամ արբիտրաժ, և գործն ընդունվել է վարույթ:

2.4. Համաձայն ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Պայմանագիրը կնքելուց հետո ընտրված կիրառվելիք իրավունքը հետադարձ ուժ ունի և վավեր է այն կնքելու պահից»:

2.5. Համաձայն ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «Կիրառվելիք իրավունքի ընտրության վերաբերյալ կողմերի համաձայնությունը պետք է հստակ արտահայտվի կամ ուղղակի բխի պայմանագրի պայմաններից»: Կողմերի համաձայնությունն ընտրված օտարերկրյա իրավունքի կապակցությամբ հստակ է, երբ դա արտահայտվում է բառերի և արտահայտությունների տեսքով, որոնք նշվում են գրավոր պայմանագրում:

Կողմերի համաձայնությունը կարող է չարտահայտվել բառերով ու արտահայտություններով, սակայն պետք է ուղղակի բխի պայմանագրի պայմաններից, իսկ թե կոնկրետ իրադրության պայմաններում այդ «բխելն» ուղղակի է, թե անուղղակի է, դառնում է մեկնաբանման հարց: Երբ կողմերը պայմանագիր են կազմում որևէ պետության պաշտոնական լեզվով, տեքստը շարադրում են տվյալ պետության լեզվամտածողությամբ, ընդամին կողմերը նախկինում միշտ կիրառել են տվյալ պետության իրավունքը. արդյոք այս հանգամանքներն ուղղակիորեն են վկայում, որ կողմերը համաձայն են կիրառել հենց այդ պետության իրավունքը, թե այդ հանգամանքներն ընդամենը միայն անուղղակիորեն են վկայում կողմերի հնարավոր համաձայնության մասին:

Մեր գնահատմամբ՝ այդ «ուղղակի» բառն այստեղ ընդամենը միայն ավելորդ հարցեր ու մտահոգություններ է առաջացնում, քան թե հարցեր է լուծում: Դատարանը կամ արբիտրաժը համանման դեպքերում, մինչույն է, կանգնելու է հանգամանքները գնահատելու և մեկնաբանելու խնդրի առջև, և «ուղղակի» բառն օրենսդրությունն անհարկի ծանրաբեռնելուց բացի՝ դատարանին կամ արբիտրաժին կողմնորոշիչ օգնություն բերել չի կարող:

Ահա ինքնավար կամքի սկզբունքի իրացման այն ողջ գործիքակազմը, որը ՀՀ քաղաքացական օրենսգրքի ընդունման պահին լավագույնն էր նաև օտարերկրյա և միջազգային փորձի շրջանակներում:

Պետք է ասել, որ ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի ընդունման պահին կամքի ինքնավարության սկզբունքի իրացման գործիքակազմը լավագույնն էր, սակայն անցել է քառորդ դար, և այդ գործիքակազմի կիրառման պրակտիկայում, ինչպես նաև իրավունքի դոկտրինայում ձևավորվել և առաջ են քաշվել կամքի ինքնավարության սկզբունքի իրացման նոր գործիքներ, որոնք դեռևս արտացոլում չունեն մեր ներպետական օրենսդրությամբ: Այդ գործիքներն իրավակիրառ պրակտիկային է ներկայացվել 2015 թվականին Հաագայում ընդունված՝ **Միջազգային առևտրային պայմանագրերում իրավունքի ընտրության սկզբունքներում (այսուհետ՝ Սկզբունքներ)**: Սկզբունքները միջազգային պայմանագիր չեն, որի կիրառման համար անհրաժեշտ կլինե՞ր պետության անդամակցություն: Սկզբունքներն անդրազգային իրավունքի աղբյուր են, որի կիրառման համար բավական է, որ ընդունվել է միջազգային հեղինակավոր կառույցի (տվյալ պարագայում՝ Միջազգային մասնավոր իրավունքի ունիֆիկացիայի Հաագայի կոնֆերանսի) կողմից և ունի բարձր արդյունավետություն: Սկզբունքների նախաբանում նշվում է, որ դրանք կարող են հիմք հանդիսանալ ազգային և միջազգային համապատասխան իրավական աղբյուրները կատարելագործելուն և միևնույն ժամանակ՝ միջազգային մասնավոր իրավունքի նորմերը մեկնաբանելու համար: Սկզբունքները կարող են կիրառել նաև դատարանները և արբիտրաժային դատարանները: Սկզբունքների նախաբանում ամրագրված այս դրույթները վկայում են, որ նույնիսկ այն պարագայում, երբ այնտեղ ամրագրված նոր կարգավորումները դեռևս ազգային օրենքներով արտացոլված չեն, այդ դրույթներն արդեն իսկ կարող են կիրառվել ազգային դատարանների և արբիտրաժային դատարանների կողմից, քանի որ դրանք նաև ազգային իրավադրույթները մեկնաբանելու միջոցներ են: Սակայն իրերի նման դրության պայմաններում ամենևին չպետք է կարծել, թե ազգային օրենսդրությունն այլևս փոփոխությունների կարիք չունի: Ընդհանրապես՝ հենց Սկզբունքներում է նշվում, որ վերջինիս դրույթները կարող են ազգային օրենքները կատարելագործելու համար միջոց դառնալ:

Վերոնշյալով հանդերձ՝ կցանկանայինք վեր հանել Սկզբունքների այն նորությունները, որոնք դեռևս արտացոլում չունեն ՀՀ օրենսդրությամբ:

Սկզբունքների 2-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է. «**Չի պահանջվում որևէ կապ ընտրված իրավունքի և կողմերի կամ նրանց կնքած գործարքի միջև**»: Ազգային իրավակարգավորումները վերլուծելիս մենք արդեն իսկ նշել ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ևս որևէ սահմանափակում չկա, և կողմերը կարող են ընտրել ցանկացած պետության իրավունք, որը կարող է կապված չլինել կողմերի կամ նրանց կնքած պայմանագրի հետ: Մեր այս ենթադրությունը հենված էր ազգային իրավադրույթների մեկնաբանման վրա, մինչդեռ Սկզբունքներում դա նշվում է ուղղակիորեն, առանց այլևայլությունների: Կասկածից վեր է, որ ազգային օրենքը ևս պետք է գնա այն ճանապարհով, որ իրավակարգավորումը

պետք է լինի պարզ և հստակ, չպետք է հարաբերության իրավակարգավորումը թողնի դատարանի կամ արբիտրաժի մեկնաբանությանը, որքան էլ որ այդ մեկնաբանությունն ակնհայտորեն բխի իրավադրույթից:

Սկզբունքների 4-րդ հոդվածը սահմանում է, որ «*կիրառման ենթակա իրավունքի ընտրությունը և դրա հետագա փոփոխությունները պետք է ուղղակիորեն արտահայտված լինեն կամ հստակ բխեն պայմանագրի դրույթներից կամ հանգամանքներից*»: Հիշենք, որ համանման ձևակերպում ունենալով 22 քաղաքացիական օրենսգրքի 1284-րդ հոդվածի 5-րդ կետը՝ միայն մեկ տարբերությամբ, որ 22 քաղաքացիական օրենսգրքը չէր նախատեսում, որ կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրությունը կարող էր բխել նաև «հանգամանքներից», ինչը նախատեսում է Սկզբունքների 4-րդ հոդվածը: Սա շատ կարևոր հստակեցում է, քանի որ պայմանագրի պայմանները կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրության մասին վկայող դրույթներ կարող են չպարունակել, սակայն կողմերը կարող էին պայմանագրային բանակցությունները վարել և պայմանագիրը կնքել այնպիսի հանգամանքներում, որոնք ակնհայտորեն կարող էին վկայել, թե կողմերն իրենց հարաբերությունները որ պետության իրավունքին կցանկանային ենթարկել: 22 քաղ. օր. 1284-րդ հոդվածի 5-րդ կետը կարելի է մեկնաբանել և ասել, որ հանգամանքները ևս դրանցով ներառվում են, սակայն միևնույն ժամանակ լիովին տեղին է նաև ճիշտ հակառակ տեսակետը, որ հանգամանքներն այստեղ հաշվի առնվել չեն կարող: Դատարանը և արբիտրաժը որ տարբերակն էլ ընտրեն, կողմերից մեկը, ով հետագայում գործի ելքով պայմանավորված՝ կդառնա պարտված կողմ, մշտապես կգտնվի այն ընկալման ազդեցության ներքո, որ դատարանը կամ արբիտրաժը սուբյեկտիվ մեկնաբանությամբ կանխորոշեցին գործի ելքը:

Մեր գնահատմամբ՝ 22 քաղ.օր. 1284-րդ հոդվածի 5-րդ կետը պետք է լրացվի և նշվի, որ կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրությունը պետք է բխի նաև հանգամանքներից, ինչպես որ նախատեսվում է Սկզբունքների 4-րդ հոդվածում:

Սկզբունքների 4-րդ հոդվածում շատ կարևոր հստակեցում է արվում «հանգամանքի» մասով. նշվում է մեկ հանգամանք, որի առկայության պարագայում չպետք է համարվի, որ դրանով կարող է որոշվել կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրությունը: Այսպես, Սկզբունքների 4-րդ հոդվածում նշվում է. «*Երբ կողմերն իրենց միջև ծագած վեճով որոշել են վեճի լուծումը վերապահել այս կամ այն պետության դատարանին կամ արբիտրաժային դատարանին, ապա դատարանի կամ արբիտրաժի ընտրությունն ինքնին չի կարող վկայել այն մասին, որ կողմերն ինքնավար կամքով ընտրել են նաև այդ պետության իրավունքը*»: Նման խիստ որոշակի նորմի անհրաժեշտություն զգացվում է նաև ազգային օրենսդրությամբ, որի բացակայության պայմաններում դատարանը կամ արբիտրաժային դատարանը կրկին կարող է կանգնել

խիստ հայեցողական մեկնաբանության առջև: Այդ պարագայում կողմերի համար ևս վաղօրոք տեսանելի չի լինի իրավունքի ընտրության գործընթացը, առաջ կգա իրավունքի որոշակիության դեֆիցիտ, դատարանի կամ արբիտրաժի մեկնաբանությունը միշտ կընկալվի սուբյեկտիվի տիրույթում:

Սկզբունքների 5-րդ հոդվածով սահմանվում է. *«Եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել, ապա որևէ պահանջ չի կարող առաջադրվել կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնությանը»:* Այսինքն, եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել, ապա իրավունքի ընտրության վերաբերյալ կողմերի համաձայնությունը կարող է կնքվել և՛ գրավոր, և՛ բանավոր. երկու պարագայում էլ համաձայնությունը վավեր կհամարվի և կարող է ապացուցվել ցանկացած ապացույցի վկայակոչմամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բաց է մնում այն հարցի կարգավորումը, թե կողմերն օտարերկրյա իրավունքի ընտրության վերաբերյալ իրենց ինքնավար կամքն ինչպես պետք է արտահայտեն՝ գրավոր, թե բանավոր: ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածի 5-րդ կետը չի բացահայտում այս հարցի պատասխանը:

Կարող ենք մեկնաբանել, որ օտարերկրյա իրավունքի կիրառման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է միջազգային մասնավոր հարաբերության շրջանակում, որի վրա տարածվում է ՀՀ քաղ.օր. 1281-րդ հոդվածի իրավակարգավորումը. *«Գործարքի ձևը որոշվում է այն պետության իրավունքով, որտեղ այն կնքվել է: Սակայն արտասահմանում կնքված գործարքի ձևը չպահպանելը հիմք չէ այն անվավեր ճանաչելու համար, եթե պահպանվել են Հայաստանի Հանրապետության իրավունքի պահանջները»:*

2. *Արտաքին տնտեսական գործարքը, որի մասնակիցներից թեկուզև մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ իրավաբանական անձ է, անկախ գործարքը կնքելու վայրից, կնքվում է գրավոր:*

3. *Անշարժ գույքի նկատմամբ գործարքի ձևը որոշվում է այն պետության իրավունքով, որտեղ գտնվում է այդ գույքը»:*

Վերոնշյալով հանդերձ՝ կարծում ենք, որ 1285-րդ հոդվածում պետք է հստակ վերաբերմունք արտահայտվեր *Lex voluntaris* համաձայնության ձևի կապակցությամբ:

Սկզբունքների 6-րդ հոդվածում ամրագրվել է խիստ ուշագրավ իրավադրույթ, որը վերաբերում է օտարերկրյա իրավունքի ընտրությանն այն դեպքերում, երբ կողմերն առևտրային պայմանագրեր կնքում են իրենց կողմից վաղօրոք մշակված ստանդարտներով տիպային պայմանագրերի փոխանակմամբ: Սա շատ տարածված պրակտիկա է, որի կիրառման պարագայում առաջ են գալիս *Lex voluntaris*-ի ընտրության լուրջ դժվարություններ: Քիչ չեն դեպքերը, երբ կողմերն ստանդարտ պայմաններով պայմանագրի նախագծեր կազմելիս դրանցում ընտրում են տարբեր պետությունների իրավունք: Սկզբունքների 6-րդ հոդվածով սահմանվում է, որ երբ կողմերն այդ տիպային

պայմանագրերի նախագծերը փոխանակում են ու հետո պայմանագիր են կնքում նախագծերից որևէ մեկով՝ նշված ստանդարտների գերակշռությամբ, ապա համարվում է, որ կողմերն ընտրել են այն պետության իրավունքը, որը նշված է եղել այն նախագծով, որի ստանդարտ պայմանների գերակշռությամբ էլ կնքվել է պայմանագիրը: Իսկ եթե պայմանագիրը կնքվել է առանց այդ նախագծերից որևէ մեկով նախատեսված ստանդարտների գերակշռումով, ապա համարվում է, որ կողմերի միջև չկա համաձայնություն կիրառման ենթակա օտարերկրյա իրավունքի ընտրության վերաբերյալ:

Սկզբունքների 6-րդ հոդվածով սահմանված վերոնշյալ իրավակարգավորումը համարվում է միջազգային առևտրային հարաբերությունների կոլիզիոն կարգավորման լավագույն գործիք, որն անտարակույս պետք է ամրագրում ստանա նաև ազգային օրենսդրությամբ՝ ի հավաստումն միջազգային գործարար շրջանառությանն արձագանքելու մեր պատրաստակամության:

3. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ՝ կամքի ինքնավարության սկզբունքը կիրառվում է ոչ միայն պայմանագրային պարտավորությունների, այլև արտապայմանագրային երկու պարտավորությունների նկատմամբ:

ՀՀ քաղ.օր. 1289-րդ հոդվածը սահմանում է. «Վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ տեղի է ունեցել վնասը հատուցելու պահանջի համար հիմք ծառայած գործողությունը կամ հանգամանքը, **եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ** (ընդգծ. մերն է)»:

ՀՀ քաղ.օր. 1290-րդ հոդվածը սահմանում է. «Մեծիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ տեղի է ունեցել **անհիմն հարստացումը, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ** (ընդգծ. մերն է)»:

Թեև վերոնշյալ երկու հոդվածներում կամքի ինքնավարության սկզբունքը ձևակերպված է ոչ այնպես, ինչպես ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածում է, սակայն աներկբա է, որ ՀՀ քաղ.օր. 1289-րդ և 1290-րդ հոդվածներում առկա ձևակերպումները նույնպես կամքի ինքնավարության սկզբունքի մասին են: Այս մասին շեշտադրում ենք, որպեսզի կանխենք հնարավոր տարակարծությունները կամ թյուրընկալումները:

Ինչպես նկատում ենք, ՀՀ քաղ.օր. 1289-րդ և 1290-րդ հոդվածներում կամքի ինքնավարության սկզբունքը ձևակերպված է այնպես, որից երևում է, որ կողմերն արտապայմանագրային պարտավորությունների պարագայում կարող են միայն փոխադարձ համաձայնությամբ ընտրել կիրառման ենթակա իրավունքը. կողմերին դրանից ավելի հնարավորություն չի ընձեռվում: Խոսքն այն հնարավորությունների մասին է, որոնք կողմերն ունենին պայմանագրային հարաբերությունների դեպքում կամքի ինքնավարության սկզբունք կիրառելիս: Մասնավորապես՝ պարզ չէ.

- արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառման ենթակա իրավունք ընտրելիս կողմերը կարող են արդյոք արտապայմանագրային պարտավորությունների ընթացքում փոփոխել *Lex voluntaris*-ը,

- արտապայմանագրային պարտավորությունների պարագայում *Lex voluntaris*-ը գործում է միայն ո՞րչ պարտավորության նկատմամբ, թե՞ կարող կիրառվել նաև պարտավորության առանձին դրսևորումների նկատմամբ:

Լիարժեքորեն պարզ չէ՝ արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ *Lex voluntaris* կիրառելիս, երբ նման մանրամասներ չեն նախատեսվում, արդյոք կարելի է օրենքի անալոգիա կիրառել և ՀՀ քաղ.օր. 1284-րդ հոդվածով նախատեսված *Lex voluntaris*-ի կիրառման գործիքակազմը ևս կիրառել արտապայմանագրային պարտավորություններում *Lex voluntaris*-ի նկատմամբ: Սա հնարավոր տարբերակներից մեկն է: Սակայն նույնքան հնարավոր տարբերակ է նաև այն, որ եթե օրենսդիրը չի նախատեսել այդ գործիքակազմի կիրառումն արտապայմանագրային պարտավորությունների *Lex voluntaris*-ի նկատմամբ, գուցե նկատի է ունեցել, որ արտապայմանագրային պարտավորություններում *Lex voluntaris*-ը համարվում է իրավական հատուկ դեպք՝ իրեն բնորոշ սահմանափակ նկարագրով, որի պարագայում օրենքի անալոգիան դառնում է ոչ կիրառելի:

Վերոնշյալ երկու տարբերակներն էլ նույնքան գոյության իրավունք ունեն և նույնքան տրամաբանական են, սակայն պետք է նկատի ունենալ, որ նրանց երկուսի գոյության պարագայում իրավակիրառ պրակտիկայում կարող են տարակարծություններ լինել, կարող է հակասական պրակտիկա ձևավորվել՝ կախված այն բանից, թե իրավակիրառողը որ տարբերակն առավել համոզիչ ու ողջամիտ կհամարի:

Մենք չենք ցանկանում շարունակել քննարկել, թե դոկտրինալ տեսանկյունից որ տարբերակն է առավել ողջամիտ և ընդունելի: Դոկտրինալ տեսանկյունից առավել ողջամիտ է «երրորդ տարբերակը», այն, որ օրենսդիրն արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ չպետք է նախատեսեր *Lex voluntaris* սկզբունքի կիրառում: Այդ պարագայում չէր լինի նաև այն «գորոյան հանգույցը», որը քանդելու վրա մենք ապարդյուն ջանքեր ենք գործադրում:

Արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ *Lex voluntaris* կիրառելու հարցում ընդունելի չէ օրենսդրի մոտեցումը, քանի որ միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինում ընդունված է, որ կիրառման ենթակա իրավունքի հարցում կողմերին ընտրության հնարավորություն է տրվում այն հարաբերություններում, որոնք ևս ծագում ենք կողմերի ազատ կամահայտնության հիման վրա (պայմանագրային հարաբերություններ)¹⁶: Մինչդեռ ար-

¹⁶ Տե՛ս **Symeonides S.** Party Autonomy in Rome 1 and 2 from a Comparative Perspective//Convergence and Divergence in Private International Law - Liber Amicorum Kurt Siehr; ed. by K.Boele-Woelki, T.Einhorn, D.Girsberger, S.Symeonides. 2010, էջ 514:

տապայմանագրային պարտավորությունները ծագում են կողմերի կամահայտնությունից դուրս գտնվող բոլորովին այլ հիմքերով՝ վնաս պատճառելուց, անհիմն հարստանալուց: Բացի այդ, օրինակ՝ դելիկտային պարտավորություններում տուժողը կարող է տարբեր պատճառներով ստիպված լինել համաձայնվել վնաս պատճառողի հետ կիրառման ենթակա որևէ իրավունք ընտրելու հարցում, որը, սակայն, կարող է չբխել տուժողի շահերից. արդյունքում կստացվի, որ տուժողը, ով արդեն իսկ վնաս էր կրել մինչ այդ, հիմա էլ «երկրորդ վնասն» է կրում իր համար ոչ ցանկալի իրավակարգ ընտրելու պարագայում:

Արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ *Lex voluntaris* սկզբունքի կիրառման անթույլատրելիության մասին նշում է նաև ռուս իրավագետ Վ.Լ.Տոլստիխը. «Արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ կամքի ինքնավարության սկզբունքի կիրառումն անթույլատրելի է, քանի որ այդ պարտավորությունների պարագայում հարաբերություններն արդեն ծագել են, գործողություններն արդեն կատարվել են, և դրանից հետո կողմերին տալ կիրառման ենթակա իրավունք ընտրելու հնարավորություն, նշանակում է նրանց դատավարական գործառույթ վերապահել՝ ընտրելու իրենց հարաբերություններին առավել մոտ կանգնած իրավակարգ: Կամքի ինքնավարության սկզբունքի ուժով կիրառման ենթակա իրավունք կարելի է ընտրել միայն այն ժամանակ, երբ հարաբերությունները դեռ չեն սկսվել»¹⁷:

Միջազգային մասնավոր իրավունքի գիտության մեջ ընդունված է, որ դելիկտային պարտավորություններում կարող է տրվել կիրառման ենթակա իրավունքի ընտրության հնարավորություն, բայց դա տրվում է ոչ թե կողմերին՝ տուժողին և վնաս պատճառողին, այլ միայն տուժողին, ով պետք է ընտրի իր վնասված իրավունքները վերականգնելու համար առավել արդյունավետ իրավակարգ: Իսկ դա արդեն *Lex voluntaris* չէ:

Եզրակացություն

Ամփոփելով վերևում ասվածը՝ պետք է արձանագրել, որ թեև *Lex voluntaris* սկզբունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախորդ օրենսդրության համեմատ նշանակալի զարգացում է ունեցել, սակայն վերջին երկու տասնամյակների իրավագաղափարների լույսի ներքո ունի հիմնովին վերանայման անհրաժեշտություն, որի շնորհիվ կապահովվեն զարգացած օրենսդրություն, կայուն և անհակասական իրավակիրառ պրակտիկա:

АРМЕН АЙКЯНЦ – Коллизионный принцип *lex voluntaris* в гражданском законодательстве Республики Армения. – Статья 3 Гражданского кодекса Республики Армения закрепляет принцип автономии воли. В научной дискуссии отечественного права, а также на практике до сих пор существуют разногласия и зачастую неполные представления о сущности и сфере применения

¹⁷ Толстых В.Л., նշվ. աշխ., էջ 526:

данного принципа, а также о том, насколько он совместим с принципом свободы договора. Вопрос о том, в какой мере предусмотренные статьей 1284 инструменты используются для полной реализации принципа автономии воли, также остается открытым.

В юридической науке принцип автономии воли изначально формировался как принцип, направленный на обслуживание договорных отношений. Однако в правовых системах различных стран, включая Республику Армения, он также применяется к внедоговорным отношениям. При этом еще не окончательно определено, основывается ли применение принципа автономии воли к договорным отношениям на основе одного и того же набора инструментов, или же в зависимости от сущности целевых отношений должны использоваться различные инструменты. Можно продолжать поиск ответов на эти вопросы в юридической практике, однако опыт показывает, что даже в подходящих случаях юридическая практика по-прежнему обращается к арсеналу юридической науки для получения необходимых ответов.

Нет сомнений в том, что наука является знаменосцем научно-практического сотрудничества, и она должна предоставить практике ключи к решению проблем.


Ключевые слова: *принцип, свобода договора, автономия воли, иностранное право, коллизонная норма, содержание договора, форма договора, договорные отношения, внедоговорные отношения*

ARMEN HAYKYANTS – Conflict Principle lex voluntaris in Civil Legislation Republic of Armenia. – Article 3 of the Civil Code of the Republic of Armenia enshrines the principle of autonomy of the will. However, in both national legal scholarship and practice, there exist contentious and often incomplete understandings regarding the essence and application of this principle. Questions persist regarding the compatibility of the autonomy of the will with the freedom of contract, another principle established by Article 3 of the Civil Code of the Republic of Armenia. Furthermore, doubts arise regarding whether Article 1284 of the Civil Code of the Republic of Armenia is adequate to fully realize the principle of autonomy of the will by providing measures for its comprehensive application.

Initially conceived as a principle serving contractual relations, the autonomy of the will has extended to extra-contractual realms in various legal systems, including the Republic of Armenia. Yet, it remains unclear whether the same set of legal tools applies to both contractual and extra-contractual contexts, or if different tools are necessary depending on the nature of the relationship. While legal practice may offer insights, expertise often turns to legal scholarship for solutions. It is evident that scientific inquiry plays a pivotal role in the symbiotic relationship between theory and practice, offering guidance in resolving such issues.

Key words: *principle, freedom of contract, autonomy of will, foreign law, conflict of laws rule, content of the contract, form of the contract, contractual relations, non-contractual relations*

ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳԵՐՖՈՐՄԱԼԻԶՈՐ ՀՀ-ՈՒՄ. ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

ԱՐՄԵՆ ԹԱՎԱԴՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ անշարժ գույքի վերաբերյալ կնքվող բոլոր գործարքները ենթակա են նոտարական վավերացման, իսկ այդպիսի գործարքներից ծագող բոլոր իրավունքները՝ պետական գրանցման: Նշված ձևականությունները չպահպանելու դեպքում օրենսդրությունը նախատեսում է մեկ հետևանք՝ առոչնչություն:

Այսպիսի կարգավորումն անհարկի սահմանափակում է անշարժ գույքի շրջանառությունը՝ փաստացի արգելելով այնպիսի գործարքների կնքումը, որտեղ կողմերը պարտավորությունների ծագման համար ավելի վաղ ժամկետ կնախատեսեն, քան իրային իրավունքի փոխանցման համար: Բացի դրանից, նման կարգավորումն իրավունքների չարաշահման բավականին լայն հնարավորություններ է տալիս:

Արտասահմանյան օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ եվրոպական և ԵՄ-ում երկրներում անշարժ գույքի վերաբերող գործարքների համար նախատեսված է ավելի ազատականացված մոտեցում: Որպես կանոն՝ անշարժ գույքի վերաբերյալ ոչ բոլոր գործարքներ են նոտարական վավերացվում:

Նախատեսելով որևէ գործարքի համար հասարակ գրավոր ձև՝ օրենսդիրն արդեն իսկ կարող է ստանալ համապատասխան դրական արդյունք՝ անհարկի չսահմանափակելով քաղաքացիական շրջանառությունը: Նոտարական վավերացման պահանջն արդեն սահմանափակում է այդ շրջանառությունը՝ շատ հաճախ չտալով որևէ դրական արդյունք:

Կիրառելով իրավահամեմատական և իրավունքի տնտեսական վերլուծության մեթոդները՝ հեղինակն առաջարկում է նախատեսել իրավաբանական անձանց միջև կնքվող անշարժ գույքի օտարման գործարքների համար հասարակ գրավոր ձև: Նոտարական ձև նախատեսել քաղաքացիների մասնակցությամբ օտարման գործարքների համար: Անշարժ գույքի օգտագործման իրավունքի փոխանցման գործարքների համար ընդհանրապես նախատեսել հասարակ գրավոր ձև՝ անկախ կողմերի ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսանալու հանգամանքից:

* **Արմեն Թավադյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ

Арсен Тавадян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ

Arsen Tavadyan – Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ arsentavadyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-5074-0408>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 25.12.2023

Գրախոսվել է՝ 29.03.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

Առկա կարգավորումների շրջանակներում անշարժ գույքի որոշ գործարքների համար նախատեսելով հասարակ գրավոր ձև՝ կարող ենք ստանալ նույն դրական արդյունքը, ինչ նոտարական վավերացման պարագայում՝ առանց այդպիսի վավերացման հետ կապված թերությունների:

Բանալի բառեր – գործարք, պայմանագիր, պետական գրանցում, նոտարական վավերացում, գործարքի ձև, անշարժ գույք, իրային իրավունք, պարտավորական իրավունք

1. Ներածություն

2023 թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-340-Ն օրենքը¹: Այս օրենքը սահմանում է պատասխանատվություն այն դեպքում, երբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում: Դրա հետ մեկտեղ՝ պատասխանատվությունը չի կիրառվում այն դեպքում, երբ հարկ վճարողը անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկում է եկամտային հարկը²: Այս օրենքն ուժի մեջ է մտել 2023 թ. դեկտեմբերի 1-ից:

Սույն հոդվածի քննարկման տեսակետից կարևոր է ՀՀ հարկային օրենսգրքում³ նշված օրենքի փոփոխությամբ ներդրված կարգավորումը (407-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի նոր պարբերությունը). «Առանց անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման՝ վարձակալությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկելը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ հարկային մարմին հայտարարություն ներկայացնելը չի կարող հանդիսանալ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ որևէ իրավունքի ճանաչման կամ վարձակալության գործարքը վավեր համարելու (ճանաչելու) հիմք»:

Այս կարգավորումը բավականին տարօրինակ է, եթե այն դիտարկենք գործարքին ներկայացվող ձևական պահանջների և ընդհանուր գործարքի փիլիսոփայության համատեքստում: Մտացվում է, որ պետությունը մի ձեռքով քաղաքացիաիրավական հարաբերություններում գործարքը ճանաչում է առօրինակ (ipso jure), մյուս ձեռքով՝ այդ նույն առօրինակ գործարքը դիտարկում է հարկային պարտավորությունների առաջացման հիմք:

¹ Տե՛ս «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-340-Ն ՀՀ օրենք, ընդունված 25.10.2023 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք, 2023.11.13-2023.11.26:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման Հիմնավորում // <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14406&Reading=0> (վերջին մուտք՝ 09.12.2023 թ.):

³ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգրք, թիվ ՀՕ-165-Ն, ընդունված 04.10.2016 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2016.11.04/79(1259), հոդ. 1038:

Չուտ իրավական համակարգի անհակասականությունն ապահովելու համար ճիշտ կլինեն նախ ճանաչել, որ նոտարական չվավերացված և իրավունքների պետական գրանցում չստացած վարձակալության պայմանագիրը վավեր գործարք է և առաջացնում է քաղաքացիաիրավական հետևանքներ, ապա նոր դրանից ստացվող վարձավճարը հարկել որպես վարձակալությունից ստացված եկամուտ:

Բայց համակարգային տրամաբանության պահպանումը միակ նպատակը չէ: Սույն հոդվածում կհիմնավորվի, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ նաև Օրենսգիրք)⁴ գործարքի ձևին և պետական գրանցմանը ներկայացվող պահանջները խիստ ֆորմալիզացված են, դրանք արդարացված չեն ո՛չ քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների իրավունքների պաշտպանության, ո՛չ պետական վերահսկողության ապահովման տեսակետից և առանց հավելյալ դրական արդյունքի խոչընդոտում են տնտեսական շրջանառությունը:

2. Գործարքներին ներկայացվող ձևական պահանջները ՀՀ-ում

Օրենսգիրքն անշարժ գույքի բոլոր գործարքների համար (այդ թվում՝ ձեռնարկատերերի մասնակցությամբ գործարքներ, անկախ ժամկետից վարձակալության գործարքներ) պարտադիր է համարում նոտարական ձևը, որի չպահպանման դեպքում հետևանքն առաջնությունն է:

Նույն անխոնջ համառությամբ Օրենսգիրքը պարտադրում է նաև անշարժ գույքի հետ կատարվող բոլոր գործարքներից ծագող իրավունքները գրանցել՝ կրկին սպառնալով առաջնությամբ: Ընդ որում, գրանցման համար նախատեսված է շատ կարճ ժամկետ՝ 30 աշխատանքային օր⁵:

Մա փաստացի բացառում է անշարժ գույքի վերաբերյալ այնպիսի վարձակալության պայմանագրի կնքումը, որով վարձակալը վարձակալության ժամկետը լրանալուց հետո դառնում է գույքի սեփականատեր⁶, կոմիսիայի պայմանագրերի կնքումը⁷, օպցիոնային պայմանագրի, պայմանով գործարքի կնքումը, ինչպես նաև ցանկացած այլ պայմանագրի կնքումը, որոնցով կողմերը կպայմանավորվեն սպազայում ինչ-որ ժամկետ լրանալուց հետո կամ իրադարձության ի հայտ գալուց հետո փոխանցել սեփականության իրավունքը:

30 աշխատանքային օրվա ընթացքում իրավունքը գրանցելու խիստ պա-

⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, թիվ ՀՕ-239, ընդունված 05.05.1998թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

⁵ Տե՛ս «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-295, ընդունված 14.04.1999 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1999.05.06/11(77):

⁶ Ըստ Օրենսգրքի 627-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Օրենքով կամ վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալած գույքը, վարձակալության ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը, անցնում է վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված ամբողջ գումարը վճարելու պայմանով»:

⁷ Ըստ Օրենսգրքի 797-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Կոմիտենտից կոմիսիոներին փոխանցված կամ կոմիտենտի հաշվին կոմիսիոներին ձեռք բերած գույքը կոմիտենտի սեփականությունն է»:

հանջը և դա չկատարելու համար առոչնչության սպառնալիքը փաստացի բացառում են նման հնարավորությունը:

Նշեմ, որ նման խիստ մոտեցումը Օրենսգրքի նորամուծությունն է: Մինչև 1999 թ. Օրենսգրքի ուժի մեջ մտնելը ՀՀ-ում գործում էր ավելի լիբերալ մոտեցում: Այսպես, 1964 թ. քաղաքացիական օրենսգիրքը⁸ նոտարական վավերացման ձև էր նախատեսում միայն գույքի օտարման պայմանագրերի համար, և այն դեպքում, եթե կողմերից թեկուզ մեկը քաղաքացի է: Պայմանագրի (ոչ իրավունքի) գրանցում շրջանային, քաղաքային գործադիր կոմիտեում նախատեսված էր նույն դեպքում:

Վարձակալության պայմանագրի համար նոտարական ձև և գրանցում նախատեսված չէին:

1996 թ. ընդունվեց «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքը⁹: Այն մի փոքր խստացրեց ձևականությունները. վարձակալության պայմանագրի համար նախատեսվեց նոտարական վավերացում, եթե դրա ժամկետը մեկ տարուց ավելի է, և կողմերից մեկը քաղաքացի է: Նշված օրենքը նաև պարտադիր դարձրեց վարձակալության պայմանագրերի գրանցումը:

Հատկանշական է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի¹⁰, բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի¹¹ օտարման համար նոտարական ձև այդպես էլ չսահմանվեց:

1999 թ. մինչև 2012 թ. անշարժ գույքի վերաբերյալ կնքվող գործարքների նկատմամբ կիրառվող ֆորմալ կանոնների ամենախիստ ժամանակահատվածն էր: 23.06.2011 թ. ընդունվեց «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-248-Ն օրենքը¹², որն ուժի մեջ մտավ 01.01.2012 թ.: Այն սահմանեց, որ անշարժ գույքի վերաբերյալ գործարքները կարող են կնքվել անմիջապես կադաստրում առանց նոտարական վավերացման, եթե դրանք կնքվում են ՀՀ կառավարության սահմանած օրինակելի ձևով:

Նշված օրենքի հիմնավորման մեջ նշվում է, որ «նախագծի ընդունմամբ էապես կպարզեցվի անշարժ գույքի գործարքների կնքման ընթացակարգերը, կնվազեցվեն այդ ընթացակարգերի ժամկետներն ու ծախսատարությունը»¹³:

⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 04.06.1964 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳՍ 1964/17:

⁹ Տե՛ս «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-29, ընդունված 27.12.1995 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀԱԺՏ 1996/1-2:

¹⁰ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-252, ընդունված 24.10.2001 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.12.07/38(170), հոդ. 910:

¹¹ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-232, ընդունված 25.09.2001 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166), հոդ. 831:

¹² Տե՛ս «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-248-Ն, ընդունված 23.06.2011 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.07.27/45(848), հոդ. 1103:

¹³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության հիմնավորում <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4937&Reading=0> (վերջին մուտք՝ 09.12.2023 թ.):

19.06.2015 թ. ընդունվեց «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն օրենքը¹⁴, որով ՀՀ իրավական համակարգ ներդրվեց նախնական նշման ինստիտուտը, համաձայն որի՝ պետական գրանցման ենթակա գույքային իրավունքը գրանցելու պահանջն ապահովելու համար գործարքը վավերացնող նոտարի ծանուցման հիման վրա կադաստրի կողմից կատարվում է գույքի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշում:

Նախնական նշման ներդրմամբ, թվում էր, թե պետք է բացառվեր պայմանագրից ծագող իրավունքների՝ 30-օրյա ժամկետում պարտադիր գրանցման պահանջը: Դրանով կարելի էր կողմերին տալ հնարավորություն ստորագրելու/նոտարական վավերացնելու պայմանագիրը, սահմանելու, որ այն ուժի մեջ է մտնում այդ պահից, իսկ սեփականության իրավունքի ծագման պահը թողնել ապագային՝ ըստ պայմանագրով որոշված պայմանների: Վերջիվերջո կադաստրում համապատասխան նշումը կատարվելու էր և գույքի հնարավոր գնորդները տեղեկանալու էին դրա մասին:

Տպավորություն էր ստեղծվում, որ նշված բարեփոխումները շարունակվելու էին և հանգեցնելու էին վերջապես անշարժ գույքի գործարքների ձևակառուցությունների թեթևացմանը: Սակայն գործընթացը շարունակական չեղավ:

Այժմ անշարժ գույքի բոլոր գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, այդ պահանջը չկատարելը հանգեցնում է առոչնչության: Նոտարական ձևի պահանջը նույնպես պարտադիր է, բացառությամբ օրինակելի ձևով պայմանագիրը կադաստրում ձևակերպելու:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը նաև միջազգային առևտրային հարաբերություններում է ձգտում խուսափել գործարքների ձևին ներկայացվող պահանջների ազատականացումից:

Այսպես, վավերացնելով «Ապրանքների միջազգային առքուվաճառքի պայմանագրերի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, ՀՀ-ն կատարել է վերապահում, որով հայտարարել է, որ Կոնվենցիայի 11-րդ և 29-րդ հոդվածների և 2-րդ մասի ցանկացած դրույթ, որը թույլ է տալիս, որ առքուվաճառքի պայմանագիրը, կողմերի համաձայնությամբ դրա փոփոխությունը կամ դադարեցումը կամ օֆերտան, ակցեպտը կամ մտադրության ցանկացած այլ արտահայտություն կատարվի ոչ թե գրավոր, այլ ցանկացած այլ ձևով, կիրառելի չէ, եթե կողմերից մեկն ունի իր առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում¹⁵:

¹⁴ Տե՛ս «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-87-Ն, ընդունված 19.06.2015 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.07.20/45(1134), հոդ. 614:

¹⁵ Տե՛ս «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (կից հայտարարություններով) վավերացնելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշում, թիվ Ն-238-3, ընդունված 08.12.2005 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2006.01.11/2(457), հոդ. 30:

3. Գործարքների ձևին ներկայացվող պահանջները արտասահմանում

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ֆորմալ մոտեցումներն անշարժ գույքի հետ կատարվող գործարքների վերաբերյալ հնարավոր ամենախիստն են: Ընդ որում, դա ակնհայտ է ոչ միայն Արևմտյան Եվրոպայի երկրների, այլև նույնիսկ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների օրենսդրությունների հետ բաղդատելիս:

3.1. Գործարքների ձևին ներկայացվող պահանջները եվրոպական երկրներում

Եվրոպական երկրներում գործարքի ձևին ներկայացվող պահանջները բազմազան են: Երբ խոսքը հողամասի առուվաճառքի մասին է, չկա գերակշիռ ձևական պահանջ: Որոշ երկրներ, օրինակ՝ Իտալիան և Անգլիան, պահանջում են գրավոր ձև, իսկ օրինակ՝ Գերմանիան, Պորտուգալիան և Շվեյցարիան՝ նոտարական: Եվ կան իրավակարգեր, որոնք թույլատրելի են համարում բանավոր գործարքները¹⁶:

Հոլանդիայում նոտարական վավերացումը շատ սահմանափակ դեպքերում է դիտարկվում որպես պայմանագրի ուժի մեջ մտնելու պայման. հիմնականում նոտարական վավերացումը պայմանագրային իրավունքում օգտագործվում է ապացուցողական նպատակներով¹⁷: Այդպիսի սահմանափակ դեպքերից է անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցումը¹⁸: Դա չի վերաբերում օգտագործման իրավունքի փոխանցմանը:

Նմանատիպ մոտեցում է գործում նաև Իսպանիայում, որտեղ նոտարական գործողություններն ունեն ապացուցողական նշանակություն¹⁹:

Իտալիայում անշարժ գույքի գործարքները պետք է կնքվեն գրավոր: Օրենքը չի պահանջում նոտարական վավերացում, սակայն այդպիսի պայմանագիրը կունենա պարտադիր էֆեկտ միայն գործարքը կնքած կողմերի համար: Այնուամենայնիվ, երրորդ անձանց հարաբերություններում գործարքի լրիվ գործողության համար այն պետք է գրանցվի հանրային ռեգիստրում, որի նախապայման է նոտարական վավերացումը²⁰:

Գերմանիայի քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է հողամասի վաճառքի համար նոտարական վավերացման պահանջ, սակայն նախատեսում է բացառություն այն դեպքերում, երբ պարտապանը փոխանցում է գույքը պարտատիրոջը: Այնուամենայնիվ, գործարքը կհամարվի վավեր, եթե

¹⁶ St' u Commentaries on European Contract Laws. Ed. by Nils Jansen, Reinhard Zimmermann. – Oxford: University Press, 2018, էջ 262, <https://doi.org/10.1093/oso/9780198790693.002.0001>, ISBN: 9780198790693:

¹⁷ St' u **Arthur S. Hartkamp**, Contract Law in the Netherlands, Kluwer Law International BV, The Netherlands, 2015, էջ 76, ISBN: 9041161589:

¹⁸ St' u նույն տեղը, էջ 74:

¹⁹ St' u **Antoni Vaquer**, Contract Law in Spain, Kluwer Law International BV, The Netherlands, 2022, էջ 71-72, ISBN: 9789403545103:

²⁰ St' u Pier Giuseppe Monateri, Filippo Andrea Chiaves, Mauro Balestrieri, Contract Law in Italy, Kluwer Law International BV, The Netherlands, 2021, էջ 43, ISBN: 9403527013:

այն կատարվի²¹ նույնիսկ ձևի չպահպանման պարագայում:

Ֆրանսիայում անշարժ գույքի որոշակի տեսակի գործարքների համար նախատեսված է պարտադիր նոտարական վավերացում, օրինակ՝ նվիրատվություն, գրավ, սեփականության իրավունքի փոխանցում, ֆիդուցիայի որոշակի տեսակներ²²:

3.2. Գործարքների ձևին ներկայացվող պահանջները ԵՄՏՄ երկրներում

Ռուսաստանի Դաշնությունում անշարժ գույքի ոչ բոլոր գործարքներն են ենթակա նոտարական վավերացման: Այդպիսի պահանջներ նախատեսված են, օրինակ, խնամակալության հարաբերությունների առկայության դեպքում գույքի օտարման, ընդհանուր բաժնային սեփականության բաժնեմասերի օտարման, գրավի, ռենտայի պայմանագրերի համար²³:

Ռուսաստանում որոշ ժամանակ վիճելի էր մնում անշարժ գույքին վերաբերող բոլոր գործարքների նոտարական վավերացման պարտադիր պահանջի ներդրման հարցը: Սակայն, հաշվի առնելով, որ այդպիսի դեպքերում նոտարական վավերացումն էականորեն կբարդացներ քաղաքացիական շրջանառությունը և կողմերի համար կսահմաներ լրացուցիչ գույքային բեռ, նման առաջարկությունները աջակցություն չստացան²⁴:

Ղազախստանում էլ անշարժ գույքի հետ կատարվող ոչ բոլոր գործարքներն են ենթակա նոտարական վավերացման: Բացառություններից է, օրինակ, ռենտայի պայմանագիրը²⁵:

Բելառուսում նոտարական վավերացման են ենթակա ռենտայի պայմանագրերը, հիփոթեքը, մասնավոր սեփականության տակ գտնվող հողի առուվաճառքը, կառուցապատողի և քաղաքացիների միջև կնքվող պայմանագրերը²⁶:

Ինչպես պարզ է դառնում, ԵՄՏՄ երկրներում նախատեսված չէ անշարժ գույքի բոլոր գործարքների նոտարական վավերացման պահանջ: Այդպիսի

²¹ Sté u European Contract Law and German Law, Edited by Stefan Leible, Matthias Lehmann, Kluwer Law International BV, The Netherlands, 2014, էջ 146, ISBN: 9789041125880:

²² Sté u Executing contracts in France by Practical Law Corporate France and Antoine Tézenas du Montcel, Paul Jourdan-Nayrac, Etienne Chesneau and Abel Colomb at Gide Loyrette Nouel, Thomson Reuters Practical Law, Published: 19 February 2021

chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.gide.com/sites/default/files/executing_contracts_in_france_w-025-04091.pdf (վերջին մուտք՝ 18.12.2023 թ.):

²³ Sté u Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации [Электронное издание. Редакция 1.0] / Отв. ред. А.Г. Карапетов. – М.: М-Логос, 2018, էջ 270-271, ISBN: 978-5-9500177-6-6:

²⁴ Sté u **Татаркина К.П.** Форма сделок в гражданском праве России: моногр. / Томск : Изд-во Томск, гос. ун-та систем упр. и радиоэлектроники, 2012, էջ 129-134, ISBN: 978-5-86889-591-3:

²⁵ Sté u **Климкин С.И.** Гражданское право Республики Казахстан. Общая часть: Учебное пособие. – Алматы: Научно-издательский центр Каспийского общественного университета, 2011, էջ 77, ISBN: 978-601-7067-34-2:

²⁶ Sté u Гражданское право. В 3-х томах. Том 1. Учебник, 2-е издание. Ответственный редактор – доктор юридических наук, профессор В.М. Чигир. Минск, 2007, էջ 349-350:

պահանջ նախատեսվում է սահմանափակ թվով դեպքերում և որպես կանոն ներառում է այն հարաբերությունները, որոնք վերաբերում են քաղաքացիներին, ուղղված են անգործունակ, փոքրահասակ անձանց իրավունքների պաշտպանությանը և այլն: Որպես ընդհանուր կանոն՝ անշարժ գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագրերը կնքվում են հասարակ գրավոր ձևով:

4. Նոտարական վավերացման նպատակը

Ընդհանրապես, գործարքների ձևին ներկայացվող պահանջները կիրառվում են մի շարք նպատակներից ելնելով՝

Ա) գգուշացնել կողմերին, որ իրենք առավել կարևոր գործարք են կնքում,

Բ) գրավոր ձևը փաստում է գործարքի կնքումը որպես ապացույց,

Գ) երբ առկա է նոտարական վավերացման պահանջ, համարվում է, որ դա կապահովի իրավական խորհրդատվության տարրական մակարդակ²⁷:

Հասարակ գրավոր ձևի պահանջը, ի համեմատ բանավորի, ինքնին արդեն ձևական պահանջ է, որը որոշակիորեն կադապարում է քաղաքացիական շրջանառությունը: Բայց դրա հետ մեկտեղ առաջացնում է նաև բազմաթիվ դրական հետևանքներ:

Այսպես, այն հնարավորություն է տալիս հստակ ամրագրել գործարքի կնքման փաստը: Բանավոր գործարքի պարագայում այդ փաստն արձանագրելը երբեմն բարդ է. դժվար է ասել՝ երբ է սովորական բանակցությունը վերածվում պայմանավորվածության:

Գրավոր ձևը հստակեցնում է կողմերի իրավունքները ու պարտականությունները, ինչը բանավոր գործարքի պարագայում բավականին բարդ է: Գրավոր ձևը պաշտպանում է նաև երրորդ անձանց իրավունքները, որոնց կարող է առնչվել գործարքը:

Բացի դրանից, գրավոր ձևի պահանջը հեշտացնում է հարկային վարչարարության իրականացումը, քանի որ հարկերի հաշվարկը բանավոր ապրանքաշրջանառության պարագայում բավականին բարդ է:

Նոտարական ձևը նշված նպատակներին ավելացնում է ևս երկուսը.

- Նոտարը ստուգում է գործարքի համապատասխանությունը օրենքին («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի²⁸ 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

- Նոտարը պաշտպանում է գործարքի կողմերի իրավունքները, քանի որ նա չի վավերացնում գործարքը, եթե կողմը գործունակ չէ, իրավասու չէ, չի հասկանում իր գործողությունների հետևանքները («Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի²⁹ 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետեր):

²⁷ Տե՛ս Sir Basil Markesinis, Hannes Unberath, Angus Johnston, The German Law of Contract A Comparative Treatise, Second Edition, Oxford and Portland, Oregon, 2006, էջ 84, ISBN: 1841134724:

²⁸ Տե՛ս «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, թիվ ՀՕ-274, ընդունված 04.12.2001 թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2002.01.10/2(177), հոդ. 2:

²⁹ Տե՛ս նույն տեղը:

5. Տեսակախրավական վերլուծություն, գործարքային (տրանզակցիոն) ծախսեր

Որոշակի գործարքի համար նոտարական ձև սահմանելիս պետք է համապատասխան կարգավորումը դիտարկել գործարքային (տրանզակցիոն) ծախսերի տեսակետից: Ցանկացած գործարք կնքելիս, բացի այդ գործարքով փոխանցվող արժեքի համար վճարից, կողմերը ստիպված կրում են այլ ծախսեր՝ ժամանակի, պայմանավորվածություն ձեռք բերելու, պետական վճարներ, տուրքեր, փաստաբանի վարձատրություն և այլն:

Այս տեսակետից գործարքներին վերաբերող ցանկացած ձևական պահանջ ավելացնում է գործարքային ծախսերը՝ խոչընդոտելով տնտեսական շրջանառությունը: Սակայն եթե այդ ծախսի ավելացումը չնչին է, իսկ օգուտը, այդ թվում՝ կողմերի, երրորդ անձանց իրավունքների պաշտպանության և օրինականության պահպանության տեսակետից, ավելի մեծ, ձևական պահանջներ կարող են ներդրվել:

Ընդ որում, գործարքների կնքման գործընթացի ձևականացումը հանգեցնում է գործարքային (տրանզակցիոն) ծախսերի ավելացման, բայց միաժամանակ նվազեցնում է վեճի լուծման (լիտիգացիոն) ծախսերը: Հասարակ գրավոր ձևի պահանջը նվազագույն է ավելացնում գործարքային ծախսերը, սակայն լիտիգացիոն ծախսերի նվազեցման էֆեկտը բավականին շոշափելի է³⁰:

Նոտարական վավերացման պահանջն արդեն զգալիորեն է ավելացնում գործարքային ծախսերը, քանի որ նախ համապատասխան վավերացման համար կողմերը պետք է վճարեն պետական տուրք և ծառայության վճար: Բացի դրանից, նոտարական գործողությունը ենթադրում է նաև բավականին լուրջ ժամանակային կորուստ, քանի որ անհրաժեշտ է հերթագրվել նոտարի մոտ, սպասել, որ վերջինս դիտարկի պայմանագիրը և այլն:

Եվ այստեղ պետք է պարզել՝ արդյոք նման լուրջ բեռն արդարացված է: Ինչպես նշվեց, նոտարական վավերացման պահանջը երկու նպատակ ունի՝ օրենքի պահանջներին գործարքի համապատասխանության ստուգումը և կողմերի իրավունքների պաշտպանությունը:

Նախ պետք է նշել, որ անշարժ գույքին վերաբերող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Այն դեպքում, երբ առկա է նման պահանջ, գործարքի համապատասխանությունն օրենքին արդեն իսկ ստուգվում է կադաստրում³¹: Այսինքն՝ օրինականության ստուգման պահանջը կրկնվում է:

Գործարքի կողմերի իրավունքների պաշտպանության տեսակետից պետք

³⁰ Տե՛ս **Карачеров А.Г.** Экономический анализ права. – М.: Статут, 2016, էջ 456-457, ISBN: 978-5-8354-1238-9:

³¹ Հեղինակն առաջարկում է անշարժ գույքի որոշ գործարքների, մասնավորապես՝ կարճաժամկետ վարձակալության դեպքում հանել նաև պարտադիր գրանցման պահանջը: Դրա վերաբերյալ վերլուծությունները կկատարվեն հաջորդ հոդվածում:

է նշել, որ կառուցակարգերն ամեն դեպքում ուղղված են շրջանառության ոչ մասնագիտացված մասնակիցների պաշտպանությանը: Այսպես, էթե պայմանագիր են կնքում երկու ձեռնարկատեր, պետք է ենթադրվի, որ իրենք հասկանում են իրենց գործողությունների հետևանքները:

Այս տեսակետից կարելի է հղում կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ կետին, որը իրավաբանական անձանց կողմից տրված լիազորագրերի համար նախատեսում է հասարակ գրավոր ձև անկախ ապագայում կնքվելիք գործարքին ներկայացվող պահանջներից: Եթե ապագայում կնքվելու է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, ապա քաղաքացու տված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Սակայն իրավաբանական անձի պարագայում լիազորագիրը կարող է լինել նաև հասարակ գրավոր ձևով:

6. Եզրակացություն

Վերոնշյալը հիմք է տալիս պնդելու, որ Հայաստանի Հանրապետությունում նախատեսված են անշարժ գույքին վերաբերող գործարքների համար ամենախիստ կարգավորումները: Բոլոր նմանատիպ գործարքները պետք է վավերացվեն նոտարական կարգով, իսկ դրանցից ծագող իրավունքները գրանցվեն: Դա չանելու հետևանքն ամենախիստն է՝ առոչնչություն:

Այսպիսի մոտեցումը չի համապատասխանում տնտեսության պահանջմունքներին, անհարկի ծանրաբեռնում է քաղաքացիական շրջանառությունը, արգելում է բազմաթիվ գործարքների կնքումը, իրավունքների չարաշահման համար պարարտ հող է ստեղծում: Բացի դրանից, այն չի համապատասխանում նաև միջազգային պրակտիկային. թե՛ եվրոպական, թե՛ ԵԱՏՄ երկրներում անշարժ գույքին վերաբերող գործարքին ներկայացվող պահանջները շատ ավելի ազատականացված են:

Անձանց իրավունքների պաշտպանության, օրինականության ապահովման և տնտեսական շրջանառության ակտիվությունը խթանելու նպատակների միջև հավասարակշռություն ապահովելու համար առաջարկում ենք ընդունել հետևյալ մոտեցումը.

1. Անշարժ գույքի օտարման պայմանագրերի համար նախատեսել պարտադիր գրավոր ձև այն դեպքում, երբ կողմերից առնվազն մեկը քաղաքացի է,

2. Երբ անշարժ գույքի օտարման պայմանագրերի կողմ են հանդիսանում իրավաբանական անձինք, նախատեսել հասարակ գրավոր ձև, որը չպահպանելը կհանգեցնի անվավերության,

3. Անշարժ գույքի օգտագործման հանձնման պայմանագրերի համար (վարձակալություն, անհատույց օգտագործում) նախատեսել հասարակ գրավոր ձև բոլոր սուբյեկտների համար: Այս կարգավորումը կարելի է կիրառել կարճաժամկետ վարձակալությունների դեպքում, որոնց ժամկետը չի գերա-

զանցում, օրինակ, 2-3 տարին: Ընդ որում, այս պարագայում նույնպես նախատեսել հասարակ գրավոր ձևը չպահպանելու համար անվավերություն:

Իհարկե, կարելի է պնդել, որ այսպիսի ազատականացումը կարող է հանգեցնել իրավունքների խախտումների: Սակայն պետք է փորձել կանխատեսել իրավունքների հնարավոր խախտումների քանակը, ինչպես նաև հասկանալ արդյոք նոտարական ձևի պահանջը չեզոքացնում է համապատասխան վտանգները:

Ինչպես նշվեց, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի և բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի օտարման գործարքների համար արդեն 20 տարուց ավելի նախատեսված է հասարակ գրավոր ձև: Ընդ որում, այդպիսի գործարքներով կարող են օտարվել ընկերություններ, որոնց ակտիվները շատ ավելի մեծ են, քան ցանկացած անշարժ գույք:

Այս ավելի քան 20 տարվա ընթացքում դեռ չի եղել օրենսդրական նախաձեռնություն, որը պարտադիր կդարձներ նոտարական վավերացումը: Դրա հետ մեկտեղ՝ առկա չէ դատական պրակտիկա, որը կհիմնավորի, որ տեղի են ունենում զգալի չարաշահումներ, որոնց պատճառը հենց նոտարական վավերացման պահանջի բացակայությունն է:

Սա ցույց է տալիս, որ անշարժ գույքի վերաբերող բոլոր գործարքների նոտարական վավերացման պահանջն անհարկի է, այն ավելորդ ծանրաբեռնում է քաղաքացիական շրջանառությունը, իսկ ազատականացումն արդարացված է քաղաքացիական շրջանառության և անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

АРСЕН ТАВАДЯН – *Сверхформализм регулирования сделок в РА: Нотариальное заверение.* – Гражданский кодекс Республики Армения предусматривает, что все сделки с недвижимостью подлежат нотариальному заверению, а все права, возникающие из таких сделок, подлежат государственной регистрации. В случае несоблюдения указанных формальностей законодательством предусмотрено одно последствие: ничтожность.

Такое регулирование неоправданно ограничивает оборот недвижимости, фактически запрещая заключение таких сделок, в которых стороны предусматривают более раннюю дату возникновения обязательств, чем дату перехода вещных прав. Кроме того, такое регулирование предоставляет достаточно широкие возможности для злоупотребления правами.

Изучение зарубежного законодательства дает основание утверждать, что для сделок с недвижимостью в странах Европы и ЕАЭС предназначен более либеральный подход. Как правило, не все сделки с недвижимостью оформляются нотариально.

Предусмотрев простую письменную форму для всякой сделки, законодатель уже может получить соответствующий положительный результат, не ограничивая излишне гражданский оборот. Требование нотариального заверения уже ограничивает этот оборот, зачастую не принося никаких положительных результатов.

Применяя методы сравнительно-правового и экономического анализа права, автор предлагает предусмотреть простую письменную форму сделок по отчуждению недвижимого имущества, заключаемых между юридическими лицами. Для сделок с участием граждан предусмотреть нотариальную форму. Для сделок по передаче прав пользования недвижимым

имуществом предусмотреть простую письменную форму вообще, независимо от того, являются ли стороны физическими или юридическими лицами.

Предусмотрев простую письменную форму для совершения определенных сделок с недвижимостью, в рамках существующих норм мы можем получить тот же положительный результат, что и в случае нотариального удостоверения, без недостатков, связанных с таким удостоверением.

Ключевые слова: сделка; договор; государственная регистрация; нотариальное заверение; форма сделки; недвижимое имущество; вещное право; обязательственное право

ARSEN TAVADYAN – *Super Formalism in Regulating Transactions in the Republic of Armenia: Notarization.* – The Civil Code of the Republic of Armenia provides that all real estate transactions are subject to notarization, and all rights arising from such transactions are subject to state registration. In case of failure to comply with these formalities, the law provides for one consequence: nullity.

Such regulation unjustifiably limits the turnover of real estate, effectively prohibiting the conclusion of such transactions in which the parties provide for an earlier date of occurrence of obligations than the date of transfer of real rights. In addition, such regulation provides quite wide opportunities for abuse of rights.

A study of foreign legislation gives grounds to assert that a more liberal approach is intended for real estate transactions in European countries and the EAEU. As a rule, not all real estate transactions are formalized by a notary.


By providing a simple written form for every transaction, the legislator can already obtain an appropriate positive result without unnecessarily limiting civil circulation. The requirement of notarization already limits this turnover, often without bringing any positive results.

Using methods of comparative legal and economic analysis of law, the author proposes to provide for a simple written form of transactions for the alienation of real estate concluded between legal entities. For transactions involving citizens, provide a notarial form. For transactions on the transfer of rights to use real estate, provide for a simple written form in general, regardless of whether the parties are individuals or legal entities.

By providing a simple written form for certain real estate transactions, we can, within existing regulations, achieve the same positive results as in the case of notarization, without the disadvantages associated with such verification.

Key words: transaction; contract; state registration; notary verification; form of contract; real estate; property law; obligations law

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺՆԵՏԻՐԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՇԽԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Աշխատանքի դիմաց աշխատողներին ընկերության բաժնետոմսերով պարգևատրելու ինստիտուտը բավականին տարածված գործիք է, որը հնարավորություն է տալիս խրախուսելու աշխատակիցներին և կանխելու աշխատուժի արտահոսքը, ինչն էլ, իր հերթին, կարող է անուղղակիորեն նվազեցնել մասնագների արտագաղթը Հայաստանից: Աշխատակիցների բաժնետիրացման իրավական ինստիտուտի որոշ դրսևորումներ տեղ են գտել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում: Վերջին շրջանում կատարվել են օրենսդրական որոշակի փոփոխություններ, սակայն դրանք ամբողջապես չեն համապատասխանեցվել միջազգային ընդունված պրակտիկային, դիպվածային են, չեն պարունակում գործուն մեխանիզմներ հատկապես այդ ծրագրերից օգտվող աշխատակիցների իրավունքների պաշտպանության առումով, բացի այդ՝ հաշվի չի առնվել գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված ընկերությունների կողմից նման ծրագրերի կիրառման գործնական հնարավորությունը: Հնդվածի շրջանակներում փորձ է արվել բացահայտելու նշված բոլոր թերությունների ազդեցությունը այդ ինստիտուտի գործնական կիրառման հնարավորության վրա, բացի այդ՝ հիմնավորվել է նաև հատկապես ստարտափային ընկերությունների գործունեության ոլորտում նման ծրագրերի ներդրման կարևորությունը: Հաշվի առնելով հոդվածում կատարված վերլուծությունը՝ արվել են մի շարք ընդհանրացումներ, գործնական առաջարկներ, որոնք կարող են նպաստել այս ինստիտուտի գործնական կիրառության կատարելագործմանը:

Բանալի բառեր – բաժնետիրական ընկերություն, աշխատակիցների բաժնետիրացում, աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր, ածանցյալ ֆինանսական գործիքներ, բաժնետոմսի օպցիոններ, ֆանտոմային բաժնետոմս, ստարտափային ընկերություն

* **Աշխեն Սողոմոնյան** – ի.գ.թ., ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ
Ашкен Согомонян – ассистент кафедры гражданского права юридического факультета ЕГУ
Ashkhen Soghomonyan – Assistant at YSU Chair of Civil Law of the Faculty of Law
Էլ. փոստ՝ ashkhen.soghomonyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0001-7771-2338>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 24.02.2024
Գրախոսվել է՝ 29.04.2024
Հաստատվել է՝ 17.05.2024
© The Author(s) 2024

Ներածություն

Հաշվի առնելով առևտրային իրավաբանական անձանց գործունեության առանձնահատկությունները և քաղաքացիական շրջանառության դինամիկ զարգացման տեմպերը՝ ժամանակակից կորպորատիվ իրավունքի շրջանակներում մշակվել են համեմատաբար նոր գործիքակազմեր, որոնք ուղղված են առևտրային իրավաբանական անձանց արդյունավետ գործունեության ապահովմանը, ինչպես նաև այդ գործունեության մեջ անմիջականորեն ներգրավված անձանց (ինչպես կառավարմանը մասնակցող, այնպես էլ չմասնակցող աշխատակիցների)՝ կազմակերպության գործունեության վերջնարդյունքով շահագրավածության և պարտականությունների կատարման բարձրացմանը: Նման գործիքակազմերից մեկն էլ համարվում է արևմտյան երկրների կորպորատիվ իրավունքում մշակված, ՀՀ իրավական համակարգում համեմատաբար նոր համարվող՝ աշխատակիցների բաժնետիրացման ինստիտուտը:

Բաժնետիրական ընկերությունների աշխատակիցներին այդ նույն ընկերությունների համասեփականատերեր դարձնելու փորձը առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում 20-րդ դարի կեսերին «Բաժնետիրական սեփականության մեջ աշխատողների մասնակցության պլանին» համապատասխան և ավելի մեծ տարածում է ստացել 70-ական թվականներից սկսած, երբ 1974 թվականին ընդունվեց «Աշխատողների կենսաթոշակային ապահովության երաշխիքների մասին» օրենքը (Employee Retirement Income Security Act - ERISA), որով հարկային արտոնություններ սկսեցին տրամադրվել այն ընկերություններին, որոնք ներդնում էին նման ծրագրեր¹:

Աշխատակիցների բաժնետիրացման ավանդույթը ՀՀ-ում երկար պատմություն չունի. առաջին, մեր կարծիքով, մեղմ ասած, անհաջող քայլը կատարվեց պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում, երբ դրանք վերակազմակերպվում էին բաժնետիրական ընկերությունների և բաժնետոմսերի մի մասը տրամադրվում էր տվյալ ձեռնարկությունների աշխատողներին: Հետագայում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի² (այսուհետ՝ Օրենք) ընդունումով բաժնետիրական ընկերություններին հնարավորություն տրվեց հետ գնված բաժնետոմսերը տեղաբաշխելու ընկերության աշխատակիցների միջև: Սակայն այս ինստիտուտը գործնականում գրեթե չէր կիրառվում: Միայն վերջին շրջանում ստարտափային ընկերությունների թվի աճի, ինչպես նաև այլ՝ ավելի խոշոր կորպորացիաների ձևավորմանը զուգահեռ բարձրացվեցին այս ինստիտուտի գործնական կիրառությունը խթանելու համար օրենսդրական փոփոխություններ անելու անհրաժեշտության հարցերը: Նշված օրենսդրական փոփոխությունները կատարվեցին, սակայն դրանք ամբողջապես

¹ St' u Belkin B. N., Belkina N. A., Antonova O. A. Наделение работников собственностью на капитал фирм // Челябинский гуманитарий. 2016, № 2 (35), էջ 32, <https://cyberleninka.ru/article/n/nadelenie-rabotnikov-sobstvennostyu-na-kapital-firm> (հասանելի է 22.06.2023 թվականի դրությամբ):

² St' u ՀՀՊՏ 2001.11.06/34(166), ՀՈՂ. 831:

չեն արտացոլում աշխատակիցների բաժնետիրացման ինստիտուտի հնարավորությունները. որոշ խնդիրներ կան աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի իրականացման ֆոնդերի ձևավորման և դրանց ֆինանսական աջակցության, հարկային արտոնությունների տրամադրման անհրաժեշտության, ինչպես նաև այդ ծրագրերի շահառուների իրավունքների պաշտպանության ապահովման առումով: Ինչ վերաբերում է մասնագիտական շրջանակներում նշված ինստիտուտի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելուն, ապա, չնայած առկա մեծ հետաքրքրությանը, դրան անդրադարձ է կատարվել եզակի դեպքերում, որոնք, սակայն, ամբողջապես չեն արտացոլում այս ինստիտուտի էությունը և կիրառման առանձնահատկությունները³: Դրանցում հիմնավորվում են միայն աշխատակիցների բաժնետիրացման ինստիտուտի ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտությունը և արդիականությունը:

Սույն աշխատանքի նպատակը աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի իրականացման, ինչպես նաև աշխատակիցների բաժնետիրացման հնարավորություն տվող տարբեր գործիքակազմերի կիրառման հետ կապված հարցերի համապարփակ վերլուծություն իրականացնելն է:

Դրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- բաժնետիրական ընկերության աշխատակիցներին այդ ընկերությունում բաժնետեր դարձնելու իրավական լուծումներ առաջարկելը,
- բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի հաստատած կամ կանոնադրությունում ներառված բաժնետիրացման ծրագրերի գործնական կիրառման հնարավորությունները վեր հանելը,
- բաժնետիրական ընկերության աշխատակիցների բաժնետիրացման հնարավորություն տվող ածանցյալ ֆինանսական գործիքների իրավական բնույթը և դրանց կիրառման գործնական հնարավորությունները բացահայտելը,
- աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի մասնակիցների, ինչպես նաև բաժնետիրացման հնարավորություն տվող այլ գործիքներից օգտվող անձանց իրավունքների պաշտպանության ապահովման հետ կապված խնդիրները քննարկելը,
- բաժնետիրական ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի իրագործման միջազգային փորձի ուսումնասիրությունը և դրանց հնարավոր ներդրումը պետական օրենսդրության մեջ:

Սույն աշխատանքի մեթոդական բազան են գիտական հետազոտության ինչպես ընդհանուր (վերլուծական, պատմական), այնպես էլ հատուկ մեթոդները (իրավահամեմատական, դոգմատիկ):

³ Այս հարցին որոշ չափով անդրադարձել է ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Ավետիսյանը, տե՛ս Վ. Դ. Ավետիսյան, Բաժնետիրական իրավունք, ԵՊՀ հրատ., ISBN 5-8084-0647-1, Եր., 2005, էջ 78-80, ինչպես նաև Վ. Դ. Ավետիսյան, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), ԵՊՀ հրատ., ISBN 978-5-8084-1817-2, Եր., 2013, էջ 159-160 :

Մասնագիտական գրականության մեջ աշխատակիցների բաժնետիրացումը համարվում է մասնավոր սեփականության նոր ձև (employee ownership): «Աշխատակիցների սեփականություն» եզրույթը բնորոշվում է որպես ցանկացած համաձայնություն, որով ընկերության աշխատողները տիրապետում են այդ ընկերության բաժնետոմսերի որոշակի քանակության կամ էլ վերջիններիս արժեքի նկատմամբ ունեն որոշակի իրավունքներ⁴: Ընդհանրապես, արևմտյան կորպորատիվ իրավունքում աշխատակիցների կողմից ընկերության բաժնետոմսերը ձեռք բերելու առումով առանձնացվում են երկու տարբեր իրավիճակներ՝

1) այդ գործընթացն իրականացնելիս այդ ընկերությունը վերածվում է «աշխատակիցների ընկերության» (employee-owned). ընկերությունը կարող է համարվել աշխատակիցներին պատկանող, եթե դրա բաժնետոմսերի զգալի մասը պատկանում է բոլոր աշխատակիցներին,

2) կիրառվում է «աշխատակիցներին պատկանող բաժնետոմսերի սխեմա» (employee share scheme), որի դեպքում ընկերության բաժնետոմսերի որոշակի քանակություն կամ բաժնետոմսերի օպցիոններ ուղղակիորեն տրամադրվում են ընկերության համար առանցքային նշանակություն ունեցող աշխատակիցներին կամ բոլորին:

Պետք է նշել, որ այս երկու դեպքում էլ խոսքը «աշխատակիցների սեփականություն» (employee ownership) եզրույթի մասին է, որը, ինչպես նշեցինք, արևմտյան մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է որպես սեփականության ինքնուրույն տեսակ: Ընկերության աշխատակիցներին այդ նույն ընկերության բաժնետոմսերով պարգևատրելու անհրաժեշտությունը հիմնավորվում է մի շարք հանգամանքներով, այդ թվում նաև ընդհանուր տնտեսության վրա դրական ազդեցությամբ: Այսպես, մի շարք հետազոտություններ փաստում են, որ աշխատակիցների բաժնետիրացումը էական ազդեցություն է ունենում ձեռնարկությունների ֆինանսական ցուցանիշների կատարողականի վրա՝ այդպիսով իր նպաստը բերելով նաև երկրի ՀՆԱ-ի աճի խթանմանը: Մասնավորապես, ԱՄՆ-ում աշխատակիցների բաժնետիրացման ազդեցությունը ՀՆԱ-ի վրա գնահատվում է 1.7%: Բացի այդ՝ հետազոտությունները վկայում են, որ աշխատակիցների բաժնետիրացում կիրառող ձեռնարկությունները ստեղծում են տարեկան 2.5%-ով ավելի շատ նոր աշխատատեղ, քան այն ընկերությունները, որոնք չունեն այդպիսի սխեմաներ: Կանադայում կատարված հետազոտությունները փաստում են, որ աշխատակիցների բաժնետիրացման սխեմաներ կիրառող ընկերություններում սովորական ընկերությունների համե-

⁴ Առավել մանրամասն տե՛ս **Gwenllian Kern-Allely**, The Many Forms of Employee Ownership: ESOPs, Co-Ops, Profit-Sharing Plans, and Equity Compensation Plans <https://www.bsllp.com/the-many-forms-of-employee-ownership-esops-co-ops-profit-sharing-plans-and-equity-compensation-plans> (հասանելի է 21.06.2023 թվականի դրությամբ):

մատ շահույթի աճը հինգ տարիների կտրվածքով 123%-ով ավելին է եղել, արտադրողականությունը աճել է 24%-ով, իսկ կապիտալի շահութաբերությունը (ROE)՝ 92.3%-ով: Մեծ Բրիտանիայում արված հետազոտությունները նույնպես վկայում են աշխատակիցների բաժնետիրացման սխեմաների արդյունավետության մասին: Այսպես, 2014-2016 թվականներին բաժնետիրացման սխեմաներ կիրառող ընկերություններում աշխատատեղերը տարեցտարի ավելացել են 15%-ով, այնինչ այդ նույն ժամանակահատվածում ընդհանուր տնտեսությունում աշխատատեղերի ընդամենը 5.8%-ով աճ է գրանցվել: Նշվածից ավելի քան ակնհայտ է, թե ինչու է աշխատակիցների բաժնետիրացումը դառնում պետական քաղաքականության ուշադրության առարկա: Դիտարկվում են ոչ միայն դրա հնարավորությունները տնտեսության համար, այլև աճում է հետաքրքրությունն ավելի արդարացի բիզնես մոդելի սոցիալական ազդեցության նկատմամբ: Վերջին տասնամյակներին համաշխարհային պրակտիկայում ակնհայտորեն աճում է այն ընկերությունների թիվը, որոնք կիրառում են սեփականության կառավարմանն ու տիրապետմանը աշխատակիցների մասնակցության տարբեր ձևեր, ինչպես նաև աճում է նման ձեռնարկումներին պետական աջակցությունը սոցիալական գործընկերության շրջանակներում: Այդ ընկերությունների թվի աճն իր հերթին արտացոլում է կապիտալի ժողովրդավարացման գործընթացները, ինչը վերջին հարյուրամյակում բնորոշ է զարգացած երկրների մեծ մասին⁵:

Վերջին տարիներին ՀՀ-ում այս ինստիտուտի նկատմամբ հետաքրքրություն է առաջացել հատկապես ստարտափային ընկերությունների թվի աճին զուգահեռ: Որպեսզի Հայաստանը SS ոլորտում ընդգրկված ստարտափային ընկերությունների համար գրավիչ դառնա, պետք է կարողանա ստեղծել նպաստավոր պայմաններ՝ տաղանդավոր մասնագետներին երկրում պահելու: Ինչ խոսք, այս ընկերություններն առաջարկում են հետաքրքիր և գրավիչ ծրագրեր ու հաճելի աշխատանքային մթնոլորտ, սակայն երբ բանը հասնում է աշխատավարձին, նրանք հաճախ չեն կարողանում մրցել խոշոր ընկերությունների հետ: Այդ թերությունները փոխհատուցելու համար էլ ստարտափային շատ ընկերություններ փորձում են բաժնետիրացնել իրենց աշխատակիցներին⁶: Ուստի, հաշվի առնելով օտարերկրյա լավագույն փորձը, այդ ինստիտուտի որոշակի տարրեր փորձ է արվել ներդնել նաև ՀՀ օրենսդրության մեջ:

⁵ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Գուտակային կենսաթոշակների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության հիմնավորում, P-672_himnavorum.pdf (parliament.am) (հասանելի է 22.11.2023 թվականի դրությամբ):

⁶ Բարձր տեխնոլոգիաների ոլորտում ներկայումս ՀՀ-ում գործող ընկերությունները, որոնք հետաքրքրված են աշխատակիցների բաժնետիրացման ինստիտուտի կիրառմամբ, հետևյալներն

Այսպես, մինչև 2021 թվականի մայիսի 26-ը կատարված օրենսդրական փոփոխությունները Օրենքի 41-րդ հոդվածով նախատեսվում էր միայն ընկերության բաժնետերերից հետ գնված բաժնետոմսերը աշխատակիցների միջև տեղաբաշխելու հնարավորությունը: Կատարված օրենսդրական փոփոխություններով օրենսդրական մակարդակով ձևակերպվեց «աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր» (ESOP՝ employee stock ownership plan) հասկացությունը, ինչպես նաև նախատեսվեց, որ աշխատակիցներին բաժնետոմսեր կարող են տրամադրվել նաև ածանցյալ ֆինանսական գործիքների միջոցով: Կատարված փոփոխությունների արդյունքում աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները ՀՀ աշխատանքային օրենսգրքի իմաստով արդեն դիտարկվում են որպես աշխատողներին տրամադրվող խրախուսման միջոցներ: Արդյունքում, Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերությունը կարող է կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի հաստատած՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով իր աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) ընկերության բաժնետոմսեր կամ այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ), որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել ընկերության բաժնետոմսերով: Բացի այդ՝ սահմանվել է նաև, որ նշված հոդվածի իմաստով աշխատակից է համարվում նաև ընկերության ղեկավար պաշտոնատար անձը: Դրական զարգացումների գուզնթաց, սակայն, մեր կարծիքով, կատարված փոփոխությունները որոշ դեպքերում ամբողջական չեն, որոշ դեպքերում էլ աչքի են ընկնում ակնհայտ թերություններով՝ սահմանափակելով դրա կիրառման գործնական հնարավորությունները: Այսպես, անդրադառնալով Օրենքի 41-րդ՝ «Աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսեր» հոդվածի վերտառությանը՝ նշենք, որ քննարկվող հոդվածը տալիս է ոչ միայն աշխատակիցների միջև *ուղղակիորեն բաժնետոմսեր, այլև այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ տեղաբաշխելու հնարավորություն, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել ընկերության բաժնետոմսերով*: Սակայն վերտառության մեջ արտացոլված է հոդվածի կարգավորման առարկա հանդիսացող իրավահարաբերությունների մի մասը՝ աշխատակիցներին ուղղակիորեն բաժնետոմսեր տրամադրելը: Նման բացթողնման հիմնական պատճառն այն է, որ մի

են՝ Picsart Armenia-ն, Krisp-ը, CodeSignal Armenia-ն, Sololearn Armenia-ն, իսկ Հայաստանում մեծ ներկայացուցչություն ունեցող, հայկական ծագմամբ ընկերություններից՝ Service Titan-ը, Disqo-ն, Sada Systems-ը: Այս ընկերություններում մոտ 2 հազար մարդ է աշխատում: Մրանք հենց այն ընկերություններն են, որոնք աճող են և կարող են բաժնետոմսերի տրամադրմամբ շահագրգռել ոչ միայն հայաստանյան ինժեներներին, այլև ոչ հայ մասնագետների ներգրավել արտերկրից և Հայաստանը դարձնել լուրջ էկոհամակարգ ունեցող երկիր: Նշված տվյալները ներկայացվել են 09.12.2021 թվականին BDO ընկերության հայաստանյան գրասենյակի կազմակերպած քննարկման ժամանակ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի կողմից՝ <https://banks.am/am/news/interviews/22492> (հասանելի է 20.11.2023 թվականի դրությամբ):

հողվածի շրջանակներում փորձ է արվել կարգավորել իրար հետ կապված, սակայն վերջնականատակից կախված տարբեր իրավակարգավորումներ ենթադրող մի քանի ինստիտուտներ: Ուստի կարծում ենք, որ **անհրաժեշտ է իրարից տարանջատել այս երկու իրավահարաբերությունները և առանձին հողվածներով կարգավորել աշխատակիցներին անմիջականորեն տրամադրվող բաժնետոմսերը և որոշակի պարտավորությունների դիմաց ընկերության բաժնետոմսերով վերջնահաշվարկ կատարելու հնարավորություն տվող ածանցյալ ֆինանսական գործիքները:**

Օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծի հիմնավորումներում հեղինակները նշել են, որ վերջին տարիներին տարբեր երկրներում լայն տարածում է ստացել աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի կիրառումը ((restricted stock units)՝ անգլերեն տերմինը մեջբերված է նախագծից)⁷: Նախագծի հիմնավորումներից կարելի է ենթադրել, որ հեղինակները աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի նոր իրավակարգավորումների հիմք են ընդունել արևմտյան կորպորատիվ իրավունքում «restricted stock units» տերմինով հայտնի ինստիտուտը: Վերջիններիս վերաբերյալ ուսումնասիրությունները վկայում են, որ ինչպես բաժնետոմսերի օպցիոնները, այնպես էլ սահմանափակվածություն ունեցող բաժնետոմսերի միավորները ամերիկյան իրավունքում դիտարկվում են որպես ընկերության կողմից իր աշխատակիցներին փոխհատուցելու կամ խրախուսելու միջոցներ (equity compensation), որոնք հաճախ կոչվում են նաև բաժնետոմսերով փոխհատուցում (stock compensation)⁸: Այն աշխատակիցները, որոնց տրամադրվում են նման բոնուսներ, դառնում են այդ ընկերությունների բիզնեսի ու դրա արդյունքում առաջացած շահույթի մի մասի սեփականատերեր: Ստարտափային ընկերությունները, որոնք չեն կարողանում ընկերության համար առանցքային նշանակություն ունեցող աշխատողներին վճարել բարձր աշխատավարձ, հաճախ մշակում են նման արտոնությունների փաթեթներ իրենց ընկերություններում աշխատելու հեռանկարը ավելի ցանկալի դարձնելու, ինչպես նաև աշխատողներին ավելի արդյունավետ աշխատանքի մղելու համար: **Բաժնետոմսերի միավորների (restricted stock units or RSUs) տրամադրման վերաբերյալ համաձայնության ուժով գործատուն պարտավորվում է այդ համաձայնությամբ նախատեսված հանգամանքները վրա հասնելու պարագայում աշխատողին տրամադրել ընկերության բաժնետոմսեր:** Նշված հանգամանքները կամ պայմանները բաժնե-

⁷ Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունման հիմնավորում, <https://www.e-draft.am/ru/projects/3130/justification> (հասանելի՝ 03.11.2023 թվականի դրությամբ):

⁸ Ավելի մանրամասն տե՛ս **Daniel Lee**, Everything you need to know about stock options and RSUs, Harvard business review, 2021, <https://hbr.org/2021/08/everything-you-need-to-know-about-stock-options-and-rsus> (հասանելի է 07.11.2023 թվականի դրությամբ):

տոմսերի նկատմամբ սահմանափակումներն են, իսկ կատարման գործընթացը, ինչպես օպցիոնների դեպքում, այնպես էլ այստեղ, կոչվում է **վեսթինգ**⁹: Ֆրանսիայի օրենսդրությամբ նախատեսված է, օրինակ, որ բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակահատվածը չի կարող մեկ տարուց պակաս լինել: Բացի այդ, ընկերությունը կարող է կիրառել բաժնետոմսերի պահման նվազագույն ժամկետներ: Սակայն բոլոր դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման և պահման ընդհանուր ժամկետը չի կարող երկու տարուց պակաս լինել¹⁰: RSU-ների և բաժնետոմսերի օպցիոնների հիմնական տարբերությունն այն է, որ եթե առաջինի դեպքում ընկերության աշխատակիցը բաժնետոմսի դիմաց վճարելու պարտականություն չունի, երկրորդ դեպքում վճարումը կատարվում է օպցիոնով սահմանված գնով, որը համարժեք է օպցիոնի տրամադրման օրը ֆիքսված բաժնետոմսի շուկայական գնին¹¹: Այս դեպքում, նշենք, որ Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ աշխատակցի բաժնետոմսերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները կարող են տրամադրվել **առանց վճարի**, իսկ բաժնետոմսերի դիմաց **վճարվող գումարը կարող է ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից ցածր լինել**: Ակնհայտ է, որ եթե «աշխատակիցների բաժնետիրացման ծրագրեր» եզրույթի ներքո օրենքի փոփոխությունները մշակող հեղինակները նկատի են ունեցել սահմանափակվածություն ունեցող բաժնետոմսերի միավորները, ապա միջազգային պրակտիկայի կանոններով վերջիններս աշխատակիցներին տրամադրվում են առանց որևէ վճարի: *Ուստի կարծում ենք՝ քննարկվող իրավական ինստիտուտի վերաբերյալ կարգավորումները նախատեսելով առանձին հոդվածի շրջանակներում՝ պետք է ամրագրել նաև, որ դրանք ոչ թե կարող են տրամադրվել առանց վճարի, այլ հենց տրամադրվում են առանց վճարի*¹²:

Ամերիկյան իրավունքում ընդհանրապես տարանջատվում են սահմանա-

⁹ **Vesting** - այն ժամանակացույցն է, որը սահմանում է, թե ստարտափի հիմնադիրներն ու աշխատողները որքան պետք է մնան ընկերությունում նախքան իրենց բաժնետոմսերը ստանալը, և օգնում է ապահովել բիզնես-հավատարմություն կոնկրետ ժամանակահատվածի համար: Այս եզրույթի բացատրությունը շարադրված է ըստ ֆինանսական բառարանի՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ. 10 տերմին, որոնք պետք է իմանա յուրաքանչյուր ստարտափ (starthub.am) (հասանելի է 17.11.2023 թվականի դրությամբ):

¹⁰ Experts Talks, Restricted stock units (RSU or AGA), <https://www.welcometofrance.com/en/restricted-stock-units-rsu-or-aga> (հասանելի է 20.11.2023 թվականի դրությամբ):

¹¹ Տե՛ս **Laura Moreno**, What is a restricted stock unit (RSU)? Restricted Stock Units: How RSUs Work | Carta (հասանելի է 18.11.2023 թվականի դրությամբ):

¹² Առանց վճարի ասելով՝ նկատի ունենք, որ աշխատակիցը, վեսթինգի պայմաններին բավարարելուց հետո ստանալով ընկերության իրական բաժնետոմսերը, պարտավոր չէ դրանց դիմաց վճարել, սակայն իրականում, քանի որ ընկերությունը տեղաբաշխում է նոր բաժնետոմսեր, որի շնորհիվ ընկերության կանոնադրական կապիտալը պետք է ավելանա, այդ բաժնետոմսերի ձեռքբերման համար ընկերությունը պետք է ձևավորի համապատասխան ֆոնդեր՝ ներդնելով ֆինանսական միջոցներ:

փակվածություն ունեցող բաժնետոմսերի երկու տեսակ, որոնցից մեկը սահմանափակվածություն ունեցող բաժնետոմսերի միավորներն են (RSU), իսկ մյուսը՝ սահմանափակվածություն ունեցող բաժնետոմսերի շնորհումը (RSA): Վերջիններիս առանձնահատկությունը այն է, որ անձը, ընդունվելով աշխատանքի, միանգամից դառնում է ընկերության բաժնետեր՝ ձայնի իրավունքով: Նա կարող է ձեռք բերել ընկերության թողարկած որոշակի քանակի բաժնետոմսեր նախապես որոշված գնով կամ ստանալ որպես նվեր: Չնայած այս հանգամանքին՝ նման բաժնետոմսերի տրամադրման վերաբերյալ համաձայնություններով սահմանափակումների տեսքով ամրագրվում են վեսթինգի որոշակի պայմաններ, որոնք պետք է պահպանվեն աշխատակցի կողմից¹³:

Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետը համակողմանի վերլուծելու համար նպատակահարմար է պարզել նաև, թե ինչ են ածանցյալ ֆինանսական գործիքները, և ինչպես է դրանցով կատարվում պարտավորությունների վերջնահաշվարկը ընկերության բաժնետոմսերով: Այսպես, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի¹⁴ 3-րդ հոդվածի համաձայն՝ ածանցյալ ֆինանսական գործիքներ են համարվում, ի թիվս այլնի, նաև արժեթղթերի, արտարժույթի, տոկոսադրույքի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ֆինանսական ինդեքսների կամ ֆինանսատնտեսական ցուցանիշների հետ կապված *օպցիոն*, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների *վերջնահաշվարկը կարող է իրականացվել բնեղենով* կամ դրամական միջոցներով: Ըստ «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման¹⁵ հավելվածի 2-րդ կետի՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով պարտավորությունների վերջնահաշվարկն իրականացվում է բնեղենով, եթե ածանցյալ ֆինանսական գործիքի վերջնահաշվարկի օրը այս գործիքներով գործարքի կողմերը պարտավոր են իրենց պարտավորությունները կատարել գործիքի հիմքում ընկած ակտիվների փոխանցմամբ (առաքմամբ): Հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումները¹⁶, ինչպես նաև միջազգային փորձը՝ նշված իրավահարաբերություններում որպես ածանցյալ ֆինանսական գործիք կարող են հանդես

¹³ Տե՛ս **Alvin Carlos**, RSUs vs RSAs: What's the difference? RSU vs RSA: What's The Difference? (districtcapitalmanagement.com) (հասանելի է 25.11.2023 թվականի դրությամբ):

¹⁴ Տե՛ս ՀՀՊՏ, 2007.10.31/53(577), Հոդ. 1098:

¹⁵ Տե՛ս ՀՀԳՏ, 2017.10.20/29(598).1, Հոդ. 339.5:

¹⁶ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ֆորվարդ գործարքը կամ ֆորվորդը կարգավորվող շուկայից դուրս կնքվող համաձայնություններն են ակտիվի ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ, ֆյուչերս գործարքը կամ ֆյուչերսը կարգավորվող շուկայում

զալ օպցիոնները: Վերջիններս, «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման¹⁷ հավելվածի 2-րդ կետի համաձայն, համաձայնություն են, որոնցով մի կողմը (օպցիոնի գնորդը) իրավունք է ձեռք բերում վաճառել (գնել) որոշակի բազիսային ակտիվ (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) պայմանագրում նշված ժամկետում և գնով, իսկ մյուս կողմը (օպցիոնի վաճառող) պարտավորություն է ստանձնում գնել (վաճառել) այդ ակտիվը (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ): Կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ օպցիոնը համարվում է արժույթային օպցիոն, արժեթղթերով օպցիոն կամ այլ ակտիվներով օպցիոն: Նշվածներից մեր ուսումնասիրության տիրույթում են միայն արժեթղթերով օպցիոնները, քանի որ բաժնետոմսը արժեթուղթ է: Մասնագիտական գրականության մեջ աշխատակցի *բաժնետոմսի օպցիոնը բնութագրվում է որպես գործատուի և աշխատակցի միջև կնքված համաձայնություն, որով աշխատակցի համար սահմանվում է իրավունք, բայց ոչ պարտականություն՝ այդ համաձայնությամբ նախատեսված ժամկետի ընթացքում և դրանով սահմանված գնով գնելու գործատուի բաժնետոմսերը*¹⁸:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ կարող ենք նշել, որ *բաժնետոմսի օպցիոններով ընկերությունը աշխատողին իրավունք է տալիս ապագայում սահմանված գնով գնելու ընկերության բաժնետոմսերը*: Այդ գինը կոչվում է իրացման գին (exercise price or strike price), որը ԱՄՆ-ում սովորաբար սահմանվում է հաշվի առնելով օպցիոնի տրամադրման օրը գործող բաժնետոմսի շուկայական արժեքը: Բաժնետոմսի օպցիոնը ենթակա է վեսթինգի, ինչը նշանակում է, որ օպցիոնի սեփականատերը չունի լիարժեք սեփականության իրավունք ընկերության բաժնետոմսի նկատմամբ, քանի դեռ չեն պահպանվել այդ օպցիոնով նախատեսված պայմանները, ինչը կարող է կապված լինել կա՛մ տվյալ ընկերությունում որոշակի ժամանակ աշխատելու, կա՛մ աշխատանքի կատարողականի, կա՛մ այլ հանգամանքների հետ: Նշված պայմանները բավարարելուց հետո ընկերության աշխատողը կարող է ձեռք բերել բաժնետոմս, որը ինքը կարող է անմիջապես վաճառել կամ էլ պահել: Բաժնետոմսի օպցիոնի հիմնական առավելությունն այն է, որ աշխատողը հնարավորություն է ստանում ընկերության բաժնետոմսը գնելու օպցիոնի տրամադրման օրը ֆիքսված շուկայական գնով, որը մինչև բաժնետոմսը ձեռք բերելը կարող է ավելացած լինել: Հետևաբար, ընկերության աշխատողը կարող է ավելի ցածր

կնքվող համաձայնությունն է ակտիվի ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ, իսկ սվոփ գործարքը կամ սվոփը կապված է փոխարժեքի, արտարժույթի, տոկոսադրույքի հետ:

¹⁷ Տե՛ս ՀՀԳՏ, 2008.06.12/18(292), հոդ. 175:

¹⁸ Տե՛ս **John Olagues, John F. Summa**, Getting started in employee stock options, Canada, 2010 Getting Started In Employee Stock Options - Google Books (հասանելի է 25.11.2023 թվականի դրությամբ):

գնով գնել բաժնետոմսը և ավելի բարձր գնով վաճառել այն¹⁹: Բաժնետոմսի օպցիոնների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող առանցքային փաստաթուղթը բաժնետոմսերի օպցիոնների ծրագիրն է (**Employee stock option plan**): *Դրանով սահմանվում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են ստանալ բաժնետոմսի օպցիոններ, ամրագրվում է տրամադրվող օպցիոնների առավելագույն քանակը, մանրամասն կարգավորվում է դրանց իրացման կարգը, ինչպես նաև սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները*: Ընկերության աշխատակցին, ով ստանում է բաժնետոմսի օպցիոն, տրամադրվում է նաև այդ ծրագրի պատճենը, որը կարող է հավելվածի ձևով ներառել նաև համաձայնություններ, որոնցով սահմանափակվում է օպցիոնի իրացման դեպքում ընկերության բաժնետոմս ստացած աշխատակցի՝ բաժնետոմսը օտարելու կամ դրանով ընկերության ընդհանուր ժողովին քվեարկելու իրավունքը²⁰: Այս դեպքում, կարծում ենք, որ առկա օրենսդրական կարգավորումները միջազգային պրակտիկային համապատասխանեցնելու և ընդհանուր տրամաբանությունից չշեղվելու համար Օրենքի 41-րդ հոդվածում ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ իրավակարգավորումները պետք է փոփոխվեն, հարմարեցվեն «աշխատակցի բաժնետոմսի օպցիոններ» իրավական գործիքի կարգավորման մասին ընդունված պրակտիկային, ներկայացվեն առանձին հոդվածի շրջանակներում, և տրվի նաև «աշխատակիցների բաժնետոմսերի օպցիոնների ծրագիր» հասկացության մեկնաբանությունը: Այժմ Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ կետում ձևակերպված է աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հասկացությունը, և նշվում է, որ այդ ծրագիրը ընկերության ներքին իրավական ակտ է, որով առնվազն նախատեսվում են ընկերության աշխատակցի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների ձեռքբերման, օգտագործման, օտարման և հետգնման դեպքերը, պայմաններն ու կարգը: Կարծում ենք, որ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով պետք է կարգավորվեն RSU-ների և RSA-ների հետ կապված իրավահարաբերությունները, իսկ բաժնետոմսերի օպցիոնների ծրագրով՝ վերը նշված խնդիրները:

Աշխատակիցների բաժնետիրացման ինստիտուտի քննարկման համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև Օրենքի նշված հոդվածի կարգավորման շրջանակներից դուրս մնացած, սակայն այլ երկրներում լայնորեն կիրառվող «ֆանտոմային բաժնետոմսեր» (phantom stock) իրավական ինստիտուտի էության և դրանով նախատեսված հնարավորությունների բացահայտմանը: **Այսպես, ֆանտոմային բաժնետոմսերի ծրագրերը, որոնք հաճախ կոչվում են նաև**

¹⁹ Տե՛ս Stock Options vs Restricted Stock Units (RSUs) Stock Options VS Restricted Stock Units (RSUs) (globalshares.com) (հասանելի է 17.11.2023 թվականի դրությամբ):

²⁰ Տե՛ս **Morgan McDonald, Josua Sved**, Everything you need to know about stock options Everything you need to know about stock options | DLA Piper (հասանելի է 25.11.2023 թվականի դրությամբ):

ստվերային բաժնետոմսերի ծրագրեր, աշխատակիցների փոխհատուցման ծրագրերի տեսակ են, որոնց մասնակիցները ստանում են ոչ թե ընկերության թողարկած իրական բաժնետոմսեր, այլ դրանցից ածանցյալ որոշակի իրավունքներ միայն, որոնք հիմնականում կապված են ընկերության շահույթի բաշխմանը մասնակցելու կամ ընկերության բաժնետոմսերի արժեքի նկատմամբ ունեցած իրավունքներ հետ: Օրինակ, եթե ընկերության աշխատակիցը ունի 50 հատ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով ֆանտոմային բաժնետոմս, որի վերթինգի պայմանները կապված են այդ ընկերությունում որոշակի ժամանակահատված աշխատելու հետ, ապա եթե այդ ժամկետը լրանալուց հետո այդ բաժնետոմսերի անվանական արժեքը ավելացած լինի ևս 1000 դրամով, ապա աշխատակիցը կստանա 50000 դրամ փոխհատուցում, եթե կիրառվում է «Appreciation Only Phantom Stock» ծրագիրը: Իսկ եթե ընկերության աշխատակիցը մասնակցում է «Full Value Phantom Stock» ծրագրին, ապա նկարագրված իրավիճակում նա կստանա 100000 (50*2000) ՀՀ դրամ փոխհատուցում: Կախված ֆանտոմային բաժնետոմսերի ծրագրերով նախատեսված նման բաժնետոմսերը ընկերության աշխատակիցներին փոխանցելու պայմաններից՝ դրանց դիմաց վճարումները կարող են կատարվել կամ կոնկրետ ժամանակահատվածում, կամ էլ որոշակի հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Այսպիսի ծրագրերի կիրառումը շատ ձեռնտու է հատկապես այն բաժնետիրական ընկերություններին, որոնք չեն ցանկանում, որ աշխատակիցները բաժնետիրացման արդյունքում հնարավորություն ստանան մասնակցելու ընկերության կառավարմանը: Սակայն եթե մինչ նշված հանգամանքները աշխատակիցը ազատվում է աշխատանքից, նա կորցնում է այդ բաժնետոմսերից բխող իրավունքները: Ծրագրով կարգավորվում է նաև այն հարցը, թե վճարումները կատարվելու են միանվագ, թե՞ պարբերաբար²¹:

Աշխատակիցների բաժնետիրացման, ինչպես նաև այդ նպատակով նրանց տրամադրվող ածանցյալ ֆինանսական գործիքների առնչությամբ ծագող իրավահարաբերությունների շարքում շատ կարևոր է օրենքով կարգավորել այդ ծրագրերի իրականացման ֆինանսական աղբյուրների գոյացման, դրանց կառավարման հետ կապված խնդիրները: Այսպես, Օրենքի նախկին իրավակարգավորումներում սահմանված էր, որ աշխատակցի բաժնետոմսերը տեղաբաշխվում են ընկերության աշխատակիցների միջև՝ այդ նպատակի համար աշխատակիցների բաժնետիրացման **հատուկ հիմնադրամի** միջոցների հաշվին: Օրենքում կատարված փոփոխություններով աշխատակիցների բաժնետոմսերի, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքների տրամադրման համար օգտագործվող միջոցների ձևավորման հետ կապված որևէ իրավակարգավորում չի նախատեսվել, սակայն ակնհայտ է, որ որպեսզի ընկե-

²¹ See u Phantom Stock <https://www.oge.gov/Web/278eGuide.nsf/Content/Definitions~Phantom+Stock> (հասանելի է 29.11.2023 թվականի դրությամբ):

րությունը կարողանա իր աշխատակիցներին ուղղակիորեն տրամադրել բաժնետոմսեր կամ բաժնետոմսերի օպցիոններ արտոնյալ պայմաններով, պետք է հատկացնի որոշակի ֆինանսական միջոցներ: Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ, բացի պահուստային հիմնադրամից, օրենքով կամ կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ հիմնադրամներ: Սակայն այլ մանրամասներ նշված չեն: Այս հարցերի հստակեցումը շատ կարևոր է, քանի որ Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ աշխատակցի բաժնետոմսերը կամ ֆինանսական ածանցյալ գործիքները կարող են տրամադրվել **առանց վճարի**, իսկ բաժնետոմսերի դիմաց վճարվող **գումարը կարող է ընկերության համապատասխան տեսակի կամ դասի բաժնետոմսերի անվանական արժեքից ցածր լինել**: Ընդունված միջազգային պրակտիկայի համաձայն՝ ESOP ծրագրերը կարող են ուղղակիորեն ֆինանսավորվել ընկերության կողմից, եթե նա անմիջականորեն բաժնետոմսեր է հատկացնում այդ ծրագրի իրականացման համար՝ թողարկելով նոր բաժնետոմսեր կամ այդ նպատակի համար հատկացնելով թողարկված, չտեղաբաշխված և դեռևս չմարված բաժնետոմսերը: Մյուս տարբերակն այն է, որ ընկերությունը կարող է իրացվելի ակտիվներ (հիմնականում կանխիկ գումար) հատկացնել այդ նպատակով ստեղծված հիմնադրամին (ESOP trust), որպեսզի վերջինս կարողանա ընկերությունից բաժնետոմսեր ձեռք բերել: Սակայն հատկապես ստարտափային ընկերությունները իրենց գործունեության սկզբնական փուլում չեն կարող ինքնուրույն ֆինանսավորել այդ գործընթացը, հատկապես դրա սկզբնական փուլը, երբ այդ նպատակով ստեղծված հիմնադրամը (ESOP trust) գումարներ է պահուստավորում բաժնետոմսերի գնումներին աջակցելու համար: Ֆինանսավորման մյուս աղբյուրը փոխառու միջոցներն են: Այսպես, նշված հիմնադրամները (ESOP trust) կարողանում են բանկերից անմիջականորեն վարկեր ներգրավել, իսկ բանկերը՝ որպես այդ պարտավորությունների կատարման ապահովման միջոց, հիմնադրամի կողմից գնված բաժնետոմսերը գրավադրման տակ են վերցնում: Որոշ կազմակերպություններ էլ իրենք են վարկեր ներգրավում և հատկացնում այդ հիմնադրամին: Այս անուղղակի վարկավորման պարագայում ընկերությունը հանդես է գալիս որպես միջնորդ բանկի և հիմնադրամի միջև (ESOP trust)²²: Հիմնադրամի գործարկման փուլում արդեն դրա տիրապետության տակ գտնվող բաժնետոմսերը տեղաբաշխվում են աշխատակիցների բաժնետիրացման ծրագրին միացած աշխատակիցների հաշիվների վրա: Որոշ բացառություններով հանդերձ՝ 21 տարին լրացած լրիվ աշխատաժամանակով աշխատողները կարող են միանալ այդ ծրագրին: Հատկացումները կատարվում են կամ հարաբերական վարձատրության, կամ ծրագրով սահմանված այլ բանաձևի հիման վրա: Տվյալ ընկերությունում աշ-

²² Տե՛ս **Michelle Buckley**, The ESOP Participant's Guide to ESOP Funding Rules, ESOP Funding Rules for ESOP Participants | Meaden & Moore (meadenmoore.com) (հասանելի է 22.11.2023 թվականի դրությամբ):

խատանքային ստաժի կուտակմանը զուգընթաց՝ աշխատակիցների իրավունքները իրենց հաշիվների բաժնետոմսերի նկատմամբ մեծանում են: Այդ վեթինգի ժամանակը տևում է երեքից մինչև վեց տարի²³: Կարծում ենք, որ նման խնդիրների կարգավորումը պետք է իրականացվի օրենքով և ոչ թե թողնվի կանոնադրության, բաժնետիրացման ծրագրի կամ բաժնետոմսերի օպցիոնների ծրագրի տիրույթում: Պետք է նախատեսվի միատեսակ կարգավորում, ինչը կհեշտացնի այս ինստիտուտների գործնական կիրառությունը և հավելյալ խնդիրներ չի առաջացնի ո՛չ գործատուի և ո՛չ էլ այդ ծրագրերից օգտվող աշխատակիցների համար, կնպաստի այդ գործընթացների թափանցիկությանը:

Վերջում կարևոր ենք համարում անդրադառնալ նաև աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի իրականացման հիմք հանդիսացող տարբեր իրավական ակտերի համակցությանը այդ ծրագրերին միացած աշխատակիցների իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից: Այսպես, ուսումնասիրելով Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, ակնհայտ է դառնում, որ այս գործընթացի իրավական հիմքն են կազմում ընկերության կանոնադրությունը (եթե բաժնետիրացման ծրագիրը նախատեսված է ընկերության կանոնադրության մեջ), ընդհանուր ժողովի հաստատած աշխատակիցների բաժնետիրացման ծրագիրը և ընկերության ու այդ ծրագրին միացած աշխատակցի միջև կայացած համաձայնությունը: Սակայն կարծում ենք, որ հատկապես վերջին իրավական հիմքի վերաբերյալ նման ընդհանրական նշումը չի բխում այս ծրագրի իրականացման արդյունավետության, այդ ծրագրերին մասնակցող աշխատակիցների իրավունքների ու օրինական շահերի ապահովման տեսանկյունից: Հետևաբար առաջարկում ենք, որ օրենքով նախատեսվեն ծրագրին միանալու վերաբերյալ աշխատակցի հետ կնքվող պայմանագրի էական պայմանները, մանրամասն նախատեսվի յուրաքանչյուր ծրագրի կիրառման դեպքում դրա էությունից բխող կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը, կարգավորվեն կողմերի՝ իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կիրառվող պատասխանատվության հարցը և այս իրավահարաբերությունների անձնաձևաակտություններից բխող այլ էական խնդիրներ:

Եզրակացություն

Աշխատակիցների բաժնետիրացմանն ուղղված տարբեր ծրագրերի կիրառությունը կարող է էականորեն խթանել երկրի տնտեսության զարգացումը: Հատկապես ստարտափային ընկերությունների դեպքում, որոնք չունեն իրենց աշխատակիցներին բարձր աշխատավարձեր առաջարկելու հնարավորությ-

²³ See How an Employee Stock Ownership Plan (ESOP) works, web article How an Employee Stock Ownership Plan (ESOP) Works | NCEO (հասանելի է 22.11.2023 թվականի դրությամբ):

յուն, կարող են տաղանդավոր մասնագետների ներգրավել նրանց խրախուսելու այդպիսի գործիքակազմեր կիրառելու միջոցով: Մակայն այս ինստիտուտի ծագման վայր և այդ ոլորտում հարուստ ավանդույթներ ունեցող երկրների օրենսդրության և ներպետական օրենսդրության իրավահամեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ չնայած կատարված օրենսդրական բարեփոխումներին՝ այս ինստիտուտը ՀՀ-ում դեռևս սաղմնային փուլում է, և չկան դրա զարգացմանը նպաստող օրենսդրական խթաններ, մասնավորապես բացակայում են դրա գործնական կիրառությունն ապահովող տարբեր գործիքակազմեր, աշխատակիցների ուղղակի բաժնետիրացումը և բաժնետիրացման հնարավորություն տվող այլ գործիքները համահարթեցվել են և ենթարկվել օրենսդրական միատեսակ կարգավորման, ամերիկյան իրավունքում հայտնի բաժնետոմսերի օպցիոնների ծրագրերի փոխարեն կարգավորման են ենթարկվել ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է կատարվել ընկերության բաժնետոմսերով, անպատասխան է մնացել այն հարցը, թե ինչ աղբյուրներից պետք է ֆինանսավորվեն այդ ծրագրերը, հատկապես եթե բաժնետոմսերը աշխատակիցներին տրամադրվում են առանց վճարի կամ արտոնյալ պայմաններով, որևէ բովանդակային կարգավորման չի ենթարկվել աշխատակցի և գործատուի միջև կնքվող համաձայնությունը: Բացի այդ կարծում ենք, որ գործունեության առանձին ոլորտներում ներգրավված տարբեր ընկերությունների պարագայում (բանկեր, ապահովագրական ընկերություններ, լիցենզավորման ենթակա այլ գործունեություն իրականացնող ընկերություններ) պետք է նախատեսվեն օրենսդրական լրացուցիչ կարգավորումներ նման ծրագրերի կիրառման հնարավորության հարցի վերաբերյալ: Այս և հողվածի շրջանակներում ներկայացված մի շարք այլ խնդիրների առկայությունը բարդացնում է աշխատակիցների բաժնետիրացման տարբեր ծրագրերի գործնական կիրառությունը, իսկ կիրառման դեպքում էլ նվազեցնում է դրանց արդյունավետությունը, ինչը հրամայական է դարձնում սույն ուսումնասիրության շրջանակներում բացահայտված խնդիրների լուծուման վերաբերյալ առաջարկների գործնական իրագործումը:

АШХЕН СОГОМОНЯН – Некоторые проблемы правового регулирования акционирования сотрудников в Республике Армения. – Институт вознаграждения сотрудников акциями компании в обмен на работу является достаточно распространенным инструментом, который дает возможность стимулировать сотрудников и предотвращать отток рабочей силы, что, в свою очередь, может косвенно предотвратить профессиональную эмиграцию из Армении. Некоторые проявления правового института акционирования сотрудников нашли свое место в Законе РА «Об акционерных обществах». В последнее время в законодательство были внесены определенные изменения, однако они не в полной мере соответствуют принятой международной практике, носят эпизодический характер, не содержат эффективных механизмов защиты прав сотрудников, пользующихся этими программами, кроме того, не была учтена практическая возможность использования таких программ компаниями, занимающимися определенными сферами деятельности. В рамках

статьи была предпринята попытка выявить влияние всех упомянутых недостатков на возможность практического применения данного института, а также обоснована важность подобных программ в процессе деятельности стартап-компаний.


С учетом проведенного в статье анализа сделан ряд обобщений и практических предложений, которые могут способствовать обеспечению практического применения данного института.

Ключевые слова: *акционерное общество, акционирование сотрудников, план акционирования сотрудников, производные финансовые инструменты, опционы на акции, фантомные акции, стартап-компания*

ASHKHEN SOGHOMONYAN – *Some Issues of Legal Regulations of Employee Share Ownership in the Republic of Armenia.* – The institution of rewarding employees with company shares in exchange for work is a fairly common tool that provides an opportunity to incentivize employees and prevent labor outflow, which, in turn, can indirectly prevent professional emigration from Armenia. Some manifestations of the legal institution of employee stock ownership have found their place in the RA Law “On Joint-Stock Companies”. Recently, certain changes have been made to the legislation, but they do not fully comply with accepted international practice, are sporadic in nature, do not contain effective mechanisms for protecting the rights of employees using these programs, in addition, the practical possibility of using such programs by companies engaged in certain areas of activity has not been taken into account. Within the framework of the article, an attempt was made to identify the impact of all the mentioned shortcomings on the possibility of practical application of this institute, and substantiated the importance of such programs in the process of operation of startup companies. Taking into account the analysis carried out in the article, a number of generalizations and practical proposals are made that can help ensure the practical application of this institute.

Key words: *Joint stock company, employee stock ownership, employee stock ownership plan, derivative financial instruments, stock options, phantom stock, startup company*

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐԴՈՒՇ ԵՍԱՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Ընտանեկան գործերով վարույթը նորույթ է Հայաստանի դատավարական օրենսդրության համար. այն դասվում է հատուկ հայցային վարույթների շարքին: Օրենսդիրը, այս վարույթի համատեքստում ընդգծելով երեխայի լավագույն շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, դրա համար սահմանել է քննության որոշակի առանձնահատկություններ: Հոդվածի շրջանակներում քննարկվել են ընտանեկան գործերով վարույթի այդ առանձնահատկությունները: Սույն հոդվածի շրջանակներում ընտանեկան գործերը պայմանականորեն դասակարգվել են երեք հիմնական խմբերի.
Ընտանեկան գործեր՝ ելնելով ընտանեկան իրավահարաբերություններից,
Ընտանեկան գործեր՝ ելնելով երեխայի լավագույն շահերից,
Ընտանեկան գործեր՝ ելնելով Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերից:

Բանալի բառեր – *հատուկ հայցային վարույթներ, ընտանեկան գործեր, երեխայի լավագույն շահ, ընտանեկան վեճերով վարույթ, ընտանեկան իրավահարաբերություններ, անօրինական տեղափոխված երեխա, ապօրինի պահվող երեխա*

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտանիքը գտնվում է պետության պաշտպանության ներքո:

Հանդիսանալով պետական քաղաքականության գերակա ուղղություններից՝ սահմանադրական այս դրույթը իր ամրագրումն է գտել նաև ընտանեկան օրենսդրության մեջ: Ամուսնությունը և ընտանիքը հասարակական երեվույթներ են, և կարևորելով այս տեսակ հարաբերությունների նշանակությունը՝ օրենսդիրը ընտանեկան վեճերով գործերի քննությունը ՀՀ քաղաքացիական

* **Վարդուշ Եսայան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ

Вардущ Есаян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ

Vardush Yesayan – Candidate of Law, Associate Professor at YSU Chair of Civil Procedure

Էլ. փոստ՝ vardyesayan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0003-3361-9208>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 10.01.2024

Գրախոսվել է՝ 27.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

դատավարության օրենսգրքում նախատեսել է առանձին գլխով:

Ընտանեկան գործերով վարույթը նորույթ է Հայաստանի դատավարական օրենսդրության համար, և **քաղաքացիական դատավարությունում այս վարույթը** դասվում է հատուկ հայցային վարույթների շարքին:

Ընտանեկան գործերը պայմանականորեն կարող ենք դասակարգել երեք հիմնական խմբի.

1. Ընտանեկան գործեր՝ ելնելով ընտանեկան իրավահարաբերություններից,

2. Ընտանեկան գործեր՝ ելնելով երեխայի լավագույն շահերից,

3. Ընտանեկան գործեր՝ ելնելով Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերից:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի՝ ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով ՀՀ ընտանեկան օրենսգրքով և 203-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

Օրենսդիրը այս վարույթի համատեքստում ընդգծել է երեխայի լավագույն շահերի պաշտպանության անհրաժեշտությունը՝ դրա համար սահմանելով քննության առանձնահատկություններ:

Ընտանեկան իրավահարաբերությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով պարտավոր է, չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես՝ պահանջել տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարել գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակել փորձաքննություն, հարցաքննել վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել փաստաթղթեր: Այս դրույթը միտված է երեխայի լավագույն շահերի պաշտպանության արդյունավետ իրականացմանը, երեխաների իրավունքների խախտումների հնարավորինս բացառմանը և դատավարության ընթացքում գործի հանգամանքների առավել մանրակրկիտ վերհանմանը:

Ընտանեկան հարաբերությունների կարգավորման համատեքստում բավականին կարևոր է այս տեսակ իրավահարաբերություններից առաջացած վեճերը հատուկ հայցային վարույթի կարգով քննելու անհրաժեշտությունը,

քանի որ դրանց արդարացի լուծումը ունի ոչ միայն իրավաբանական, այլ նաև հասարակական կարևոր նշանակություն:

ՀՀ գործող օրենսդրությամբ դատարանին վերապահված է սեփական նախաձեռնությամբ գործողություններ կատարելու հնարավորություն, որը ուղղված է հենց այս գործառնության իրականացմանը, քանի որ դատարանը պետք է հստակորեն ձևավորի իր ներքին համոզմունքը, որը կարող է կապված լինել, օրինակ, երեխայի լավագույն շահերի պաշտպանության հետ, և գործի ելքը կարող է կանխորոշել երեխայի ճակատագիրը:

Ընտանեկան վեճերի քննության առանձնահատկություններից է նաև դատարանի կողմից հայցի ապահովման հարցի լուծման առանձնահատուկ կարգի առկայությունը: Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման: Մա իր հերթին բխում է այն ողջամիտ տրամաբանությունից, որ այս ոլորտում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ հայցի ապահովում չկիրառելը կարող է հանգեցնել հետագայում դրա կատարման անհնարինության, ինչպես նաև կարող է խաթարել ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների և գաղափարների էությունը:

Օրենսգրքի 203-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ընտանեկան վեճեր քննելիս դատարանները պարտավոր են, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, հաշվի առնել ինչպես նույն հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները:

Ընտանեկան գործերով վարույթի մյուս առանձնահատկությունն այն է, որ այս վարույթի շրջանակներում առկա է որոշակի պայմաններով նույնական հայցի կրկնակի քննության հնարավորություն: Այս հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանը¹: Այսպես, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչներն ամրագրված են Սահմանադրության 63-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպերով հաստատված է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավուն-

¹ Տե՛ս 10.03.2020թ. ՄԴՈ թիվ 1515 որոշումը:

քը, որի մասնավոր տարրն է դատարանի մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, իսկ այդպիսի «...սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն»²: Նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայցի՝ դատարանի կողմից կրկնակի քննության արգելքը նպատակ ունի նախ՝ երաշխավորել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացումը՝ ապահովելով դատական որոշումների վերջնականությունը և կանխելով նույն հարցի վերաբերյալ դատարանի կողմից տարաբնույթ որոշումների կայացումը: Երկրորդ՝ նույն հարցի կրկնակի քննության արգելքը կոչված է ապահովելու արդյունավետ արդարադատության իրականացումը՝ թույլ չտալով նույն հարցով դատարանին կրկնակի ծանրաբեռնելը: Ի վերջո, այդ արգելքի նպատակն է նաև բացառել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը:

Դատական պաշտպանության արդյունավետությունը պետք է դիտարկել նաև այն տեսանկյունից, թե արդյոք գործի վարույթը կարճելու վերաբերյալ քննարկվող ընդհանուր կարգավորումները հնարավորություն են տալիս Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերը: Հարկ է նկատել, որ երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից: Այսպես, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է դաշնագրի մասնակից պետությունների, ի թիվս այլնի, ամուսնալուծության դեպքում ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունն ապահովելու համար պատշաճ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը, ինչպես նաև բոլոր երեխաների անհրաժեշտ պաշտպանության պարտավորությունը: ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»: Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 5-րդ հոդվածն ամրագրում է ամուսինների հավասարությունը, մասնավորապես՝ ամուսնալուծության դեպքում ամուսինների հավասար իրավունքները և մասնավոր ի-

² Տե՛ս «Khalifaoui v. France», app. № 34791/97, 14/03/2000:

րավական բնույթի հավասար պատասխանատվությունը փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք, իսկ այդ հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ: Նույն օրենքի 14-րդ հոդվածը ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է: Անդրադառնալով երեխայի և ծնողների փոխհարաբերություններին՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որ իշխանությունները երեխայի և ծնողների շահերի միջև գտնեն արդար հարաբերակցություն և այդ շահերը հավասարակշռելիս հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին, որոնք, կախված իրենց բնույթից և լրջությունից, կարող են գերակշռել ծնողների շահերին: *Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն՝ ծնողին չի կարող տրամադրվել այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունք, որոնք վնաս են հասցնում երեխայի առողջությանը և զարգացմանը*³:

Իր ավելի վաղ արտահայտած դիրքորոշումներից մեկում ՄԻԵԴ-ը նշել է, որ «ընտանեկան կյանքն» ընդգրկում է ոչ միայն սոցիալական, բարոյական կամ մշակութային բնույթի հարաբերություններ, այլև ներառում է նյութական շահեր, ինչպիսիք են, մասնավորապես, ալիմենտային պարտավորությունները...⁴:

Հենց այս առանձնահատկությունները նկատի ունենալով՝ օրենսդիրը նախատեսել է այդ վեճերի քննության հատուկ կարգ: Այսպես, ՀՀ ՔԴՕ 201-րդ հոդվածի համաձայն՝ դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են հատուկ հայցային վարույթների համար երկրորդ ենթաբաժնով նախատեսված դրույթներով: Վերոհիշյալ ենթաբաժնի «Ընտանեկան վեճերով գործի քննության առանձնահատկությունները» վերտառությամբ 203-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը, ելնելով երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից, դատարանի համար ամրագրում է պարտականությունների ավելի լայն շրջանակ, քան դատարանն ունի ընդհանուր կարգով գործեր քննելիս, ինչը վերաբերում է գործի քննության բոլոր փուլերին: Չնայած նշված հոդվածը նույնական հայցով դատարան դիմելու համար ուղղակիորեն բացա-

³ Տե՛ս ՄԻԵԴ «Rytchenko v. Russia» որոշումը, 20/01/2011, app. no. 22266/04, §39)

⁴ Տե՛ս ՄԻԵԴ Marckx v. Belgium որոշումը, 13/06/1979, app. no 6833/74, § 52:

ություն չի նախատեսում, սակայն դրա 2-րդ մասը, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, սահմանում է դատարանի պարտականությունը՝ գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով չսահմանափակվել գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար: Ըստ օրենսդրի՝ ձեռնարկվելիք ողջամիտ միջոցների շարքին են դասվում մասնավորապես՝ «պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր»:

Ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածը սահմանում է երեխաների ապրուստը հոգալու ծնողների պարտականությունները: Այդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ծնողներն ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով: Հնարավոր են դեպքեր, երբ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին հայցից հրաժարվելը պայմանավորված լինի ընտանիքը պահպանելու նպատակով դատական պաշտպանության մեխանիզմը տվյալ կոնկրետ ժամանակահատվածում չկիրառելու հայցվորի ցանկությամբ, ինչը չի նշանակում, որ հայցվորն ընդմիջտ հրաժարվում է ալիմենտի պահանջից: Պրակտիկայում կարող են նաև լինել դեպքեր, երբ հայցվորը, պատասխանողի հետ որոշակի բանավոր պայմանավորվածություններ ձեռք բերելով, արդյունքում հրաժարվում է հայցից, սակայն վերջինս ինչ-ինչ պատճառներով չի կատարում պայմանավորվածություններից բխող պարտականությունները: Անգամ կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պատասխանողը, իրականում ցանկություն չունենալով կատարելու իր նյութական պարտավորությունները երեխայի հանդեպ, չարաշահում է հայցվորի վստահությունը, համոզում է վերջինիս հրաժարվել իր դեմ հարուցված հայցից, սակայն չի կատարում տրված խոստումները: Արդյունքում՝ երեխան հայտնվում է անբարենպաստ պայմաններում, և ոտնահարվում են նրա շահերը: Ընտանեկան օրենսգրքի վերաբերելի դրույթներից հետևում է, որ երեխայի համար ապրուստի միջոց տրամադրելու՝ ծնողի պարտավորությունը չի դադարում մյուս ծնողի ալիմենտի պահանջից հրաժարվելու հիմքով, այլ շարունակվում է մինչև երեխայի չափահաս դառնալը, իսկ երեխայի անաշխատունակության դեպքում՝ նաև նրա չափահաս դառնալուց հետո: Հետևաբար, ալիմենտային իրավահարաբերությունները շարունակական են և ժամանակի ընթացքում կարող են, կողմերի վարքագծով կամ գույքային հնարավորություններով պայմանավորված, որոշակի փոփոխությունների ենթարկվել:

Այսպիսով՝ ընտանեկան վեճերով վարույթի առանձնահատկություններից է նաև այն, որ ընտանեկան օրենսգրքի վերը հիշատակված կարգավորումների պայմաններում երեխայի լավագույն շահի և երեխայի համար հոգ տանելու ծնողի շարունակվող պարտավորության կատարման ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դատարանը պարտավոր է հաշվի առնել հայցից հրաժարվելու հիմքով ալիմենտի պահանջի մասին գործի վարույթի կարճման որոշումից հետո կողմերի վարքագծի, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխությունները և նույն կողմերի միջև նոր հայց ներկայացվելու դեպքում այն ըստ էության քննության առնել:

ВАРДУШ ЕСАЯН – Особенности семейного судопроизводства. – Семейное судопроизводство является новым для процессуального законодательства Армении, и в гражданском судопроизводстве это производство отнесено к специальному исковому производству.

В контексте данного производства законодатель подчеркнул необходимость защиты интересов ребенка и определил некоторые особенности проведения экспертизы. В рамках статьи рассмотрены особенности производства по семейным делам.

В рамках данной статьи семейные дела условно подразделяются на три основные группы:

1. Семейные дела, основанные на семейных правоотношениях.
2. Семейные дела, основанные на наилучших интересах ребенка,
3. Семейные дела по делам о возвращении ребенка, незаконно переданного в Республику Армения или незаконно удерживаемого в Республике Армения.

Ключевые слова: *особое исковое производство, семейные дела, наилучшие интересы ребенка, производство по семейным спорам, семейные правоотношения, незаконно перевозимый, незаконно удерживаемый ребенок*

VARDUSH YESAYAN – Features of Family Proceedings. – Family proceedings represent a novel addition to the procedural legislation of Armenia, and within civil proceedings, this proceeding is categorized as a special claim proceeding.

The legislator, in the context of these proceedings, has underscored the importance of safeguarding the best interests of the child and has outlined specific features of the examination. This article discusses the distinctive characteristics of family cases within this framework.

Within the scope of this article, family cases are conventionally grouped into three main categories:

1. Family cases based on family legal relations.
2. Family affairs based on the best interests of the child.
3. Family cases concerning the return of a child illegally transferred to the Republic of Armenia or illegally kept in the Republic of Armenia.

Key words: *special claim proceedings, family cases, best interests of the child, family dispute proceedings, family legal relations, illegally transported, illegally detained child*

THE EMPLOYEE'S RIGHT TO REINSTATE IN CASE OF ILLEGAL DISMISSAL

MANE KARAPETYAN* 
Yerevan State University

Abstract. This article presents the institution of exercising the right to reinstatement of an illegally dismissed employee and the problematic issues of its application in the context of balancing the reasonable interests of the employee and the employer. Reference was made to the cases when an illegally dismissed employee cannot be reinstated in his previous job due to objective circumstances, the existence of a relationship of trust between the employee and the employer was discussed, as well as the possibility of the employee's reinstatement in his previous and equivalent job. Summing up the results of the study, we come to the conclusion that the legislator failed to regulate the institute of non-reinstatement of illegally dismissed employees to their previous jobs, giving the courts such wide discretion that in the same factual circumstances, irreconcilable judgments may be issued due to the judge's subjective approach. In order to resolve the existing uncertainty we suggest to clarify the scope of discretion of the courts not to restore illegally dismissed employees to their former jobs, conditioned solely by objective factors. This article presents the experience of foreign countries, doctrinal approaches, international legal standards and judicial practice.

Key words: *illegal dismissal; reinstate; former job; the right to reinstatement; an equivalent job; dismissal; expectations to be reinstated; labor law*

In case of illegal dismissal, one of the main expectations of the employee is to be reinstated in his/her previous position. As I.M. Ospichev rightly stated, the social significance of disputes regarding reinstatement in the previous position is very important because, for the majority of citizens, the employment contract is the main way to implement the right of free choice of work¹. On this view, labor law is a system of laws aimed at securing “justice” for employees by addressing the inherent imbalance of power between employer and employee².

* **Մանե Կարապետյան** – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

Мане Карапетян – кандидат юридических наук, преподаватель кафедры гражданского права ЕГУ

Mane Karapetyan – Candidate of Law, Lecturer at YSU Chair of Civil Law

Էլ. փոստ՝ mane.karapetyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0009-4989-3851>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 05.02.2024

Գրախոսվել է՝ 27.02.2024

Հաստատվել է՝ 17.05.2024

© The Author(s) 2024

¹ **Оспичев И.М.**, Основания и последствия незаконного увольнения. <https://cyberleninka.ru/article/n/osnovaniya-i-posledstviya-nezakonnogo-uvolneniya> (25.10.2022)

² **Richard Mitchell**, ‘Where Are We Going in Labour Law? Some Thoughts on a Field of Scholarship and Policy in Process of Change’ (2011) 24 Australian Journal of Labour Law 45, 48.

Nevertheless, if the legislator has clearly defined the obligation of the employer to pay forced idleness to illegally dismissed employees, the same cannot be said about the right of employees to be reinstated in their previous job. Of course, not in all cases, the work that the employee performed before being dismissed is available at the time of issuance of the court decision. In addition, there are cases when the restoration of an employee to his/her former job is objectively not justified.

From this point of view, we agree with the approach of the legislator that the court in each case has the right to discretion in paying monetary compensation to the employee instead of reinstatement to the previous job. However, granting such discretion to the court can be justified only when the limits of the exercise of that discretion are clearly predetermined.

This article presents the institution of exercising the right to reinstatement of an illegally dismissed employee and the problematic issues of its application in the context of balancing the reasonable interests of the employee and the employer.

One of the most important and traditional functions of labor law is the protection of employees, which, in turn, is due to the inequality of bargaining power between employers and employees³.

It is noteworthy that the reinstatement of the dismissed employee to his/her previous position is also very sensitive for the employer, who is essentially forced to pay wages and use the labor force of the person with whom he no longer wants to cooperate.

M.Yu.Gasanov said that the stability of society depends in many cases on the success of balancing the interests of the employee and the employer by labor legislation.⁴

Therefore, it is very important to ensure the right of an illegally dismissed employee to be reinstated to his/her previous position, as well as to protect the vital interests of the employer. Based on this starting point, not in all cases an illegally fired employee can be reinstated to his previous position, such an approach is also defined by the Convention No. 158 of the International Labor Organization.

Article 10 of the mentioned convention defines: if the bodies referred to in Article 8 of this Convention find that termination is unjustified and if they are not empowered or do not find it practicable, in accordance with national law and practice, to declare the termination invalid and/or order or propose reinstatement of the worker, they shall be empowered to order payment of adequate compensation or such other relief as may be deemed appropriate.

The possibility of not reinstating an illegally fired employee to his previous job is also defined by the legislation of many developed and developing countries.

For example, in Finland, an illegally dismissed employee cannot be reinstated without the employer's consent⁵.

In Portugal, the organization can request the employee not be reinstated if it is a micro-sized or the employee has held a management position⁶.

Nevertheless, the approach of our legislator leads to the definition of the institution

³ Rosemary Owens, Joellen Riley and Jill Murray, *The Law of Work* (Oxford University Press, 2nd ed, 2011) 21.

⁴ Gasanov M.Yu. Labor Code of the Republic of Uzbekistan: issues of further improvement // Handbook of personnel issues. 2007, № 3, -p. 30.

⁵ https://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS_158896/lang-en/index.htm (17.11.2022)

⁶ <https://europeanemploymentlaw.eu/tupe/Portugal-TUPE-Questionnaire.pdf> (17.11.2022)

of reinstatement of an illegally fired employee as a general rule, and only in exceptional cases does the legislator consider it possible to provide monetary compensation instead of reinstatement.

The relations of illegally dismissed employees to be reinstated to their previous jobs are regulated by Article 265.2 of the RA Labor Code which defines that for economic, technological and organizational reasons, or in case of impossibility of reinstatement of future employment relations between the employer and the employee the court need not reinstate the employee to his or her former office, making the employer obliged to pay compensation for the entire period of forced idleness in the amount of the average salary, prior to entry into force of the court judgment, and pay compensation in exchange for non- reinstatement of the employee to office in the amount of not less than the average salary, but not more than twelve-fold of the average salary.

The above-mentioned legal norm essentially allows not to reinstate an illegally dismissed employee in the following cases:

1. There are economic, technological and structural /organizational reasons, or
2. The restoration of further labor relations between the employer and the employee is impossible.

It is also important to note that according to the regulation mentioned above, the employee can be reinstated only in the previous position, that is, reinstatement is possible only when the employee's previous position is available.

➤ **The court's discretion is not to reinstate the employee in the previous position for economic, technological and organizational reasons.**

As a rule, quite a long time has passed between the day of the illegal dismissal the employee and the day of the judicial act entered into force. In some cases, the examination of labor disputes takes years. Reinstatement is a suitable remedy only if labour disputes are resolved expeditiously⁷.

In all cases where a labor dispute is investigated and an employee is reinstated by a court in his/her former job years later, it is not excluded that the work that the employee performed at the time of dismissal may not be available at the time of the court decision.

In addition, the reduction of the number of employees and/or the position is an independent basis for the termination of the employment contract. In this cases, there may be situations when the position held by the employee is eliminated and no longer exists, but the dismissal order is recognized as invalid due to other violations committed by the employer.

In the above-mentioned situations, it is obvious that there is an objective reason for not reinstating the illegally dismissed employee to his/her previous position, which is included in the context of economic, technological and organizational reasons.

Moreover, this institution was also interpreted by the RA Court of Cassation, which stated the following legal position: mentioned in Part 2 of Article 265 of the RA Labor Code.

In the conditions of the existence of grounds for not reinstating the employee to work specified in part 2 of Article 265 of the RA Labor Code, the court cannot impose such an obligation on the company, the actual fulfillment of which is objectively impossible,

⁷ **Geldenhuys J**, "The Reinstatement and Compensation Conundrum in South African Labour Law" PER / PELJ 2016(19), p. 8:

and in such cases, the court's failure to apply the above-mentioned article will result in an additional obligation for the employer to create a new structural unit, a new position, and the definition of such an obligation will lead to the limitation of the employer's, RA Constitution's, guarantee norms applicable to legal entities and the rights provided by the law... For this purpose, the legislator defined the legal possibility of the employer not reinstating the employee in Article 265, Part 2 of the RA Labor Code, reserving to the court the authority to assess the legality of that behavior to determine the impossibility of the reinstatement of the future employment relationship between the employer and the employee due to economic, technological, organizational or other reasons, based on the facts of the case⁸.

In our opinion, the approach of the legislator in this regard is legitimate and serves to balance the interests of the employee and the employer.

➤ **The court's discretion not to reinstate the employee in the previous job regarding the impossibility of restoring the future employment relationship between the employer and the employee.**

In this formulation of the legal norm, the term "impossibility" is used, from which it appears that the impossibility must be determined by objective factors and not, for example, by the subjective will of the employer. Nevertheless, in judicial practice, the word "impossibility" is also interpreted in the context of subjective factors.

Before addressing the issue of interpretation of the mentioned norm in the current edition, we consider it necessary to make a comparative analysis between the current and previous editions, taking into account the fact that the previous edition of the mentioned norm was interpreted by the RA Constitutional Court.

Article 265 of the RA Labor Code, former 2010 in the current edition, defined the following possibility of not being reinstated in the previous job - For economic, technological and organizational, or other reasons, or in case of impossibility of reinstatement of future employment relations between the employer and the employee the court is authorized not to reinstate the employee to his or her former position ...

The presence of the words "or for other reasons" in this wording, the RA Constitutional Court recognized as contrary to the Constitution of the Republic of Armenia and invalid by the decision SDO-902, July 7, 2010. With the mentioned decision, the RA Constitutional Court expressed the following position: "The study of legal practice proves that the reasons for the impossibility of restoring the future employment relationship between the employer and the employee are considered to be circumstances that have nothing to do with economic, organizational and technological reasons.

Meanwhile, the concept of "or other reasons" implies such circumstances, which by their nature should be closely related to the objective grounds characteristic of economic, organizational or technological reasons. This is also the requirement of Convention No. 158, Article 13 which allows illegally dismissed employees not to be reinstated if reinstatement is impossible for economic, technological, organizational or other similar reasons. Taking into account the above-mentioned feature of law enforcement practice, that the economic, technological or organizational reasons arising after the illegal

⁸ Զոյա Օստոյրյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):

dismissal of a person are considered as a justification for the impossibility of reinstatement, the Constitutional Court considers it necessary to emphasize that when applying the contested provision, in each specific case, the law enforcer must also assess whether This reason is not artificially created by the employer to prevent the possible reinstatement of the illegally dismissed employee based on the court's decision.

Based on the mentioned results of the study of legal practice, as well as taking into account the legal position of the European Court that guaranteeing the principle of predictability, certainty and clarity of the law, among others, is also intended to prevent, to exclude the "danger of arbitrariness" (see, in particular, Hilda Hafsteinsdottir v. Iceland, paragraph 56), the Constitutional Court considers that the inaccurate definition of the reasons for the impossibility of reinstatement in the law and the presence of the wording "other reasons" in the contested provision and the broad interpretation given to it practically create the danger of different treatment in the same situations.⁹

In our opinion, by removing the words "other reasons" from the text of the legal norm, no substantive change was made because the words "**in case of the impossibility of restoring the employee's future employment relations**" remained the same, from which it directly follows that the alleged impossibility must be due to reasons, which in turn differ from economic, technological and organizational reasons, because if they did not differ, the conjunction "or" would not be used.

Moreover, the RA Court of Cassation in its 25.12.2007 3-1946 (VD) decision expressed the following legal position: "The Court of Cassation considers that in this civil case is applicable clause 2 of Article 265 of the Labor Code of the Republic of Armenia, as the fact of strained relations between the employer and the plaintiff is proven in the case, as well as the fact of the impossibility of restoring normal labor relations, under which conditions it is impossible for the employee to perform his work duties".

In legal doctrine, there is the approach that when an employee is dismissed, the relationship between employer and employee generally deteriorates due to a lack of trust within the relationship¹⁰.

It is also obvious that the tension affects the loss of trust in one way or another, which is a necessary precondition for organizing effective work.

In management literature, trust is defined as a psychological state comprising the intention to accept vulnerability based on positive expectations of the intention or behavior of another¹¹.

Research shows that trust in employees plays a huge role in organizations because trusted employees are much more committed to their work and continue to work much longer than those who are not trusted¹². We agree that, although the formation of trust in

⁹ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց-ձեռնարկ), Գ.Դանիելյան, Ա.Գյուլումյան, Հ.Նազարյան, Վ.Այվազյան և Հ.Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի, Եր., 2016, p. 645:

¹⁰ **Thabo Mongale**. Dispute Resolution Official-Kimberley.// <https://ceosa.org.za/re-employment-versus-reinstatement/#:~:text=Case%20law%20suggests%20that%20in,the%20dismissal%20did%20not%20occur> (28.10.2022).

¹¹ **Rousseau, D. M., Sitkin, S. B., Burt, R. S., & Camerer, C.** (1998). Not so different after all: A cross-discipline view of trust. *Academy of Management Review*, 23(3) pp. 393–404.

¹² **Weibel, A., Den Hartog, D., Gillespie, N., Searle, R., Six, F., & Skinner, D.** (2016). How do controls impact employee trust in the employer? *Human Resource Management*, 55 (3), pp. 437–462. Weick, K. E. (1995).

the relationship between an employee and an employer takes some time, it can be lost very quickly.¹³

Research reveals that when employee's trust is damaged, employees become unwilling to apply trust-based behaviors promoting effective functional activities such as cooperation, discretionary effort, knowledge sharing, and effective problem solving¹⁴.

Many researchers indicate that trust in work relationships can be repaired,¹⁵ although repaired trust is structurally different from the pre-violation or pristine trust¹⁶.

Of course, trust is an important guarantee for the organization of normal work, and in this regard, it is necessary to balance the interests of employers, in cases where the question of reinstatement of an illegally dismissed employee to his/her previous job is discussed. Nevertheless, the balancing of interests cannot imply giving an advantage to one of the subjects of the legal relationship. Research reveals that Employers frequently rely on the loss of trust and confidence to argue that reinstatement is inappropriate.¹⁷

The key conclusions of this analysis are that whether reinstatement should be denied due to a loss of trust and confidence is a largely subjective concept¹⁸ that can be lost by both objective and subjective factors.

Especially if, in fact, the employer no longer trusts the employee, but is conditioned by subjective factors, then this fact cannot be confirmed by any evidence.

Consequently, if the requirement to refuse to restore the "loss of trust" or "strained relations" at the previous job is taken as a basis, no employee will be reinstated in court at the last job, since the employer will present his unwillingness as a loss of trust or strained relations.

On the other hand, it cannot be completely excluded as a factor.

There are cases when the employer's trust is lost for objective reasons, but the dismissal decree is issued, for example, in violation of the procedure for imposing disciplinary sanctions on the employee, which is the basis for declaring the dismissal decree invalid.

For example, if an employee has published information about a trade secret, the employer may terminate the employment contract concluded with the employee on the basis of loss of trust but is obliged to comply with the procedure for applying disciplinary sanctions. In such circumstances, even if it is proved during the trial that the employee

¹³ **Robinson, S. L.** (1996). Trust and breach of the psychological contract. *Administrative Science Quarterly*, 41(4), pp. 574–599.

¹⁴ **T.Kahkonen, K.Blomqvist, N.Gillespie, M.Vanhala.** Employee trust repair: A systematic review of 20 years of empirical research and future research directions.//*Journal of Business Research* 130 (2021) pp. 98-109:

¹⁵ **Bottom, W. P., Gibson, K., Daniels, S., & Murnighan, J. K.** When talk is not cheap: Substantive penance and expressions of intent in rebuilding cooperation.// *ORGANIZATION SCIENCE*/Vol. 13, No. 5, September–October 2002, pp. 496-513:

¹⁶ **Lewicki, R., & Bunker, B. B.** (1996). Developing and maintaining trust in work relationships. In R. M. Kramer, & T. R. Tyler (Eds.), *Trust in organizations: Frontiers of theory and research* (pp. 114–139). SAGE: Thousand Oaks, CA.

¹⁷ *Australasian Meat Industry Employees' Union v G & K O'Connor Pty Ltd* [2000] FCA 627 (12 May 2000) ('AMIEU'); *Nguyen v Vietnamese Community in Australia* [2014] FWC 4314 (8 July 2014) ('Nguyen'); *Farmer v KDR Victoria Pty Ltd*, [2014] FWC 6539 (22 September 2014) ('Farmer'); *Goodwin v Shanaya Pty Ltd* [2016] FWC 4317 (7 July 2016) ('Goodwin'); *Millard v K & S Freighters Pty Ltd* [2017] FWC 105 (6 January 2017) ('Millard').

¹⁸ **Elizabeth Shi and Freeman Zhong** Rethinking the reinstatement remedy in unfair dismissal law. *AdelLawRw* 14; (2018) 39(2), p. 328.

actually published information about a trade secret, but the rules for applying disciplinary sanctions were violated, the dismissal order is invalid. In this case, we do not consider it right to restore the employee to his previous job as a consequence of the invalidity of the dismissal order, since the employer objectively no longer trusts the employee, it is impossible to continue normal labor relations.

The loss of confidence can also be caused by the behavior of the employee, which is not directly related to the performance of his/her work duties. For example, in the leading case, *Perkins v Grace Worldwide (Aust) Pty Ltd* ('Perkins'), in the international judicial practice regarding the demand for reinstatement in the previous job. In this case, the employee was dismissed based on allegations that he had supplied marijuana cigarettes to two other employees.

The decision of the court of first instance held that the allegations were unfounded and the dismissal was unfair. However, it denied reinstatement. The employer successfully argued that it had lost trust and confidence in the employee. The employee lodged an appeal to the superior court, which reversed the decision and ordered his reinstatement. In doing so, it set out what has now become the leading statement of principle on the trust and confidence consideration. The Court, constituted that, trust and confidence is a necessary ingredient in any employment relationship ... So we accept that the question whether there has been a loss of trust and confidence is a relevant consideration in determining whether reinstatement is impracticable, provided that such loss of trust and confidence is soundly and rationally based¹⁹.

Here, it is very important to emphasize that the court did not consider the loss of trust as a necessary condition for non-reinstatement in the former job but stated that the loss of trust is essential when examining the claims for reinstatement in the former job. Even in cases where the employer declares that he has lost confidence, it is not necessarily followed by the rejection of the request for reinstatement in the previous job. Loss of trust is a subjective category, and it depends exclusively on the attitude of one person towards another and the fact of loss of trust can be present even in cases where it is not substantiated and reasoned in any way. However, an unjustified loss of confidence cannot result in non-reinstatement.

In addition, loss of confidence is an estimable category. There are very rare cases when there is absolute trust in another person.

Loss of trust and confidence is not by itself enough to justify denying reinstatement, even if it is rationally based; it must be a loss of trust and confidence that makes the employment relationship unworkable.

It is rare for any human being to have total trust in another. What is important in the employment relationship is that there be sufficient trust to make the relationship viable and productive. Whether that standard is reached in any particular case must depend upon the circumstances of the particular case.²⁰

Finally, there are also separate grounds for the termination of the employment contract, in which the relationship of trust is very important. For example, if the

¹⁹ *Perkins* (1997) 72 IR 186, 191.// <https://jade.io/article/318991> (17.11.2022)

²⁰ Elizabeth Shi and Freeman Zhong Rethinking the reinstatement remedy in unfair dismissal law. *AdelLawRw* 14; (2018) 39(2), p. 379:

employment contract with a person performing educational functions is terminated in violation of the order established by law or without a legal basis, it turns out that this person, for example, after working hours is engaged in activities that are not consonant with the function of teaching and raising children, then the employer will reasonably lose confidence in him, but in this case, the thesis that decision-makers consider every matter which is objectively relevant to his or her decision²¹, in our opinion, it will not act, and the court must also discuss circumstances that do not directly follow from the employment relationship, but exclude restoration to the previous job, due to the loss of trust on the part of the employer.

In our opinion, as we have already mentioned, the interpretation of the term "impossible" in the phrase "it is impossible to restore the labor relations between the employer and the employee" should be based on an exclusively objective criterion, and it should not be conditioned by subjective factors in any way.

In the opposite approach, the interpretation is nothing more than giving discretionary powers to the court without defining the possible extent of the exercise of discretion. Even the exercise of discretionary powers must be exercised within certain limits.

Francis Bennion identified the defining features of a discretionary power as follows:

Discretion is applied where the empowering enactment leaves it to the chosen functionary to make a determination at any point within a given range ... In reaching a decision, D [the decision-maker] is not required to assume there is only one right answer²². On the contrary, D is given a choice dependent to a greater or lesser extent on personal inclination and preference. A purported exercise of discretion outside that range will be unlawful²³.

In this context, the legislator's approach of giving the courts discretion not to reinstate an illegally dismissed employee is reasonable, but the limits of such discretion must be delineated by reasonable and measurable circumstances.

➤ **The institution of reinstating the employee to an equivalent job instead of the previous job and its applicability in the context of Article 265 of the Labor Code.**

Article 265 of the Labor Code, in its current version, defines the term "former work" and only in terms of the possibility of non-reinstatement. It is certainly obvious that if there are no reasons not to reinstate the employee to his/her previous job, then s/he should be reinstated to his/her previous job. Nevertheless, in practice, there are many situations when the employee's previous job is not available at the time of proclamation of the court decision, but there is another job equivalent to the previous job.

Moreover, the study of foreign experience shows that the institution of restoring the employee to an equivalent job is widely used along with the previous job.

For example, in Australia, this relationship is regulated by Fair Work Act 2009, the 391 point (reinstatement) of which defines` An order for a person's reinstatement must be an order that the person's employer at the time of the dismissal reinstate the person to the position in which the person was employed immediately before the dismissal; or

²¹ Minister for Aboriginal Affairs v Peko-Wallsend Ltd (1986) 162 CLR 24, 39–40 (Mason J).

²² Francis Bennion, Understanding Common Law Legislation: Drafting and Interpretation (Oxford University Press, 2001) 137–8.

²³ Elizabeth Shi and Freeman Zhong Rethinking the reinstatement remedy in unfair dismissal law. AdelLawRw 14; (2018) 39(2),p. 368:

appoint the person to another position on terms and conditions no less favorable than those on which the person was employed immediately before the dismissal²⁴.

In the UK, If the tribunal decides not to make an order for reinstatement, it shall then consider whether to make an order for re-engagement and, if so, on what terms²⁵.

In the Republic of South Africa the S 193(2) point of the Labour Relations Act, 1995 defines that if the Labor Court or an arbitrator appointed in terms of this Act finds that a dismissal is unfair, the Court or the arbitrator may- (a) order the employer to reinstate the employee from any date not earlier than the date of dismissal; (b) order the employer to re-employ the employee, either in the work in which the employee was employed before the dismissal or in other reasonably suitable work on any terms and from any date not earlier than the date of dismissal; or (c) order the employer to pay compensation to the employee. (2) The Labour Court or the arbitrator must require the employer to reinstate or re-employ the employee unless- (a) the employee does not wish to be reinstated or re-employed; (b) the circumstances surrounding the dismissal are such that a continued employment relationship would be intolerable; (c) it is not reasonably practicable for the employer to reinstate or re-employ the employee; or (d) the dismissal is unfair only because the employer did not follow a fair procedure. (3) If a dismissal is automatically unfair or, if a dismissal based on the employer's operational requirements is found to be unfair, the Labour Court, in addition may make any other order that it considers appropriate in the circumstances²⁶.

It is important for an employee to constantly do his/her job and earn money. In our opinion, this goal is served by the institution of not only reinstatement to the previous job but also reinstatement to an equivalent job in all those cases when the former position of the employee has not been preserved, but instead, there is another equivalent job.

CONCLUSION

Summing up the results of the study, we come to the conclusion that the legislator failed to regulate the institute of non-reinstatement of illegally dismissed employees to their previous jobs, giving the courts such wide discretion that in the same factual circumstances, irreconcilable judgments may be issued due to the judge's subjective approach.

Legal regulation must be as well-known and predictable as possible, and judicial practice should be as uniform as possible. Only in such conditions do the subjects of law have a reasonable opportunity to bring their behavior in line with the requirements of legal norms.

In order to resolve the existing uncertainty, in our opinion, it is necessary to clarify the scope of discretion of the courts not to restore illegally dismissed employees to their former jobs, conditioned solely by objective factors. The courts should have the right not to reinstate an illegally dismissed employee to his/her former job, not only in cases where the impossibility of reinstatement is justified by economic, technological and organizational reasons but also in cases where such an impossibility is due to the lack of trust between the employee and the employer, however, in this case, the lack of trust

²⁴ <https://www.legislation.gov.au/Details/C2021C00421> (26.10.2022)

²⁵ <https://www.legislation.gov.uk/ukpga/1996/18/part/X/chapter/II/crossheading/orders-for-reinstatement-or-reengagement> (26.10.2022)

²⁶ <https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/43174/64455/F-1675744155/ZAF43174.pdf> (08.11.2022).

should be based on an objective, measurable and verified by certain evidences.

In addition, we believe that it is necessary to show a differentiated approach in the case of organizations with up to 10 employees, and, in this regard, to determine the need to have the employer's consent to the restoration of an illegally released employee, since in the case of micro-companies, personal relationships are very important and in this case the importance of balancing the interests of the employer and the employee is more clearly emphasized.

Finally, in our opinion, it is very important to introduce the institute of reinstatement of the employee not only to the previous but also to an equivalent job and clearly define its regulation. This institution, first of all, will exclude the possibility that the employers abuse the rights of the employees, for example, by renaming the position during the judicial proceedings, and presenting it as the absence of the previous job.

In addition, if there is an essentially equivalent job, it does not matter whether the employee will perform a similar job with the same or almost the same salary or exactly do the same job before dismissal. Finally, the institution of reinstating equivalent work can be applied only when the previous position does not exist so the introduction of this institution is directly in the interests of the employee. Referring to the balancing of the employer's interests, we believe that it is not essential for the latter whether the employee will be restored to the same job or an equivalent job, if there are no objective grounds to reinstate his/her.

ՄԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – Նախկին աշխատանքում վերականգնվելու՝ աշխատողի իրավունքի իրացումը անօրինական ազատման դեպքում– Սույն հոդվածում ներկայացվում են անօրինական ազատված աշխատողի՝ նախկին աշխատանքում վերականգնվելու իրավունքի իրացման ինստիտուտը և դրա կիրառման խնդրահարույց հարցերը աշխատողի և գործատուի ողջամիտ շահերի հավասարակշռման համատեքստում: Անդրադարձ է կատարվել այն դեպքերին, երբ անօրինական ազատված աշխատողին հնարավոր չէ վերականգնել նախկին աշխատանքում՝ պայմանավորված օբյեկտիվ հանգամանքներով, քննարկվել են աշխատողի և գործատուի միջև վստահության հարաբերությունների առկայությունը, ինչպես նաև նախկին և համարժեք աշխատանքում աշխատողի վերականգնման հնարավորությունը:

Արվել է եզրակացություն, որ օրենսդիրը չի կանոնակարգել սպորինի աշխատանքից ազատված աշխատողներին իրենց նախկին աշխատանքին չվերադարձնելու ինստիտուտը՝ դատարաններին տալով այնպիսի լայն հայեցողություն, որ նույն փաստացի հանգամանքներում կարող են կայացվել իրարամերժ դատական ակտեր՝ պայմանավորված դատավորի սուբյեկտիվ մոտեցմամբ: Առկա իրավական անորոշությունը շտկելու համար առաջարկվում է հստակեցնել անօրինական ազատված աշխատողներին նախկին աշխատանքում չվերականգնելու՝ դատարանների հայեցողության շրջանակները՝ հիմնվելով բացառապես օբյեկտիվ գործոնների վրա:

Հոդվածում ներկայացված են արտասահմանյան երկրների փորձը, դոկտրինալ մոտեցումները, միջազգային իրավական չափորոշիչները և դատական պրակտիկան:

Բանալի բառեր – անօրինական ազատում, վերականգնում, նախկին աշխատանք, աշխատանքի վերականգնման իրավունք, համարժեք աշխատանք, աշխատանքից ազատում, վերականգնվելու ակնկալիքներ, աշխատանքային իրավունք

МАНЕ КАРАПЕТЯН – Осуществление права работника на восстановление на прежней работе в случае незаконного увольнения. – В данной статье представлен институт реализации права на восстановление на работе незаконно уволенного работника и проблемные вопросы его применения в контексте баланса разумных интересов работника и работодателя.

Были упомянуты случаи, когда незаконно уволенный работник не может быть восстановлен на прежней работе в силу объективных обстоятельств, обсуждено наличие доверительных отношений между работником и работодателем, а также возможность восстановления работника на предыдущей или эквивалентной работе. Подводя итоги исследования, мы приходим к выводу, что законодатель не урегулировал институт невосстановления незаконно уволенных работников на прежнюю работу, предоставив судам настолько широкое усмотрение, что при одних и тех же фактических обстоятельствах могут быть вынесены непримиримые судебные решения из-за субъективного подхода судьи. Для разрешения существующей неопределенности предлагаем уточнить пределы полномочий судов по не восстановлению на прежних должностях незаконно уволенных работников, обусловленных исключительно объективными факторами.

В данной статье представлен опыт зарубежных стран, доктринальные подходы, международно-правовые стандарты и судебная практика.

Ключевые слова: *незаконное увольнение, восстановление на работе, прежнее место работы, право на восстановление на работе, равноценная работа, увольнение, ожидание восстановления на работе, трудовое право*

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝ Издательский редактор Publishing Editor	Արմեն Հովակիմյան Армен Овакимян Armen Hovakimyan
Վերստուգող սրբագրիչ՝ Контрольный корректор Proofreader	Գայանե Գրիգորյան Гаяне Григорян Gayane Grigoryan
Թողարկման պատասխանատու՝ Ответственный выпуска Issued by	Հասմիկ Եսայան Асмик Есаян Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 31. 05. 2024: